

ԷԶՄԻԱԾԻՆ



Ը.
2024




ՉԼ. ՏԼԻԻ

ԼԲԱՆԴՈՒՄ

ՊԼՇՏՕՆԵԿԱՆ ԱՐԱՆԻՐ
ԼԻՆԵՆՆԵ ՆԼՅՈՑ ԿԼԹՈՂԻԿՈՍԻԹԵԼՆ
ՄԼՅՐ ԼԹՈՒՄՅՈՒՆ ՄԻԲՅՈՒՆ ԷԶՄԻԼԵՏԻ

ՕԴՆԱԿՈՍ

2024
Ս. ԷԶՄԻԼԵՏԻ




ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրական


Գլխավոր խմբագիր՝ **Գեորգ Մադոյեան**

Լեզուատնական խմբագիր՝ **Նարէ Սարգսեան**

Տեխնիկական խմբագիր՝ **Գոռ Գրիգորեան**

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Գեորգ եպս. Սարոյեան,
Տ. Շահէ ծ. վրդ. Անանեան,
Տ. Արարատ քինյ. Պօղոսեան,
Ազատ Բոզոեան,
Խաչիկ Բաֆֆի Գազէր
Վահէ Թորոսեան**





“Etchmiadzin”

Journal of Religious and Armenological Studies

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**

Stylistic editor **Nare Sargsyan**

Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Bishop Gevorg Saroyan,
Proto-Archimandrite Shahe Ananyan,
Fr. Ararat Poghosyan,
Azat Bozoyan,
Hacik Rafi Gazer
Vahe Torosyan**



«Эчмиадзин»

Религиоведческий и арменоведческий журнал

Редакционный состав

Главный редактор **Геворг Мадоян**

Стилистический редактор **Нарэ Саргсян**

Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Епископ Геворг Сароян,
Протоархимандрит Шагэ Ананян
Иерей Арарат Погосян,
Азат Бозоян,
Хачик Рафи Газер
Ваге Торосян**



Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան տարե-
դարձն է: Մի հերթական հանգրվան եւ շրջափուլ, երբ կարելի է հետա-
դարձ հայացք ձգել, գնահատել անցյալն ու նախանշել անելիքները:

Վեհափառի առաջնորդության ընթացքում Հայ Առաքելական Սուրբ
Եկեղեցին անցել է զարգացման եւ վերածննդի ուղի՝ պահպանելով եւ
առավել բարձրացնելով իր դերը հայ ժողովրդի հոգեւոր, մշակութային
եւ ազգային կյանքում:


Գահակալության առաջին իսկ տարիներից սկսած՝ Մայր Աթոռ Սուրբ
Էջմիածնում իրականացվել են լայնածավալ շինարարական աշխատանք-
ներ: Նորոգվել եւ կառուցվել են բազմաթիվ եկեղեցիներ, հիմնվել են նո-
րանոր վանքեր եւ կրթական հաստատություններ, ինչը նպաստել է հա-
վատացյալների հոգեւոր վերելքին: Վեհափառի նախաձեռնությունների
շնորհիվ, ըստ կարելիության, հաղթահարվել են հեռու ու մոտ անցյալում
արհեստականորեն հարուցված խնդիրները: Հոգեւոր կյանքի տասնա-
մյակներ տեւած արգելքներից հետո Էջմիածինը ոչ միայն վերահաստատ-
վեց որպէս համայն հայության հոգեւոր կենտրոն, այլեւ մշակութային եւ
կրթական կարեւոր ակումբ, որը աշխարհի բոլոր ծագերից պարբերաբար
իր գիրկն է առնում եւ վերապատրաստում է մայրենի լեզվի եւ հայրենի
պատմության ուսուցիչներին, մշտապէս հյուրընկալում է միջազգային
համաժողովների, գիտական նստաշրջանների եւ մշակութային միջոցա-
ռումների մասնակիցների:

Դժվար, կամ գուցե նաեւ անկարելի է փոքրիկ էջերում ընդգրկել հայ-
րապետի գործունեության բոլոր ոլորտները: Կարելի է լուի համառոտ
փաստել, որ հաջողություններ արձանագրվել են բոլոր ասպարեզնե-
րում: Սակայն եթե հարց առաջանա՝ արդյո՞ք դյուրին է եղել հայրապետի

ընթացքը, արդյո՞ք հեշտ էին կառավարման տարիները, միանշանակ կլինի պատասխանը, որ հայրապետին բաժին է ընկել դժվար ու մաքառումի շրջափուլ:

Սակայն, ինչպես գիտենք, ընտրություն կատարելիս Վերին Նախախնամությունը կանխապես տեղեկանում է, թե արդյո՞ք այս կամ այն անձը կկարողանա հաջողությամբ դիմակայել կյանքի առկա եւ սպասվող մարտահրավերներին՝ լինի քրիստոնեության արշալույսին վկայող մարտիրոս, թե մեր օրերի կոչվածը, որի շավիղները ոչ պակաս նեղ են ու փշոտ: Վեհափառը ցայսօր հաղթահարել է տարատեսակ դժվարություններ ու բարդություններ, եւ հենց դրանով ենք լիահույս, որ վստահությամբ եւ հավատքով ապավինելով Բարձրյալին՝ Ամենայն Հայոց Հայրապետի եւ Առաքելական Եկեղեցու շուրջ համախմբված ժողովուրդը պատվով դուրս կգա հերթական փորձությունից, որովհետեւ Վերին Նախախնամությունը կանխապես է տեղացել Հայոց ազգի բարի ընթացքին:





**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ՍԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ
ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՋԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՇԱԿՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ**

(31 օգոստոսի, 2024 թ.)

Կրթության, գիտության, արվեստի ոլորտի սիրելի՛ պատասխանատուներ եւ մանկավարժներ,

Հայրապետիս համար մեծ ուրախություն է այսօր ողջունել ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Առանձնակի խորհուրդ ու նշանակություն ունի կրթության մշակներիդ ներկայությունը մեր ժողովրդի հոգեւոր կենտրոնում, որտեղից սկիզբ է առել հայալեզու ուսուցումն ու կրթությունը: Աղոթաբույր այս սուրբ տաճարում դուք ուսումնական տարվա սեմին ձեր ուխտն եք նորոգում առ Աստված՝ երկնային օրհնությամբ ու շնորհներով զորանալու եւ նոր եռանդով ու տեսլականով շարունակելու ձեզ վստահված սուրբ եւ նվիրական, ազգաշեն ու հայրենանվեր առաքելությունը:

Գիտությունն ու մարդկային հնարավորությունները մեր օրերում արագ են զարգանում, եւ առավել քան երբեւէ, այսօր կարեւորվում են ուսումն ու կրթությունը: Բոլոր ժամանակներում, սակայն, գլխավորը մարդկային ոգին ու նկարագիրը կրթելն է, այն ճշմարտության եւ բարու մեջ հաստատելը: Արդարեւ, գիտելիքը արարելու ուժ ու զորություն է, բայց այն բարիք է դառնում, երբ հաստատված է հոգեւոր արժեքների ու բարոյական հիմքերի վրա: Այս առումով դուք կոչված եք ոչ միայն ժամանակին համահունչ գիտելիք ու փորձառություն փոխանցելու մեր զավակներին, այլեւ նրանց միտքը վարժեցնելու՝ խորհելու արդարն ու ճշմարիտը եւ գործելու բարին, կոչված եք սովորեցնելու ճանաչել ու սիրել մեր Հայրենիքը, մեր Եկեղեցին, կրթելու գիտակից, պատասխանատու անհատներ եւ օրինահարգ քաղաքացիներ: Սա է կրթության ուղեծիրը,

Եւ այս ճանապարհին դուք օրինակ եք ձեր սաների համար, օրինակ եք ձեր նվիրումով, ձեր համոզմունքներով, մեր պետության, մեր Սուրբ Եկեղեցու նկատմամբ ձեր հավատարմությամբ, մեր ժողովրդի լուսավոր ապագայի վերաբերյալ ձեր տեսլականով:

Համաշխարհայնացման եւ արժեհամակարգի նենգափոխման մերօրյա հորձանուտում այսօր անտեսվում եւ հետ են մղվում իրական արժեքները՝ ազգերին ու հասարակություններին կանգնեցնելով հակասությունների եւ գոյաբանական խնդիրների առջեւ: Ազգային մեր կյանքում նման մարտահրավերները հաղթահարելի են մնալուն արժեքներ եւ ամուր ինքնություն, հայրենասիրության ու ազգանվիրումի ոգի ունեցող անհատներ կրթելու դեպքում, ովքեր ձգտում են նոր գիտելիքների եւ իմացության եւ միեւնույն ժամանակ քաջատեղյակ են իրենց պատմությանն ու հայրերի ժառանգությանը:

Անկասկած, մեր մատաղ սերնդի կրթությունն ու դաստիարակությունը, ինչպես դարերի հոլովույթում, այսօր էլ անբաժան մասն է Հայ Եկեղեցու առաքելության: Անկախ պետականության հաստատումից ի վեր մեր Եկեղեցին աջակցել է հայրենի պետության կրթադաստիարակչական գործունեությանը եւ նպաստել ազգային նկարագրով, հայեցի դաստիարակությամբ եւ հարուստ գիտելիքներով սերնդի կրթմանը: Այս կարեւոր նպատակին էր ուղղված նաեւ «Հայ Եկեղեցու պատմություն» առարկան, որն այլեւս չի դասավանդվելու: Ցավ ի սիրտ ենք արձանագրում, որ այսօր ամեն ջանք գործադրվում է հայ դպրոցի հիմնադիր Հայոց Եկեղեցուն դուրս մղելու նույն դպրոցից, փորձ է արվում արժեզրկել հայ ժողովրդի կյանքում Ազգային Եկեղեցու հոգեփրկչական, ինչպես նաեւ ազգային արժեքների եւ ինքնության պահպանման գործում իրականացրած բացառիկ առաքելությունը՝ հանրակրթական նոր դասագրքերում այլափոխված եւ աղճատված ներկայացնելով նրա պատմությունը:

Պատմությունը պետք է վերանայել սխալները ճանաչելու եւ ուղղելու նպատակով, իսկ մեր երկրի ու հայրենի պետականության ապահով ներկան եւ, մանավանդ ապագան, կարող ենք կերտել առ Աստված մեր հավատին եւ ավանդներին ու դրանցով ներշաղախված մեր ազգային նկարագրին հարազատ ու հավատարիմ մնալով: Սա է մեր պատմության մատուցած գլխավոր դասը, որը երբեք չպիտի մոռանանք:


Զեզ, սիրելիներ, այսօր տրված է ուսուցիչ լինելու մեծ պատիվը, նաեւ՝ պատասխանատվությունը հայրենիքում եւ սփյուռքի համայնքներում


պահպանելու մեր ժողովրդի ինքնությունը եւ պահպանելու ազգի առաջընթացն ու զարգացումը: Սիրով, նախանձախնդրությամբ ու հավատով նվիրվե՛ք իրականություն դարձնելու կենսունակ ու արդար հասարակություն եւ ինքնիշխան ու հզոր պետություն կերտելու ամենքիս երազանքը:

Եւս մեկ անգամ բարձր գնահատելով կրթագիտական առաքելության նվիրյալների դոկտորժան ծառայությունը՝ աղոթքով առ Աստված մաղթում ենք ամենքիդ անսպառ եռանդ, ուժ ու կորով, օգտաշատ ծրագրեր ու համարձակ իրագործումներ՝ ի խնդիր գիտության ասպարեզում նորանոր ձեռքբերումների եւ ազգի արժանավոր սերունդների կրթության: Տիրոջ զորակցությունը ձեզ ազգանվեր ձեր հանձնառության մեջ:

Թող Ամենակարող Աստված անսասան ու խաղաղ պահի եւ պահպանի Հայաստան աշխարհը, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ առատ շնորհներ պարգեւի ձեզ ու ձեր սաներին:

Բարի, օրհնյալ եւ արգասավոր ուսումնական տարի:





Doi: 10.56737/2953-7843-2024.08-10

ԵՂԻՇԵ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳՍՅԱՆ
Միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ԳՀԾ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ՝ ԸՍՏ ՍԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՒ ՍԱՀՏՈՑ ԾԻՍԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ՝

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անձի ընտրության, ձեռնադրության ակունքները պետք է փնտրել Աստվածաշնչում: Այդպիսի առաջին ընտրությունը հիշված է Հին Կտակարանի Ելից գրքի ԻԸ. գլխում. «Եւ դու մատուցես առ քեզ զԱհարոն զեղբայր քո, եւ զորդիս նորա ընդ նմա՝ յորդուոցն Իսրայէլի, քահանայանալ ինձ. զԱհարոն եւ զնաբադ եւ զԱբիուդ եւ զԵղիազար եւ զԹամար զորդիս Ահարոնի» (Ելք ԻԸ. 1): Այստեղ տեսնում ենք, որ Աստված ընտրում է նվիրյալներին: Այսպիսի օրինակների հանդիպում ենք հատկապես Ելից, Թվոց եւ Ղեւտական գրքերում, որոնք վերաբերում են քահանայական ընտրությանը, սպասավորությանը եւ գործառույթներին: Գալով Նոր Կտակարանին՝ տեսնում ենք, որ Քրիստոսով նորոգվում է քահանայական ուխտը: Քրիստոսն ընտրում է 12 առաքյալներին եւ աշակերտներին, իսկ նրանցից սկիզբ են առնում նվիրապետական կարգը, առաքելական հաջորդականությունը: Առաջին ընտրական ձեւն արձանագրված է Գործք առաքելոցի Ա. գլխում: Խոսքը Մատթիայի ընտրության մասին է, ապա յոթ սարկավագների, եւ այսպես՝ շարունակ: Այս օրինակներում տեսնում ենք, որ առաքյալներն ու ներկաներն Աստծու առաջնորդությամբ ընտրում են արժանավորին՝ ի սպասավորություն արդեն իսկ կազմավորվող Եկեղեցու: Մինչ քրիստոնեության պետականորեն ընդունումը եւ Գրիգոր Լուսավորչի ձեռնադրությունը՝ Հայոց Եկեղեցին առաջնոր-

* Ստացվել է՝ 17.01.2024, գրախոսվել է՝ 7.02.2024:

Էլ. հասցե՝ deacon.yeghishe@gmail.com:

դեկ են եպիսկոպոսներ, որոնք իբրեւ հայրապետներ՝ հովվել են Արտազի եւ Աղբակի աթոռների վրա²: Նրանց մասին հիշատակությունները սակավ են, եւ պետք է ենթադրել, որ նրանք ընտրվել եւ ձեռնադրվել են ժողովրդի եւ հոգեւորականաց դասի համաձայնությունամբ, ինչպես Ընդհանրական Եկեղեցում էր ընդունված: Կաթողիկոսների ընտրությունը Հայոց Եկեղեցու պատմության ընթացքում տարբեր կերպ է եղել, որը կփորձենք ներկայացնել սույն հոդվածում:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ՝
ԸՍՏ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ.
ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Հայրապետական ընտրության կարգը հայոց մեջ ձեւավորվել է աստիճանաբար: Ս. Գրիգոր Լուսավորչից (302–325) սկսած՝ հայրապետական ընտրությունը տարբեր կերպ է տեղի ունեցել: Եկեղեցականի ընտրության եւ ձեռնադրության որոշակի կանոնակարգ մշակվել է Նիկիայի 325 թ. առաջին տիեզերական ժողովում, որի Դ. կանոնում կարգում ենք. «Ձեպիսկոպոս արժան է, որք վիճակին եւ աշխարհին եպիսկոպոս իցեն, նոքիմբք նստուցանել յաթոռ. ապա եթէ վասն փութոյ ինչ եւ եթէ վասն հեռաւորութեան ընկերացն՝ Գ. եպիսկոպոսք կամօք այնոցիկ, որ հեռի են, թղթովք վկայութեան նստուցեն. բայց զպատին եւ զշնորհն գլխավորին արժան է տալ, այսինքն՝ կաթողիկոսին՝ կամելով սուրբ ժողովոյն»³:

Հայոց Եկեղեցին Արշակունիների թագավորության ժամանակ կարծես թե այնքան էլ չէր առաջնորդվում հստակ կանոնով, քանի որ Գրիգոր Լուսավորչի եւ նրա ժառանգների հայրապետանալը կատարվել է կա՛մ ժամանակի Հայոց արքայի, կա՛մ նրա եւ ժողովրդի, կա՛մ էլ առաջինի եւ մեծամեծների հավանությամբ ու որոշմամբ: Պետք է հաշվի առնել, որ Գրիգոր Լուսավորչից (302–325) մինչեւ Սահակ Ա. Պարթևի (387–439) գահակալումը կաթողիկոսական իշխանությունը որոշ ընդհատումնե-

² Մինչ Գրիգոր Լուսավորչիչը Հայաստանում եղած եպիսկոպոսական աթոռների մասին ավելի մանրամասն տե՛ս Պ. Ա. Ն. Ա. Ն. Ա. Ն., Քրիստոնէութեան հետքեր Հայաստանի մէջ Ս. Գրիգոր Լուսավորչի քարոզութենէն առաջ (պատմական ուսումնասիրութիւն), «Բազմալէպ», թիւ 14, 1979, էջ 5–83:

³ Ն. Մ. Ե. Ի. Բ. - Թ. Ա. Ն. Գ. Ա. Ն., Հայոց եկեղեցական իրաւունքը, առաջաբ. և ծանոթագր. հրատ. պատր. Ա. Բողոյանը, Ս. էջմիածին, 2009, էջ 212, տե՛ս նաեւ Կանոնագիրք Հայոց, հտ. Ա., աշխատ.՝ Վ. Հակոբյանի, Երեւան, 1964, էջ 119:

րով փոխանցվել է ժառանգաբար, եւ ընտրութիւնն էլ, հետեւաբար, այդ սկզբունքով է եղել: Այսպէս՝ Գրիգոր Լուսավորչի ընտրութիւնը կատարվել է Տրդատ Գ. (287–330) արքայի կամքով եւ զորավարների եւ պաշտոնյաների խորհրդով: Այս մասին որոշակի գրում է Ագաթանգեղոսը. «Իսկ թագաւորն Տրդատիոս հանդերձ միաբանութեամբ կնաւ իւրով Աշխեն տիկնաւ, եւ քերք իւրով Խոսրովիդիստով, հրաման ետ ի ժողով կոչել միաբանութեամբ ամենայն զաւրաց իւրոց»⁴: Պետք է նշել, որ բացի բանակից՝ ներկա են եղել նաեւ կուսակալներ, ազատներ, դատավորներ եւ իշխաններ: Նրանք հավաքվում են Վաղարշապատում, եւ Տրդատ Գ., խորհրդակցելով ազատանու հետ, առաջարկում է հետեւալը. «Եկա՛յք, ասէ, ճեպեսցուք զայս առաջնորդ կենաց մերոց տուեալ մեզ յԱստուծոյ զԳրիգոր կացուցանել, զի լուսաւորեսցէ զմեզ մկրտութեամբ եւ նորոգեսցէ արէնուսոց խորհրդովն արարչին մերոյ Աստուծոյ»⁵: Ուրեմն՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի ընտրութիւնը կատարվում է Տրդատի առաջարկով եւ բարձր խավի մասնակցութեամբ ու համաձայնութեամբ: Սա հայոց կաթողիկոսի ընտրութեան առաջին ձեւն է՝ քրիստոնեութիւնը պետական կրոն ընդունելուց հետո:

Դ. դարում Ս. Գրիգորին հաջորդած կաթողիկոսների մեծ մասն ընտրվում է թագավորների եւ ազնվականութեան որոշմամբ, օրինակ՝ Արիստակեսը (325–333)՝ Տրդատ Գ.-ի առաջարկութեամբ⁶, Վրթանեսին նշանակել է Խոսրով Կոտակը (330–338), Հուսիկին (341–347) եւ Փառենին (348–352)՝ Տիրանը (339–350): Լուսավորչի տոհմից Ներսեսը (353–373) ընտրվում է մեծամեծների խորհրդով եւ Արշակ Բ. (350–368) թագավորի համաձայնութեամբ⁷: Այսպիսով՝ Ս. Գրիգոր Լուսավորչից հետո Հայոց Եկեղեցում կաթողիկոսական ընտրութիւնը հիմնականում կատարվել է բարձր ազնվականութեան եւ թագավորի կամ խորհրդի եւ ժողովի կամքով, ինչպէս Գ. Մագսուտյանն է գրում. «Հայերեն հնագույն աղբյուրների՝ Ագաթանգե-

⁴ Ա. Գ. Ա. Ք. Ա. Ն. Գ. Բ. Ն., Պատմութիւն Հայոց, Մատենագիրք հայոց, հտ. Բ., Ե. դար, Անթի-լիաս–Լիբանան, 2003, էջ 1682 (այսուհետեւ՝ Ա. Գ. Ա. Ք. Ա. Ն. Գ. Բ. Ն., Պատմութիւն Հայոց):

⁵ Ա. Գ. Ա. Ք. Ա. Ն. Գ. Բ. Ն., Պատմութիւն Հայոց, էջ 1682:

⁶ Համաձայն Ագաթանգեղոսի հաղորդած տեղեկության՝ Տրդատը խնդրում է Գրիգոր Լուսավորչին նրա փոխարեն որդուն՝ Արիստակեսին ձեռնադրել եպիսկոպոս (տե՛ս Ա. Գ. Ա. Ք. Ա. Ն. Գ. Բ. Ն., Պատմութիւն Հայոց, էջ 1716–1717):

⁷ Մանրամասն տե՛ս Գ. Վ. Գ. Մ. Ա. Գ. Ս. Ս. Ս. Ն., Ընտրեալը յԱստուծոյ, Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութիւնը, Թարգմ. անգլերենից՝ Ն. Բարաթյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1995, էջ 18–30 (այսուհետեւ՝ Մ. Ա. Գ. Ս. Ս. Ն., Ընտրեալը յԱստուծոյ):

ղոսի եւ Փափստոս Բուզանդի «Հայոց պատմություն» գրքերի վկայությունների հիման վրա IV դարում Ս. Գրիգորին հաջորդող կաթողիկոսների մեծ մասը կարգվում էին թագավորի կողմից»⁸:

Ե. դարում՝ Արշակունիների թագավորության անկումից հետո, իշխանությունն անցնում է պարսից արքաների եւ նրանց կողմից նշանակված մարզպանների ձեռքը: Օտար տիրապետողներն սկսում են միջամտել հայոց հայրապետի ընտրությանը: Ս. Սահակ Պարթևին Պարսկաստանում արգելափակելուց հետո հայրապետական գահին են բազմում պարսից դրածոներ Սուրմակը, ասորի Բրքիշոն ու Շմուելը: Նրանք ընտրվել են պարսկամետ իշխանների միջնորդությամբ եւ պարսից արքայի հաստատմամբ⁹: Ըստ Գ. Մագսուտյանի՝ հստակ չէ, թե Ս. Սահակի ընտրությունն ինչպես է եղել¹⁰, սակայն ըստ մեզ՝ պարզ է, որ նրա ընտրության հարցում որոշիչ է եղել Լուսավորչին տոհմակից լինելը: Օրմանյանը, հիմնվելով Մովսես Խորենացու¹¹ հայտնած տեղեկությունների վրա, նշում է, որ Խոսրով Դ.-ն է եղել կաթողիկոսական ընտրության նախաձեռնողը¹², որի արդյունքում հայրապետական գահին է բազմում Լուսավորչի իրավահաջորդ Սահակ Ա. Պարթևը: Նրա մահից հետո օրինավոր կաթողիկոս է դառնում Հովսեփ Հողոցմեցին (440–452): Այս մասին հիշատակում է Ղազար Փարպեցին. «...յաջորդեաց զաթոռ հայրապետութեան աշխարհիս Հայոց, հրամանաւ երանելոյն Մաշտոցի սուրբն Յովսէփ, որ էր ի գաւառէն Վայոց ձորոյ, ի գեղջէն որում անունն էր Խողոցիմբ»¹³: Մեսրոպ

⁸ Անդ, էջ 18:

⁹ Մանրամասն տե՛ս Յ. ՎՐԳ. ՄՈՎՍԻՍԵԱՆ, Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ պատմութիւն, Բ. հրատ., Ս. էջմիածին, 2008, էջ 109–114 (այսուհետեւ՝ ՄՈՎՍԻՍԵԱՆ, Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ պատմութիւն): Արշակունիների թագավորության բացակայության պարագայում Հայաստանի մի մասը գտնվում էր Պարսից տիրապետության ներքո, եւ շահը, եթե կամենար, կարող էր զրկել հայոց կաթողիկոսին իր աստիճանից. օրինակ՝ Գյուտ Արահեզացու (461–478) պարագան (տե՛ս ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՅԻ, Պատմութիւն Հայոց, Թուղթ, Մատենագիրք Հայոց, հտ. Բ., Ե. դար, Անթիլիաս–Լիբանան, 2003, էջ 2311) (այսուհետեւ՝ ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՅԻ, Պատմութիւն Հայոց):

¹⁰ Տե՛ս Մագսուտեան, Ընտրեալը յԱստուծոյ, էջ 23

¹¹ Տե՛ս ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոց, հտ. Բ., Ե. դար, Անթիլիաս–Լիբանան, 2003, էջ 2012, էջ 2073–2074, (այսուհետեւ՝ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն Հայոց):

¹² Տե՛ս Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հտ. Ա., Ս. էջմիածին, 2001, սիւնակ 291 (այսուհետեւ՝ ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, հտ. Ա.):

¹³ ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՅԻ, Պատմութիւն Հայոց, էջ 2236, հմմտ. ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն Հայոց, էջ 2113:

Մաշտոցը, լինելով ազդեցիկ հոգեւորական եւ կաթողիկոսական տեղապահ, տեսնելով Սահակ Պարթեւի ժամանակ տարբեր անօրինական կաթողիկոսների ընտրութիւնը, արդեն ուներ կաթողիկոսական թեկնածու, որը Հովսեփ Հողոցմեցին էր¹⁴: Ըստ Գրիգոր վրդ. Մագսուտյանի՝ Հովսեփ կաթողիկոսի հայրապետ ընտրվելը պաշտոնապես եղել է 444 թ. Շահապիվանի ժողովում¹⁵:

Առաջ անցնելով՝ նշենք, որ Զ. եւ Է. դարերում, ըստ երեւոյթին, կաթողիկոսները պաշտոնապես ընտրվել են եկեղեցական ժողովներում, եւ ոչ միայն, որոնցում քննարկվել են նաեւ դավանաբանական խնդիրներ, ինչպես նաեւ տարաբնույթ այլ հարցեր: Ժողովներին մասնակցել են թե՛ հոգեւորականներ, թե՛ աշխարհականներ: Բաբկեն Ա. Ոթմսեցի (490–516) եւ Ներսես Բ. Բագրեւանդցի (548–557) կաթողիկոսների օրոք Դվինում տեղի ունեցած ժողովներին մասնակցել են հոգեւորականներ եւ աշխարհիկ իշխաններ: Հայր Գրիգոր Մագսուտյանն այն կարծիքին է, որ նմանատիպ ժողովների մասնակիցներն առանձին ժողովների ժամանակ ընտրում էին կաթողիկոս¹⁶: Այսինքն՝ եկեղեցական ժողովներ կարող էին հրավիրվել նաեւ կաթողիկոս ընտրելու համար: Հնարավոր է, որ որեւէ խնդրի համար հրավիրված եկեղեցական ժողովը, բացի այդ խնդիրը լուծելուց, զուգահեռ նաեւ ընտրել է կաթողիկոս: Կաթողիկոսական այգալիսի ընտրութեան լավագույն օրինակներից է Դվինի 607 թ. եկեղեցական ժողովը: Համաձայն Ժ. դարի պատմիչ Ուխտանեսի հաղորդած տեղեկութիւնների՝ Սմբատ Վրկանա մարզպանի օրոք նշված թվականին Դվինում տեղի է ունենում ժողով՝ հայոց հայրապետ ընտրելու համար: Ի դեպ՝ ժողովի առաջին նիստում ընտրութիւն տեղի չի ունենում¹⁷, եւ միայն երկրորդ ժողովում, համաձայն նույն աղբյուրի, Հայոց հայրապետ է ընտրվում Ռշտունյաց եպիսկոպոս Աբրահամը՝ «յազդմանէ Սուրբ Հոգւոյն»¹⁸:

¹⁴ Մովսէս Խորենացու հաղորդած տեղեկութիւններին համաձայն՝ հայրապետական տեղապահ Մեսրոպ Մաշտոցի հրամանով կաթողիկոսական տեղապահ է դառնում Հովսեփ քահանան. «Իսկ զաթոռ եպիսկոպոսապետութեանն տեղապահութեամբ յաջորդեաց հրամանաւ երանելոյն Մեսրոպայ նորին աշակերտն Յովսէփ քահանայ ի Վայոց ձորոյ, ի Խողոցիմ գեղջէ» (տե՛ս ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն Հայոց, էջ 2113): Այստեղ հատկանշական է, որ կաթողիկոսական թեկնածուն ունի քահանայական աստիճան:

¹⁵ Տէս ՄԱԳՍՈՒՏԵԱՆ, Ընտրեալդ յԱստուծոյ, էջ 38:

¹⁶ Տէս անդ, էջ 46:

¹⁷ Տէս ՈՒԽՏԱՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ, Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոց, հտ. ԺԵ., Ժ. դար, Երեւան, 2011 թ, էջ 547 (այսուհետեւ՝ ՈՒԽՏԱՆԷՍ, Պատմութիւն Հայոց):

¹⁸ Տէս ՈՒԽՏԱՆԷՍ, Պատմութիւն Հայոց, էջ 551:

Ը.—Թ. դարերում՝ արաբական տիրապետության եւ Բագրատունյաց թագավորության շրջանում (Թ.—ԺԱ. դդ.), կաթողիկոսական ընտրությունը կայացել է տարբեր կերպ: Պատահում էր, որ արաբ կառավարիչն էր որոշում՝ ով նստի հայրապետական աթոռին, օրինակ՝ Սիոն Ա. Բավոնացու (767–775) կաթողիկոսանալը¹⁹: Հայաստանում 862 թ. վիճակը փոխվում է, երբ խալիֆան Աշոտ Բագրատունուն է հանձնում Հայոց իշխանաց իշխանի բարձր պաշտոնը: Բագրատունյաց թագավորության (885–1045) շրջանում տեղի էին ունենում եկեղեցական ժողովներ, որոնց ընթացքում հիմնականում թագավորն էր ընտրում կաթողիկոսին՝ նախարարների համաձայնությամբ, օրինակ՝ Գեորգ Բ. Գառնեցին (877–897), Մաշտոց Ա. Եղիվարդեցին (897–898) եւ այլք²⁰: Կաթողիկոսական ընտրության մեջ եղել են բացառություններ, երբ աշխարհական անձը, շրջանցելով նվիրապետական բոլոր աստիճանները, ընտրվել է կաթողիկոս. այդպիսին է Զաքարիա Զագեցու պարագան, որ աթոռակալել է 855–877 թթ.²¹ «ոչ ինչ աստիճան ընկալեալ երիցութեան կամ սարկաւազութեան, այլ անարատ կեանս կեցեալ, ի միում աւուր բոլոր աստիճանացն եհաս պատուոյ»²²: Բագրատունյաց թագավորության անկումից հետո հայոց կաթողիկոսի ընտրությունը կատարվում էր Բյուզանդիայի կայսեր թույլտվությամբ: Այդպես կայացավ Գրիգոր Բ. Վկայասերի (1066–1105) ընտրությունը, որի համար կայսեր առաջ միջնորդել էին Կարսի վերջին թագավոր Գագիկ Բ. Աբասյանը եւ Մարիամ իշխանուհին²³: Գրիգոր Բ. Վկայասերից սկսյալ՝ հայրապետական իշխանությունն սկսում է հիմնականում ժառանգաբար փոխանցվել, այսինքն՝ Պահլավունյաց տոհմից էր ընտրվում հաջորդ կաթողիկոսը: Պահլավունիների տոհմը, սկսած Գրիգոր Բ. Վկայասերից (1066 թ.), հայրապետել է մինչեւ Գրիգոր Զ. Ապի-

¹⁹ Տե՛ս Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոց, աշխատ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, հտ. ԺԱ., Ժ. դար, Անթիլիաս–Լիբանան, 2010, էջ 423 (այսուհետեւ՝ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍՄԱՆԱԿԵՐՏՅԻ, Պատմութիւն Հայոց): Տե՛ս նաեւ Վ. ՎՐԴ. ՀԱՅՈՒՆԻ, Կաթողիկոսական ընտրութիւն եւ ձեռնադրութիւն պատմութեան մէջ, Վենետիկ, 1930, էջ 30:

²⁰ Տե՛ս ՅՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍՄԱՆԱԿԵՐՏՅԻ, Պատմութիւն Հայոց, էջ 442, 470:

²¹ ԱՍՈՂԻԿ, Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 103:

²² Մանրամասն տե՛ս Վ. ԹՈՐՈՍՅԱՆ, Հայոց կաթողիկոսական իշխանությունը, (ԺԱ. դարի կեսեր – ԺԲ. դարի սկիզբ), Երեւան, 2018, էջ 23–44 (այսուհետեւ՝ ԹՈՐՈՍՅԱՆ, Հայոց կաթողիկոսական իշխանությունը):

րատը (1203 թ.) (ԺԱ.—ԺԳ.)²³: Պահլավունի կաթողիկոսները երբեմն մահվանից առաջ իրենց ժառանգներին կամ հարազատներին էին «կտակում» հայրապետական գահը, այսինքն՝ կաթողիկոսի մահվանից հետո արդեն պարզ էր, թե ով պետք է լինի նրա հաջորդը, օրինակ՝ Բարսեղ Ա. Անեցու (1105–1113), Գրիգոր Գ. Պահլավունու (1113–1166), Ներսես Դ. Շնորհալու (1166–1173) պարագաները եւ այլն²⁴: Գրիգոր Զ. Ապիրատից (1194–1203) հետո Պահլավունյաց տոհմից չկային համապատասխան եպիսկոպոսներ, եւ ըստ Մագսուտյանի, համաձայն ԺԳ. դարի Կիլիկյան արքունի ժամանակագրության, որը միշտ ներկայացնում է իրադարձությունների պաշտոնական վարկածը²⁵, Լեւոն (1187/1198–1219) թագավորը խորհուրդ է հրավիրում, որը Սսի եպիսկոպոս Հովհաննեսին ընտրում է կաթողիկոս (1203–1221)²⁶: Պետք է նկատի ունենալ նաեւ այն հանգամանքը, որ Լեւոն Ա.-ն իր որոշումով վերջ տվեց Պահլավունիների ժառանգական իշխանությանը: Ըստ Գրիգոր Մագսուտյանի՝ Կիլիկյան թագավորության շրջանում կաթողիկոսների ընտրությունը հիմնականում լինում էր ժողովների միջոցով²⁷: Այս կարծիքն իհարկե վերջնական չէ, քանի որ շատ պարագաներում կիլիկյան արքաները կարող էին հաշվի չառնել ժողովի որոշումները, կամ էլ իրենք եւ այլ հանգամանքներ կարող էին ազդել ժողովում հայրապետական ընտրության վրա:

²³ Տե՛ս Ղ. ԱԼԻՇԱՆ, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ – Ս. Ղազար, 1873, էջ 14: Պահլավունի կաթողիկոսների գահակալության մասին մանրամասն տե՛ս Վ. ՎԱՐԳԱՆՅԱՆ, Պահլավունիները Հայոց պետականության եւ հոգեւոր անաղարտության պահպաններ, Երեւան, 2008, էջ 94–177 (այսուհետեւ՝ ՎԱՐԳԱՆՅԱՆ, Պահլավունիները):

²⁴ Տե՛ս ՎԱՐԳԱՆՅԱՆ, Պահլավունիները, էջ 119, տե՛ս նաեւ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Հայոց եկեղեցին Կիլիկյան շրջանում, Երեւան, 2018, էջ 21: Ներսես Շնորհալին իր Թուղթ ընդհանրականում գրում է, որ իր եղբայր Գրիգոր Գ. Պահլավունին խնդրել էր իրեն ստանձնել հայրապետական գահը. «Սակայն յայժմոյս՝ ակամայ բռնազբօսելով զմեզ ինքն եւ ժողովք Եպիսկոպոսացն ձեռնադրեաց զմերս անարժանութիւն՝ յաթոռ Կաթողիկոսութեան ազգիս Հայկայ եւ տանն Թորգոմայ» (տե՛ս Ընդհանրական թուղթք Սրբոյն Ներսիսի Շնորհալոյ, Երուսաղէմ, 1871, էջ 2–3):

²⁵ Տե՛ս ՄԱԳՍՈՒՏԵԱՆ, Ընտրեալդ յԱստուծոյ, էջ 86:

²⁶ Տե՛ս ՍՄԵԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Տարեգիրք, «Շար հայ պատմագրաց», Փարիզ 1859, էջ 114: Կիրակոս Գանձակեցին Հովհաննեսի կաթողիկոս դառնալու վերաբերյալ հետեւյալն է նշում. «Եւ այնուհետեւ սկսան մախողքն Գրիգորիսի զմիմեաք ելանել, թէ ո՞նտիցի յաթոռն հայրապետական: Եւ Յովհաննէսն՝ զի ընտանի էր թագաւորին Լեւոնի, բռնացաւ եւ կալաւ» (տե՛ս ԿԻՐԱԿՈՍ ՓԱՆՋԱԿԵՅԻ, Պատմութիւն Հայոց, աշխատ.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ 148–149):

²⁷ Տե՛ս ՄԱԳՍՈՒՏԵԱՆ, Ընտրեալդ յԱստուծոյ, էջ 86–101:

ԺԵ. դարի կեսերից մինչև ԺԷ. դարասկիզբը Հայաստանի քաղաքական կացությունն այնքան էլ բարենպաստ չէր, քանի որ Հայոց երկիրը ասպատակում էին թուրքմենական ցեղախմբերը, Օսմանյան Թուրքիան, Սասանյան Իրանը: Այս շրջանը Հայոց Եկեղեցու պատմության մեջ առանձնանում է աթոռակից կաթողիկոսների²⁸ գահակալությամբ: Իհարկե այս երեւոյթը նոր չէր, սակայն հատկապես ԺԵ. դարից մինչև ԺԷ.—ԺԸ. դարերն ընկած շրջանում սկսում են լայնորեն կիրառվել աթոռակից կաթողիկոսների ընտրությունն ու ձեռնադրությունը: Այս շրջանում ընտրություն անցկացնելը, կարելի է ասել, անհնար էր կամ խիստ դժվար, այդ պատճառով կաթողիկոսն իր կենդանության օրոք իրեն աթոռակից կարող էր ձեռնադրել մեկից ավելի եկեղեցականների, որոնք գերագահ առաջնորդի մահվանից հետո ստանձնում էին հայրապետական գահը: Միեւնույն ժամանակ մեկից ավելի կաթողիկոսների ներկայությունը հայրապետական գահին կարող էր պառակտում առաջացնել Եկեղեցու կյանքում, ինչպես նաև աթոռակից կաթողիկոսները կարող էին խամաճիկ դառնալ տվյալ ժամանակ Հայաստանում իշխող օտար տիրապետողների ձեռքին: Դժվար է նշել՝ այս շրջանում պահպանվել է կաթողիկոսին ժողովով ընտրելու կարգը, թե ոչ: Օրինակ՝ ԺԷ. դարի սկզբին՝ մասնավորապես 1603 թ., հոգեւոր եւ աշխարհիկ առաջնորդները Ս. Էջմիածնում կաթողիկոս են ընտրում Սրապիոն վարդապետին, եւ հետաքրքիր է, որ ձեռնադրության օրը նրան վերանվանում են Գրիգոր²⁹: Ընտրության ժամանակ տեսնում ենք աշխարհիկ եւ հոգեւոր առաջնորդների ներկայությունը, սակայն այստեղ թեկնածուն չունի եպիսկոպոսական ձեռնադրություն: ԺԷ. դարում եւ ԺԸ. դարի սկզբներին նույնպես կաթողիկոսական ընտրությունը միանշանակ գոյություն ունեցող հստակ կանոնով չէր կատարվում, երբեմն կարող էր կաթողիկոսը մահվանից առաջ իր կտակում արձանագրել ցանկալի կաթողիկոսի անունը, մեկ

²⁸ «Աթոռակից» նշանակում է «մեկտեղ նստող», «նույն ժողովքը նստած», «փոխանորդ»: Սրան նման է նաև «աթոռակալ» բառը, որը դարձյալ նշանակում է «փոխանորդ» (տես Առձեռն բառարան Հայկազնեան լեզուի, յօրինեաց Մ. վրդ. Աւգերեան, երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, ի Սուրբ Ղազար, 1865, էջ 6, այսուհետեւ՝ Առձեռն բառարան): «Աթոռակից», «փոխանորդ» եզրույթների մասին տես ԹՈՐՈՍՅԱՆ, Հայոց կաթողիկոսական իշխանությունը, էջ 58–64:

²⁹ Տես Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցոյ, Վաղարշապատ, 1884, էջ 3–7: Առհասարակ մկրտության եւ քահանայական ձեռնադրության ժամանակ է, որ տեղի է ունենում անվանափոխություն, իսկ Դավրիժեցին նշում է, որ Սրապիոն վարդապետը կաթողիկոսական ձեռնադրության ժամանակ վերանվանվում է Գրիգոր, ինչն արտասովոր է եւ հետաքրքիր:

այլ դեպքում միաբաններն էին խնդրում կաթողիկոսից մահվան մահճում հայտնել իր նախընտրած թեկնածուի անունը, երբեմն էլ հոգեւորականներն էին որոշում՝ ում ընտրել հայրապետ, ինչպես նաեւ եկեղեցական ժողովն էր ընտրում կաթողիկոսին եւ այլն³⁰:

ԺԹ. դարասկզբին, երբ Արեւելյան Հայաստանը գտնվում էր ռուսական ցարական իշխանության ներքո, կազմվում է հատուկ կանոնադրություն Հայոց Եկեղեցու վերաբերյալ, որը հայտնի է «Положение» (Բարձրագույն կարգադրութիւն յաղագս կառավարութեան գործոց լուսաւորչական Հայոց Եկեղեցոյ ի Ռուսաստան) անվամբ³¹: Այն ընդունվել է 1836 թ. մարտի 11-ին՝ Նիկոլայ Ա. կայսեր հրամանագրով: Մեզ հետաքրքրող մասը Բ. գլուխն է, որի համաձայն՝ կաթողիկոսը ճանաչվում էր Հայ Եկեղեցու գլխավոր կառավարիչն ու տեսուչը, պահպանում էր հին տիտղոսները, օրհնելու էր մյուսոն, ձեռնադրելու էր եպիսկոպոսների եւ այլն: Կաթողիկոսական ընտրության կարգը, ըստ վերոհիշյալ կանոնադրության Բ. գլխի, այսպես էր՝ պետք է ընտրական ժողովը տեղի ունենար Ս. էջմիածնի Մայր տաճարում, քվեարկողներն էին համարվում Սինոդի 8 անդամները՝ եպիսկոպոս կամ վարդապետ, յուրաքանչյուր թեմի առաջնորդը կամ նրան ներկայացնող 1 եկեղեցական եւ ժողովրդի կողմից ընտրված 1 աշխարհական: «Առաջին քուէարկութեան, որուն բացականներն ալ կրնան մասնակցիլ, կը նշանակուին չորս ընտրելիներ, առաւելագոյն քուէ ստացողներ առանց համեմատականի, երկրորդ քուէարկութեամբ կորոշուին չորսէն երկու ընտրեալներ, նոյնպէս առանց համեմատականի, որոնք պատգամաւորութեան ձեռքով Կովկասի կառավարչապետին եւ անկէ կայսեր կը ներկայացուին, եւ կայսրը բացարձակ իշխանութեամբ երկուքէն մէկը կը հաստատէ կաթողիկոս եւ օծումը կը հրամայէ»³²: Այսպիսով՝ սույն կանոնադրության համաձայն՝ կաթողիկոսի

³⁰ Առավել մանրամասն տես ՄԱԳՍՈՒՏԵԱՆ, Ընտրեալդ յԱստուծոյ, էջ 135–155:

³¹ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2012 (Ա. ՂԱԶԱՐՅԱՆ, «Положение»), էջ 864: «Положение»-ն «բաղկացած էր 141 հոդվածից եւ բաժանվում էր 10 գլխի: Առաջին գլուխը վերաբերում էր Հայ Եկեղեցու ընդհանուր իրավունքներին եւ արտոնություններին, երկրորդը՝ կաթողիկոսին, երրորդը՝ Սինոդին, չորրորդը՝ թեմակալ առաջնորդներին, հինգերորդը՝ հոգեւոր ատյաններին եւ հոգեւոր կառավարություններին, վեցերորդը՝ մենաստաններին, յոթներորդը՝ ամուսնացած եկեղեցականներին, ութերորդը՝ հոգեւոր դպրոցներին, իններորդը՝ եկեղեց. կայքի կառավարմանը, տասներորդը՝ եկեղեց. պաշտոնյաների եկամուտներին», անդ, էջ 864:

³² Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, հտ. Գ., Ս. էջմիածին, 2001, սիւնակ 2523:

վերջնական ընտրությունը կայացնում էր ուսաց արքան: Կանոնադրությունը գործել է մինչև 1917 թ.:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

ԸՍՏ ՄԱՇՏՈՑ ԾԻՍԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Խոսելով հայրապետական ընտրության մասին՝ մինչ այժմ բերվեցին վկայություններ մատենագրական երկերից եւ ուսումնասիրություններից: Մաշտոց ծիսամատյաններում նույնպես հայրապետական ընտրության վերաբերյալ հանդիպում ենք ուշագրավ տեղեկությունների: Մեզ հասած առաջին Մաշտոց ծիսամատյանը, որտեղ կա կաթողիկոսական ձեռնադրության կարգ, Սսի 1311-ից առաջ գրված Մաշտոցն է³³, որի կաթողիկոսական ձեռնադրության ծեսի կանոնում հայրապետական ընտրության մասին կարդում ենք. «Յորժամ հանդերձեալ լինին բարձրացուցանել զոք ի պատիւ կաթողիկոսութեան տանս Հայոց, նախ ընտրել պարտ է ըստ կաթողիկէ եկեղեցեացն սահմանի, բոլոր ժողովուրդի հայասեռ ազգիս հանդերձ ամենայն ժառանգաւորաւմն եկեղեցւոյն, եւ երկուտասան եպիսկոպոսաւ: Եւ ընտրեն ի նոցանէ երիս արս: Եւ քննութեամբ ամենայն ժողովոյն, ընտրեն զմին ի նոցանէ. վկայեալս յամենայն ի գործս բարիս. եւ ի վարս առաքինիս՝ սուրբ եւ անարատ, գիտութեամբ եւ իմաստութեամբ լի, որ կարող իցէ հովուել զժողովուրդն, որ յԱստուծոյ հաւատասցի նմա»³⁴: Այսպիսով՝ ըստ այս մաշտոցյան կանոնի՝ կա-

³³ Տէն ձեռ. Հմր 9, «Սոոյ Մայր Մաշտոց», Անթիլիաս, 1311 թ. (ստացող՝ Կոստանդին կաթողիկոս (հավանաբար Կոստանդին Գ. Կեսարացի, 1307–1322), 140ա–141ա:

³⁴ Ձեռ. Հմր 9, «Սոոյ Մայր Մաշտոց», Անթիլիաս, 1311 թ., 140ա–141ա: Տէն Վենետիկի մատենադարան, ձեռ. Հմր 1173, Սիս, 1345 թ. 389բ–390ա: Տէն նաեւ Վենետիկի մատենադարան, ձեռ. Հմր 960, 1364 թ., 31բ–32ա, հմմտ. ՄՄ, ձեռ. Հմր 4997, «Էջմիածին», 1461 թ., «Կանովն յորժամ կաթողիկոս ձեռնադրեն Ամենայն Հայոց», 50բ–74բ: ՄՄ, ձեռ. Հմր 5702, «Աղթամար», 1471 թ., «Կանովն յորժամ կաթողիկոս ձեռնադրեն Ամենայն Հայոց», էջ 150–212: ՄՄ, ձեռ. Հմր 1084, «Հաղբատ», 1498 թ., «Կանոն յորժամ կաթողիկոս ձեռնադրեն Ամենայն Հայոց», 43բ–63ա: ՄՄ, ձեռ. Հմր 998, 1546 թ., «Կանոն կաթողիկոս ձեռնադրելոյ», 239ա–249ա: Ձեռ. Հմր 167, Անթիլիաս, գրության վայր՝ Ամասիա, 1590–1591 թթ., 15բ–16ա: ՄՄ, ձեռ. Հմր 2507, «Հայրապետական մաշտոց», 1599-ից առաջ, «Կանոն կաթողիկոս արհնելոյ», 39բ–58բ: ՄՄ, ձեռ. Հմր 1090, ԺԶ. դար, «Կանոն կաթողիկոս ձեռնադրելոյ», 42ա–62բ: ՄՄ, ձեռ. Հմր 1088, 1616 թ., «Կանոն յորժամ կաթողիկոս ձեռնադրեն», 8ա–38ա: ՄՄ, ձեռ. Հմր 953, 1651–1656 թթ., «Կանովն յորժամ կաթողիկոս ձեռնադրեն», 446ա–458ա: Զմմառ, ձեռ. Հմր 93, 1687 թ., «Կանոն կաթողիկոս ձեռնադրելոյ», 77ա–102ա: ՄՄ, ձեռ. Հմր 969, Երուսաղեմ, 1720–1721 թթ., 189ա–235ա (Մաշտոց ձեռնադրութեան եւ մեռնորհնէք), «Կաթողիկոսական ձեռնադրութիւն», 208ա–215բ: ՄՄ, ձեռ. Հմր 1229, ԺԸ. դար, «Կաթողիկոսօրհնէք», 33ա–48բ:

Թողիկոս պետք է ընտրեին աշխարհիկ եւ հոգեւոր անձինք՝ ժողովրդի հավանությանը: Համաձայն սույն կանոնի՝ 12 եպիսկոպոսներից ընտրում էին երեքին, եւ հետո ազգային եկեղեցական ժողովով քննությանը նրանցից ընտրվում էր մեկը: Ընտրյալ թեկնածուն պետք է լիներ սուրբ, անարատ, գիտությանը ու իմաստությանը լի եւ առաքինի վարքով աչքի ընկնող անձ: Այս ցուցումները վառ օրինակ են, որ Հայոց եկեղեցին ունեցել է հայրապետական ընտրության հստակ կանոն: Իհարկե, այս մասին մենք տեղեկանում ենք ոչ միայն մատենագրական երկերից, այլեւ ձեռնագրության կանոններ պարունակող Մաշտոց ձեռագրերից: Այս ցուցմանը, ինչպես նշեցինք, հանդիպում ենք ԺԴ. դարի սկզբին, սակայն չի բացառվում, որ դրանից առաջ թվագրվող Մաշտոց ծիսարաններում եղել են կաթողիկոսի ընտրության կանոններ, որոնք ցավոք մեզ չեն հասել: Հատկանշական է նաեւ Ղազար Ա. Զահկեցու (1737–1751) պատվիրած 1738 թ. ՄՄ Հմր 1221 ձեռագիր Մաշտոցը³⁵, որը բովանդակային առումով տարբերվում է նախորդ ձեռագրերից: ՄՄ Հմր 1221 ձեռագիր Մաշտոցում Կաթողիկոսական ձեռնագրության կանոնի սկզբում հայրապետական ընտրության վերաբերյալ այսպիսի բովանդակությամբ հիշատակում կա. «Յորժամ հանդերձեալ լինին բարձրացուցանել զոք կաթողիկոսութեան տանս Հայոց, նախ ընտրել պարտ է ըստ կաթողիկէ եկեղեցեացն սահմանի. մի՛ ինքնագլուխ եւ մի՛ կաշառօֆ, զի մի՛ անկանիցեն՝ ի ներքոյ նզովից, վասն զի՝ ոչ հանի Աստուած զայնպիսի ձեռնադրութիւն. այլ բոլոր ժողովրդօֆ հայասեռ ազգիս, հանդերձ ամենայն ժառանգաւորօֆ եկեղեցոյն եւ երկոտասան եպիսկոպոսօֆ. եւ քննութեամբ ամենայն ժողովոյն, վկայեալ յամենայնի ի միաբնակ հաւատս ճշմարտութեան, եւ ջատագովի ուղղափառութիւնս ի գործս բարիս եւ ի վարս առաքինիս, սուրբ եւ անարատ, գիտութեամբ լի, որ կարօղ իցէ հովուել զժողովուրդն, յԱստուծոյ հաւատասցի նմա»³⁶: Թերեւս նույն բովանդակությունն է, ինչ նախորդ ձեռագրում, սակայն ավելացված են որոշակի կետեր, օրինակ՝ չպետք է

ՄՄ, ձեռ. Հմր 1067, «Մաշտոց ձեռնագրության», 1751 թ., «Կանոն յորժամ կաթողիկոս ձեռնադրեն», 74ա–91ա եւ այլն:

³⁵ Տե՛ս ՄՄ, ձեռ. Հմր 1221, 1738 թ., էջմիածին, «Կանոն կաթողիկոս ձեռնադրելոյ», 7ա–21ա, ՄՄ, ձեռ. Հմր 1226, 1738 թ., էջմիածին, «Կանոն կաթողիկոս ձեռնադրելոյ», 4ա–18ա: Այս երկու «Ձեռնագրության մաշտոցները», ըստ հիշատակարանի հաղորդած տվյալների, բացառապես նույնն են: Պատվիրատուն Ղազար Ա. Զահկեցի կաթողիկոսն է (1737–1751), իսկ գրիչը՝ Հովհաննես սարկավազը:

³⁶ ՄՄ, ձեռ. Հմր 1221, 1738 թ., էջմիածին, «Կանոն կաթողիկոս ձեռնադրելոյ», 7ա–7բ:

ընտրությունը լինի ինքնագլուխ կամ կաշառքով, պետք է ընտրյալը լինի հավատարիմ ուղղափառ դավանությանը եւ այլն: 1876 թ. Գեւորգ Դ. Մեծագործ հայրապետի օրոք հրատարակված Մաշտոցում³⁷ Կաթողիկոսական ձեռնադրության սկզբում արձանագրված է կաթողիկոսական ընտրության ցուցում, որը խմբագրված եւ լրամշակված տարբերակն է: Ձեռագրերում ուսումնասիրված ընտրության կարգը պարզ եւ համառոտ կերպով է ներկայացվում, իսկ 1876 թ. գրված Մաշտոցում ընդարձակ եւ մանրամասն է նկարագրված, ըստ երեւույթին՝ Գեւորգ Դ.-ի կողմից, կամ պատվերով է խմբագրվել եւ ավելացվել: Հոգվածի վերջում կներկայացնենք վերոհիշյալ ընտրական կարգն ամբողջությամբ:

Իրավական երկերում նույնպես հանդիպում ենք կաթողիկոսական ընտրության մասին տեղեկությունների: Օրինակ՝ Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում» կարդում ենք. «Եւ ոչ ոք ինքն իրեն չի կարող կաթողիկոս ձեռնադրել, այլ ձեռնադրում են շատերի միջից ամենաընտրյալին: Եւ, երբ ընտրությունը կայանա, ապա եպիսկոպոսները հավաքվելով՝ կաթողիկոս են ձեռնադրում»³⁸:

Այսօր Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընտրվում է ազգային-եկեղեցական ժողովով հետևյալ կերպ՝

- Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան դեպքում կաթողիկոսի ընտրության համար ազգային-եկեղեցական ժողով հրավիրում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղապահը՝ Ս. Էջմիածնի Գերագույն խորհրդի հետ:

- Նոր Կաթողիկոսի ընտրությունը տեղի է ունենում Կաթողիկոսի մահվանից ոչ ուշ, քան վեց ամիս հետո:

- Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունը կատարվում է Ս. Էջմիածնի Մայր տաճարում:

- Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության կարգը որոշում է ազգային-եկեղեցական ժողովը³⁹:

³⁷ Կանոն ձեռնադրութեան եւ օծման կաթողիկոսի եւ հայրապետի ամենայն հայոց, վարչապատ, 1876, էջ 3:

³⁸ ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ (ԳՈՒՆԴԱՏԱՐԷԼ), Դատաստանագիրք, փոխադրության հեղինակ եւ խմբագիր՝ Մ. Ոսկանյան, Երեւան, 2008, էջ 66:

³⁹ Տէս Ա. ԱՐՔ. ԲԵՐԵՐՅԱՆ, Ինչպես են Հայ Առաքելական Եկեղեցում ընտրում եւ օծում եպիսկոպոս եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ս. Էջմիածին, 1995, էջ 10:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ՝
ԸՍՏ 1876 Թ. ՏՊԱԳՐՎԱԾ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ԵՒ ՕԾՄԱՆ ԿԱՆՈՆԻ

«Յորժամ Աթոռ Առաքելոցն սրբոց Բարթուղիմէոսի եւ Թադէոսի եւ օրինաւոր յաջորդի նոցին սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Պարթեւի պարապիցի, եւ Հայաստանեայցս եկեղեցի այրիացեալ մնայցէ ի Փեսայէն իւրմէ երկրաւորէ. եւ հանդերձին ամբառնալ զոք յեպիսկոպոսաց յայն պատիւ Կաթողիկոսութեան ամենայն Հայոց, պարտ եւ արժան է միտ դնել. զի լինիցի ընտրութիւնն ըստ սահմանի կաթողիկէ Եկեղեցւոյս. մի՛ ինքնագլուխ եւ մի՛ գաղտագողի ձեռնադրութեամբ եւ մի՛ կաշառօք, զի մի՛ ընտրեալն եւ ընտրողք անկանիցին ընդ նզովիւք. քանզի ոչ հաճի Աստուած ընդ այնպիսի ձեռնադրութիւն: Այլ պարտ է առնել զընտրութիւնն համօրէն ժողովրդովք հայասեռ ազգիս՝ հանդերձ ամենայն ժառանգաւորօք եկեղեցւոյն մերոյ որ իցեն ընդ ամենայն աշխարհ, ի Տաճկաստան, ի Ռուսաստան, ի Պարսկաստան, ի Հնդկիս եւ ի զանազան կողմանս Եւրոպայ եւ Ասիոյ եւ այլոց մասանց աշխարհի:

Եւ լինի ընտրութիւնն այսպէս: Առաջնորդք վիճակաց եւ վանահարք, եպիսկոպոսք, քահանայք եւ ժողովուրդք տեղեաց տեղեաց ընտրեն ժողովով ի միջոյ իւրեանց զերկուս պատգամաւորս ի պատուաւոր եւ ի բարեպաշտ եւ ի խոհական անձանց, յեկեղեցականաց՝ այս ինքն յառաջնորդաց՝ յեպիսկոպոսաց կամ ի վարդապետաց կամ գէթ յաւագ երիցանց, եւ յաշխարհականաց եւ տուեալ նոցա զհրահանգս կարեւորս վասն ընտրելի անձին՝ առաքեն զնոսա ի Մայր Աթոռս ի սահմանեալ ժամանակի: Իսկ եթէ ոմանք ի հեռաւոր վիճակայնոց ի պատճառս անակնկալ կամ անհրաժեշտ խափանածոյ իրիք չկարիցեն արձակել ի սուրբ էջմիածին զպատգամաւորս առաքեն այսր զհաւանութիւն կամ զկարծիս իւրեանց կնքեալ նամակօք, որ բացեալ լինին ի մեծի ժողովի անդ յանդիման պատգամաւորաց ամենեցուն:

Ապա քննութեամբ ժողովոյն, որ գումարի ի տաճարիս սրբոյ էջմիածնի, նախ ընտրին բազմութեամբ ձայնից երեք արժանաւոր դատեալ եպիսկոպոսունք, որք իցեն վկայեալք յամենայնի, յուղղափառ դաւանութեամբ Քրիստոսական հաւատոյ եւ ջատագովք հայրենի աւանդից, նախանձաւորք ուղղութեան կարգաց եւ կանոնաց, եւ սիրողք եւ պահպանողք սուրբ Եկեղեցւոյ, անբամբաս քաղաքավարեալք ի գործս բարիս եւ ի զնացս առաքինիս, ի սրբութեան եւ յանատութեան բարուց, լցեալք գի-

տուժեամբ եւ իմաստութեամբ: Եւ ապա վերստին բազմութեամբ ձայնից լինի ընտրութիւն արժանաւորագունին յերէցունց անտի եպիսկոպոսաց, որ ունելով զամենայն վերոգրեալ բարեմասնութիւնս՝ յանձին բերիցէ զիսկական տիպ եւ զնմանութիւն հիմնադրի Արարատեան Մայր Աթոռոյս՝ սրբոյն Գրիգորի երկրորդ Լուսաւորչին եւ արժանաժառանգ յաջորդաց նորա, որպէս զի կարող իցէ հովուել ըստ արժանւոյն զժողովուրդն որ հաւատասցի նմա յԱստուծոյ»⁴⁰:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայոց Եկեղեցում գործել են կաթողիկոսական ընտրութեան որոշակի ձեւեր եւ կանոններ: Պատմիչների երկերում արձանագրված է կաթողիկոսական ընտրութեան ընթացքը: Փաստորեն միջնադարում Հայոց կաթողիկոսին հիմնականում ընտրում էին եկեղեցական եւ ազգային-եկեղեցական ժողովներում, որոնք կարող էին հրավիրվել կա՛մ ազգեցիկ իշխանի, կա՛մ էլ արքայի հրավերով՝ թագավորութեան շրջանում: Այդ ժողովներում, իհարկե, եղել են դեպքեր, երբ այս կամ այն իշխանը կամ թագավորը միջամտել է հայոց կաթողիկոսի ընտրութեանը: Եղել են դեպքեր, երբ օտար իշխաններն ու արքաներն են միջամտել ընտրութեանը, որը պայմանավորված է եղել տվյալ ժամանակաշրջանի պատմական, քաղաքական իրավիճակներով: Հայոց Եկեղեցու կաթողիկոսական ընտրութեան կանոնը որոշ չափով ներկայացվեց մատենագրական երկերի միջոցով: Այն քիչ թե շատ հիմնավոր կերպով արտացոլված է «Մաշտոց» ծիսամատյանում: Մաշտոցը եւ վերելում նշված մյուս փաստերն ապացուցում են, որ մեր Եկեղեցում եղել են կաթողիկոսական ընտրութեան կարգեր եւ կանոններ, որոնք գործածվել են որոշ ազգային եկեղեցական եւ այլ ժողովներում:

Կաթողիկոսական ընտրութեանը կարելու մի իրադարձություն է եղել եւ մնում մեր ազգային-եկեղեցական կյանքում, քանի որ հայրապետների գահակալությունը վավերացվել է նախ ընտրութեամբ, ապա՝ ձեռնադրութեամբ: Այդ պատճառով վերահիշյալ հոդվածով կարելու համարեցինք համառոտ անդրադարձ կատարել կաթողիկոսական ընտրութեանը՝ ի մասնավոր քննելով հատկապես ձեռագիր եւ տպագիր Մաշտոց ծիսամատյանները:

⁴⁰ Կանոն ձեռնադրութեան եւ օծման կաթողիկոսի եւ հայրապետի ամենայն հայոց, Վարդապատ, 1876, էջ 3:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Կաթողիկոսական ընտրություն, Մաշտոց, ձեռագիր, կանոն, ծիսամատյան, եկեղեցական ժողով, կաթողիկոս:

РЕЗЮМЕ

В Армянской Церкви издавна существовали определённые формы и правила избрания Католикоса. Историки зафиксировали этот процесс в своих трудах, поскольку в Средние века Католикосы Армении избирались, как правило, церковными и национально-церковными собраниями. Эти собрания созывались либо по инициативе влиятельного князя, либо по приглашению короля. В некоторых случаях князья или короли вмешивались в процесс избрания Католикоса, а иногда подобное вмешательство исходило и от иностранных правителей, что было обусловлено историческими и политическими реалиями данного периода.

Факт существования в Армянской Церкви определённого порядка избрания Католикоса находит отражение в историко-библиографических источниках, однако наиболее подробно он представлен в требнике «Маштоц». Этот литургический сборник, наряду с другими вышеупомянутыми источниками, подтверждает, что в нашей Церкви существовали установленные церемонии и правила избрания Католикоса, схожие с практиками, применявшимися в ряде национальных Церквей и религиозных общин.

Избрание Католикоса всегда было и остаётся значимым событием в национально-церковной жизни Армении, поскольку патриарший престол утверждается сначала через выборы, а затем через рукоположение. Именно по этой причине мы сочли важным осветить процесс избрания Католикоса в данной статье, уделяя особое внимание изучению рукописных и печатных обрядов требника «Маштоц».

SUMMARY

The Armenian Church had established procedures and regulations for the election of the Catholicos. Historians have documented the process of Catholicos elections,

noting that in the Middle Ages, the Catholicos of Armenia was primarily chosen by ecclesiastical and national-church assemblies. These assemblies could be convened either by an influential prince or at the invitation of the king. There were instances in which local princes or kings interfered in the election of the Armenian Catholicos, as well as cases where foreign rulers influenced the process. Such interference was shaped by the historical and political context of the time.

The existence of a structured set of rules for the election of the Catholicos in the Armenian Church is reflected to some extent in bibliographical sources, but it is more comprehensively outlined in the Mashtots ritual book. The Mashtots and other aforementioned sources confirm that established ceremonies and regulations governed the election of the Catholicos, similar to practices found in certain national churches and other religious communities.

The election of the Catholicos has always been, and remains, a significant event in our national-ecclesiastical life, as the patriarchal throne was legitimized first through election and then through ordination. Therefore, we find it important to provide a brief examination of the election process of the Catholicos, with a particular focus on the handwritten and printed versions of the Mashtots ritual books.



ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՒԱՆՑԻ

ՊԱՐՏԱՎՃԱՐ

Սկիզբը՝ 2023 թ. թիվ Դ., է., Թ., ԺԱ., 2024 թ. թիվ Ա.

Գ Լ Ո Ւ Խ Ը .

ՈՐՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏԻ ԴԱՏԱՍՏԱՆՈՎ ՈՒ ՎՃՌՈՎ
ԵՒ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅԱՄԲ ՑՈՒՅՑ Է ՏՐՎՈՒՄ
ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Արդ, եթե երկու մարդ իրար դեմ տարաձայնություն ու վեճ ունենան, նրանցից յուրաքանչյուրը, որքան հնարավոր լինի, կջանա ինքն իրեն արդարացնել, սակայն երբ նրանք ներկայանան դատավորի առաջ, այնտեղ հայտնի դատաստանով ու վկաներով հավաստիորեն կերեւա, թե որ կողմն է ճշմարիտ: Նույնպես եւ մենք տարաձայնություն ունենք երկաբնականների դեմ մեր Քրիստոս Աստծու վերաբերյալ: Քանի որ մենք ասում ենք, որ Քրիստոս ունի մեկ բնություն՝ աստվածայինի ու մարդկայինի անշփոթ միավորությունը: Եւ այդ նույն՝ մեկ անձով ու մեկ բնությամբ մի Քրիստոսին մենք կոչում ենք «Աստված եւ մարդ»՝ առանց երկվության ու բաժանման, որպեսզի թե՛ աստվածային ներգործությունները, որոնք Նա կատարեց, եւ թե՛ մարդկային կրքերն ու տկարությունները, որոնք Նա կրում էր, միեւնույն Աստվածորդուն վերագրվի եւ ոչ թե երկու տարբեր կամ այլ եւ այլ բնությունների: Իսկ երկաբնականներն ասում են, որ նույն Քրիստոս ունեւ երկու բնություն եւ հատկորոշված ու բաժանված էր երկու կերպարանքով՝ առանց միավորված լինելու. աստվածային բնությունը եւ կերպարանքը աստվածային գործեր էին գործում ու փառավորվում, իսկ բնությունն ու կերպարանքը մարդկային տկարության կրքերն էին կրում եւ թշվառանում: Ինչպես որ նրանց աղանդապետ Լեոնն է գրում իր տոմարում, «յուրաքանչյուր կերպարանքը գործում էր ըստ իր հատկության. մեկը հրաշքով պայծառանում էր, իսկ մյուսը՝ կրքերով թշվառանում»: Այժմ հարկավոր է, որ մենք նույնպես քրիստոնեական ճշմարիտ եւ ուղղափառ հավատը մեզ համար դատավոր դարձնենք՝ ըստ Սուրբ Պողոսի, իսկ աստվածային Սուրբ

Գիրքն էլ որպես վկա կանգնեցնենք: Քրիստոնեական ճշմարիտ հավատը, Սուրբ Գրքի վկայությունը հանդերձ, որ կողմին իր հավանությունը տա եւ վճռի, որ այդ կողմն է ճշմարիտ, հենց այդ կողմն էլ արդարն ու ընդունելին կհամարվի, իսկ ում որ հավատն իր հավանությունը չտա, եւ վկաները չվկայեն, ուրեմն նա էլ մեղանշած կողմն է, որը, հետեւաբար, պիտի դատվի:

Այդ, քրիստոնեական ճշմարիտ եւ ուղղափառ հավատն այսպես է վճռում ու իր հավատացյալներին պարտավորեցնում է հավատալ, որ մեր նախահայր Ադամը խախտեց Աստծու պատվիրանը եւ պարտապան դարձավ, ինչի պատճառով զրկվեց փառքից ու մատնվեց սատանայի ձեռքը՝ իր բոլոր սերունդներով հանդերձ ենթակա դառնալով մահվան իշխանությանը: Եւ նրա սերունդներից ոչ ոք չկարողացավ փրկության հնար գտնել ո՛չ միայն համայն մարդկության, այլ նաեւ նույնիսկ ինքն իր համար: Քանի որ, ըստ Սուրբ Ներսեսի, ամենքն էլ մեղքերի ու կրքերի ենթակա միեւնույն պարտապան բնությունն ունենին, ուստի չկարողացան որեւէ բան անել, որովհետեւ իրենց վերքի ուժեղ ցավերի համեմատ՝ զորավոր դեղի ու բժշկի կարիք ունեին: Այդ իսկ պատճառով էլ Ինքը՝ Աստված, գթալով իր պատկերին, փրկության հնար գտավ նրա համար: Եւ Բանն Աստված խոնարհվեց դեպի մարդու աղքատ ու մահապարտ բնությունը, ճշմարտապես վերցրեց նրա բնությունն ու կերպարանքը եւ իր հետ միացնելով՝ աստվածացրեց: Ապա այդ աստվածացած մարդկային կերպարանքով հայտնվեց երկրի վրա եւ կոչվեց «մարդ» ու «մարդու Որդի»:

Այդ նույն հավատը վճռում է նաեւ, որ նույն Աստված Բանն այդ աստվածացած մարդկային կերպարանքով Գողգոթայում կամավորապես խաչին բեւեռվեց ու Ադամի եւ նրա բոլոր սերունդների պարտավորության մեղքերն իր հետ խաչին գամելով՝ մաքրեց ու սրբեց: Եւ այդպիսով ջնջեց ու վերացրեց Ադամի պարտավորագիրը՝ ըստ Սուրբ Պողոսի վկայության: Եւ ապա սուրբ ու ամեն ինչով անարատ աստվածացած Մարմինը, որն Ադամից էր վերցրել, Ադամի փոխարեն մատուցեց Հայր Աստծուն՝ որպես անուշահոտ եւ հաշտարար զոհաբերություն, որով եւ Հայր Աստծուն հաշտեցրեց Ադամի ու նրա բոլոր սերունդների հետ: Եւ իր անգին ու աստվածային արյունը՝ իր Մարմինը՝ որպես Ադամի պարտքերի փրկագին, տվեց իր Հորը, եւ իր Հայրն Ադամին ու նրա բոլոր սերունդներին ազատեց սատանայի գերությունից եւ ժառանգորդ դարձրեց Հայր Աստծու որդեգրությանը: Եւ իր այդ նույն աստվածային Մարմինն ու

Արյունը տվեց Իր հավատացյալներին՝ որպես Հայր Աստծուն որդեգրության եւ հավիտենական կենդանության նշան ու առհավատչա: Ինչպես որ ասաց՝ «Ով ուտում է Իմ մարմինը եւ ըմպում Իմ արյունը, հավիտյան մահ չի տեսնի, այլ հավիտենական կյանք կունենա՝ Իմ մեջ բնակվելով, եւ Ես՝ նրա մեջ» (հմմտ. Հովհ. Զ. 55–57): Սա՛ է քրիստոնեական ճշմարիտ եւ ուղղափառ հավատի վճիռը, չափն ու սահմանը:

Արդ, ով որ ըստ սույն հավատի կայացրած վճռի հավատում է այն բանին, որ վերոգրյալ գործերն ու եղելությունները ճշմարտապես տեղի են ունեցել, եւ որ այդ ամենն ամբողջովին կատարվել է նույն եւ մեկ Խաչալի ձեռքով, ապա պարտավոր է հավատալ, որ այդ նույն Խաչալը նաեւ ճշմարիտ ու կատարյալ Աստված է: Քանի որ այդ բոլորն Աստծու գործերն են եւ ոչ թե մարդու, չնայած որ մարդկային կերպարանքի միջոցով նույն Աստված գործեց:

Սուրբ Գիրքը նույնպես վկայում է այն մասին, որ, այո՛, ճշմարիտ Աստված էր, որ խաչին բեւեռվեց ու այդ բոլոր գործերն արեց: Ըստ Սուրբ Պողոսի խոսքերի՝ «որ Աստծու կերպարանքով էր.... ծառայի կերպարանք առավ.... հնազանդ լինելով մինչեւ մահ եւ այն էլ՝ խաչի մահվան» (հմմտ. Փլպ. Բ. 6–8): Եւ թե՛ «քանզի, ինչ որ անհնար էր օրենքի համար.... Աստված հնարավոր դարձրեց. առաքեց Իր Որդուն մեղանշական մարմնի նմանությամբ եւ մեղքի համար ու մարմնի մեջ դատապարտեց մեղքը» (հմմտ. Հռոմ. Ը. 3): «Քանի որ Նա ոչնչացրեց հակառակության այն պարտամուրհակը, որ մեր դեմ էր, վերացրեց այն մեջտեղից եւ մեխեց խաչափայտին.... զինաթափ արեց սատանայի իշխանությունն ու հրապարակավ խաչատառակեց նրան» (հմմտ. Կող. Բ. 14–15), եւ խաղաղություն հաստատեց երկնքում ու երկրի վրա:

Եւ Սուրբ Պետրոսն ասում է. «Ապականացու արծաթեղենով եւ ոսկեղենով չէ, որ փրկվեցիք.... այլ թանկագին արյամբ Քրիստոսի, որ անբիծ եւ անարատ է, ինչպես մի գառ» (Ա. Պետ. Ա. 18–19): Եւ որպեսզի չկարծենք, որ Քրիստոս լուկ մարդ էր, իսկ Նրա արյունը՝ լուկ մարդու արյուն, առաքյալը հավելում է. «Նա, որ նախասահմանված էր նախքան աշխարհի ստեղծումը եւ երեւաց ժամանակների վախճանին ձեզ համար» (Ա. Պետ. Ա. 20): Այսինքն՝ Նա, Ով խաչվեց եւ Իր արյամբ փրկեց ձեզ, ի սկզբանե եւ հավիտենություններից էլ առաջ Աստված էր՝ Հոր կողքին լինելով, ամենքի կողմից հայտնի եւ երկրպագելի, չնայած որ այնուհետեւ Նա մարմնով հայտնվեց:

Եւ Սուրբ Հովհաննէսն էլ ասում է. «Այն Բանը, Որն ի սկզբանէ Հայր Աստծու մօտ էր եւ Աստված էր, Նա նույն Ինքը մարմին առավ» (հմմտ. Հովհ. Ա. 1–2), այսինքն՝ մարմնացավ: «Իսկ ովքեր Նրան ընդունեցին, նրանց իշխանություն տվեց լինելու Աստծու որդիներ» (Հովհ. Ա. 12): Եսային ասում է. «Նրանց բոլոր նեղությունների մէջ ոչ թէ ինչ-որ պատգամավոր կամ հրեշտակ փրկեց նրանց, այլ Տերն Ինքը» (Եսայի ԿԳ. 9):

Եւ Ինքը՝ Բանն Աստված է ասում Եսայու միջոցով. «Նայեցի, բայց օգնող չկար, ոչ ոք չկար, որ թրկունք դառնար ինձ. Իմ բազուկը փրկեց նրանց» (Եսայի ԿԳ. 5): Ահավասիկ, քրիստոնեական ճշմարիտ հավատի վճիռը եւ Սուրբ Գրքի վկայությունները, որոնք միեւնույն խաչալ Քրիստոսին ներկայացնում են միաժամանակ եւ որպէս Աստված, եւ որպէս մարդկային բնության Փրկիչ: Ուրեմն, ովքեր ասում են, որ Աստված չէ, որ խաչվեց, կամ թէ՛ խաչվածն ուրիշ մեկն էր, Փրկիչը՝ մեկ ուրիշը, նրանք այդպիսով հակառակվում են քրիստոնեական հավատին ու Սուրբ Գրքին: Ուստի եւ այդպիսիք հանցավոր ու դատելի են՝ ըստ Սուրբ Պողոսի այն վճռի, թէ «ամենայն ինչ, որ հավատից չէ, մեղք է» (Հռոմ. ԺԳ. 23):

Դարձյալ, քրիստոնեական ուղղափառ հավատը վճռում եւ հավատացյալներին հարկադրում է հավատալ, որ Աստված Իր բոլոր արարածների միջից մարդուն առավելագույն ու գերազանց սիրով է սիրում, քան թէ մյուս բոլորին, քանի որ միայն մարդուն Իր պատկերով ստեղծեց, ինչպէս նաեւ՝ մյուս բոլոր արարածներին միայն խոսքով ասաց, եւ եղան, իսկ ահա մարդու պարագայում, ասես խորհելով եւ հոգածությամբ, երկրի հողը վերցրեց ու ձեռքով ստեղծեց ըստ Իր պատկերի, ինչպէս որ վկայում է Սուրբ Գիրքը: Եւ մարդուն իշխան կարգեց Իր բոլոր արարածների վրա: Այս իսկ պատճառով էլ, նախնի սուրբ հայրերից սկսած, սովորություն է ձեւավորվել, որ գրքերում ու խոսքերում ամենուրեք Աստծուն «մարդասեր» են կոչում, եւ ոչ թէ «այլ արարածասեր»:

Սուրբ Գիրքը նույնպէս վկայում է, որ Աստված առավելապէս սիրեց մարդուն: Սուրբ Պողոսն ասում է, թէ «Աստված ձեզ կմոտենա իբրեւ որդիների» (Եբր. ԺԲ. 7): Եւ Աստված Ինքն էլ Եսայու շուրթերով ասում է, թէ՛ «Զավակներ ունեցա եւ մեծացրի» (Եսայի Ա. 2): Եւ թէ՛ «Եթէ կինը մոռանալու էլ լինի իր մանկանը, Ես, սակայն, քեզ չեմ մոռանա» (հմմտ. Եսայի ԽԹ. 15): Իսկ թէ որքան է սիրում այդ պատկերին ու Որդուն, լսիր Սուրբ Պողոսից. «Նա, որ Իր Որդուն իսկ չխնայեց, այլ մեր բոլորի համար մահվան մատնեց Նրան, էլ ի՞նչ մեզ չի շնորհելու» (Հռոմ. Ը. 32): Եւ Սուրբ

Հովհաննեսն ասում է. «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդուն մահվան մատնեց մեզ համար» (հմմտ. Հովհ. Գ. 16):

Դարձյալ, քրիստոնեական հավատը վճռում է, որ քանի որ Աստված այսպիսի գերազանց սիրով սիրեց մարդուն, որին իր պատկերով էր ստեղծել, ուստի Նա, որպես Նախատիպ, ջանում է հնարավորին չափ իր պատկերն իրեն նմանեցնել: Արդ, Որդի Աստված, տեսնելով, որ իր պատկերն ապականվել է մեղքի տիղմի մեջ, իր գերազանց սիրուց դրդված՝ խոնարհվեց դեպի մարդը՝ նրան վերանորոգելու համար: Եւ այս անգամ ոչ միայն այն առաջին անգամվա պես նմանեցրեց իրեն՝ որպես իր պատկեր, այլ ըստ ամենայնի նույնացրեց ու միացրեց իրեն ու նրա հետ մեկ եղավ, այնպես որ Նրան տեսնողները, թեպետ մի Մարդու էին տեսնում, սակայն Նրան «Աստծու Որդի» էին կոչում: Ինչպես որ Ավետարանում է ասվում, թե «Իրոք այս մարդն Աստծու Որդի էր» (Մարկ. ԺԵ. 39), ինչը երևում է բազմաթիվ հատվածներում: Այդպիսով՝ նաեւ Նա իր պատկերի բնական կրքերը կրեց, որպեսզի աստվածացնի նրան՝ համաձայն Աստվածաշունչ Սուրբ Գրքի: Քանի որ իր պատկերի բնությունը վերցնելով՝ միացրեց իր հետ ու նրա կերպարանքով հայտնվեց որպես ճշմարիտ մարդ: Եւ այդ նույն կերպարանքով էլ բազմեց Հոր աջ կողմում՝ փառքի աթոռին, ու երկրպագություն ընդունեց բոլոր արարածներից՝ ըստ Սուրբ Պողոսի (տե՛ս Փիլիպ. Բ. 10–11):

Դարձյալ, սույն հավատը վճռում եւ մեզ հարկադրում է հավատալ, որ Բանն Աստված այն անհատ ու հատուկ մարմինը վերցրել էր մեր բնությունից, միացրել էր իրեն ու աստվածացրել էր, եւ այդ մարմնի միջնորդությամբ մարդկային ամբողջ բնությունն էր հաղորդակից դարձրել իր Աստվածության հետ: Քանի որ եթե այդպես չվարվեր, ապա Նրա մարդանալով՝ մեր հասարակ բնությունն ի՞նչ օգուտ կունենար:

Վկայում է նաեւ Սուրբ Գիրքը: Սուրբ Պետրոսն ասում է, թե՝ «Դրանով, այսինքն՝ Նրա այդ մարմնով, մեծամեծ խոստումներ պարգևեցին մեզ», այն է՝ աստվածային բնությանը հաղորդակից լինելը (տե՛ս Բ. Պետ. Ա. 4): Եւ Սուրբ Պողոսն ասում է, թե՝ «...որովհետեւ... Ինքը, այսինքն՝ Բանն Աստված, մերձավորությամբ մասնակից եղավ նրանց, այսինքն՝ զավակների բնությանը, ինչի շնորհիվ էլ զավակները հաղորդակից եղան Նրա մարմնին եւ արյանը» (տե՛ս Եբր. Բ. 14): Այսպիսով՝ կամենում է ասել, որ ինչպես Ինքը՝ Բանն Աստված, մարդկային զարմից մարմին առնելով՝ հաղորդակից եղավ մեր մարդկային ազգին՝ մեր ազգա-

կանն ու մերձավորը եւ մարդու Որդի լինելով, այդպես էլ մարդկության զավակներին հաղորդակից դարձրեց իր Աստվածությանը եւ նրանց Աստծու որդիներ դարձրեց: Քանի որ անհրաժեշտ էր, որ Նա ամեն ինչով իր եղբայրներին նմանվեր, որ հավատարիմ Քահանայապետն իր աստվածային Գահից ողորմածությամբ ընդուներ նրանց՝ Բանն Աստծու կողմից մարդկության մեղքերը քավելու շնորհիվ: Որովհետեւ ինչպես որ Ինքը, այսինքն՝ Բանն Աստված իսկ չարչարվեց մարմնով՝ փորձության մատնվելով, այնպես էլ կարող է օգնել փորձության ենթարկվածներին (հմմտ. Եբր. Բ. 18):

Թող որ համառոտներն իրենց մտքում ունենան Սուրբ Պողոսի խոսքերը, նրա՛, ով Աստծու խորհուրդների հազարապետն էր: Որովհետեւ այս երանելին կամենում է ասել, որ Բանն Աստված իր պատկերը թշվառության վիճի մեջ ընկած եւ սատանայից գերեվարված, բոլորովին անօգնական կացության մեջ տեսնելով՝ իր գերազանց սիրո մղումով Ինքը, որ Աստծու կերպարանքով ու Աստծու Որդի էր, խոնարհվեց ու ծառայի կերպարանք առավ եւ եղավ մարդ ու մարդու Որդի: Եւ մեզ՝ մեղավորներին ու անօգնական գերյալներին ազգական ու մերձավոր դարձավ, որպեսզի իր այդ ազգակցության շնորհիվ փրկություն շնորհի իր ազգին: Դրա համար Նա՝ որպես քաջ Հովիվ, իր անձը տվեց իր ազգի համար, ու Ինքն անմեղ լինելով՝ խաչի վրա պատարագվեց իր ազգի մեղքերի համար՝ գոչելով Հորը, թե՛ ^a «Հայր, ներիր նրանց մեղքերը» (հմմտ. Դուկ. ԻԳ. 34): Եւ այդպիսով՝ Նա բարկացած Հայր Աստծուն հաշտեցրեց իր ազգի հետ ու բռնավոր սատանային մարդկանց ոտքի կոխան արեց, խափանեց նրա իշխանությունը եւ իր ազգին նրա ծառայությունից ազատագրելով՝ Հայր Աստծու Որդին դարձրեց նրան (ազգին)՝ ասելով. «Ուրախացե՛ք, որ ձեր անունները գրված են երկնքում» (Դուկ. Ժ. 20): Ահա սա՛ է նշանակում Սուրբ Պողոսի այն խոսքը, թե՛ ^a «Ինքը մերձավորությամբ մասնակից եղավ զավակներին», որպեսզի իր մահվամբ խափանի սատանայի իշխանությունը եւ փրկի նրանց, ովքեր մշտապես վտարանդիներ էին՝ մահվան երկյուղով ծառայության մատնված լինելով: Որովհետեւ Նա պետք է ամեն ինչով նմանվեր իր եղբայրներին, որպեսզի ողորմածություն ցուցաբերեր նրանց հանդեպ: Եւ ինչպես որ Նա նրանց չարչարելի մարմինը վերցրեց եւ դրանով չարչարվեց ու փորձության մատնվեց, այնպես էլ կարող է փորձության ենթարկված իր ազգին օգնական լինել: Ահավասիկ, քրիստոնեական հավատն այսպես է վճռում, եւ Սուրբ

Գիրքը նույնպես հայտնապես վկայում է, որ Ինքը՝ Բանն Աստված, մարդկային զարմից մարմին առավ ու ամեն ինչով կցորդեւ մերձավոր եղավ մարդկանց ու նրանց «եղբայրը» կոչվեց: Եւ մարմնի փորձությունը ենթարկվեց՝ նրա (մարմնի, մարմնական) չարչարանքները կրելով ու նրանով (այդ մարմնով) մեռնելով, ու Իր մահվամբ էլ Իր ազգի զավակներին ազատագրեց սատանայի ծառայությունից, ինչպես որ ցույց տվեցինք:

Իսկ ահա քաղկեդոնականներն ասում են, թե միայն մարդկային բնությունն էր խաչի վրա, մինչդեռ աստվածային բնությունը բոլորովին անհաղորդ եւ բաժանված էր նրանից՝ իր փառքի մեջ գտնվելով: Եւ եթե այդպես է, ուրեմն Բանն Աստված ո՛չ նմանվեց մեզ, ո՛չ էլ մեր ազգականը դարձավ ու ո՛չ էլ հանուն մեզ չարչարվեց ու մեր տկարության փորձառությունը կրեց եւ ո՛չ օգնական եղավ մեզ ու ո՛չ էլ ազատեց սատանայի ճիրաններից: Ահավասիկ, քաղկեդոնականները հայտնապես հակառակվում են քրիստոնեական հավատին ու Սուրբ Գրքին, ինչի պատճառով էլ որ մեղանշում են:

Դարձյալ, քրիստոնեական հավատը վճռում եւ հավատացյալներին հարկադրում է հավատալ, որ Աստված ամենակարող է, եւ Նրա համար որեւէ բան, եթե Նա կամենա, անկարելի չէ:

Եւ Սուրբ Գիրքն է վկայում. ինչպես ասում է Իմաստունը, «...որովհետեւ յուրաքանչյուր ժամ Քեզ հետ է Քո ամենազոր ուժը, եւ ո՞վ կարող է դեմ կանգնել քո բազկի զորությունը» (Սող. Իմաստ. ԺԱ. 22), «եւ ո՞վ կարող է ասել Քեզ, թե ինչ ես անում» (Սող. Իմաստ. ԺԲ. 12): Եւ Ավետարանն էլ ասում է. «Աստծու համար ամեն ինչ կարելի է» (Մատթ. ԺԹ. 26):

Արդ, ըստ մեր հավատի վճռի եւ Սուրբ Գրքի վկայության՝ մենք աներկբայորեն հավատում ենք, որ այն ամենակարող Աստված ինչպես որ կարողացավ ոչնչից գոյացնել բոլոր արարածներին եւ չորս իրար հակառակ տարրերը միաբանել մարմնավորների մեջ ու մանավանդ մարդուն անմարմին հոգով եւ հողեղեն մարմնով միավորել մեկ բնության մեջ՝ դրանցից յուրաքանչյուրի էությունն ու բնությունն անշփոթելի պահելով միեւնույն անհատ անձի մեջ, այդ նույն Աստված կարող է նաեւ Իր աստվածային, անմահ ու անախտակիր բնության միավորել մարդկային մահկանացու եւ ախտակիր բնության հետ՝ մեկ անձի մեջ, ու յուրաքանչյուրի էությունը եւ բնությունն անշփոթ ու անալլայելի պահել: Մինչդեռ քաղկեդոնականներն ասում են, որ եթե աստվածային բնությունը միավորվի մարդկային բնության հետ, ապա այդ մարդկային

բնության կրքերին կենթարկվի կամ կխառնվի նրա հետ: Ուրեմն քաղկեզոնականները չեն հավատում Աստծու ամենակարողությանը:

Սակայն մենք հավատում ենք, որ Բանն Աստված Իր աստվածային կատարյալ բնությամբ միավորվեց մարդկային կատարյալ բնության հետ եւ նրա հետ մեկ բնություն եղավ՝ Իր աստվածային մեկ անձով եւ այն նույն՝ մարդկային բնությամբ ու մարմնով, որին միացել էր: Ինքը՝ Բանն Աստված, կամավորաբար եւ ոչ թե հարկադրաբար կրեց մարդկային բոլոր կրքերը՝ բացի մեղքից ու անգոսնելի կրքերից, եւ ըստ Իր աստվածային պարզ բնության՝ բոլորովին անկիրք եւ անախտ մնաց: Քանի որ նույն Ինքը՝ Բանն Աստված, չարչարվում էր Իր չարչարելի մարմնով, բայց եւ չարչարանքների մեջ Իր Աստվածության մեջ բոլորովին անչարչարելի ու անկիրք մնաց: Մեռավ եւ թաղվեց նույն Բանը՝ Իր մարմնով, բաց եւ մահվան մեջ էլ կենդանի ու անմահ էր եւ միաժամանակ երկնքում էր Հոր հետ՝ փառքի աթոռին:

Այսպես է հավատում քրիստոնեական ճշմարիտ հավատը, եւ այսպես է վկայում Սուրբ Գիրքը, ինչպես որ ասացինք: Որովհետեւ եթե այն խաչալը կատարյալ ու ճշմարիտ Աստված չլիներ, չէր կարողանա օգնել Իր հավատացյալներին եւ ո՛չ էլ կարող կլիներ փրկություն շնորհելու, իսկ քրիստոնեական հավատն ու Սուրբ Գրքի վկայություններն էլ սուտ կլինեին:

Շարունակությունը՝ հաջորդիվ

Գրաբարից փոխադրությունը՝

ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ

ԵՒ ԳԵՒՈՐԳ ՍՐԿ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ



ՀԱՄԱՅՆ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՊԱՐԶ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ¹

Սկիզբը՝ թիվ է.

Ե. Առաւելում են՝ պատճառաբանելով, թե նախորդությունը պատճառ է սկզբնավորության, իսկ ամբողջ Սուրբ Գրքում Որդին հիշատակվում է Հոգուց առաջ, ուրեմն սկիզբն է Սուրբ Հոգու:

Պատասխանում եմ՝ ասելով, որ հրեշտակների շարքում ամենից առաջ գրվում է սերովբեն, որն սկիզբ չէ քերովբեների համար, եթե ոչ՝ դասով ու կարգով. բացի այդ՝ սերովբեն չի ստեղծվել քերովբեից առաջ, այլ՝ միասին՝ Աստծու մեկ խոսքով: Ինչպես տեսականների գոյացության ժամանակ նախ գրվում է նյութականը, եւ ապա՝ աննյութականը, որը, սակայն, չի նշանակում, թե նյութականն սկիզբն է աննյութականի, քանի որ, ըստ Դավիթ Փիլիսոփայի, «հակադրյալ տեսականների մեջ չկա առաջին ու վերջին»², այնպես եւ Որդին, հիշատակվելով Սուրբ Հոգուց առաջ, պատճառը չէ Նրա սկզբնավորության. ինչպես Սբ. Գրիգոր Նարեկացին է ասում. «Երրորդության մեջ նախորդ հիշվողը մեծ չէ մյուսից»³, եւ կամ՝ «նվաստ չի լինում» իր նմանակցից հետո հիշվելով⁴: Նմանատիպ հատվածներ, որտեղ Հայրը հիշատակվում է Որդուց հետո, իսկ Որդին՝ Հորից առաջ, առկա են նաեւ Սուրբ Գրքում, հետեւաբար, ըստ իրենց տրամաբանության, Որդին սկզբնավորության պատճառով է գրվում Հորից առաջ: Ահա թե ինչ է գրում Պողոս առաքյալը. «Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սերը եւ Սուրբ Հոգու հաղորդությունը ձեզ հետ

¹ ՀԱԿՈՒՔ ՊԱՏՐԻԱՐԳ ՆԱԼՅԱՆ, Գիրք կոչեցեալ վէմ հաւատոյ, Կ. Պոլիս, 1733, էջ 15–57 (այսուհետ՝ Վէմ Հաւատոյ):

² Տէն «...Մատենագրութիւնք», 1833, հատկապես՝ «Դավիթ Փիլիսոփայի Ներգինացւոյ Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիրի», «Յաղագս տեսակի», պրակք ԺԷ., էջ 298–299 (բն. «...վասն զի յընդդիմաբաժանեալ տեսակսն՝ ոչ է բնութեամբ առաջին եւ վերջին...»), ամբողջական պրակը տես էջ 292–301:

³ Սբ. Գրիգոր ՆԱՐԵԿԱՅԻ, Մատյան ողբերգության (Նարեկ), գրաբարից թարգմանեց Մ. ԽԵՐԱՆՅԱՆԸ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2023, Բան ԼԴ., էջ 201 (այսուհետ՝ «Մատյան ողբերգության», 2023):

⁴ Անդ, էջ 202:

լինեն» (Բ. Կորնթ. ԺԳ. 13): «Աստծու սեր» ասելով՝ ցույց է տալիս Հորը՝ նրան դասելով Որդուց հետո: Իսկ Հուդա առաքյալի թղթի վերջին հատվածում Սուրբ Հոգին նախակարգված է Հորից եւ Որդուց առաջ. «Իսկ մենք, սիրելիներ, մեր անձերը կառուցենք ունեցած հավատի սրբությամբ, աղոթենք Սուրբ Հոգով, պահենք մենք մեզ Աստծու սիրով՝ սպասելով մեր Տեր Հիսուս Քրիստոսի ողորմությանը հավիտենական կյանքի համար» (Հուդա Ա. 20):

Սուրբ Երրորդությանն առնչվող՝ Պողոս առաքյալի վերոնշյալ խոսքի մեկնության մեջ երանելի Հովհան Ոսկեբերանը հետեւյալն է ասում. «Ողջունով եւ համբույրով կատարված աղոթքի մեջ է իրագործվում խոսքը, մեծ ճգնություններ դրանք միավորվում են Տիրոջը եւ դառնում սուրբ Երրորդության բնակարան»⁵: Իսկ Հովհաննես առաքյալն ասում է. «Ամեն ոք, որ առաջ է անցնում եւ չի մնում Քրիստոսի վարդապետության մեջ, չի ճանաչում Աստծուն: Ով մնում է վարդապետության մեջ, նա ընդունում է եւ Որդուն, եւ Հորը» (Բ. Հովհ. Ա. 9): Արդ՝ այսպիսի նախորդությունը եւ հետնորդությունը մատնացույց են անում ոչ թե նվաստությունը, այլ համակամությունն ու համագոյակցությունը:

Եթե կարող են, ապա թող ասեն, թե Որդին է սկիզբը, որովհետեւ նա նախակարգված է Հորից առաջ:

գ. Առարկում եմ՝ ասելով, թե Սբ. Գրիգոր Լուսավորիչը հետեւյալն է ասում. «Հայրը ինչ-որ մեկից սկիզբ չի առնում, Որդին Հորից է, իսկ Սուրբ Հոգին՝ Նրանց էությունից»⁶:

Պատասխանում եմ՝ ասելով, որ կանոն կա աստվածաբանության մեջ, ըստ որի՝ աստվածային էությունը ո՛չ ծնում եւ ո՛չ էլ ծնվում է⁷, իսկ եթե «Նրանց էությունից» ասելով՝ հասկանում են բխումը, ուրեմն աստվածային էությունը կբազմանա՝ ըստ անձերի քանակի, որը սխալ է, որովհետեւ [Գրիգոր] Աստվածաբանն ասում է իր ճառերում, թե «միությունը Երրոր-

⁵ S^c J. — P. MIGNE, Patrologiae Graecae, t. LXI: S. Joannes Chrysostomus, Paris, 1862, Homilia XXX, էջ 607—608: Ս. Հովհան Ոսկեբերանի՝ սուրբգրային սույն հատվածի ամբողջական մեկնության լատ. եւ հուն. բնագրերը տե՛ս անդ, էջ 607—610:

⁶ Հմմտ. «Սրբոյ Գօրն մերոյ Երանելոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք լուսաւորք», յառաջաբանով, համեմատութեամբ եւ ծանօթութիւններով Ա. Տէր-Միքէլեանի, տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ էջմիածնի, 1894, Ճառ Ա., էջ 1, Ճառ Բ., էջ 4, Ճառ Զ., էջ 55:

⁷ Հմմտ. «Համառօտութիւն Աստուածաբանութեան...», 1715, գիրք Ա., գլ. Դ., էջ 15:

դուլթյամբ, եւ Երրորդուլթյունը միուլթյամբ է բարեպաշտյալ»⁸, իսկ ըստ Ալբերտոս Մեծի՝ «աստվածային Բնուլթյան միուլթյամբ Երեքն են Անձերը»⁹: Իր հերթին՝ Սբ. Աթանասն իր դավանուլթյան մեջ գրում է. «Այս է ուղղափառ հավատը, որ միուլթյունը Երրորդուլթյան մեջ, իսկ Երրորդուլթյունը միուլթյան մեջ պատուէք»¹⁰, հետեւաբար «Նրանց էուլթյունից» խոսքերը հարկավոր է ընկալել ո՛չ թե անձնավորական, այլ բնուլթյան նույնուլթյան իմաստով, քանի որ Արիոսը, ինչպես հայտնի է Կյուրեղ Ալեքսանդրացու «Գիրք գանձուց» երկի բազում հատվածներից, ո՛չ միայն Որդուն, այլ նաեւ Սուրբ Հոգուն էր ստորադաս ու պաշտոնատար եւ օտար Բնուլթյունից համարում¹¹: Այդ իսկ պատճառով Սբ. Գրիգորն այս խոսքերն ասել է ընդդէմ Արիոսի մոլորուլթյան՝ բացատրելով, որ Սուրբ Հոգին օտար չէ Հոր եւ Որդու էուլթյանը, այլ Նրանց էուլթյունից է: Սակայն երկրի վրա ներգործելու պատճառով ո՛չ միայն ելնում է Հորից, այլ նաեւ՝ Որդուց, որովհետեւ գործի հանդեպ եղած համակամուլթյամբ ելնում է Հորից ու Որդուց, ուղարկվում է Հոր եւ Որդու կողմից, շնորհվում է Հոր ու Որդու կողմից, վերցնում եւ տալիս է Հորից ու Որդուց՝ որպես Նրանց համագոյակից եւ համաբնութենակից: Սակայն ըստ գոյուլթյան եւ պատճառի՝ այսպես չէ, այլ ելնում է Հորից, ինչպես Որդին՝ ծնվելու, այնպես եւ Սուրբ Հոգին՝ բխելու միջոցով: Իր «Վիճաբանուլթյան» Բ. հատորում այսպես է վկայում նաեւ Հովհան Դամասկացին¹², որին լատինները սուրբ են անվանում, բայց չեն ընդունում նրա խոսքերը:

է. Առարկում են՝ հիմնավորելով, թե Սբ. Գրիգոր Նաւեկացին ԽԸ. գլխի վերջում հետեւյալն է ասում. «Եւ քեզ՝ սկզբիդ միակ եւ անսկզբիդ, սկզբիդ եւ

⁸ Տէս J.—P. MIGNE, Patrologiae Graecae, t. XXXV: S. GREGORIUS NAZIANZENUS, Paris, 1857, Oratio VI. XXII, էջ 749 (հուն.), էջ 750 (լատ.), իսկ սույն ճառի ամբողջական տարբերակը տես անդ, էջ 719–752:

⁹ Հմմտ. «Համառօտութիւն աստուածաբանութեան...», 1715, գիրք Ա., գլ. Ժ., էջ 26:

¹⁰ «Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմացութիւնք», հրատ.՝ Հ. ԵՍԱՅԻ ՏԱՅԵՅԻ, Ի Վենետիկ, 1899, էջ 478 եւ էջ 480 (այսուհետ՝ «Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք...», 1899): Հմմտ. «Համառօտութիւն Աստուածաբանութեան...», 1715, գիրք Ա., գլ. Բ., էջ 12:

¹¹ Տէս 41-րդ ծանոթագրուլթյան մեջ գետեղված ձեռագրերի համապատասխան հատվածները:

¹² Տէս “Patrologiae Graecae”, t. XCIV, էջ 1503–1582: Հմմտ. ՄՄ՝ ձեռ. 20, 63, 101, 102, 103, 116, 698, 1686, 1739, 1740, 1744, 1960, 2332, 2333, 2334, 3156, 3638, 3883, 4027, 4070, 4288, 5789, 5859, 6031, 7151, 7894, 8132, 8444, 9900:

սկիզբների սկզբնավորողիդ՝ Սուրբ Երրորդությանդ...»¹³, ուրեմն հայտնի է, թե երկու սկզբներից է Սուրբ Հոգին:

Պատասխանում եմ՝ այնպես չէ, ինչպես նրանք են կարծում, թե երկուսից է ցույց տալիս բխումը, քանի որ երկուսից բխողն ունի երկու սկիզբ, բայց, քավ լիցի, թե այս է ասում: Բացի այդ՝ «Առաքինությունների գրքում» գրված է, թե «Հայրն ու Որդին մի սկիզբ են Սուրբ Հոգու համար»¹⁴ եւ ունեն մի բխողական զորություն, չնայած որ սա եւս անհնարին է, քանի որ երկուսից բխողն ունի երկու սկիզբ: Իսկ Սբ. Գրիգորի խոսքը մեկնելի է այսպես. առաջին «սկզբիդ», ինչպես նաեւ «անսկզբիդ» բառերի տակ նկատի ունի Հորը, իսկ հետո, երբ ասում է «սկզբիդ»՝ Որդուն, եւ հետո «սկիզբների սկզբնավորողիդ» արտահայտությամբ մատնացույց է անում Սուրբ Հոգուն, որը սկզբնավորում է Հոր ու Որդու արարչագործությունը: Իսկ եթե Որդուն սկիզբ անվանելով՝ ցույց է տալիս Հոգու բխումը Որդուց, այդ դեպքում Հոգուն սկզբնավորող կոչելով՝ ո՞վ է սկիզբ առնում Նրանից, քանի որ Որդին սկիզբ չի առնում Նրանից, իսկ եթե այդպես չէ, ապա Հայրը պետք է Սուրբ Հոգին անվաներ Քրիստոսինը. Հայրը նույնպես չի սկսում նրանից, քանի որ անսկիզբ է, հետեւաբար պարզ է, որ Սուրբ Հոգին Հոր եւ Որդու հետ միասին սկզբնավորում է արարչագործությունը: Եւ այս դիտարկումը նմանատիպ խոսքերով մեկնաբանում է ԼԲ. ճառի վերջնամասում՝ ասելով. «Եւ քեզ՝ պատճառիդ միակ, եւ մյուսիդ՝ միակ պատճառից, եւ ունեցողիդ մի պատճառ»¹⁵: Ուրեմն՝ եթե Սուրբ Հոգին, լինելով Հորից, ունի մի պատճառ, պարզ է, որ միայն Հորից է համարում Սուրբ Հոգուն, այլ ոչ Որդուց, քանի որ Հայրն անպատճառ է, Որդին միակ պատճառից է, իսկ մի պատճառ ունեցողը Սուրբ Հոգին է, որը, իբրեւ բխման պատճառ, ունի Հորը: Իսկ եթե Սբ. Գրիգորը վերագրյալ խոսքն ասած լիներ նրանց մտադրությամբ, ապա այլ տեղում չէր փոխի խոսքը. եթե փոխեր, ուրեմն կհակասեր ինքն իրեն, քանզի դավանության ճառում ասում է հետեւյալը. «Մշտապես օրհնում, բարեբանում ենք Հոր

¹³ Տե՛ս «Մատյան ողբերգության», 2023, Բան ԽԸ., էջ 266:

¹⁴ ՊԵՏՐՈՍ ԱՐԱԳՈՆԱՅԻ, Գիրք առաքինութեանց, Վէնէտիկ, 1721, մասն երկրորդ, գլ. Ժ., էջ 53: Հմմտ. ՄՄ ձեռ. 46, 93, 164, 1335, 1336, 1713, 1738, 2299, 3639, 3776, 4048, 4061, 4062, 4064, 4142, 4147, 4148, 4445, 5090, 5327, 5456, 5944, 6920, 8110 եւ այլն:

¹⁵ Հմմտ. «Մատյան ողբերգության», 2023, Բան ԼԲ., էջ 199:

եւ Որդու հետ Նրանց էակից Հոգուն, Նա ամենազոր, կատարյալ... է»¹⁶ (Բան ԼԴ.), իսկ էության համար ապացուցեցինք, որ այն ոչ թե բխման, այլ բնության նույնության նշան է: Սուրբ Հոգուն նվիրված ճառում էլ գրում է. «Ո՛վ զարմանալի եւ սքանչելապայծառ, Նրա էությունից հեղված անթերի բնություն, լույս՝ լույսից, Բարձրյալի Հոգի, պատկեր անփոփոխ...»¹⁷ եւ այլն: Արդ՝ չի ասում էություններից, այլ՝ էությունից, այսինքն՝ Հորից, եւ չի անվանում լույս՝ լույսերից, այլ՝ լույսից. բացի այդ՝ «Հոգի Բարձրյալի» ասելով՝ մատնացույց է անում Հորը, ինչպես որ գրված է Սուրբ Աստվածածնին ուղղված աղոթքում՝ «...Բարձրյալ Հորից զորացած եւ հովանավորված...»¹⁸ (Բան Զ.), իսկ Գաբրիել հրեշտակապետն ասում է. «Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ» (Ղուկ. Ա. 35):

ը. Առաքելում են, հիմնվելով Եմեսիայի եպիսկոպոս Սբ. Սեբեթիանոսի Ա. ճառի վերջին հատվածի վրա, որտեղ գրված է. «Անձնունդ Հայր Աստծուն, եւ Նրանից ծնված Միածին Որդուն, եւ Սուրբ Հոգուն՝ Նրանց էությունից ելնողին. Երեքին՝ մի էությունից...»¹⁹:

Պատասխանում եմ՝ այս խոսքերը ներդաշնակ են Լուսավորչի խոսքին, որովհետեւ «էությունից» ասելով՝ նկատի չունի բխումը, քանի որ բխումն անձնական է եւ ոչ՝ բնութենական, իսկ այստեղ վկայաբերված խոսքում առկա է իրականում չգրված, բայց լսելի «որ» հարաբերականը, հետեւաբար պետք է լինի այսպես՝ «բխող Սուրբ Հոգուն, որ Նրանց էությունից է», որովհետեւ Դավիթ Փիլիսոփան «Յաղագս մեկնութեան Պերիարմենիաս» երկի մեջ հետեւյալն է ասում. «Երբեմն պատահում է, որ բառերը պարզ են, իսկ իմաստները՝ բաղադրյալ»²⁰: Այսպես օրինակ՝ երբ ինչ-որ մեկն ասում է՝ «գործում եմ», պարզ է, որ նկատի ունի, թե՛ «ես եմ գործում»: Նույն կերպ եւ այս խոսքի մեջ բառը պարզ է, իսկ իմաստը՝

¹⁶ Անդ, Բան ԼԴ., էջ 216:

¹⁷ «Սրբոյն հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք», Վեներիկ, 1840, էջ 455, էջ 456 («Գանձ ի գալուստ Սուրբ Հոգւոյն», էջ 455–460):

¹⁸ Հմմտ. «Մատչան ողբերգության», 2023, Բան Զ., էջ 486:

¹⁹ Հմմտ. «Սեբեթիանոսի Եմեսացւոյ Գաբաղացւոյ եպիսկոպոսի ճառք ժե.», ի Վենետիկ – Ս. Ղազար, 1830, Ճառ Ա., էջ 7 (այսուհետ՝ «Սեբեթիանոսի... ճառք ժե.», 1830):

²⁰ Տե՛ս «...Մատենագրութիւնք», 1833, հատկապես՝ «Պերիարմենիաս Արիստոտէլի թարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւթէ», պրակք Գ., էջ 491 (բն.՝ «...քանզի եւ սոքա երբեմն պարզք, եւ երբեմն շարամանեալք եղանին...»), ամբողջական պրակը տե՛ս էջ 491–492:

բաղադրյալ, որովհետեւ հեղինակն ինքն է նույն ճառում բացահայտ կերպով ասում, թե՝ «խոստովանում ենք Բանի մի ծնունդ, եւ ճշմարտության մի Հոգի, որ ելնում է Հորից. երեք եւ մի, մի եւ երեք»²¹: Մեկ այլ մասում դարձյալ ասում է. «Հոր անձը Որդու անձ չէ, ոչ էլ Որդու կամ Սուրբ Հոգու անձն է Հոր անձ, չնայած որ ի սկզբանե Հոր մի էությունից են Որդին եւ Սուրբ Հոգին»²²:

թ. Առարկում են՝ պատճառաբանելով, թե Սուրբ Հոգին կոչվում է Աստծու մատ ինչպես եգիպտացիների մոզերն էին ասում, թե՝ «Մրա մեջ Աստծու մատը խառն է» (Ելք Լ. 19): Քրիստոս նույնպես ասում էր. «Աստծու մատով եմ հանում դեւերին» (Դուկ. ԺԱ. 20): Իսկ երբ ասում է «Աստծու մատ», հայտնի է, որ նկատի ունի Նրա աջ ձեռքը, քանի որ Հոր աջը Որդին է՝ ըստ այն խոսքերի, թե «Տիրոջ աջը գործություն գործեց» (Սաղմ. ՃԺԷ. 16), «Ո՞վ հավատաց Տիրոջ մասին մեր տված լուրին, եւ ո՞ւմ հայտնի դարձավ Տիրոջ բազուկը» (Ես. ԾԳ. 1), եւ «մի՞թե իմ ձեռքը չի կարող փրկել» (Եսայի Ծ. 2), հետեւաբար այս բազկի եւ աջի մատ է կոչվում Սուրբ Հոգին ու բխում է Նրանից:

Պատասխանում եմ՝ ամենուրեք ջանում են անարգ բաներ հնարել Սուրբ Հոգու դեմ: Արդ՝ եթե Հոգին «մատ» կոչվելով՝ ստորակարգվում է Որդուն, ուրեմն Որդին եւս, «աջ» կոչվելով, ավելի ցածր է դասվում Հորից. եթե Որդին է «մատ» կոչվում, ապա Նա պետք է լինի նվազ, եւ պետք է հնարել մեկ այլ աջ, որպեսզի Որդին լինի դրա մատը, քանզի Դավիթ մարգարեն Որդուն եւ Սուրբ Հոգուն անվանում է Հոր մատներ. «Տեսնեմ երկինքը՝ Քո մատների գործը» (Սաղմ. Լ. 4), իսկ երկուսի «մատ» անվանումից պարզ է, որ համապատիվ են նրանք: Սակայն Սուրբ Գրքում կան հատվածներ, որտեղ Սուրբ Հոգին եւս կոչվում է «աջ»՝ ըստ այնմ, թե «Ո՞ր գնամ ես քո Հոգուց, կամ՝ քո դեմքից ո՞ւր փախչեմ: Եթե երկինք ելնեմ, այնտեղ ես դու, եթե դժոխք իջնեմ, դրան էլ մոտ ես: Եթե առավոտյան թեւեր առնեմ եւ բնակվեմ ծովի եզերքին, այնտեղ էլ քո ձեռքն ինձ կառաջնորդի, եւ աջդ ինձ կընդունի» (Սաղմ. ՃԼԸ. 7–10): Ահա Սուրբ Հոգին բացահայտ կերպով կոչվեց ոչ միայն «մատ», այլ նաեւ «աջ», որից պարզ է, թե կամենալով ընդգծել մտերմության հանգամանքը՝ աստվածային գրքերը երբեմն Որդուն, երբեմն էլ Սուրբ Հոգուն անվանում են

²¹ Հմմտ. «Սեբերիանոսի... ճառք ժե», 1830, Ճառ Ա., էջ 7:

²² Անդ:

«մատ» կամ «աջ»: Բացի այդ՝ Քրիստոս չասաց, թե Իր մատով է հանում դեւերին, այլ՝ Աստծու, ինչն ընդգծում է Հայր Աստծուն, քանի որ Սուրբ Հոգին անվանված է Նրա «մատ», այլ ոչ Քրիստոսի:

Ժ. Առարկում են, թե աստվածային Անձերի [հարաբերության] մեջ մեկը չի համարվում մյուսինը, եթե՝ ոչ բխման պատճառով, իսկ Սուրբ Հոգին կոչվում է Քրիստոսի Հոգի՝ ըստ այն խոսքի, թե՝ «Աստված մեր սրտերի մեջ ուղարկեց Իր Որդու Հոգին, որ աղաղակում է՝ Աբբա, Հայր» (Գաղ. Դ. 6):

Պատասխանում եմ՝ խոստացված Սուրբ Հոգուն ճանաչեցինք մեր Փրկչի մարդեղությանը, որով եւ Սուրբ Հոգին կոչվեց Քրիստոսի Հոգի: Այսպես օրինակ՝ ինչպես որ մարդու որդին հայրական ժառանգությունը համարում է իրենը, սակայն որդին աշխատանքով չէ, որ ձեռք է բերել ժառանգությունը, այլ, ըստ բնության լինելով որդի, հոր ժառանգությունն իրենն է դարձել սեփականության իրավունքով, այնպես եւ Աստծու Որդին, Հոր բնությունից լինելու շնորհիվ, ունի Հորը պատկանող ամեն բան, ինչպես Ինքն է ասում. «Ամեն ինչ որ Հայրն ունի, Իմն է» (Հովհ. ԺԶ. 15), կամ՝ «Ինչ որ Իմն է, բոլորը Քոնն է, եւ ինչ որ Քոնն է, այն Իմն է» (Հովհ. ԺԷ. 10): Եւ ինչպես որ չի ասվում, թե Որդին ունի ծնելիություն, եւ այն պատկանում է Հորը, քանի որ Հայրը միշտ ծնող է եւ ոչ երբեք՝ ծնյալ, այնպես եւ բխողությունը, որ պատկանում է Հորը, չի վերագրվում Որդուն, որովհետեւ Հայրը Որդուն տալիս է Որդու հատկությունը, այլ՝ ոչ Իրենը, այդ իսկ պատճառով անծնելիությունը Հորինն է, բայց ոչ՝ Որդունը: Բացի այդ՝ այն ամենը, ինչ մի անգամ ասվել է մյուսի մասին, ընկալում են որպես բխում դրանից. ահա Սուրբ Հոգին կոչվում է նաեւ գիտության Հոգի եւ երկյուղի Հոգի, ուրեմն պետք է ասեն, թե Սուրբ Հոգին բխում է նաեւ երկյուղից: Սակայն սրանք են ելնում Սուրբ Հոգուց, այլ ոչ՝ Հոգին սրանցից, հետեւաբար, ոչ թե Նրանից բխելու, այլ մերձավորության եւ միեւնույն էությունն ունենալու պատճառով է Սուրբ Հոգին կոչվում Որդու Հոգի:

Ա. Առարկում են՝ հիմնավորելով, թե սրբազան Պողոս առաքյալն այսպես է գրում Թեսաղոնիկեցիներին ուղղված Բ. նամակում. «Եւ ապա պիտի հայտնվի անօրէնը, որին Տեր Հիսուս պիտի կործանի Իր բերանի հոգով» (Բ. Թեսաղ. Բ. 8): Ուրեմն եթե Սուրբ Հոգին կոչվում է Քրիստոսի բերանի Հոգի, պարզ է, որ բխում է Նրանից, քանի որ Դավիթ արքան եւս ասում է. «Տիրոջ

խոսով ստեղծվեց երկինքը, եւ իր բերանի Հոգով՝ Նրա բոլոր զորությունները» (Սաղմ. ԼԲ. 6). հայտնի է, որ Քրիստոս անվանվում է «Հոր բերան», իսկ «Նրա բերանի Հոգին» բխում է Որդուց:

Պատասխանում եմ՝ «բերան» բառը ոչ միշտ է խորհրդանշում Որդուն, երբեմն այն խորհուրդն է Սուրբ Հոգուն՝ ըստ այն խոսքի, թե՛ «Եւ ձեզ կտամ բերան եւ իմաստություն» (Դուկ. ԻԱ. 15), իսկ «հոգի» բառը ոչ միշտ է խորհրդանշում Սուրբ Հոգուն. երբեմն այն կիրառվում է «շունչ», «քամի» իմաստներով՝ ըստ այնմ, թե՛ «քամին ուր ուզում է, փչում է, եւ նրա ձայնը լսում ես...» (Հովհ. Գ. 8), որոշ հատվածներում՝ բարկության իմաստով՝ «Քո զայրույթի հողմից ճեղքվեցին ջրերը» (Ելք ԺԵ. 8), երբեմն՝ հպարտության՝ «...մինչեւ երբ ես այդպես խոսեցի: Մեծաբանության հովեր կան քո բերանում» (Հոբ Ը. 2), իսկ քիչ վերելում մեջբերված՝ Պողոս առաքյալի խոսքը խորհրդանշում է նեոի եւ նրա հրամանների դեմ Քրիստոսի ունեցած զայրույթը՝ տեսիլքի համաձայն, թե՛ «Եւ նրա բերանից ելնում էր սրած սուր, որպեսզի նրանով հարվածի ազգերին» (Հայտ. ԺԹ. 15), այսինքն՝ նեո պաշտողներին: Ուրեմն այս խոսքից չեն կարող եզրակացնել ինչ-որ բան, քանի որ «հոգի» բառն այստեղ նշանակում է «բարկություն»՝ ըստ այնմ, թե՛ «Քո զայրույթից, Տէր, եւ քո բարկության հողմի շառաչից...» (Սաղմ. ԺԷ. 16): Իսկ Դավիթ արքայի խոսքերը, թե՛ Նրա բերանի Հոգով եւ Տիրոջ խոսքով ստեղծվեց երկինքը (հմմտ. Սաղմ. ԼԲ. 6), Ներսես Լամբրոնացին մեկնում է հետևյալ կերպ. «Աստծու Բանը Նրա Միածինն է՝ անձնավոր եւ Աստված, Հոգին Նրա Հորից բխումն է՝ անձնավոր ու Աստված»²³: Սակայն Պողոս առաքյալի պարզ խոսքում բավական է առանձնացնել նրա ասածը, ըստ որի՝ «Կենդանի է Աստծու խոսքը... եւ ավելի հատուկ, քան ամեն մի երկսայրի սուր, եւ կտրում անցնում է մինչեւ ոգու եւ հոգու, հոգերի եւ ողնածուծի բաժանման սահմանը» (Եբր. Դ. 12), հետեւաբար, վերոգրյալ՝ «Տեր Հիսուս պիտի կործանի իր բերանի հոգով» խոսքը խորհրդանշում է Քրիստոսի ներգործող զորությունը: Իսկ եթե ինչ-որ մեկն առարկի՝ ասելով՝ չնայած բովանդակ Երրորդության համար ասվում է հոգի՝ համաձայն այն խոսքի, թե՛ «Հոգի է Աստված» (Հովհ. Դ. 24), սակայն երբ հատկապես մի անձի համար է ասվում՝ նկատի ունի

²³ Հմմտ. ՄՄ ձեռ. 698, 790, 990, 1017, 1018, 1054, 1117, 1118, 1175, 1176, 1177, 1426, 1527, 1528, 2613, 2693, 2761, 2860, 2897, 3465, 3760, 3778, 3796, 3809, 4178, 4538, 4671, 4679, 4694, 4833, 4834 եւ այլն:

Սուրբ Հոգուն, կպատասխանեմ՝ չնայած որ դա ճշմարիտ է, սակայն երբեմն անձերի հատկությունները եւս արտահայտվում են «հոգի» բառով, եւ ինչպես Երեմիա մարգարեն է ասում. «Տեր Քրիստոսը մեր անձի հոգին է» (Ողբ Դ. 20), հետեւաբար՝ նաեւ Որդուն կարող ենք անվանել Հոգի:

ԺԲ. Առարկում են՝ պատճառաբանելով, թե Հովհաննես առաքյալը հայտնության տեսիլում ասում է. «Հրեշտակն ինձ ցույց տվեց նաեւ սառնորակ կենդանի ջրի մաքուր մի գետ, որ բխում էր Աստծու եւ Գառն գահից...» (Հայտ. ԻԲ. 1), որտեղ «Աստված» ասելով՝ նկատի ունի Հորը, «Գառ» ասելով՝ Որդուն, իսկ «կենդանի ջրի գետ» բառերով՝ Սուրբ Հոգուն, որ ելնում էր Գառի արոտից, այսինքն՝ բխում էր Նրանից:

Պատասխանում եմ՝ մինչեւ այժմ Սուրբ Հոգուն անմիջնորդաբար [բխում] էին համարում Հորից, եւ միջնորդաբար [բխում]՝ Որդուց, իսկ այժմ միջնորդաբար [բխում] են համարում նաեւ Հորից, քանզի «աթոռ» բառը խորհրդանշում էր քերովբեներին կամ աթոռների դասերը²⁴, իսկ եթե հոգին, որպես ջուր, բխում էր աթոռից, ապա Սուրբ Հոգին բխում էր նաեւ քերովբեներից ու աթոռներից, այսինքն՝ ստեղծողը՝ ստեղծվածից: Սակայն, ըստ ուղղափառ մտքի, «ջուրը» մարմնավորում է Սուրբ Հոգու շնորհները՝ համաձայն այն խոսքի, թե «ձեր վրա սուրբ ջուր եմ ցանելու, եւ դուք մաքրվելու եք ձեր բոլոր պղծություններից» (Եզեկ. ԼԶ. 25), եւ ըստ Զաքարիայի մարգարեության՝ «Այն օրը կենդանի ջուր է բխելու Երուսաղեմում» (Զաք. ԺԴ. 8): Այս բառերը ցույց են տալիս Սուրբ Հոգու շնորհների տարածումն ապագայում, ուստի Քրիստոս նույնպես ասում էր, թե «այն ջուրը, որ Ես նրան տալու եմ, նրա մեջ կլինի բխող ջրի աղբյուր հավիտենական կյանքի համար» (Հովհ. Դ. 14), հետեւաբար պարզ է, որ Նրա աթոռից դուրս հորդող ջուրը խորհուրդն է Սուրբ Հոգու շնորհների: Բայց եթե այն աթոռից նույնիսկ Հոգին է ելնում, ապա դրա տակ չի հասկացվում բխում, քանի որ ինչ-որ գործի հանդեպ եղած համակամության պատճառով է ելնում Սուրբ Հոգին. ընդ որում՝ Հովհաննես առաքյալը հետեւյալն է ասում. «...ու գնում էր քաղաքի հրապարակների միջով» (Հայտ. ԻԲ. 1), որովհետեւ Աստծու գահից, այսինքն՝ քերովբեներից չէ, որ ելնում է անձնավորված Սուրբ Հոգին, այլ Նրա շնորհներն են իջնում Եկեղեցու վրա՝ քերովբեների միջնորդությամբ. դա հայտ-

²⁴ Նկատի ունի հրեշտակների Ա. դասը:

նի է նաեւ նրանց անուններից. ըստ Սբ. Դիոնիսիոսի՝ նրանք կոչվում են «իմաստության հեղուկ»²⁵ եւ «գիտության հաճախություն»²⁶:

Իսկ եթե ասված է, թե բխվում է քերովբեից, ապա հայտնի է, որ նկատի ունի Նրա շնորհների բխումը՝ ըստ այնմ, թե՝ «շրթունքներիցդ շնորհք է թափվում...» (Սաղմ. ԽԴ. 3), հետեւաբար Սբ. Ներսես Շնորհալիւն Մատթեոսի Ավետարանի հինգերորդ գլխում գրված «եւ բերանը բացելով՝ սովորեցնում էր նրանց ու ասում» (հմմտ. Մատթ. Ե. 2) խոսքը մեկնում է հետեւյալ կերպ՝ ասելով. «Բազմեց կյանքը՝ բաշխելու կյանքի կերակուրն ընդդեմ այն մահաբեր ճաշակման, որն առաջին մարդն ընդունեց օձի բերանից: Եւ բացելով բերանը՝ բխեցրեց կենդանի ջուր՝ հանգցնելու այն կրակը, որը վառվեց Եւայից»²⁷: Իսկ թե ինչո՞ւ Հովհաննէս առաքյալն ասաց «կենդանի ջուր», հայտնի է, որ այդ խոսքով հաստատեց իր վարդապետի վկայությունը՝ համաձայն այն մտքի, թե՝ «Այն խոսքը, որ Ես ձեզ ասացի, հոգի է եւ կյանք» (Հովհ. Զ. 64), հետեւաբար այս հոգին էր, որ բխում էր Նրանից, եւ ոչ թե՝ անձնավորված Հոգին:

Նաեւ՝ աթոռը խորհրդանշում է Քրիստոսի մարդեղությունը, որի միջոցով լիացավ Սուրբ Հոգու շնորհը, քանի որ նույն մարմինն աթոռ եղավ Բանն Աստծու համար՝ Իր անձի հետ միավորության պատճառով, աթոռ եղավ Հայր Աստծու համար՝ ըստ հաճության եւ բնակության՝ համաձայն այն խոսքի, թե՝ «Հայրը, որ բնակվում է Իմ մեջ, Նա է անում գործերը» (Հովհ. ԺԴ. 10): Իսկ թե այստեղ լռում է Սուրբ Հոգու մասին, զարմանալի չէ, քանի որ Սուրբ Գրքում երբեմն հիշատակվում են Հորն ու Հոգուն եւ լռում Որդու մասին, ինչպես ասում է Անգե մարգարեն. «Մտեք եւ գործի անցեք իմ տանը, — ասում է Տերը, — որովհետեւ Ես ձեզ հետ եմ: Քաջալերվեցեք... Իմ Հոգով, որ կա ձեր մեջ» (հմմտ. Անգե Բ. 1—6): Երբեմն հիշվում են Հայրն ու Որդին, եւ լռություն է պահպանվում Սուրբ Հոգու վերաբերյալ՝ ըստ այնմ, թե՝ «Հավիտենական կյանքն այս է. որ ճանաչեն Քեզ միակ ճշմարիտ Աստված, նաեւ՝ Հիսուս Քրիստոսին, որ Դու ուղարկեցիր» (Հովհ. ԺԷ. 3), իսկ Ա. Թեոսադ. Գ. 11 համարում Պողոս առաքյալն ասում է. «Եւ Ինքն Աստված ու մեր Հայրը եւ մեր Տերը Հիսուս Քրիստոս թող ուղղի մեր ճանապարհները դեպի ձեզ»: Ահա այս տեղիները վկայում են Սուրբ

²⁵ Հմմտ. ԳԻՈՆԻՍԻՈՍ ԱՐԵՈՊԱԳԱՅԻ, Աստվածաբանական երկեր. արեոպագիտիկաներ, Թարգմանությունը, ծանոթագրությունը եւ առաջաբանը՝ Վ. Ղազարյանի, Երեւան, 2013, էջ 31:

²⁶ Անդ:

²⁷ Տե՛ս Ս. Ներսես Շնորհալի, նշ. աշխ., 2008, էջ 216:

Երրորդության անբաժանելիության մասին, որովհետեւ որտեղ, ասում է՝ մեկն է, այնտեղ եւ երկուսն են²⁸։ Ինչպես Ներսես Շնորհալին է ասում Միջագետքի ասորիներին ուղղած իր թղթում՝ «Ուր Որդին է, այնտեղ են Հայրն ու Հոգին. եւ ուր Սուրբ Հոգին է, այնտեղ են Հայրն ու Որդին. եւ ուր Հայրն է, այնտեղ են Որդին ու Հոգին»²⁹։

ԺԳ. Առաւելում են, թե Սբ. Աթանասն իր հավատո դավանության մեջ խոստովանում է, որ «Սուրբ Հոգին ո՛չ առարվել, ո՛չ ստեղծվել եւ ո՛չ էլ ծնվել է Հորից եւ Որդուց, այլ՝ բխում է»³⁰։

²⁸ ՏէՄ ՍԱՐԳԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Մեկնութիւն Եօթանց թղթոց Կաթողիկեայց, Կ. Պոլիս, 1828, էջ 560։ Վերոգրյալ բանաձեւումը Սարգիս Շնորհալին ձեւակերպում է Ա. Հովհ. Գ. 24 համարի մեկնության մեջ՝ իր Զ. ճառում (անդ, էջ 548–565)։

²⁹ Սուլյն հատվածում Հակոբ Նալյան պատրիարքի՝ Ս. Ներսես Շնորհալուց քաղած մեջբերման մեջ առկա է շարահյուսական որոշակի խախտում. իրականում Շնորհալի Հայրապետն իր այս միտքը գրի է առել հետեւյալ կերպ. «...ուր Հայրն է, [այնտեղ] Նրա հետ են նաեւ Որդին ու Հոգին, ուր Որդին է, այնտեղ են նաեւ Հոգին ու Հայրը. եւ ուր Սուրբ Հոգին է, այնտեղ են նաեւ Հայրն ու Որդին» (տես Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Թուղթ ընդհանրական. Նամականի. ԺԲ. դար (Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններ), գրաբարից արեւելահայերեն փոխադրեց Մ. քշն. ԱՐԱՄՅԱՆԸ, Տ. ԽԱՉԱՏՅԱՆԸ, Ս. ՍՏԱՄԲՈՋՅԱՆԸ, Բ. հրատ., Ս. էջմիածին, 2023, էջ 142 եւ էջ 384)։

³⁰ Սուլյն հատվածում պատրիարք հայրն անդրադառնում է Հռոմեակաթոլիկ եկեղեցու՝ Ֆիլիոկվեի վարդապետության աստվածաբանական, փիլիսոփայական ուսանյալով անցած Ս. Աթանասի գաղափարների աղճատումներին (լատ.՝ «Spiritus Sanctus a Patre et Filio: non factus, nec creatus, nec genitus, sed procedens», այսինքն՝ «Հոգին սուրբ ի Հօրէ եւ յՈրդւոյ՝ ոչ արարեալ եւ ոչ ստեղծեալ եւ ոչ ծնեալ, այլ բղխեալ» թրգմ. հեղ.)։ Աստվածաբանական սուլյն բանաձեւը գրաբար բնագրում պահպանվել է հետեւյալ տեսքով. «...Հոգին սուրբ ի Հօրէ՝ ոչ արարեալ եւ ոչ ստեղծեալ եւ ոչ ծնեալ, այլ բղխեալ...» (տես «Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք...», 1899, էջ 479–480)։ Ինչպես նկատելի է, գրաբար թարգմանության մեջ իսպառ բացակայում է «եւ Որդուից» բառը։ Այն առկա չէ նաեւ Նիկիական հավատի հանգանակի հին հունարեն («Καὶ εἰς τὸ Πνεῦμα τὸ Ἅγιον, τὸ κύριον, τὸ ζῶον, τὸ ἐκ τοῦ Πατρὸς ἐκπορευόμενον, τὸ σὺν Πατρὶ καὶ Υἱῷ συμπροσκυνούμενον καὶ συνδοξαζόμενον, τὸ λαλῆσαν διὰ τῶν προφητῶν») եւ լատիներեն («Et in Spiritum Sanctum, Dominum et vivificantem: qui ex Patre procedit. Qui cum Patre et Filio simul adoratur et conglorificatur: qui locutus est per prophetas») նախնական բնագրերում։ Այսինքն՝ «et Filio» («եւ Որդուց») եզրույթը Հռոմեական եկեղեցու աստվածաբանների՝ հետագայում (587 թ., Տղեդոյի (Բսպանիա) տեղական եկեղեցաժողով) կատարած հավելում է, որին ի պատասխան՝ Հովհան Դամասկացին մոտ 750 թ. սկսում է շրջանառել «ἐκ τοῦ Πατρὸς διὰ τοῦ Υἱοῦ» (այսինքն՝ «բղխեալ ի Հօրէ Որդով») հայրաբանական ձեւակերպումը։ ԺԵ. դարում Ֆլորենցիայի եկեղեցաժողովի հրապարակած հավատո գրում կաթոլիկ աստվածաբաններն իրենց մեկնաբանության մեջ փորձել են ժողովին մասնակցած Արեւելյան պատրիարքներին կամ նրանց ներկայացուցիչներին հիմնավորել, թե իբր վերոնշյալ բանաձեւերը հանգեցնում են միեւնույն իմաստի (տես Մ. ԱՐՔ. ՕՐԲԱՆԵԱՆ, Ազգապատում, հտ. Բ., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2001, էջ 2420. այսուհետ՝ Մ. ԱՐՔ. ՕՐԲԱՆԵԱՆ, նշ. աշխ., 2001), սակայն չեն հաջողել։

Պատասխանում եմ՝ Սբ. Աթանասի խոսքը փոփոխության եւ հավելումների է ենթարկվել Ֆլորենցիայի ժողովում³¹, քանի որ նրանց Սկոթոս³² անունով նրբագույն վարդապետը հետեւյալն է ասում ժողովների վարդապետության³³ մասին. «Սուրբ հայրերը հավատի դավանության մեջ զետեղեցին «եւ որդուց» մասնիկը»³⁴, իսկ Նիկողայոս Լյուրացին՝ «այս

³¹ Նկատի ունի Ֆերրարա-Ֆլորենցիայի եկեղեցաժողովը, որը Հռոմի Կաթոլիկ եկեղեցու թվով փէ. տիեզերաժողովն է: Այն գումարել էր Հռոմի եւգենիոս Դ. (1431–1447 թթ.) պապը՝ 1438–1445 թթ.՝ պապական իշխանությունն ամրապնդելու եւ Արեւելյան եկեղեցիների նկատմամբ Հռոմի աթոռի գերազահությունը հաստատելու նպատակով (սույնի առնչությամբ տե՛ս A. S. PICCOLOMINI, Pope Pius II, De rebus Basileae gestis, Fermo, 1803, եւ՝ “Monumenta Conciliorum Generalium Seculi XV”, Scriptorum, vol. I, II, III, Vienna, 1857–1895, ինչպես նաեւ՝ “Concilium Florentinum Documenta et Scriptores”, Pontificii Instituti Orientalium Studiorum, series B, vol. V - Fasciculus II, Roma, 1953, եւ՝ S. SYROPOULOS, Mémoires, ed. and trans. V. Laurent, Concilium Florentinum: Documenta et Scriptores 9, Rome, 1971: Հմմտ. J. GILL, The Council of Florence, Cambridge, 1959, ինչպես նաեւ՝ ПРОТ. А. ГОРСКИЙ, История Флорентийского Собора, Москва, 1847, եւ՝ СИЛЬВЕСТР СИРОПУЛ, Воспоминания о Ферраро-Флорентийском соборе (1438–1439), в 12 частях, Санкт-Петербург, 2010 եւ այլն): Հետժողովական ժամանակաշրջանում գործած որոշ կաթոլիկ քարոզիչներ, իսկ Ի.–ԻԱ. դդ. նաեւ՝ ուսումնասիրողներ շահարկում են այն միտքը, թե Հռոմի աթոռի եւ Հայ եկեղեցու միջեւ միությունը կյանքի է կոչվել հենց այս ժողովում, սակայն Հայ եկեղեցու պատմիրակության որոշ անդամների ստորագրած ժողովական փաստաթղթերն անվավեր են համարվում մի շարք պատճառներով, որոնք հանգամանորեն դիտարկել է Մաղաքիա արք. Օրմանյանը (տե՛ս Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆՅԱՆ, նշ. աշխ., 2001, էջ 2416–2435): Սույն խնդրին համառոտ անդրադարձել է նաեւ Լիլիթ Գրիգորյանը (առավել մանրամասն տե՛ս Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, եկեղեցիների միավորման խնդիրը Ֆերրարա-Ֆլորենցիայի ժողովում եւ Հայոց եկեղեցին, «Կանթեզ. գիտական հոդվածների ժողովածու», հտ. 4, 2009, էջ 210–217 եւ այլն):

³² Նկատի ունի Հռոմի Կաթոլիկ եկեղեցու երանելի վարդապետ, փիլիսոփա, աստվածաբան, Ֆրանցիսկյան միաբանության անդամ, միջնադարյան սխոլաստիկայի ներկայացուցիչ Յոհաննես Դունս Սկոթին (1266–1308 թթ.), որը քննադատել է թոմիզմը՝ կարծելով, որ հնարավոր չէ ռացիոնալիստորեն հիմնավորել արարչագործության գաղափարը. փորձել է փիլիսոփայությունն անջատել աստվածաբանությունից (առավել մանրամասն տե՛ս E. PLUZANSKI, Essai sur la philosophie de Duns Scot, Paris, 1887, եւ՝ R. SEEBERG, Die Theologie des Johannes Duns Scotus: Eine dogmengeschichtliche Untersuchung, Leipzig, 1900, ինչպես նաեւ՝ E. GILSON, Jean Duns Scot: Introduction à ses positions fondamentales, Paris, 1952, եւ՝ O. SCHÄFER, Bibliographia de vita, operibus et doctrina Iohannis Duns Scoti..., Romae, 1955: Հմմտ. J. A. SHEPPARD, Vita Scoti, “Franciscan Studies”, vol. 60, 2002, էջ 291–323, ու Դ. СМЕРНОВ, Иоанн Дунс Скот, “Православная Энциклопедия”, т. XXIV, Москва, 2010, էջ 75–141 եւ այլն):

³³ Չնայած որ Հակոբ պատրիարք Նալլանը հոգնակի թվով է նշում «ժողով» բառը, սակայն, ամենայն հավանականությամբ, նա նկատի ունի 1274 թ. գումարված Լիոնի եկեղեցաժողովը, որտեղ Ֆիլիոկվեի վարդապետությունը հռչակվեց որպես Հռոմեական եկեղեցու ղեկավար:

³⁴ Հմմտ. ՄՄ ձեռ. 70, 121, 122, 123, 124, 125, 171, 172, 1238, 1960, 4027, 6478: Մեկ այլ աշխատության մեջ Դունս Սկոթը գրում է, որ հույներն իրենց համառության պատճառով են հավելել «Որդով» կամ «Որդու միջոցով» բանաձեւումը, որի մասին չեն վկայել տիեզերական վարդապետները (տե՛ս J. D. SCOTUS, The Examined Report Of The Paris Lecture: Reportatio I-A:

բաներն ասացի ձեզ.... Իսկ Մխիթարիչը....» (հմմտ. Հովհ. ԺԴ. 25–26) ավետարանական խոսքերի առնչությամբ ասում է, թե՝ «...ինչ-որ ժամանակ առաջ Հռոմում գումարվեց ուղղափառ եպիսկոպոսների ժողով, որոնք Նիկիայի ժողովի դավանանքին հավելեցին Սուրբ Հոգու համար, թե [Նա] ելնում է Հորից ու Որդուց»³⁵։ Սուրբ Աթանասի խոսքերը չձեռափոխելու առնչությամբ Սբ. Կյուրեղն ասում է. «Ինքներս մեզ եւ ուրիշներին թույլ չենք տա վերացնել ինչ-որ բան, որ առկա է այնտեղ, կամ անտես առնել որեւէ վանկ՝ վկայակոչելով այն խոսքը, թե մի՞ փոխիր քո հայրերի դրած հավիտենականության սահմանները (հմմտ. Առակ. ԻԲ.28), քանզի նրանք չէ, որ խոսում էին, այլ՝ Հայր Աստծու Հոգին (հմմտ. Մատթ. Ժ.20), որ ելնում է Նրանից եւ օտար չէ Որդուն՝ ըստ Բանի էության»³⁶։ Ահա այս խոսքերով ընդդիմանում է բազմաթիվ մոլորություններին.

Նախ՝ նրանց, ովքեր հանդգնում են ինչ-որ բան ներմուծել կամ վերացնել Նիկիայի դավանանքի մեջ։

Երկրորդ՝ ընդգծում է այն իրականությունը, որ նրանց խոսքերը Սուրբ Հոգուց էին, Որը չի սխալվում երբեք, քանի որ Ինքն էր նույն այդ սուրբ ժողովի ուսուցիչը, եւ Իր իսկ մասին ուսուցանեց սուրբ հայրերին, որ բխում է Հորից, բայց ոչ՝ Որդուց։

Երրորդ՝ իմանում ենք այս խոսքից, թե Նիկիայի հավատող դավանության մեջ հավելումներ կատարողները տգետ եւ Սուրբ Եկեղեցու անարժան ուսուցիչ են համարում Սուրբ Հոգուն։ Ընդ որում՝ Քրիստոս նույնպես նախապես ասաց, որ Նա կուսուցանի ձեզ ողջ ճշմարտությունը (հմմտ. Հովհ. ԺԴ. 26)։ Իսկ եթե ուսուցանում է ճշմարտություն, ուրեմն Նրա ուսմունքի վրա ինչ-որ բան ավելացնելով՝ տգետ են համարում Սուրբ Հոգուն։

Չորրորդ՝ այս խոսքից սովորում ենք հավատքի ուղիղ կանոնը, որովհետեւ ասում է, որ Սուրբ Հոգին բխում է Հորից եւ ըստ Բանի էության՝ օտար չէ Որդուն։ Այս ճշմարտությունը սովորեցնում է նաեւ Կոստանդ-

Latin Text and English Translation, vol. 1, Ashland, Ohio, 2004, Distinctio 11, Quaestio 1: Utrum Spiritus Sanctus procedat a Patre et Filio, էջ 408, 10-րդ պրբ.), իսկ հետո փորձում է հիմնավորել Կաթոլիկ Եկեղեցու դիրքորոշումը՝ գրելով, որ «չկա առաջին դավանանքի աղճատում, այլ՝ միայն մեկնաբանություն. ոչ էլ ստեղծել ենք ուրիշ դավանանք, այլ դրա հիմամբ՝ [ձեռավորել] նորը» (անդ, էջ 411, 19-րդ պրբ.):

³⁵ ՄՄ ձեռ. 5701, 9900 եւ 10539 («Մեկնութիւն Յովհաննու»)։

³⁶ ՏԵՍ «Деяния Вселенских Соборов», изд. 2-е, т. 2: Послание Кирилла, архиепископа Александрийского, к Иоанну, епископу Антиохийскому, отправленное с Павлом, епископом Эмесским, Казань, 1802, էջ 151։

նուպուլսի ժողովը, որովհետեւ հավատքի կանոններում ասում է հետեւյալը՝ «...հավատում ենք Սուրբ Հոգուն, Տիրոջն ու Կենդանարարին, որ բխում է Հորից, որ երկրպագվում եւ փառավորվում է Հոր ու Որդու հետ միասին»³⁷։ Նույնը վկայելով Քաղկեդոնի ժողովում՝ ասացին. «Հավատում ենք Սուրբ Հոգուն, որ Հորից է, եւ եթե մեկն ինչ-որ բան ավելացնի, թող նզովյալ լինի»³⁸։ Արդ՝ ողբում եմ նրանց՝ իրենց իսկ ընդունած ժողովի նզովքի տակ ընկնելու պատճառով, քանի որ, ըստ իրենց նրբամիտ վարդապետ Սքոթոսի վկայության, հավելում կատարեցին դրա սահմանած կանոններին³⁹։

Շարունակությունը՝ հաջորդիվ


Դրաբարից փոխադրեց եւ ծանոթագրեց
ՅՈՒՆԱԿ ՍՐԿ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

³⁷ Տե՛ս “Index Canonum: The Greek text, an English translation, and a complete digest of the entire code of Canon Law of the Undivided Primitive Church”, by J. Fulton, New York, 1892, էջ 136–137: Հմմտ. «Մեկնութիւն Միութեան Կաթող. Եկեղեցւոյ. արարեալ ի Գէորգ վարդապետէ Մխլայիմեան», մաս Բ., «Արարատ», թիւ Դ., 1871, էջ 207:

³⁸ Հմմտ. անդ, էջ 209–210: Սույն հատվածում Հակոբ պատրիարք Նալլանն ակնարկում է այն իրողությունը, համաձայն որի՝ 451 թ. Քաղկեդոնի ժողովը վավերացրել է Նիկիայի ու Կ. Պոլսի հավատի հանգանակները, որոնց բնագրերում առկա չի եղել «Ե՛ւ ՈՐԳՈՒՅ՝» բանաձևումը, եւ՝ նզովք սահմանել նրանց հանդեպ, որոնք պետք է ինչ-որ փոփոխություններ ներմուծեին նշյալ հանգանակներում: «Ե՛ւ ՈՐԳՈՒՅ՝» սահմանումը հետագա դարաշրջանի հավելում է:

³⁹ Սույնի առնչությամբ առավել մանրամասն տե՛ս 81-րդ ծանոթագրությունը:





Doi: 10.56737/2953-7843-2024.08-48

ԼԵՅԼԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ
ԵՊԼՀ

ՊԱՎԻԹ ԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՆՐԱ ԿԱՊԸ ՀԱՅՈՑ ՆԱԽԱՅԱՅԱՆ ՕՐԱՅՈՒՅՅԻ ՀԵՏ¹

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դավիթը հայոց տիեզերավեպի երրորդ ճյուղի գլխավոր հերոսի անունն է: Այն դիցավեպի առանցքային կերպարներից է, այնքան կարեւորված ու սիրված, որ շատ բանասացներ էպոսի բազմաթիվ տարբերակներ կոչում են նրա անունով՝ «Սասունցի Դավիթ» (Սասնա Դավթի հեքիաթ, Թոր Դավիթ եւ այլն):

Մեր իրականության մեջ Դավիթ անվան ստուգաբանության փորձեր բազմիցս կատարվել են. Անանուն², Հր. Աճառյան³, Հովհ. Թումանյան⁴, Ավ. Իսահակյան⁵: Այդ բոլոր փորձերը, ինչպես նշում է վերջերս նույն խնդրին անդրադարձ կատարած Հ. Դավթյանը, հիմնականում վերաբերում են բառի հնչյունական կազմին՝ կառուցվածքին, իսկ բովանդակային կողմը՝ իմաստը մնում էր մոլթ ու անհասկանալի: Տարածված տեսակետ է, թե իբր Դավիթը փոքր-ինչ հնչյունափոխված հրեական Դավիդ անունն է, որը թարգմանաբար նշանակում է «սիրելի, սիրեցեալ»⁶:

¹* Ստացվել է՝ 11.11.2024, գրախոսվել է՝ 15.11.2024: Էլ. հասցե՝ orongo9@mail.ru: Նյութը նախնական հաղորդման տեսքով առաջին անգամ ներկայացվել է «Համբարձումյանական 15-րդ ընթերցումներ»-ին (Բյուրական, 7.12.23)՝ «Դավիթ անվան ստուգաբանության փորձ» վերնագրով:

² Լատ Ն. Արմեն, Երկեր, Երեւան, 2008, էջ 137–138:

³ Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Բ., Երեւան, 1944, էջ 22–23:

⁴ Հովհ. Թումանյան, Հայկական էպոսի բառարանից, ԵԼԺ, հտ. VIII, Երեւան, 1999, էջ 254–322:

⁵ Ավ. Իսահակյան, Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին, ԵԺ, հտ. V, Երեւան, 1977, էջ 156–171:

⁶ Ա. Տեր-Խաչատրյան, Հ. Գալստիսի, Փ. Տոնիսյան, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրուիթ, 1968, էջ 914: Հ. Դավթյան, Դավիթ անվան ստուգաբանության նոր փորձ, 2023: <https://>

Պոլինեզիական լեզուների (մասնավորապես՝ Զատկի կղզու ռապանուի կամ ռապանուերեն լեզվի) եւ հայերենի միջեւ բացահայտված կայուն հնչյունական օրինաչափություններն⁷ ու դրանց հիման վրա իրականացված բազմաթիվ հավաստի ստուգաբանությունները⁸ թույլ են տալիս արձանագրել, որ պոլինեզիական լեզուները սկզբնաղբյուրի դեր կարող են կատարել հայերենի համար: Զի բացառվում, որ Դավիթ անվան ծագման, կազմության եւ ելակետային իմաստի բացահայտման հարցում նույնպես խիստ օգտակար կարող են լինել հնագույն պոլինեզիական լեզուների տվյալները: Այդ իսկ պատճառով միանգամայն արդարացված է հիմնավոր եմք համարում Դավիթ անվան ստուգաբանության փորձը՝ պոլինեզյան լեզվաընթացի եւ հայերենի տվյալների ընդգրկմամբ: Սակայն ինչքան էլ որ լեզվաբանական տեսակետից հիմնավորված ու արդարացված լինի նման փորձը, կարծում ենք, ավելորդ չէր լինի լեզվաբանական՝ ձեւաիմաստային ստուգաբանական նյութը հիմնավորել՝ վկայակոչելով նաեւ լրացուցիչ, արտալեզվական փաստարկներ:

Նման փաստարկների աղբյուրը պոլինեզիական առասպելներն են, որոնցում պահպանվել են մեր վաղնջագույն անցյալի մասին վկայող թանկագին մասունքներ⁹: Դրանց մեջ բավականին շատ են պոլինեզիական առասպելական հերոս Տաֆակին եւ հայոց Դավթին վերաբերող կենսագրական եւ բնութագրական ընդհանրությունները.

ա) պոլինեզիական առաջնորդի կատարելատիպը *Tafaki/Tahaki* անունն է կրում: Համայն Պոլինեզիայի սիրելի այս հերոսն իր ենթադրյալ նախնու պես, որ կրում է *Maui* (Մաուի) անունը (Մհեր արդյոք), իրավամբ կարող է համարվել Պոլինեզիայի ամենահայտնի ու ամենասիրված առասպելական հերոսը (ճիշտ այնպես, ինչպես հայոց դիցավեպի Դավիթը): Ահա ինչ է գրում նրա մասին Կ. Լուումալան (Katharine Luomala, 1907–1992). «Տաֆակին պոլինեզիական ազնվականի լավագույն հատկանիշների՝ առնականության, գեղեցկության, մոգական ուժի եւ բնավորության մարմնացումն է... Նա առաջնորդ-կատարելություն է, նմուշօրինակ բոլոր ազնվազարմ առաջնորդների համար. անվանի ազնվատոհմիկները,

նաեւ ոչ անվանինները նրա հետ են համեմատում իրենց կառավարողներին... Թեեւ նրա մասին հյուսված բազմաթիվ եւ բարդ ասքերի մեծ մասը Կենտրոնական Պոլինեզիայի եւ Նոր Զելանդիայի ծնունդ են, սակայն նրա անունը եւ նրա մասին որոշ տեղեկություններ հայտնի են ամբողջ Պոլինեզիայում եւ նրանից արեւմուտք ընկած կղզիներում, որտեղ զգացվում է պոլինեզիական ազդեցությունը»¹⁰,

բ) Դավթի պես Տաֆակին նույնպես սխալներ է գործում, հաղթահարում դժվարություններ, «նա ուներ թշնամիներ, որոնց մեջ ամենավտանգավորը եւ դաժանը իր ազգականներն էին»: Տաքարյուն, կռվասեր ու կռվարար բնավորության տեր նրա եղբայր(ներ)ը (որոշ ասքերում՝ հորեղբոր տղաները) ծաղրում ու զայրացնում էին նրան, իսկ խաղընկերները, տեսնելով, որ նա միշտ հաղթող է դուրս գալիս, նախանձից դրդված այնքան են ծեծում, որ մտածում են, թե մահացել է եւ հողով ծածկում են, բայց նա ուշքի է գալիս եւ ելնում է գերեզմանից (հիշենք, թե ինչպես տարեկից տղաները, տեսնելով իրենց մոտեցող Դավթին, փախչում էին եւ ամեն կերպ խուսափում նրա հետ խաղալուց),

գ) Տաֆակիի մասին ասքերում իր ուրույն դերն ունի «Պառավ կախարդուհին» կամ «կույր Պառավ նախատատը», որը նրա խորհրդատուն է՝ սիրային հարցերում հաջողության հասնելու համար (հմմտ.՝ հայոց տիեզերավեպի կորեկի արտատեր Պառավը, որը «...մի ժամանակ Մեծ Մհերի սիրածն է եղել», «կանխագուշակում է երիտասարդ հսկայի ապագան», «շարունակ խրատներ ու ցուցումներ է տալիս Դավթին, ...թաքցրած գաղտնիքներ է բացում եւ մայրական խրատներ տալիս, թե, օրինակ, ինչպես խուսափել հորեղբոր կնոջ՝ Սարիեի երկար ու համառ հետապնդումներից») ¹¹,

դ) Տաֆակին հսկա է. Տահիտի կղզու ամենաբարձրահասակ տղամարդիկ չէին հասնում նույնիսկ նրա ուսերին, երբ նա քայլում է, անգամ ամենակարծր գետնի վրա մնում են նրա ոտնահետքերը (Քուոկիկ Զալալին հեծած Դավթի մասին դիցավեպում ասվում է «տեսան՝ սարը հեծած սարի վրա կգա»,

¹⁰ Տե՛ս К. Луомала, Голос ветра (полинезийские мифы и песни), Москва, 1976, էջ 179 (անվանի բանահյուսագետ, Հավայների համալսարանի պրոֆեսոր, Բանահյուսական արվեստի ուսումնասիրման միջազգային ընկերության՝ Հավայների գծով փոխնախագահ):

¹¹ «Սասունցի Դավթ», Հայկական ժողովրդական էպոս, նախաբանը՝ ակադ. Հ. Օրբելու, Երևան, 1961, էջ LIV:

ե) Տաֆակիի նիզակը պատրաստված է կոկոսյան արմավենուց, իսկ երբեմն նա որպես զենք օգտագործում է նաեւ արմավենու ամբողջական բունը¹² (Դավիթն իր թշնամիներին, արտատեր Պառավի արտի ագռավներին եւ խոլբաշու զորքն «ավլում» է արմատախիլ արված բարդի ծառով),

զ) Տաֆակիի գործիքներն ու զենքերը ոչ ոք ի վիճակի չէ գետնից բարձրացնելու, նրա նիզակը կշռում է 20 ֆունտ (մկունդի՝ հայկական դիցավեպում ներկայացված քաշը 300 լիտրն է: Սասունցիների մասին Կոզբազդինը վկայում է, թէ «էնտեղ, ճժեր, որ նոր էլած՝ դիվանական// Իրենց նետ կա՝ քանց ձիթնանի գերան»)՝¹³:

է) Տաֆակիի մայրը կիսագերբնական արարած է՝ Ծովի տիրակալի դուստրը, մորական նախատատը գտնվում է ծովում¹⁴ (հմմտ.՝ Դավթի նախատատ Ծովինար),

ը) Պոլինեզիական առասպելներում ամենից շատ ընդգծվում, գովերգվում է Տաֆակիի աներեւակայելի գեղեցիկ կարմիր (=արեւ/լուսին) դեմքը: (Հայոց «...Դավթն ակնյայտօրէն արեգակնային հերոս է՝ դասական արեգակնային հերոսին բնորոշ յատկանիշներով (դեւեր ու վիշապներ սպանել, գանձեր ու աղջիկներ ազատել, քաղաքը փրկել, ի վերջոյ՝ ամուսնանալ եւ սերունդ թողնել)...»¹⁵: Որոշ դեպքերում Դավիթ անվանը վերագրվել է նաեւ «գեղեցկատես» իմաստ: Օրինակ՝ Հր. Աճառյանը սխալ էր համարում անվան՝ «ԶԴավիթ, որ թարգմանի գեղեցիկ տեսլամբ» բացատրությունը)¹⁶,

թ) Պոլինեզիայում Տաֆակի անունը կիրառվում է որպես մակդիր եւ համարվում է մեծագույն գովասանք. որեւէ առաջնորդի անվանը ավելացնել Տաֆակի անունը նշանակում է ընդգծել, որ նա գեղեցիկ է, արժանապատիվ, հեղինակավոր առաջնորդ, ունի երեւելի ծագում եւ բացառիկ ընդունակություններ: Նման պատվի է արժանացել, օրինակ, Մանգարեւա կղզու առաջնորդ Te-Hau-o-Tafaki-ն (Տե-Հաու-օ-Տաֆակի): Տաֆակի անունով են պատվում մանավանդ շիկավարս, կարմրադեմ եւ բարձրատոհմիկ մանգարեցիներին: Իսկ Տուամոտու կղզիներում պատանիների

¹² Տէս Կ. ԱՅՕՄԱԼԱ, նշ. աշխ., էջ 188:

¹³ «Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, Հայպետհրատ, II հրատ., նախաբանը՝ ակադ. Հ. Օրբելու, Երեւան, 1961, էջ 212:

¹⁴ Տէս Կ. ԱՅՕՄԱԼԱ, նշ. աշխ., էջ 176–201:

¹⁵ Գր. ԲՐՈՒՏԵԱՆ, Հայկական «Սասնայ ծռեր» դիցավեպի մի դրուագի ժամանակի որոշման փորձ, «Էջմիածին», 2021, Ժ., էջ 63:

¹⁶ Հր. ԱճԱՌՅԱՆ, Հայոց անձնանունների բառարան, հտ. Բ., Երեւան, 1944, էջ 22:

մոտ առնականության, խիզախության դաստիարակության հետ կապված ծեսերում կենտրոնական տեղ են գրավում Տաֆակիի կենսագրության վրա հիմնված երգերը¹⁷: (Որոշ փաստեր վկայում են, որ հայոց տիեզերավեպի մեջ նույնպես Դավիթ անունը ժամանակի ընթացքում գիտակցվել է որպես հասարակ անուն՝ «Քաջ, կտրիճ, անվախ, համարձակ» իմաստներով. երբ Դավիթը գնում է Խանդուկ խանումի պալատը, էպոսն ասում է. «Աթոռ մը թալեցին Տավթի տակ, նստավ մեջ էն 39 Տավիթներու, որ ուրմեն առաջ աշըղներ եկեր՝ բերեր էին»¹⁸: Այժմ այն ձեռք է բերել զանազան հեգնական իմաստներ՝ դանդաղ, ծուռ, խենթ, շաշ, անտաշ հսկա, նաեւ անհեթեթ. «Թիֆլիսի բարբառում առած կա, որ մի բանի անհեթեթությունը ցույց տալու համար ասում է. «Ի՛նչ իծանիր, վուրթի, դավիթ»»), իսկ «Լոռում գործածական է «աշաշ Դավիթ» կամ «Դարթիկ» ձեւը՝ մեկի շաշությունը ցույց տալու համար»¹⁹,

ծ) Պոլինեզիական ծեսերն ու պայմանականությունները Տաֆակիի համար բնական են, նա հաճույքով է կատարում իր պարտականությունները եւ գործում է վճռականորեն՝ իր ուժերի հանդեպ հիասքանչ վստահությամբ»²⁰: Տաֆակիի մասին ասվում է, որ նա «...ներամբողջական անձ է (цельная личность) եւ որտեղ էլ որ հայտնվում է, միշտ արժանանում է հարգալից ու սրտագին ընդունելության»²¹: Կ. Լոռմալան նշում է, որ «Տաֆակիի կյանքի յուրաքանչյուր էական դրվագ կամ միջադեպ ունի իր զուգահեռը այլ հերոսների կենսագրության մեջ»²²: (Ինչպես խորաթափանցորեն նկատել է Գր. Բրուտյանը՝ «...կերպարի բազմակողմանիությամբ եւ յագեցուածությամբ Դավիթը դիցավեպում էապես գերազանցում է միւս բոլորին: Թերեւս միայն դիցավեպի իգական կերպարներն են, որ հանդէս են գալիս Դարթի կողմից չկրկնուող գործառոյթներով», «Դարթն իր առանձնա-յատկութիւններով ամենահարուստն է դիցավեպի կերպարների մէջ. եւ նա ունի (իգականներից զատ) բոլոր միւս հերոսների յատկանիշները»)²³:

¹⁷ ՏԵՍ Կ. ԼՍՕՄԱԼԱ, նշ. աշխ., էջ 178:

¹⁸ Հ. ՈՎԷ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, ԵԼԺ, հտ. VIII, Ուսումնասիրություններ, օրագրեր եւ այլ նյութեր, Երեւան, ՀՀ ԳԱԱ, 1999, էջ 279, 291: Զոջանց Տուն կամ Սասմայ ծուր, խմբագր. Ստ. Կանայեան, Վաղարշապատ, 1910, էջ 27:

¹⁹ Հ. ՈՎԷ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, ԵԼԺ, հտ. VIII, Ուսումնասիրություններ, օրագրեր եւ այլ նյութեր, Երեւան, 1999, էջ 292:

²⁰ ՏԵՍ Կ. ԼՍՕՄԱԼԱ, նշ. աշխ., էջ 176–201:

²¹ Նույն տեղում, էջ 179:

²² Նույն տեղում, էջ 178:

²³ Գր. ԲՐՈՒՏՅԱՆ, Հայկական «Սասմայ ծուր» դիցավեպի մի գրուագի ժամանակի որոշման փորձ, «Էջմիածին», 2021, ԺԱ., էջ 75, 77:

Այս եւ այլ արտալեզվական ընդհանրությունները, որոնցից յուրաքանչյուրն արժանի է առանձին մանրակրկիտ ուսումնասիրության, բավարար հիմք են ստեղծում Տաֆակի-Դավիթ զուգահեռի անցկացման եւ հայերեն Դավիթ անվան՝ պոլինեզիական լեզվանյութի օգնությամբ ստուգաբանելու համար: Կարելուում ենք մանավանդ, որ տարաբնույթ ընդհանրությունների ֆննությունը ցույց է տալիս, որ ռապանուերեն լեզվի փաստերը հայերենի համար ունեն ուղղակի սկզբնաղբյուրի արժեք եւ հարազատորեն են արտացոլում վաղնջագույն հայերենի լեզվական իրողությունները:

2. ՆՅՈՒԹԸ, ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Նախ փորձենք պարզել Դավիթ անվան կազմությունը: Անանուն մեկ-նիշը գտնում էր, որ այն բաղկացած է դաւ եւ -իթ մասերից²⁴: Այս կարծիքը մեզ միանգամայն ընդունելի է թվում եւ ստուգաբանությունը սկսենք այս կանխադրույթով՝ հընթացս հիշեցնելով, որ հայոց մեջ այս անունն առկա է հետեւյալ երեք տարբերակներով. Դավիթ, բարբառային Տավիթ/Տալիտ ու Թավիթ, որոնց մասին առավել մանրամասն՝ ստորեւ:

*Դավթի հետ բնութագրական եւ կենսագրական ընդհանրություններ ցուցաբերող պոլինեզիական առասպելական հերոսի անունն է *Tafaki//Tahaki (Տաֆակի//Տահակի), որոնցից առաջինը վերականգնված նախապոլինեզերեն տարբերակն է: Պոլինեզիական լեզուներին հասուկ է f/h/v հերթագայություն. Տուամոտու եւ Տահիտի կղզեխմբերի լեզուներում՝ f/h/v, մաորի եւ հարավային մարկիզերեն լեզուներում՝ f/h, հավայերեն լեզվում՝ h/u/w, իսկ ռապանուի լեզվում՝ h/v: Այս հերթագայությունների արդյունքում վերոհիշյալ նախապոլինեզերեն Tafaki, Tahaki անունները պոլինեզիական տարբեր կղզիների լեզուներում հնչում են Tafaki, Tahaki, Tavaki, Tawaki ձևերով: Ակնհայտ է, որ անվան Tavaki/Tawaki տարբերակի taw/tav (տաւ/տավ) արմատը հնչունաբանորեն առավել մոտ է հայերեն Դավիթ անվան դավ արմատին եւ տառացիորեն նույնանում է այդ անվան՝ հայերենի բարբառներում պահպանված Տավիթ/Տալիտ տարբերակների տավ/տաւ արմատներին (Սասնա Տավիթի հեքիաթ, Սասնա Տավիթի խեքաթ²⁵, Թլոր Տավիթի հեքիաթ)²⁶:*

²⁴ Ն. Ա. ԳՈՆՑ, Հին հավատք կամ հեթանոսական կրոնը հայոց, Վենետիկ, 2008, էջ 137:

²⁵ «Սասնա Մուր», հտ. Գ., Պատումների գրառումները եւ բնագրի պատրաստումը՝ Ս. Հարությունյանի եւ Ա. Սահակյանի, Երեւան, 1979:

²⁶ «Սասնա Մուր», հտ. Դ., Նոր պատումների գրառումը եւ բնագրի պատրաստումը՝ Ս. Հարությունյանի եւ Ա. Սահակյանի, Երեւան, 1999:

2.1. Դավիթ անվան տավ/տաւ արմատը

Վերոհիշյալ tav/taw արմատը ռապանուերենում հնչում է tau (հիշեցնենք, որ վ հնչյունը գրաբարում ուներ եռատառ գրություն՝ վ, ու եւ լ): Ռապանուերեն tau բառն ունի «տարի», «ժամանակահատված (сезон)», «ժամանակաշրջան (эпоха)», «տարիք» իմաստներ: Մեր ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ռապանուերենի պարզ խուլերին հայերենում համապատասխանում են խուլեր, շնչեղ խուլեր եւ ձայնեղներ: Հաշվի առնելով հեռավոր ծայրամասային շրջաններում պահպանված մշակութային եւ լեզվական իրողությունների չափազանց մեծ հնություն մասին այլեւս հաստատված դրույթը եւ ռապանուերեն-հայերեն լեզվանյութի համեմատության արդյունքներից բխող՝ պարզ խուլերի նախնականության մասին մեր տեսակետը²⁷, տրամաբանական է արձանագրել, որ անվան նախնական/ելակետային տարբերակները Տաւիտ//Տավիթ ձևերն են՝ տաւ/տավ արմատով, որից էլ անհրաժեշտ է սկսել անվան ստուգաբանությունը: Հատկանշական է, որ խուլ պայթականով ձևերը պահպանված ենք գտնում դիցավեպի հայրենիք Սասուն-Մուշում եւ Ղարաբաղում: Պոլսի բարբառում եւս Դավիթ անունը հնչում է Թավիթ²⁸: Այսպիսով՝ ռապանուերենում պահպանված tau արմատը գալիս է լրացնելու վաղնջագույն հայերենի այն արմատների շարքը, որոնք հայերենում ունեն են խուլ (Տաւիտ, Տավիթ), են շնչեղ խուլ (Թավիթ), են ձայնեղ (Դավիթ) բաղաձայնով սկսվող տարբերակներ²⁹:

Պարզվում է, որ տավ/տաւ արմատը հայերենում առանձին կիրառություն չունի:

Նշենք, որ պոլինեզիական հնագույն ռապանուի լեզվում բացահայտվել են հայերենում այլեւս առանձին գործածություն չունեցող արմատներ, որոնք այստեղ դեռեւս ունեն առանձին գործածություն եւ հստակ բա-

²⁷ Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Պոլինեզյան լեզուների պարզ խուլերի արտացոլումները հայերենում, «Հայագիտությունը Մոնղոլիայում» միջազգային գիտաժողովի նյութեր, Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան (ԵՖՊՀ), Երեւան, 2020, էջ 128–146:

²⁸ Հայոց անձնանունների բառարան, հտ. Բ., Երեւան, 1944, էջ 23:

²⁹ Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Պոլինեզյան լեզուների պարզ խուլերի արտացոլումները հայերենում, «Հայագիտությունը Մոնղոլիայում» միջազգային գիտաժողովի նյութեր, Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան (ԵՖՊՀ), Երեւան, 2020, էջ 144–145, Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Հայերենի եւ պոլինեզյան լեզուների հնչյունաբառային առանձնահատկությունների զուգադրական վերլուծություն (անտիպ մենագրություն):

ռիմաստ, որը չի հակասում այդ արմատներով կազմված հայերեն բառերի իմաստներին: Այդ բառացանկն ընդգրկում է 31 բնիկ հայերեն եւ 40 շտուգաբանված ու այլ լեզուներից փոխառություն համարվող հայերեն բառեր³⁰: Վերոհիշյալ բնիկ հայերեն բառերի թվին կարելի է ավելացնել նաեւ ռապանուերեն *taw*₁ «տարի», «ժամանակահատված», «ժամանակաշրջան», «տարիք» բազմիմաստ բառը, որի իմաստները կապված են «ժամանակ» հասկացության հետ:

Ռապանուերեն *taw*₁ «տարի», «ժամանակ» բառի գրաբարյան զուգահեռները բնիկ հայերեն տեւ/տիւ/տի (*a > e > i*) ժամանականիշ արմատներն են. գրբ. տեւ «երկար քաշելը, տոկալը»³¹, որից՝ ի տեւ «երկար ժամանակ», տեւել «ժամանակ քաշել, դիմանալ», տեւումն, տեւություն եւ այլն (ըստ Գ. Զահուկյանի՝ ծագում է **deu*- «առաջ գնալ, հեռանալ» արմատից)³² եւ տիւ «ցերեկ, օրվա լույս մասը» (բխեցվում է *diu*- «օր», **deu*- **dei*- «շողալ, փայլել» արմատներից)³³: Նույն արմատի շնչեղ բաղաձայնով սկսվող զուգահեռները պահպանված ենք գտնում հայերենի բարբառներում. (Դրբ.) թավ «որեւէ բան անելու հարմար ժամանակը, վիճակը», որից՝ թավը կուրցընէլ «հարմար ժամանակը/պահը կորցնել», թավը փրոնէլ «հարմար պահը որսալ», թավա ընգնէլ/ըղնէլ «հարմար պահը անցնելով՝ անհետաքրքիր դառնալ»³⁴, (Խրբ. (Բլ.) թավ, որից՝ թավին բերել «մի բան նիշտ ժամանակին անել»³⁵ (հմմտ. նաեւ ռուս. *поав-но* «վաղուց» բառը), Խաշթառակի բարբառով «թավը/թովը չի» նշանակում է՝ ժամանակը չի, որն արգելանք է, ասենք՝ խակ պտուղն ուտել ցանկացողին³⁶:

Ակնհայտ է ռապանուերեն եւ հայերեն բառերի երկպալանային՝ ձեւաիմաստային համընկնումը, ինչը վկայում է, որ հայերեն տեւ եւ տիւ արմատները ոչ թե տարբեր նախաձեւերից են ծագում (ինչպես ենթադրվում է), այլ նույնածագում բառեր են, որոնց՝ հայերենում այլեւս առանձին գործածություն չունեցող խուլ պայթականով վաղնջագույն հայերեն

³⁰ Լ. ՍԵՓԱՆՅԱՆ, Հայ-պոլինեզյան լեզվամշակութային ընդհանրություններ, Երեւան, 2015, էջ 126–132:

³¹ Հ. Լ. ԱՃԱՌՅԱՆ, Հայերեն արմատական բառարան, հտ. 4, Երեւան, 1926, էջ 398–399 (հետախուժ. ՀԱԲ):

³² Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 727:

³³ Նույն տեղում, 2010, էջ 730:

³⁴ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ, Դարաբաղի բարբառի բառարան, Երեւան, 2013, էջ 190:

³⁵ «Հայոց լեզվի բարբառային բառարան», հտ. 2, Երեւան, 2002, էջ 84:

³⁶ Այս տեղեկությունը մեզ հաղորդեց Հր. Հակոբջանյանը:

տաւ/տավ ձեւը պահպանել են պոլինեզիական լեզուները. ռապանուերեն $\tau au =$ հայերեն *տաւ/*տավ (տե՛ս բրբ. թավ) եւ բնիկ հայերեն տեւ>տիւ, տի:

Ռապանուերեն $\tau au1$ «տարի», «ժամանակաշրջան» բառից՝ $v > r$ փաստված հերթագայության (nevaneva/heranera) արդյունքում³⁷ ստանում ենք գրաբարյան տարի «ամ, տարի» եւ դար «դարաշրջան, երկար ժամանակաշրջան, հատկապես հարյուր տարի» բառերը (հմմտ. նաեւ լատ. $d\bar{u}-ro$ «տեւել» բառը):

Ավելորդ չենք համարում հիշեցնել, որ τau -ն ռապանուերեն միակ ժամանականիշ բառը չէ, որի զուգահեռները գտնում ենք հայերենում. գրաբարյան տեւ-ի հոմանիշ բնիկ հայերեն տոկ բառը նույնպես գտնում ենք ռապանուերենում որպես $toke_3$, $toke\ rau$ «տարվա եղանակ», որի տառացի զուգահեռը գրաբարյան տոկ «տոկալ տեւելը», «երկար տեւողութեամբ, շատ» բառն է (բխեցվում է հնիւ. * $dow\bar{a}$ - արմատից, որի * $dow\bar{a}$ ձեւից ունենք տեւել, վերջինս էլ՝ ըստ Գ. Զահուկյանի՝ * $dou-$ ՝ * $deu-$ «հեռանալ, տարածում, տեւողություն» արմատից)³⁸:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ

ա) Դավիթ անվան նախնական ձեւը խուլ պայթականով տարբերակն է, որը պահպանված է հայերենի բարբառներում եւ հնագույն պոլինեզիական լեզուներում,

բ) անվան ռապանուերեն τau «տարի» արմատի ձայնդարձային տարբերակները բնիկ հայերեն տեւ>տիւ, տի նույնաձագում բառերն են,

գ) ռապանուի τau (տավ/տաւ), հայերեն բարբառային թավ, գրբ. տեւ (հնց.) «տեւողություն»³⁹, տիւ (հնց.) «ցերեկ, օրվա լույս ժամանակը»⁴⁰ արմատների իմաստը կապված է տարի, ժամանակ հասկացությունների հետ,

դ) հայերեն Տաւիտ/Տավիթ/Թավիթ/Դավիթ անունը կազմված է բնիկ հայերեն տեվ/տիվ արմատների՝ հայերենում այլեւս անգործածական *տավ նախաձեւով, որն ի թիվս հայերենում առանձին անգործածական այլ բնիկ բառերի, պահպանված ենք գտնում հնագույն պոլինեզիական լեզուներում, որպես առանձին գործածություն եւ բառիմաստ ունեցող արմատ:

³⁷ СЕУ И. ФЕДОРОВА, Мифы и легенды острова Пасхи, Ленинград, 1988, 101, И. ФЕДОРОВА, Некоторые черты развития рапануйского языка (на материале фольклорных текстов), в кн. «О языках, фольклоре и литературе Океании», Москва, 1978, էջ 41–42:

³⁸ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 732:

³⁹ Է. Գ. ԱՂԱՅԱՆ, Արդի հայերենի բացատրական բառարան, Երեւան, 1976, էջ 1437:

⁴⁰ Նույն տեղում, էջ 1443:

ՀԵՏԵԻՈՒԹՅՈՒՆ. Դավիթ անվան առավել հնագույն կամ ելակետային ձեւը հայերենի բարբառներում պահպանված խոլ պայթականով սկսվող տարբերակն է: Հայերեն Տաւիտ/Տավիթ/Թավիթ/Դավիթ անվան՝ ռապանուերեն լեզվում պահպանված *taui* (տաւ/տավ) արմատի նույնանշանակ ձայնդարձային տարբերակները բնիկ հայերեն տել/տիւ/տի եւ բարբառային թավ բառերն են՝ «ժամանակ» ընդհանուր իմաստով:

Մնում է պարզել հայերեն Դավիթ անվան -իթ վերջավորության ծագումն ու իմաստը:

2.2. Դավիթ անվան -իթ բաղադրիչի ծագումն ու իմաստը

Հրաչյա Աճառյանը Դաւիթ անվան ստուգաբանությանը խոչընդոտող եւ խնդրահարույց էր համարում այս մասնիկն այն պատճառով, որ «...հայտնի չէ սակայն, թե ո՞րտեղից է առաջացել հայերենում թ վերջածայնը, որ ո՛չ մի լեզվի մեջ էլ չկա»⁴¹: Առհասարակ, մասնիկների ծագումն ու իմաստը վերականգնելը շատ ավելի բարդ ու դժվարին աշխատանք է, քան արմատների, որովհետեւ մասնիկները, ըստ Ֆրանց Բոպի, երբեմնի իմաստակիր անկախ արմատներ են, որոնք լիիմաստ բառերին կցվելու արդյունքում կորցրել են իրենց ինքնուրույնությունը եւ հանդես են գալիս միազնած բառիմաստներով: Վերջիններիս իմաստը վերականգնելու կամ հասկանալու համար ստուգաբանական քննությունը պետք է հասնի ժամանակների այնպիսի խորքերի, երբ դրանք ունեցել են ինքնուրույն բառի արժեք եւ իմաստ: Նման դեպքերում առավել հնագույն լեզվաբանական ինքնուրույն հետ համեմատությունները կարող են օգնել գտնելու հայերենին վերաբերող եւ դեռեւս լուսաբանման կարոտ այնպիսի հարցերի բացատրություններ, որոնք անհնար է գտնել, եթե սահմանափակվենք միայն հնդեվրոպական լեզուների հետ համեմատության տվյալներով: Այս տեսակետից պարզապես անգնահատելի է հնագույն պոլինեզիական լեզուների, մասնավորապես, ռապանուերենի դերը հայերենի այն հնությունը հասնելու համար, երբ նախդիրներն ու քերականական կազմիչները դեռեւս առանձին գործածվող իմաստակիր բառեր էին:

Այդ դժվարին գործը հաջողելու համար մենք հիմք ենք ընդունում հետեւյալ փաստը. հայերենի՝ արդեն իսկ մթագնած իմաստով մի շարք (մոտա-

⁴¹ Հ. Բ. ԱճԱՌԵԱՆ, ձնանունների բառարան, հտ. Բ., Երևան, 1944, էջ 22–23:

վորապես 50) փերականական կազմիչների եւ այլ մասնիկների նախաձեւերը պահպանված ենմ գտնում պոլինեզիական լեզուներում՝ որպես լիմաստ արմատներ: Դրանց միջոցով հնարավոր է դառնում պարզել/ճշտել հայերեն մասնիկների թե՛ նախաձեւը, թե՛ իմաստը⁴²: Այս փաստը հույս է ներշնչում, որ կարելի է նույն ձեւով պարզել հայերեն Դավիթ անվան -իթ մասնիկի ծագումը եւ նախնական/եւակետային իմաստը:

Հիշելով պարզ խոսքերի նախնականությունն ապացուցող փաստերից բխող այն հետեւությունը, որ հայերենի թ շնչեղ բաղաձայնը ծագում է նախնական ա պարզ խոսք բաղաձայնից, անվան -իթ վերջավորության համար ենթադրելի է *-իա նախաձեւ:

Պոլինեզիական լեզուներում առկա է *iti* «փոքրիկ» արմատ, որի վեջնահնչունի օրինաչափ անկումով ստացվում է հայերեն Դավիթ անվան -իթ վերջավորության համար մեր ենթադրած -իա նախաձեւը: *Iti* «փոքրիկ» արմատը շատ հին արմատ է, ավանդված է նախաավստրոնեզերեն ու նախապոլինեզերեն լեզուներից եւ պատկանում է համապոլինեզիական բառապաշարին. նախաավստրոնեզերեն **itik* «փոքրիկ», նախապոլինեզերեն **iti*, ռապանուերեն *iti*, սամոա *iti*, տահիտի *iti*, հավայերեն *iki*, մաորի *iti*, մանգարեա *iti*, տուամոտու *iti*: Ըստ այդմ՝ հայերեն Դավիթ անվան նախաձեւը կարող էր լինել Տավիտ/Տաւիտ: Անվան այս վերջին տարբերակն էլ հենց վկայված ենք գտնում Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի մոտ⁴³:

Սակայն այն բացակայում է Դավթի հետ համադրելի առասպելական հերոս Tafaki-ի անվան մեջ: Պոլինեզիական առասպելական հերոսի Tafaki անվան երկրորդ բաղադրիչը *aki* արմատն է, որից էլ սկսենք մեր ստուգաբանությունը: Այս անվան *aki* բաղադրիչը հավայերեն *ʻaki* արմատն է՝ «կծել, կրծել, պոկել» իմաստներով: Հավայերեն այս արմատն ունի երեք բնիկ եւ մեկ փոխառություն համարվող (սակայն բնիկության վարկածը չբացառվող) հայերեն զուգահեռներ.

հավայ. *ʻaki* «կծել, կրծել, պոկել» - գրաբ. խած- «խածելը, կծելը» (բխեցվում է **khad-s- khad-* «կծել» արմատից)⁴⁴, որից ունենք գրբ. խա-

⁴² Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Լինեզյան լեզվամշակութային ընդհանրություններ, Երեւան, 2015, էջ 188–195:

⁴³ ՄԱԿԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՅ, Արցախ, Բագու, 1895, էջ 406: Հր. ԱՅԱՌԵԱՆ, Հայոց անձնանունների բառարան, հտ. Բ., Երեւան, 1944, էջ 22–23:

⁴⁴ Գ. ՋԱՆՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 310:

ծի, խածանել, խածուած, օձախած, խածեակ, նաեւ բրբ. խածել, խածնել (առավել հավանական ենք համարում հետեւյալ զարգացումը. ‘aki «կծել, կրծել, պոկել» (+h)⁴⁵ > *haki (հ > խ)⁴⁶ > հայերեն խած-),

հավայ. ‘akī «կծել, կրծել, պոկել» - գրաբ. կիծ «կծելը» (*gig-, *geig- «կծել, խայթել»)⁴⁷, որից ունենք «կծել, կծանել, կծատել» (թերեւս՝ ‘aki «կծել, կրծել, պոկել» (նախաձայն a-ի անկումով) > ki (արմատի կրկնությամբ) kiki > հայերեն կիծ), որից էլ, բնիկ հայերեն կրծել (*guurg-, *gurēugʰ-, *gurugʰ-) «ատամներով փոքր մասնիկներ պոկել», «ամբողջից մի բան պոկել»⁴⁸

եւ հավայերեն ‘akī «կծել, կրծել» (իմա՝ «մանրացնել»), «պոկել» - հայերեն -ակ1 վերջածանց (հավայերեն ‘ak(i) > տառացի հայերեն -ակ փոքրացուցիչ մասնիկ), որն էլ իմաստային առումով նույնական է համապոլինեզիական բառապաշարին պատկանող վերոհիշյալ ին «փոքրիկ» բառին:

Գ. Զահուկյանը ենթադրում է, որ -ակ փոքրացուցիչ մասնիկը փոխառություն է եւ «հավանաբար ծագում է իրանական -ak ածանցից, որ որոշ տարածքներում ունեցել է փոքրացուցիչ արժեք», բայց չի բացառում նաեւ վերջինիս բնիկության վարկածը՝ ավելացնելով, որ «հնարավոր է ենթադրել -ակ-ով կազմությունների բաղադրում հ.-ե. *kon > հայ. -կ(ն) ածանցով բնիկ հնդեւրոպական բառերի հետ, ինչպես -իկ եւ -ուկ ածանցների դեպքում»⁴⁹:

Կարծում ենք՝ հնագույն պոլինեզիական լեզուներում պահպանված նախաձեւը, որից օրինաչափորեն ծագում են բնիկ հայերեն վերոհիշյալ բառերն ու կասկածելի ծագման համարվող վերջածանցը, խոսում են նաեւ վերջինիս բնիկության տեսակետի օգտին:

Այսպիսով, պարզվում է, որ պոլինեզիական առասպելական հերոսի Tafaki անվան երկու բաղադրիչներն էլ ունեն բնիկ հայերեն բազմաթիվ զուգահեռներ.

tau «տարի», «ժամանակ», «ժամանակաշրջան» - բնիկ հայերեն տել/տիւ/տի, բարբառային թավ «ժամանականիշ բառեր»,

⁴⁵ Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Հայ-պոլինեզյան լեզվամշակութային ընդհանրություններ, Երեւան, 2015, էջ 57–59, 68–80:

⁴⁶ Նույն տեղում, էջ 34–35:

⁴⁷ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 404:

⁴⁸ Ս. ՄԱԼԽՍՅԱՆՅ, Հայերէն բացատրական բառարան, հտ. 2, 1944, էջ 504:

⁴⁹ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 794:

‘*aki* «կծել, կրծել», «պոկել» - բնիկ հայերեն խած- «խածելը, կծելը», կիծ- «կծելը», կրծել (կուրծ-) «ատամներով փոփ մասնիկներ պոկել», «ամբողջից մի բան պոկել», նաեւ -ակ փոքրացուցիչ մասնիկ:

Կատարված վերլուծությունների արդյունքում պոլինեզիական առասպելական հերոսի Tafaki/Tawaki/Tavaki անվան իմաստը կարելի է ձեւակերպել որպես

1. *tau/tav* «տարի», «ժամանակ» + ‘*aki* «կրծել, կծել», «ամբողջից մի բան պոկել», արդյունքում՝ «տարուց պոկված» կամ «պոկված ժամանակաշրջան» եւ

2. *tau/tav* «տարի», «ժամանակ» + ‘*aki* «կրծել «ատամներով փոփ մասնիկներ պոկել» = «ժամանակաշրջան փոփ» կամ «փոփ ժամանակաշրջան»:

Այս ամենը, սակայն, առայժմ ոչ մի պարզություն չի մտցնում հայերեն Դավիթ անվան իբ մասնիկի ծագման եւ իմաստի հետ կապված հարցերում: Այդ հարցերի պատասխանները գտնելու համար անհրաժեշտ է հիշել պոլինեզիական լեզուներին հատուկ որոշ հնչյունափոխական օրինաչափություններ եւ դրանց առնչվող հետեւյալ բացահայտումները:

Պոլինեզիական լեզուներում գործում է *t/k* հերթագայություն⁵⁰, որի հետքերը գտնում ենք նաեւ հայերենում. լոքանք/լուտանք, ձաղկել/ձաղտել, լեռտել/լերկել «մորթը՝ կաշին քերծվել», թափով/ֆափով «փուլթով», տրմուլ/կրմուլ «անփորձ»:

Այն գործում է նաեւ ռապանուերեն-հայերեն բառային ընդհանրություններում. ռապան. *moiko* «միսել», «ծածկվել ամպերով» - գրբ. մոթ «մուլթ», մոգ «մուգ», մէգ «մառախուղ», ռապան. *mooka* «ներշնչել» - գրբ. մէտ, որից՝ միտել «հակել, թեքել, ակնարկել», «խօսքը յատկապէս մէկին ուղղել», «հաւանութեան գալ, խոնարհիլ», ռապան. *tatara* (ta-tara) «քարքարոտ, ժայռոտ» - գրբ. կարկառ «քարակոյտ», ֆար «քար» (հնի. *kar*- «քար, կարծր» արմատից), ռապան. *moki* «նշանակություն, իմաստ» — գրբ. միտ «խելք, բանականութիւն, ուշադրութիւն, իմաստ» եւլն:

T/k հերթագայությունը մասնակիորեն գործում է տահիտերեն, սամոա եւ տոնգա լեզուներում եւ ամբողջությամբ՝ հավայերենում. այստեղ ընդհանրապես բացակայում է *t* հնչյունը եւ նրան բոլոր դիրքերում

⁵⁰ Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Հայ-պոլինեզյան լեզվամշակութային ընդհանրություններ, Երեւան, 2015, էջ 63–64:

փոխարինել է *k*-ն. օրինակ՝ հավայ. *kai* - ռապան. *tai* «ծով», հավայ. *kanaka* - ռապան. *tagata* «տղամարդ», հավայ. *keela* - ռապան. *teera* «այս», հավայ. *akua* – ռապան. *atua* «աստված», հավայ. *Kahiki* - ռապան. *եւ տահիտ*. *Tahiti*, հավայ. *make* - ռապան. *mate* «մեռնել», հավայ. *Kanaloa* - ռապան. *Taaroa*, հավայ. *Ku* - ռապան. *Tu*, հավայ. *Kane* – ռապան. *Tane* «գիցանուններ», հավայ. *kapu* - ռապանուի, տահիտի, մարկիզերեն *եւ այլն tapu* «արգելանք», հավայ. *iki* «փոքրիկ» – ռապան. *iti* «փոքրիկ», հավայ. *aki* «կծել, կրծել, պոկել» – ռապան. *ati* «կտրել, կոտրել, ջարդել»:

Այսպիսով, *t/k* հերթագայությունը հատուկ է թե՛ պոլինեզիական լեզուներին, թե՛ հայերենին, թե՛ պոլինեզերեն-հայերեն բառային ընդհանրություններին՝ այստեղից բխող հետեւություններով: Վերջինիս համաձայն՝ *Tafaki/Tavaki* անվան երկրորդ բաղադրիչի՝ հավայերեն *aki* «կծել, կրծել, պոկել» բառի համարժեքը ռապանուի *եւ այլ պոլինեզիական լեզուների ati* «կտրել, կոտրել» բառն է: Այն ունի նաեւ *aati*, *hati*, *hahati* (*ha-hati*), *hatihati* (*hati-hati*) զուգաձեւեր, որոնց հայերեն տառացի զուգահեռները գրաբարյան -աա, հաա արմատներն են՝ «հատել, կտրել» իմաստով: Գ. Զահուկյանը հաա բառի մասին գրում է՝ «Թերեւս փոխառություն խեթերենից կամ մերձավոր լեզվից. հմմտ. խեթ. *hattai* «հատել, ծակել, կտրել»»⁵¹: Սակայն ռապանուերենում պահպանված հնագույն արմատների հետ տառացի նույնությունը (*ati* - -աա, *hati* - հաա), ինչպես նաեւ վերջիններիս հավայերեն *aki* համարժեքի բնիկ հայերեն խած-, կիծ-, կուծ- եւ -ակ զուգահեռները վկայում են, որ այն եւս բնիկ հայերեն արմատ է եւ փոխառությունը կատարվել է հակառակ ուղղությամբ՝ արդեն իսկ փաստված հ/խ հերթագայությամբ. ռապան. *hati* = հայերեն հաա (*h > h*) > խեթերեն *hattai* «հատել, ծակել, կտրել»:

Այսպիսով՝ պոլինեզիական առասպելական հերոսի *Tafaki/Tahaki* անվան *aki* բաղադրիչն այլ պոլինեզիական լեզուներում հնչում է *ati*, այդ երկուսն էլ ունեն թե՛ բնիկ հայերեն, թե՛ ենթադրաբար փոխառություն համարվող նույնաձագում եւ նույնիմաստ զուգահեռներ, ինչը կարելի է համարել վերջիններիս բնիկության վկայություն:

Ավելին՝ հայերենը պահպանել է պոլինեզերեն *aki* եւ *ati* արմատների (*a > e > i*) ձայնդարձի բոլոր աստիճանները (տե՛ս աղյուսակները).

⁵¹ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 450:

Պոլինեզե- րեն	<i>Aki</i> «կծել, կրծել», «պոկել»	^{*52} <i>eki</i> -	<i>Iki</i> «փոքրիկ»
Գրաբարյան	-ակ փոքրա- ցուցիչ մասնիկ (գետակ, աղիւ- սակ, տնակ գաւառակ եւլն),	-ել փոքրացուցիչ մասնիկ (տղեկ, տղայեկ)	-իկ փոքրացուցիչ մաս- նիկ, (տղայիկ, աղջիկ, փոքրիկ) -իկ պատկանելություն ցույց տվող մասնիկ (պարսիկ, հնդիկ, խափշիկ, խուժիկ եւ այլն)
Պոլինեզե- րեն	<i>Ati/hati</i> «հա- տել, կտրել, կոտրել»	^{*eti} -	<i>Iti</i> «փոքրիկ»
Գրաբարյան	-աա (կոնատ, ոտնատ, պո- շատ, պնշատ, փայտատ) հաա — հատել «կտրել» բառի արմատը	էա «յատանելը», որից՝ էտել «որթատունկի ավելորդ մատները կտրելը, էտում» ⁵³	-իա պատկանելություն ցույց տվող մասնիկ (քասիտ, քուշիտ, հե- թիտ, սեմիտ եւ այլն)

Պոլինեզերեն *aki* «կծել, պոկել»/*ati* «հատել» արմատների ձայնդար-
ձային *iki/iti* «փոքրիկ» տարբերակերի վերջնահնչյունի օրինաչափ ան-
կումով ստանում ենք *it* եւ *ik* նույնածագում մասնիկներ⁵⁴ (հավելված 2),
որոնց հայերեն տառացի զուգահեռները հայերենի -իտ եւ -իկ վերջածանց-
ներն են (տեղին ենք համարում հիշեցնել, որ դեռեւս հեռավոր 1988-ին
այս մասնիկների նույնածագում լինելու վերաբերյալ ենթադրություն էր
հայտնել Հովհ. Կարազյուզյանը⁵⁵):

Համապոլինեզիական բառապաշարին պատկանող *iti* «փոքրիկ»
իմաստակիր բառի վերջնահնչյունի անկումով ստացվող հայերեն -իտ մաս-
նիկից էլ տ-ի հետագա շնչեղացմամբ ստանում ենք Դավիթ անվան -իթ
վերջավորությունը:

⁵² Աստղանիշով նշված են այն արմատները, որոնք մեզ չհաջողվեց գտնել պոլինեզիական
լեզուներում, սակայն դա չի նշանակում, որ դրանք գոյություն չունեն:

⁵³ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երեւան, 1972, էջ 84:

⁵⁴ Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Հայ-պոլինեզյան լեզվամշակութային ընդհանրություններ, Երեւան,
2015, էջ 173–174:

⁵⁵ Հովհ. ԿԱՐԱԳԵՈՋՅԱՆ, Սեպագիր տեղանուններ Հայկական լեռնաշխարհում եւ հարա-
կից տարածքներում, հտ. 1, 1, Երեւան, 1988, էջ 174:

Այսպիսով, հայերենի -իկ/-իա մասնիկների նախաձեւերը պահպանված ենք գտնում հնագույն պոլինեզյան լեզուներում, ի դեմս *aki* «կծել, կրծել, պոկել»/ *ati* «կոտրել, կտրել» > *iki/iti* «փոքրիկ» լիթմաստ բառերի:

Մեր կարծիքը հաստատող փաստեր ենք համարում նաեւ պոլինեզերեն-հայերեն հետեւյալ զուգահեռները.

նախապոլինեզերեն **riki*, մաորի *riki*, տուամոտու *riki*, «բեկոր, կտոր», անուտան *riki*, ռապանուի *riki* «փոքրիկ» = հայերեն -րիկ նվազական մասնիկ եւ

սամոա *li'i*, հավայերեն *liki*, սիկահանա *liki*, տուվալու *foliki*, նանումէա *foliki* «փոքրիկ» = հայերեն -լիկ նվազական մասնիկ (կարծում ենք՝ տեղի է ունեցել հետեւյալ զարգացումը. ռապանուի եւ այլ պոլինեզյան լեզուներ *iki* (+r) > *riki* (r>l) > հավայերեն եւ այլ լեզուներ՝ *liki* «փոքրիկ» = հայ. լիկ «փոքրացուցիչ մասնիկ»)⁵⁶:

Առանձին գործածություն եւ բառիմաստ ունեցող պոլինեզերեն այս բառերի հետ հայերենի մասնիկների ձեւաիմաստային լիակատար նույնությունը վկայում է հոգուտ մեր այն կարծիքի, որ

ա) պոլինեզիական լեզուներն արտացոլում են վաղնջագույն հայերենյան լեզվավիճակը եւ իրավամբ սկզբնաղբյուրի արժեք ունեն հայերենի համար եւ

բ) սխալված չենք լինի, եթե վերոհիշյալ բառերից առաջացած նույնաժառանգ եւ նույնիմաստ մասնիկներին բնիկ հայկական ծագում վերագրենք:

Ամփոփելով՝ կարելի է արձանագրել, որ հավայերեն *aki*, ռապանուերեն *ati* բառերը համապատասխանաբար ունեն «կծել, կրծել, պոկել» եւ «կտրել, հատել» իմաստներ, իսկ դրանց ձայնդարձային տարբերակները՝ հավայերեն *iki*, ռապանուերեն *iti* բառերը՝ «փոքրիկ»: Լեզվաբանական տեսակետից միանգամայն հասկանալի եւ օրինաչափ է հավայերեն *aki* «կծել, կրծել, պոկել»//ռապանուերեն *ati* «կտրել, կոտրել, հատել» եւ հավայերեն *iki*, *liki* «փոքրիկ»//համապոլինեզիական *iti* «փոքրիկ» իմաստային զարգացումը:

Այսպիսով՝ Դավիթ անվան -իթ վերջածանցի նախաձեւը նախաավատորոնեզերեն **itik*, նախապոլինեզերեն **iti*, նաեւ պոլինեզիական լեզուներում պահպանված *aki* «կծել, պոկել» = *ati* «կտրել, կոտրել, հատել»

⁵⁶ Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Հայ-պոլինեզյան լեզվամշակութային ընդհանրություններ, Երեւան, 2015, էջ 174:

բառերն են եւ հատկապես վերջինիս ձայնդարձային տարբերակը՝ *iti* «փոքրիկ» արմատը, որին համապատասխանում է հայերեն -իտ վերջածանցը (տե՛ս արդեն նշված Տավիտ տարբերակը), վերջինից էլ, *t*-ի շնչեղացմամբ ստանում ենք հայերեն Դավիթ անվան -իթ մասնիկը:

Նկատենք նաեւ, որ այս անձնանունը հայերենում միակը չէ, որ կազմված է -իթ վերջածանցով: Հիշեցնենք հայերեն Տիրիթ⁵⁷, Անձիթ⁵⁸, Մարդիթ⁵⁹, Արտիթ արական անձնանունները: Հատկանշական է, որ առաջին երեք անձնանուններում դեռեւս նշմարելի է -իթ վերջածանցի «փոքրիկ» իմաստը. Տիրիթ՝ «փոքրիկ Տիր», Անձիթ՝ «փոքրիկ Անձ» եւ Մարդիթ՝ «փոքրիկ Մարդ»:

Ի մի բերելով վերոշարադրյալը՝ կարելի է արձանագրել, որ հայերեն Դավիթ անունն ստուգաբանվում է երկու բնիկ հայերեն բաղադրիչներով. *Tau – Saw* (թավ) /տեւ «Ժամանակ» + *aki/ati/iti* - -իտ (-իթ) «փոքր» եւ, ըստ այդմ, նշանակում է «Տեւ(ողություն), ժամանակաշրջան փոքր» կամ, որ նույնն է՝ «փոքր տեւ(ողություն)/ ժամանակաշրջան»:

Դավիթ անվան բնիկ հայկական ծագման կողմնակի ապացույցներ կարելի է համարել ոչ միայն նրա՝ ազգային տիեզերավեպի ամենասիրված հերոսի անուն լինելու հանգամանքը, ոչ միայն վերջինիս առանձնակի մեծ տարածվածությունը հայոց մեջ անցյալում եւ այժմ, այլեւ այն փաստը, որ հայոց մեջ այդ անունը կրել են հիմնականում հոգեւոր հայրեր, իշխանազուն այրեր, զորավարներ, անվանի գիտնականներ եւ այլն⁶⁰:


Շարունակությունը՝ հաջորդիվ

⁵⁷ Հ. ր. ԱՃԱՌԵԱՆ, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա., Երեւան, 1942, էջ 167:

⁵⁸ Նույն տեղում, էջ 23:

⁵⁹ Նույն տեղում, էջ 242: Ն. Ա.ԴՈՆՅԱՆ, Երկեր, հտ. Գ., Երեւան, 2008, էջ 16:

⁶⁰ Հ. ր. ԱՃԱՌԵԱՆ, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա., Երեւան, 1942, էջ 21–62:



ՌՈՒԲԵՐՏ ԹԱԹՈՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ՝ ԱՐԵԽՏՆԱՅՈՒԹՅԱՆԸ ՎԻՃԱԿԱԳՐԵԼՈՒ 1914 Թ. ԶԵՌԱՐԿՆԵՐԸ

Սկիզբը՝ թիվ Է.

ԲԱԼՈՒԻ ԹԵՄ

Բալուի թեմ փետրվարի 17-ի շրջաբերականը չէր հասել: Այդ փաստաթղթի մասին թեմի առաջնորդ Եզնիկ եպիսկոպոս Գալփագճյանը իմացել էր պատրիարքարանի մեկ այլ՝ հուլիսի 5-ով թվագրված շրջաբերականից: 1914-ի օգոստոսի 8 (21)-ին պատրիարքարան ուղարկված նամակում նա մասնավորապես գրում էր. «Սույն շրջաբերականով ըստած էր նաև թե փետր. 17 թիվ շրջաբերականով մը յանձնարարուած է Ձեզ պատրաստիլ հոդային գրաւումներու լիակատար ցուցակը իրենց բոլոր ձեւերովը: Թող ներուփ մեզ յայտնելու, թէ այդպիսի շրջաբերական մը ժամանած չէ հոս, հանեցէ՛ք ուղարկել օրինակը ի գիտութիւն մեզ եւ ի կիրարկումն»¹:

Շրջաբերականին առնչվող՝ թեմից այլ գրություններ Տեղեկատու դիվանի պահոցը չի պարունակում:

Այսպիսով, եթե ամփոփենք, ապա ըստ Տեղեկատու դիվանի պահոցի նյութերի, 1914-ի հուլիսի վերջերի գրությամբ, այսինքն՝ մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբ, միայն էրգրումի, Երզնկայի, Կյուրինի, Ամասիա-Մարզվանի եւ Շապին Գարահիսարի թեմերից էին ստացվել փետրվարի 17-ի շրջաբերականով պահանջված տվյալները: Սեբաստիայի, Եւդոկիայի, Վանի, Բաղեշի եւ Մալաթիայի թեմերը պատասխան գրություններով հաստատել էին շրջաբերականի ստացումը եւ խոստացել էին ի կատար ածել դրանում նշված հանձնարարականները: Հաշվի առնելով, որ նշված թեմերից այլ գրություններ Տեղեկատու դիվանի պահոցում մեզ գտնել չի հաջողվել, կարելի է ենթադրել, որ պահանջված տվյալները կամ չեն ուղարկվել կամ էլ դրանք կորսվել են²: Տրապիզոնի թեմից ուղարկված վի-

¹ Նույն տեղում, Մ 995:

² Ինչպես վերը նշվել էր, Կյուրինի եւ Ամասիա-Մարզվանի վիճակագրությունները մենք կարողացել ենք հայթայթել Փարիզի ՀԲԸՄ Նուբարյան գրադարանի պահոցից: Ձեռք բացառում,

ճակագրությունը, ինչպես նշել ենք, պատասխան է ոչ միայն եւ ոչ այնքան փետրվարի 17-ի շրջաբերականով պահանջվածին, այլ նախորդ՝ 1913-ին կազմակերպված ձեռնարկին: Բաբերդի, Դիարբեքիի եւ Բալուի թեմերը փետրվարի շրջաբերականի մասին տեղեկացել էին մեկ այլ՝ հուլիսի 5-ի շրջաբերականից՝ խնդրելով Պատրիարքարանից այն կրկին ուղարկել:

Կարելի է ենթադրել, որ Պատրիարքարանը կշարունակեր հետապնդել փետրվարի 17-ի եւ հաջորդող շրջաբերականներով թեմերից պահանջված վիճակագրությունների ստացումը, սակայն 1914-ի հուլիսի 15 (28)-ին Առաջին աշխարհամարտի բռնկումն այլեւս ժամանակավրեպ դարձրեց ձեռնարկը: 1914 թ. հոկտեմբերի 18 (31)-ին Օսմանյան կայսրությունը՝ որպես Գերմանիայի եւ Ավստրո-Հունգարիայի դաշնակից, մտավ պատերազմի մեջ եւ դեկտեմբերի 3 (16)-ին չեղարկեց բարեփոխումների համաձայնագիրը³, ճանապարհ հարթելով դեպի Հայոց ցեղասպանություն իրականացումը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

Կ.ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ 1914 Թ.

ՓԵՏՐՎԱՐԻ 17 (ՄԱՐՏԻ 2) -Ի ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

ԽՈՐՀՐԴԱԲԱՐ

(ՄԻԱՅՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒՆ ՅԱՏՈՒԿ) Կ. ՊՈԼԻՍ, 17 ՓԵՏՐՈՒԱՐ 1914

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Մօտ տարի եւ կէս առաջ հայկական դժբաղդ դատը վերաբացուեցաւ Բերլինի Վեհաժողովին մասնակցող վեց մեծ պետութեանց կողմէ:

Մեր աղերսներուն վրայ Ազգիս Վեհափառ Հայրապետը բարեհաճեցաւ ստանձնել իր թշուառ հօտին պաշտպանը եւ իր կողմէ պաշտօն յանձնեց Վսեմ. Պօղոս Բաշա Նուպարին, որ Հայկ. Պատուիրակութեան մը գլուխ կանգնելով ամենամեծ եռանդով եւ ձեռնահաստութեամբ յաղթեց շատ մը խոչընդոտներու եւ Քաղաքական ներկայ ոչ այնքան նպաստաւոր վայրկեաններուն մէջ իսկ, կրցաւ արդիւնքի մը հասնել, որ շատ աւելի նպաստաւոր պիտի ըլլար, եթէ չը բռնկէր մէջ-Բալկանեան երկրորդ պատերազմը:

որ նշված պահանջում կարող են գտնվել 1914-ի փետրվարի 17-ի շրջաբերականի առնչությամբ կազմված այլ վիճակագրություններ եւս:

³ SĖu V. N. DADRIAN, The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, United Kingdom: Berghahn Books, 2003, էջ 212:

Ազգային Պատրիարքարանս — իր հանգամանքները ներածին չափով — միշտ համերաշխ եւ համախորհուրդ Ազգիս Վեհ. Կաթողիկոսի եւ Վսեմ. Պօղոս Նուպար Բաշայի հետ — իր կարեւոր դերը ունեցաւ Հայկական դատի ներկայ յաջողութեան մէջ, որ աւելորդ կը գտնանք բացատրել: Սակայն անհրաժեշտ կը համարինք այժմէն բնորոշել եւ գնահատել ձեռք բերուած յաջողութիւնը, ըստ այնմ արդիւնաւորելու համար զայն:

Մեծ Պետութիւնները իրենց կողմէ Հայկական հարցի վերջին շրջաններուն, Գերմանիոյ եւ Ռուսիոյ յանձնեցին հետապնդումը մեր դատին:

Գերմանիան Ռուսիոյ հետ համաձայնելու համար, կարգ մը սրբազրութիւններ մտցուց ծրագրին մէջ Ա.— փրկելու համար Օսմ. Կառավարութեան բրեստիժը եւ Բ.— առանց նիւթական ճնշման եւ դժուարութեանց ընդունելի ընելու համար զայն:

Այսպէս կրցաւ միանալ Եւրոպական երկու հակառակորդ խմբակցութեան տեսակէտները, որոնք մինչեւ այսօր համախորհուրդ վարեցին բանակցութիւնները Բ. Դռան հետ եւ եզրակացութեան մը բերին:

Այսօր հաստատուն կերպով երաշխաւորած են այն կէտերը, որ կը ներփակենք: Անոր հաստատման Կայսերական իրատէն պիտի հրատարակուի եւ Պետութեանց պաշտօնապէս հաղորդուի Ընդհ. Երկու քննիչներու անուանման հետ, որ պիտի կատարուի համաձայնութեամբ Եւրոպական պետութեանց՝ մօտ օրէն:

Սոյն համաձայնութիւնը կը պարունակէ Հայկական բարեկարգութեանց հիմնական կէտերը միայն, անոնց մանրամասնութիւնները եւ մեր կարգ մը բաղձանքները պիտի ջանանք, որ մտցուին Ընդհանուր քննիչներու հրահանգներուն մէջ, որ պիտի պատրաստուի վերջիններուս մասնակցութեամբ: Հիմնական սոյն կէտերը թէեւ մեր ազգային բոլոր իղձերուն եւ պահանջներուն ամբողջապէս գոհացում մը չի տար, սակայն կրնանք ըսել նաեւ թէ այն նախաքայլը մըն է, հանգրուան մը, որու միջոցին հայ ժողովուրդը պիտի կարենայ ամփոփուիլ, ապահովուիլ եւ բարգաւաճիլ պայմանով, որ անոնք գործադրուի ուղղամտօրէն եւ ճշտօրէն:

Անցեալի դառն դասերը հարկաւ չէին կրնար լաւատես ընել մեզի շատ մը խոստումներու վերաբերմամբ, սակայն համամիտ ըլլալով հանդերձ, որ ծայրայեղ խանդավառութիւն վնասակար է, անհրաժեշտ է սակայն գիտնալ միանգամայն գնահատել ձեռք բերուած արդիւնքին իրական արժէքը, ըստ այնմ զայն օգտագործելու եւ արդիւնատրելու համար: Ոչ մէկ բարենորոգում, որքան ալ լայն եւ լրին ըլլայ այն, արդիւնք մը չի կրնար առաջացնել,

եթէ Հայ ժողովուրդի բոլոր ուժերը եւ մանաւանդ Ազգ. Իշխանութիւնները չը գիտնան արդիւնաւորել զայն իրենց յամառ աշխատութիւններովը եւ հեռատես ու խելացի գործելակերպովը: Ձեռք բերուած սոյն հիմնական կէտերու արդիւնաւորման տեսակէտէն ամենէն կարեւոր եւ անմիջական ձեռնարկները հետեւեալներն են, որ յանձնելով ձեր լուրջ ուշադրութեան կը հրաւիրենք անմիջապէս միջոցներ խորհիլ անոնց ժամ առաջ ի կատար ածման ամենախիստ խորհրդապահութեամբ:

Ա.— ՎԻՃԱԿԱԳԻՐ — Հայկական բարեկարգութեան ներփակ համաձայնագրէն պիտի տեսնէք, որ Հայերու մասնակցութիւնը մինչեւ հիմնական մարդահամարի կատարուիլը, վիլայէթի ժողովներուն համար (Մէծլիսի ումումին Վիլայէթի էնձիմէ մէնի) Վան եւ Բիթլիս Վիլայէթներուն մէջ պիտի գործադրուի կէս առ կէսի դրութեամբ, իսկ միւս բոլոր վիլայէթներուն մէջ համեմատական, հիմնուած մահմէտականներուն համար Երեսփոխանական վերջին ընտրութեանց տոմարներու, իսկ Քրիստոնեաներուն՝ Իրենց Առաջնորդարաններու կողմէ ներկայացուած ցանկերու վրայ:

Ասկէ կը բղխի ուրեմն, որ շուտով պիտի ձեռնարկուի Ընդհանուր մարդահամարի՝ Եւրոպացի մասնագէտի մը հսկողութեան տակ, մինչ այդ, քանի որ Առաջնորդարաններու ցուցակներու վրայ պիտի որոշուի հայերու մասնակցութեան չափը, ուրեմն կըմբռնէք անշուշտ թէ որքան մեծ կարեւորութիւն պիտի ունենան լիակատար եւ ճշգրիտ ցուցակներ Հայ ազգաբնակչութեան:

Արդ, անցեալ տարի թէեւ մեր հարցացուցակներուն վրայ կազմած եւ դրկած էք Ձեր թեմի հայերուն թիւերը, բայց ի նկատի ունենալով ներկայիս անոր ահագին կարեւորութիւնը մեզ համար, կը յանձնարարենք ձեզ ձեռնարկել ամմիջապէս սրբագրելու, լրացնելու եւ մանրամասնելու վիճակագրութեան այն տախտակները, որոնք պատրաստած էիք մեր պահանջին վրայ: Այդ աշխատութիւնը կատարելէ վերջ բնագիրը առանձին տոմարներու մէջ կարճանագրէք — վաւերացնելով ձեր եւ Գաւառական Վարչութեան ստորագրութիւններով — իսկ մէկ պատճէն փութով կը յղէք Պատրիարքարանս: Աւելորդ անգամ մը եւս կը շեշտենք, որ վիճակագրութիւնը շատ մանրամասն եւ ըստ կարելւոյն ստոյգ պիտի ըլլայ (գիւղէ գիւղ) որ փութով ի գլուխ պիտի հանուի՝ ձեռնահաս եւ բարեխիղճ յատուկ անձերու յանձնելով այդ աշխատութեան պատրաստութիւնը:

Բ.— ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՅ — Բարենորոգման սոյն հիմերու մէջ պիտի գտնէք

նաեւ յօդուած մը մեր երկրի ամենակենսական հարցին — հողային խնդրի մասին, որ պիտի լուծուի Ընդհ. քննիչներու անմիջական հսկողութեան տակ:

Այդ առթիւ հողային հարցի մասին Ընդհ. քննիչներուն ամբողջական գաղտաբար մը տալու եւ մեր արդար պահանջները պաշտպանելու ու լիովին բաւարարութիւն ստանալու համար, պէտք է որ մեր բոլոր թեմերը պատրաստ ունենան թեմին մէջ գտնուող ամէն տեսակի եւ ձեւի հողային գրաւումներու ամենաճշգրիտ եւ մանրամասն ցուցակները՝ անհատի, Ազգային հիմնարկներու, Վանքերու հողերու եւ կալուածներու, ինչպէս նաեւ անոնց քանակի, տարածութեանց, անոնց արժէքի, գրաւող անձերու եւ գրաւուած եղանակի մասին: Սակայն ամէն կերպ պիտի ստուգէք, որ չափազանցութիւններ չը մտնան անոնց մէջ՝ զի Եւրոպացի պարկեշտ պաշտօնեայ մը չը հանդուրժելով անոնց, մէկ աղաւաղում մը միայն բաւ է նախապաշարելու զանոնք մեր հողային արդար պահանջներուն նկատմամբ:

Գ.— ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐ — Բարենորոգման հիմնական կէտերու մէջ պիտի գտնէք նաեւ յօդուած մը, որ կորոշէ, ըստ կարելոյն, կէս առ կէս համեմատութիւնը ընդունելու բոլոր նահանգներու մէջ պաշտօնեաներու եւ ապահովութեան ուժերու համար:

Այս ամենակարեւոր պայմանէն լիապէս եւ անմիջական կերպով — գոնէ հնարաւորութեան սահմաններու մէջ — օգտուելու համար, այժմէն անմիջապէս պիտի ձեռնարկել պատրաստելու վիճակագրութիւն մը բոլոր հայ կամ քրիստոնեայ պաշտօնէութեան, ներփակ հարցումներուն համաձայն, եւ օրինակ մը ղրկել մեզ:

Կը փափաքէինք գիտնալ նաեւ թէ ժանտարմեաներու եւ Բօլիսներու ներկայ ամսականներով պիտի յաջողի՞ մեզի գտնել բաւարար թիւով Հայ եւ Քրիստոնեայ թեկնածուներ՝ ժանդարմի եւ Բօլիսի պաշտօններուն համար, որպէս զի կարենամք լրացնել ընդունուած սոյն երկու գլխաւոր պայմանները, որ, ինչպէս գիտէք, միակ գրաւականն են արդար վարչութիւն մը ստեղծելու եւ ապահովելու մեր կեանքը եւ ինչքը:

Ահա այն գլխաւոր եւ անմիջական նախապատրաստական ձեռնարկները, որոնք ձեռք պիտի զարնուի ժամ առաջ խոհեմութեամբ եւ խորհրդապաշտութեամբ:

Հաճեցէք հաղորդել մեզ սոյն նամակը ստացած ըլլալնիդ եւ ձեր կարծիքը վերոյիշեալ առաջարկութեանց շուտափոյթ կարգադրման մասին:

ՄՆԱՄՔ ԱՂՕԹԱՐԱՐ

ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՅ ԹՈՒՐԹԻՈՅ

ՊԱՏԱՍԽԱՆՆԵԼ ՄԱՆՐԱՄԱՍՆԱԲԱՐ ՀԵՏԵԻՆԱԼ ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ

1.— Վիլյայէթիդ (Սանճագներով, գազաներով եւ նահիէներով) մէջ պետական բոլոր պաշտօնեաներու ընդհանուր թիւը (իւրաքանչիւր դիւանին զատ—զատ)՝ Վարչային, Դատական, Ոստիկանական եւ այլն:

2.— Իւրաքանչիւր Դիւանին մէջ որքան հայ կամ Քրիստոնեայ պաշտօնեաներ կան:

3.— Անոնց անունները, տարիքը, պաշտօնը, քանի տարի պաշտօնավարած են եւ ո՛ր, անոնց ազգային եւ բարոյական կեանքը, ի՞նչ դպրոցական կրթութիւն ունին, ի՞նչ լեզուներ գիտեն, լրացուցած են երկրի օրէնքով եւ կանոններով որոշուած պայմանները (Դատական պաշտօնեաները՝ հուգուգէն, իսկ Վարչային մեծ պաշտօնեաները՝ միւլքիէյէն վկայուած ըլլալը) կամ որո՞նք լրացուցած են:

4.— Երկրի օրէնքով եւ կանոններով որոշուած պայմանները լրացնող քանի մահմետական պաշտօնեաներ կը գտնուին եւ ո՞ր ճիւղերու մէջ:

5.— Յուցակագրել հայ կամ Քրիստոնեայ այն անձերու անունները, որոնք թէեւ ներկայիս պետական պաշտօնեայ չեն, բայց ունին յարմարութիւններ ստանձնելու ո եւ է պաշտօն: Անոնց մասին եւս տեղեկութիւններ նշանակել համաձայն 3-րդ կէտին հարցերուն եւ աւելցնելով նաեւ հետեւեալները — այսօր ի՞նչ պաշտօն ունին անոնք, երբ եւ իցէ պետական պաշտօնեայ եղած են, ու՞ր եւ քանի տարի, պետական ի՞նչ պաշտօն ստանձնելու յարմարութիւն ունին:

6.— Նահանգիդ մէջ ներկայիս ո՞րքան ժանտարմ կամ Ոստիկան կայ: Ատոնցմէ ո՞րքան հայ կամ քրիստոնեայ են:

Կը խնդրուի պատասխանել լուրջ եւ խոհեմ ուսումնասիրութենէ մը վերջ, ըստ կարելոյն փութով:

Սոյն ձեռնարկը խորհրդաբար կատարելու պատճառով յարմար դատուեցաւ ներփակ շրջաբերականները յղել միմիայն Վիլյայէթի եւ Սանճագներու Առաջնորդութեանց, հետեւաբար Վիլյայէթիդ մէջ գտնուող միւս Թեմերուն ուսումնասիրութիւնը Ձեր Հրահանգով կատարել տալէ վերջ, պէտք է ամփոփէք եւ փութով ղրկէք մեզի:

Աղբիւր՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի Տեղեկատու դիւանի պահոց, Մ 895—898:

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

1914 Վիճակացոյց Կիրնոյ Առաջնորդական թեմին պատկանող Կիրին, Տարէնտէ, Գանդալ եւ Պիւնեան գաւառակներու հայ երկսեռ բնակչութեան

Անուն գիւղի եւ քաղաքի	Թիւ տան	Թիւ արականաց	Թիւ իգականաց	Համագումար
Կիրին	1159	4336	4070	8406
Գարահիսար եւ Գաւազ	111	312	318	630
				9036
Տարէնտէ	312	1095	928	2023
Աշոտի	196	574	529	1113
				3126
Գանդալ	159	506	462	968
Մաներլըզ եւ Գէօրէն	246	984	935	1919
Մադարա	105	497	454	951
Պօզ Աւմատ	25	120	184	224
Գոմսուր եւ Ա. Գալէ	47	166	177	343
Եարհիսար	83	365	338	703
Ուշաղ	205	1011	988	1999
				7107
Էֆրէկ (Պիւնեան)	400	—	—	2700
Սար օղլան	50	—	—	336
Սըլլըրն	117	—	—	829
Կիկի	45	—	—	350
				4215

1914 Վիճակացոյց Կիրնոյ Առաջնորդական վիճակին պատկանող Թեմօս գաւառակի հայ երկսեռ բնակչութեան

Անուն գիւղի կամ քաղաքի	Թիւ տան	Թիւ արանց	Թիւ կանանց	Համագումար
Շար Գըշլա	44	135	122	257
Գարակէօլ	231	1013	972	1985
Չէփնի	124	722	667	1389
Լիսանլու	138	772	744	1516
Ղազի Մադարա	79	400	390	790

Այլաբիլիսէ	22	141	134	275
Գորտլու Գայա	24	166	146	312
Գանթարօզ	43	241	217	458
Թօփան	78	339	317	656
Թէմէնիք	20	118	104	222
Եափալթուն	111	565	521	1086
Փաշա	45	192	183	375
Թէմէն	76	430	389	819
Պաթէրին Զէլիւրմէ	75	442	402	844
Գալաթունար	91	349	331	680
Տէնտիլ	186	998	991	1989
Պուրհան	105	544	472	1016
Կէմէրէկ	599	2771	2441	5212
Պահար Էօզիւ	4	20	21	41
	2095	10 358	9564	19922

Ամփոփում

Կիրին գիւղաքաղաքի հայ երկսեռ բնակչութիւն	8406
[Կիրին գիւղաքաղաքի հայ] կաթոլիկներու [երկսեռ բնակչութիւն]	559
[Կիրինի] Գարանիսար եւ Գաւազ գիւղերու [հայ երկսեռ բնակչութիւն]	630
Տարէնտէ գաւառակի հայ երկսեռ [բնակչութիւն]	3126
Գանդալ [գաւառակի հայ երկսեռ բնակչութիւն]	7107
Պիւնեան [գաւառակի] եւ գիւղերու [հայ երկսեռ բնակչութիւն]	4215
Թենօսի [գաւառակի հայ երկսեռ բնակչութիւն]	19922
	43965

Աղբիւր՝ Փարիզի ՀԲԸՄ Նուբարյան գրադարանի պահոց, *BNu/APC/DOR 3/2*, թերթ 36:

Հավելված 4.

Ընդհ. մարդահամար հայ բնակչության վիճակին Շ. Գարահիսարի

		1913				1914		
		Արու	Էգ	Գումար		Արու	Էգ	Գումար
1	Շ. Գարահիսար	2607	2311	4918		2636	2335	4971
2	Թամզարա	794	724	1518		755	692	1447
3	Լրթառին	45	41	86		49	40	89
4	Ջրտախ	328	342	670		340	360	700
5	Ճէշէօյ	4	3	7		11	8	19
6	Միպէդի	377	375	752		394	380	774
7	Անէրդի	319	327	646		329	351	680
8	Պուսէյիտ	250	260	510		300	317	617
9	Չօնլու	12	11	23				
10	Անդրէաս	1411	1338	2749		1437	1311	2748
11	Բիւրֆ	882	834	1716		832	830	1662
12	Էսֆիշէնր	191	161	352		225	205	430
13	Համամ	100	97	197		105	98	203
14	Չօրխախ	50	50	100		56	48	104
15	Թանուրնըգ	26	27	53		28	26	54
16	Չամլընա	22	23	45		25	22	47
17	Սիս	398	389	785		422	419	841
18	Եէնի գիւղ	104	110	214		110	101	211
19	Մշակնոց	422	422	844		436	431	867
20	Կթանոց	229	196	425		230	211	441
21	Գումէշտուն	62	45	107		63	50	113
22	Զիֆթլիկ	38	38	76		46	49	95
23	Վարի Ածպաւէր	435	440	875		464	457	921
24	Վերի Ածպաւէր	803	811	1614		900	898	1798
25	Լըրան	52	52	104		78	68	146
26	Ադրաւիս	474	449	923		524	479	1003
27	Ալամոնիկ	108	111	219		121	137	258
28	Խիւրտիկ	78	61	139		99	75	174

29	Իզելնի	13	16	29		13	14	27
30	Ղավախ	22	19	41		21	17	38
31	Սելինաթիկ	184	191	375		189	186	375
32	Ավսումտու	63	63	126		71	53	124
33	Աղունմիս	436	376	812		454	391	845
34	Ապանա	226	218	444		235	231	466
35	Դմլուն	95	78	173		91	86	177
36	Ալրնօրա	19	18	37		19	18	37
37	Մըշաղ	45	45	90		24	26	50
38	Մէսումիյէ	70	70	140		65	50	115
39	Մահմուտ	175	175	350		316	299	615
40	Էֆշէրէ	15	15	30		31	26	57
		11 984	11 330	23 314		12 544	11 795	24 339

Աղբյուր՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տեղեկատու դիվանի պահոց, Մ 943–944:

ԱՄՓՈՓՈՒՄ

1912–14 թթ. հայկական բարենորոգումների շուրջ միջազգային դիվանագիտական գործընթացների ծիրում, ի պաշտոնե Օսմանյան կայսրության հայ համայնքը ներկայացնող կառույցը՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը սեւեռուն ուշադրություն է դարձրել արեւմտահայության թվաքանակի եւ Արեւմտյան Հայաստանում այլ ժողովրդակրոնական խմբերի նկատմամբ հայերի հարաբերակցության վերաբերյալ վիճակագրական տեղեկություններ հավաքելու եւ դրանց հիման վրա վիճակագրություններ կազմելու աշխատանքների վրա:

Ներկա հոդվածում լուսաբանվում են 1914 թ. հունվարի 26-ին (փետրվարի 8) հայկական բարենորոգումների վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրումից առ Առաջին աշխարհամարտի սկիզբ արեւմտահայությունը վիճակագրելու ուղղությամբ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի ձեռնարկները: Հետազոտությունը հիմնված է Պատրիարքարանի Տեղեկատու դիվանի պահոցում պահվող նախկինում չհրատարակված վավերագրերի վրա:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Կ. Պոլսի հայոց պատրիարքարան, Հայկական հարց, Արևմտյան Հայաստանի ազգաբնակչություն, արևմտահայության թիվ, վիճակագրություն:

РЕЗЮМЕ

В контексте международных дипломатических процессов 1912–1914 гг., связанных с «вопросом армянских реформ», Константинопольский Армянский Патриархат, будучи официальным представителем армянской общины Османской империи, сосредоточил усилия на сборе статистических данных о численности западных армян, их доле среди других этнорелигиозных групп Западной Армении, а также на составлении соответствующих отчетов.

В статье рассматриваются инициативы Константинопольского Армянского Патриархата по сбору статистических данных о западных армянах в период от подписания русско-турецкого соглашения об армянских реформах (26 января / 8 февраля 1914 г.) до начала Первой мировой войны. Исследование основано на ранее неопубликованных документах из архива Информационного бюро Патриархата.

SUMMARY

Within the framework of international diplomatic negotiations on Armenian reforms (1912–1914), the Armenian Patriarchate of Constantinople, as the official representative of the Armenian community in the Ottoman Empire, focused on collecting statistical data on the number of Western Armenians, their proportion relative to other ethnoreligious groups in Western Armenia, and compiling corresponding reports.

This article examines the initiatives of the Armenian Patriarchate of Constantinople to gather statistical data on Western Armenians from the signing of the Russo-Turkish agreement on Armenian reforms on January 26 (February 8), 1914, until the outbreak of World War I. The study is based on previously unpublished documents from the archive of the Patriarchate's Information Bureau.

ԱՎԱԳ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՎԱՎԵՐԱԳՐԵՐ «ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ (1944–1961)¹

Ինչ խոսք, հայ մամուլի պատմության մեջ կարելու տեղ են զբաղեցնում կրոնա-եկեղեցական ուղղվածությունն եւ պատկանելիությունն ունեցող պարբերականները: Եւ իհարկե այդ շարքում հիրավի առանձնահատուկ են Մայր Աթոռի պաշտոնական «Արարատ» եւ «Էջմիածին» ամսագրերը, որոնք մեծ ներդրում են նշանակություն ունեն մասնավորապես մամուլի եւ հայագիտության զարգացման գործում:

Անշուշտ, «Էջմիածին» ամսագիրն «Արարատ»-ի² ժառանգորդն էր հետեւյալ պատճառներով: Նախ, 1919 թ. ընդհատված «Արարատ»-ին արդեն 1920 թ. հաջորդած «Էջմիածին»-ը³ իրավամբ կարելի է համարել իրավական եւ խմբագրական պատկանելիության առումներով նախորդի ժառանգորդ: Իսկ արդեն շուրջ 25 տարվա ընդմիջումից հետո 1944 թ. սկսվեց վերահրատարակվել «Էջմիածին»-ը՝ որպես «Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի»⁴:

Առաջին իսկ համարում Ամենայն Հայոց Հայրապետության ազգընտիր Տեղակալ Գեւորգ Արքեպիսկոպոսը մասնավորապես նշում էր. «Հայրապետական ամսագիրը հանդիսանում է այն միջոցը, որը պետք է համախմբի սփյուռքի բոլոր հայերին իրենց սրբազան Հայրենիքի շուրջը, Մայր Աթոռի շուրջը: Հայությանն ուղղված մեր կոչի մեջ ասել ենք. «Հայր, բացի Սովետական Հայաստանից, չունի այլ հայրենիք: Հայր Հայաստանից դուրս չունի այլ հաստատուն կույն, բայց եթե Մայր Հայրենիքը, հայ եկեղեցին եւ նրան գլխավորող Ամենայն Հայոց Հայրապետությունը

¹ Ստացվել է՝ 2.05.2024, գրախոսվել է՝ 9.05.2024: Էլ. հասցե՝ avag.harutyunyan@yandex.com:

² Տե՛ս մանրամասն «Արարատ» (1868–1919), Մատենագիտություն, կազմող՝ Ս. ԿՈՄԻՆՅԱՆ, Ս. Էջմիածին, 1970:

³ Տե՛ս մանրամասն Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հասարակական եւ դիվանագիտական գործունեությունը (1918–1920 թթ.), Ս. Էջմիածին, 2018, էջ 72–95:

⁴ Տե՛ս մանրամասն «Էջմիածին» (1944–1973), Մատենագիտություն, կազմող՝ Ս. ԿՈՄԻՆՅԱՆ, Ս. Էջմիածին, 1975:

Ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռով»։ Այս պատգամով հրապարակ է գալիս Հայրապետական ամսագիրը, նույն այդ պատգամով նա կշարունակի իր գոյությունը եւ հետագայում»⁵։

* * *

Ինչպես ընթերցողի, այնպես եւ ամսագրի գործունեության ուսումնասիրության մեջ զբաղվող պատմաբանների աշխատանքը դյուրին դարձնելու նպատակով փաստաթղթերը հրապարակվում են բովանդակային չորս բաժիններով՝ բնականաբար յուրաքանչյուրում պահպանելով ժամանակագրական սկզբունքը։

Առաջին բաժնում ներկայացված է Ամենայն Հայոց կաթողիկոս Գեորգ Զ. Զորեքչյանի գրագրությունը, որն ի հայտ է բերում Մայր Աթոռի դիրքորոշումը խորհրդային պետության եւ Սփյուռքի նկատմամբ։ Արդեն 1945 թ. ապրիլի 3-ին նա ԽՍՀՄ առաջնորդ Ի. Վ. Ստալինին դիմեց տպարան ունենալու թույլտվության հարցով, որտեղ ի մասնավորի պետք է հրատարակվեր «Էջմիածին» ամսագիրը. «Թույլատրել տպագրել «Էջմիածին» ամսագրում, հատուկ բաժնում, գիտա-հետազոտական հոդվածներ հայագիտության հարցերի ուսումնասիրության վերաբերյալ, քանի որ առանց դրա ամսագիրն արտասահմանում հաջողություն չի ունենա եւ չի կարող իրականացնել իր հիմնական դերը – խորհրդային Հայաստանի հետ արտասահմանյան հայերի կապերի ամրապնդումը։ Հարկավոր է հաշվի առնել, որ սբ. Էջմիածնի նախկին պաշտոնական օրգանում – «Արարատ» ամսագրում, տպագրվել են այդպիսի հոդվածներ»⁶։

1952 թ. հուլիսի 15-ին ՀԽՍՀ կառավարության նախագահ Ս. Կարապետյանին հղած նամակում Գեորգ Զ. Զորեքչյանը ամսագրի հրատարակությունը կարեւորում էր քաղաքական տեսանկյունից. «Մեր համոզմունքն է, որ Մեր վարած քաղաքականութիւնը համապատասխան է Հայրենի Երկրի եւ Հայ ժողովրդի շահերին եւ համերաշխ Հայրենի Պետութեան քաղաքականութեան, որով ուրեմն համագործակցում ենք Հայրենի Պետութեան գործունէութեան։ Մեր ամսագիրը լիովին արձագանքում է թէ՛ Հայրենի Երկրի եւ թէ՛ խորհրդային Միութեան մէջ տեղի ունեցող բոլոր կարեւոր երեւոյթներին, երեւոյթները լուսաբանելիս առաջնորդ ունենա-

⁵ Տե՛ս Հայ եկեղեցու պարտքը իր ժողովրդի հանդեպ, «Էջմիածին», 1944, թ. 1, էջ 3։

⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 32, գ. 97, թթ. 1–2։

լով պետական տեսակէտը: Նկատի առնելով ամսագրի գոյութեան անհրաժեշտութիւնը, այլ եւ այն հանգամանքը, որ ներկայ պայմաններում Մենք անկարող ենք Մեր ոյժերով պահպանել նորա գոյութիւնը, խնդիրը կը լինէր, որ մեր Հայրենի Պետութիւնը ժամանակաւորապէս իր վերայ առնէր վերոյիշեալ ծախսերը»⁷:

«Սիրելի զավակ» «Էջմիածին» ամսագրի ճակատագրով մտահոգ Գեորգ Զ. տպագրութեան խնդրով կրկին դիմեց ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդին. «Տպագրութեան թանկութեան, իրացման-վաճառքի կազմակերպչա-տեսի-նիկական դժվարութիւնների շնորհիվ «Էջմիածին» ամսագրի հրատարակութիւնը դեֆիցիտային է, եւ հոգու աչքով ցավով ստիպված եմ փակել մեր օրգանը, որն արտասահմանյան հոտի հետ բարոյա-քաղաքական կապի հիմնական աղբյուր եւ խորհրդամետ քարոզչութեան արդյունավետ զենք էր: Մեր ամսագիրն, ըստ էութեան, արտասահմանյան հայերի շրջանում բավականին հեղինակավոր հասարակական-քաղաքական հրատարակութիւն էր: «Էջմիածին»-ի եւ Հոգեւոր Ակադեմիայի փրկութեան համար նվազագույնը տարեկան 500 000-ական ռուբլի է պահանջվում: Մենք խնդրում ենք ԽՍՀՄ Մինիստրների Սովետին հինգ տարով տարեկան այդ գումարով ապահովել: Որպէս այդ օգնութեան համար Մեր երախտագիտութեան հավաստիք Մենք մեր կողմից Մեր Կառավարութեանը տարեկան 10 000 դոլար կտրամադրենք»⁸:

Երկրորդ բաժնում ներկայացված են կազմակերպչական բնույթի փաստաթղթերը, որոնք արտացոլում են ամսագրի հրատարակչական, կազմակերպչական, տարածման գործընթացը, առկա բազմաթիվ դժվարութիւնները, դրանց լուծման ուղիները:

Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Հովհաննիսյանը 1947 թ. հունվարի 25-ի զեկուցագրում հանգամանալից ներկայացնում էր ամսագրի առաջին տարիների գործունեության բարդութիւնները. «1. ամսագրի բոլոր համարները տպագրվում են մոտավոր 6 ամիս ուշացումով «կորցնելով արդիական նշանակութիւնը», 2. տպարանի ղեկավարութիւնն անտեսում է ամսագրի տպագրութիւնը՝ միշտ թողնելով կուսակցա-պետական հրատարակութիւններից հետո, «եթե ազատ ժամանակ կունենան», 3. տպարանում միայն ամսագրի թուղթն է գողացվում, կլի-

⁷ Տէս ՀԱՍ, ֆ. 823, ց. 1, գ. 105, թթ. 1–10:

⁸ Տէս ՀԱՍ, ֆ. 1, ց. 32, գ. 97, թթ. 28–30:

շեները փչացվում, ինչը չի բացահայտվում եւ պատժվում, 4. անորակ է տպագրվում, բազմաթիվ տառասխալներով, չնայած լավ կլիշեների առկայությանը՝ նկարներն երբեմն շուռտիպ են տպագրվում, 5. ամեն անգամ խմբագրությունը ստիպված է աղաչել, խնդրել, ինչ-որ բան խոստանալ, որպեսզի աշխատանքն առաջ գնա, 6. ծախսերը կամայական են հաշվարկվում, ուռճացված»⁹: Զեկուցագրից պարզ էին դառնում իշխանությունների դրած խնդիրները. «Ամսագիրը պարտավոր է նախ եւ առաջ հոգեւոր կենտրոն էջմիածնի գործունեությունը, առօրեականության արդի հարցերը լուսաբանել, կաթոլիկ եկեղեցու սադրանքների դեմ ուղղված նպատակային հոգվածներ տպել, ցույց տալ հոգեւորականության վերաբերմունքը արտասահմանյան հայերի ներգաղթին, եւ յուրաքանչյուր համարում հայագիտության, պատմության եւ այլ հարցերի վերաբերյալ 1–2 հոդված տեղադրի»¹⁰:

Պետական բարձր արժեւորման վկայություն էր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի՝ 1947 թ. տված հետեւյալ գնահատականը. ««Էջմիածին»-ը արտասահմանյան ընթերցողների շրջանում այնքան հանրաճանաչ է դարձել, որ արտասահմանում հրատարակվող մի շարք հայկական թերթեր սկսեցին ամսագրի բազմաթիվ հոդվածներ վերատպել: Նրա հանրաճանաչության մասին է խոսում նույնպես առանձին անձանց եւ առաջադեմ հայկական մամուլի դրական արձագանքների մի ողջ շարքը»¹¹:

Ամսագրի տպաքանակի բաշխման-տարածվածության հստակ պատկերացման տեսանկյունից ուշագրավ են 1954 թ. ապրիլի 7-ին Մայր Աթոռի Դիվանի¹² եւ 1961 թ. փետրվարի 1-ին ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանի¹³ ներկայացրած ցուցակները, որտեղ ներկայացվում էին ամսագրին անհրաժեշտ սփյուռքահայ պարբերականների ցանկը եւ ամսագրի տարածման մանրամասն ենթաբաժանված ցուցակները (պարբերականների, թեմերի, կառույցների, անձանց):

Ոչ պակաս հետաքրքրություն են ներկայացնում երրորդ բաժնի ֆինանսական բնույթի փաստաթղթերը, որոնցում առավել ակնառու

⁹ Տէս ՀԱԱ, ֆ. 1, ց. 27, գ. 54, թթ. 10–24:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Տէս ՀԱԱ, ֆ. 1, ց. 32, գ. 97, թթ. 38–39:

¹² Տէս ՀԱԱ, ֆ. 823, ց. 1, գ. 125, թ. 3–5:

¹³ Տէս ՀԱԱ, ֆ. 823, ց. 1, գ. 226, թթ. 1–12:

պարզաբանվում են ամսագրի սկզբնական շրջանում ունեցած անթիվ-անհամար դժվարությունները: Այսպես, 1944 թ. խմբագրությունն անգամ մեքենագրուհի շուներ, օգտվում էր պետական թերթերի, բուհերի մեքենագրուհիների ծառայություններից: Նույն պարագան վերաբերում էր բանվորների եւ տրանսպորտի միջոցների բացակայությանը: Առաջին տարվա համարների ձեւավորումը կատարել էին Հակոբ Կոչոյանը, Նեմրուժ Բաղդասարյանը, Վրույր Արտաշեսը, Ստեփան Ալթունյանը, Գառնիկ եւ Օգսեն Ասատրյանները: Ամսագրի աշխատակիցներից հիշատակվում են՝ Վարդան Փոթեյանը, Վարդ Բդոյանը, Սարգիս Մարգարյանը, Հովսեփ Գրիգորյանը: Այս ամենի եւ հեղինակների հոնորարների, տպագրահրատարակչական բոլոր ծախսերի միակ ֆինանսավորման աղբյուրը միայն Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալ Գեորգ Արքեպիսկոպոսն էր¹⁴:

1951 թ. գեկտեմբերի 1-ին Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Հ. Գրիգորյանը հերթական անգամ փաստագրում էր, որ ամսագիրը փակման իրական վտանգի առջեւ է կանգնած: Նա հատկապես շեշտում էր հետեւյալը. ««Էջմիածին» ամսագրի հրատարակությունը արտասահմանյան հայերի առաջադեմ շրջանակների կողմից դիտարկվում է ոչ միայն որպես ԽՍՀՄ-ում եկեղեցու ազատության եւ եկեղեցու նկատմամբ խորհրդային պետության լոյալ վերաբերմունքի փաստ, այլեւ կապվում է ընկեր ՍՏԱԼԻՆԻ անվան հետ, քանի որ ռեակցիոն շրջանակները (դաշնակներ, կաթոլիկներ) ամսագրի հրատարակությունը գնահատում էին եւ այժմ շարունակում են գնահատել որպես «բոլշևիկների հերթական խաբեբայություն», որպես ժամանակավոր միջոցառում, իրականացված արտասահմանյան հասարակայնության խաբեկանքի համար եւ կանխագուշակում դրանց շուտափույթ փակումը: ամսագրի փակումը փաստացի թշնամական շրջանակների զրպարտչական հայտարարությունների հաստատմանը կնպաստի»¹⁵: Ըստ այդմ, նա ՀԿԿ Կենտկոմին առաջարկում էր թույլատրել Գեորգ Զ.-ին բաժանորդագրվել սփյուռքահայ պարբերականներ, խնդրում հրահանգել, որպեսզի կարգավորեն ամսագրի տպագրության ժամանակացույցը եւ որակը:

¹⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1143, ց. 12, գ. 152, թթ. 1–20:

¹⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 31, գ. 69, թթ. 152–153, 161–162:

Վերոնշյալ հանգամանքների քաղաքական կարեւորությամբ էր պայմանավորված 1952 թ. հունվարի 16-ին Հ. Գրիգորյանի հետ արդեն ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Զ. Գրիգորյանի ու պետական անվտանգության մինիստր Ս. Կորիսմազյանի համատեղ զեկուցագիրը Կենտկոմի 1-ին քարտուղար Գր. Հարությունյանին: Զեկուցագրում, նկատի ունենալով Մայր Աթոռի ֆինանսական սուղ հնարավորությունները, նպատակահարմար էր համարվում «էջմիածնի կաթողիկոսարանի նորմալ եւ ակտիվ գործունեության համար նվազագույն նյութական բազայի ապահովման ուղղությամբ» հետեւյալ միջոցառումների իրականացումը. 1. թույլատրել Գեորգ Զ.-ին արտասահմանում ամսագրի վաճառված գումարով անհրաժեշտ նյութերի ձեռքբերում, 2. Հայկական ԽՍՀ Մինիստրների Խորհրդին հանրապետության բյուջեյում ամսագրի պահպանման համար դոտացիա տարեկան 120 հազար ռուբլի նախատեսել, 3. արտասահմանյան թեմերը էջմիածնից պառակտման նախազգուշացման նպատակով ուժեղացնել էջմիածնի արտասահմանյան գործունեությունը, 4. ամսագրի աշխատանքը վերականգնել, որպեսզի վերականգնվի նորմալ պարբերականությունը – 12 համար տարեկան, տպաքանակը 3.000 օրինակ¹⁶:

Զորրորդ բաժնում տեղակայված նամակներն ամսագրի գործունեությունը ներկայացնում են միանգամայն այլ հարթությունում: Ընդամենը մի փոքր խումբ նամակների շնորհիվ ընթերցողի համար ակնհայտ է դառնում ամսագրի վայելած համընդհանուր հարգանքը, որ տածում էր սփյուռքահայ եկեղեցական, մտավոր-հասարակական շրջանակները:

Այսպես, հիշատակենք Ռումինիայի թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոսի¹⁷ (ապագա Վազգեն Ա. Ամենայն հայոց կաթողիկոս), Բերիո թեմի առաջնորդ Զարեհ եպիսկոպոսի¹⁸ (ապագա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս), «էջմիածին»-ի խմբագիր պրոֆեսոր Ա. Գ. Աբրահամյանի¹⁹ (ամսագրի գործունեության դժվարությունների մասին), Մատթեւոս Արամ Գալենտերի²⁰ (1915 թ. Կոմիտասի աքսորի անհայտ վավերական մանրամասների մասին) նամակները:

¹⁶ Տէս ՀԱԱ, ֆ. 1, ց. 32, գ. 97, թթ. 70–73, 77:

¹⁷ Տէս ՀԱԱ, ֆ. 1143, ց. 13, գ. 388, թ. 10:

¹⁸ Տէս ՀԱԱ, ֆ. 1143, ց. 13, գ. 388, թ. 21:

¹⁹ Տէս ՀԱԱ, ֆ. 823, ց. 1, գ. 53, թ. 1–4:

²⁰ Տէս ՀԱԱ, ֆ. 823, ց. 1, գ. 125, թ. 28–29:

* * *

Քննարկվող ժամանակաշրջանում «Էջմիածին» ամսագիրը խմբագրել են՝ պրոֆեսոր Առաքել Առաքելյանը (1944–1948, 1955–1956), Լեւոն Կիսիբեկյանը (1948–1950), պրոֆեսոր Աշոտ Աբրահամյանը (1950–1955), Արթուր Հատիտյանը (1956 թ.-ից)։

Առաջին համարից հեղինակներ էին մասնավորապես՝ Գեորգ Զ., Գարեգին Ա. Հովսեփյանը, Ստեփանոս Մալխասյանցը, Հրաչյա Աճառյանը, Երվանդ Շահազիզը, Գարեգին Լեւոնյանը, Աշոտ Աբրահամյանը, Ռուբեն արքեպիսկոպոս Դրամբյանը, Սփյուռքից՝ Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյանը, Արշակ Ալպոյաճյանը։ Նշենք, որ հետագայում հայ մշակույթի անվանի գործիչներն իրենց պարտքն էին համարում աշխատակցել ամսագրին։

Ամսագրի 1944–1952 թթ. սկզբնական տարիների համարների տպագրման հաճախականության, ծավալների վերաբերյալ հստակ պատկերացման համար ներկայացնում ենք հետևյալ վիճակագրական աղյուսակ-ցուցակը։

Արդեն 1956 թ. ամսագրի խմբագրությունը Մայր Աթոռում ունեցավ իր առանձին խմբագրական գրասենյակը, 3 մնայուն աշխատակիցներով, տպաքանակը 2000-ից հասավ 3500։ Եթե մինչև 1961 թ. ամսագիրը տպագրվում էր Երեւանի տպարաններում, ապա դրանից հետո սկսեց տպագրվել Մայր Աթոռում։ Իսկ 1965 թ. միաբաններից եւ գիտնականներից կազմվեց խմբագրական կայուն մարմին։

«Էջմիածին» ամսագիրը դարձավ եկեղեցական, հայագիտական ծանրակշիռ պարբերական, նախորդ «Արարատ»-ի ավանդների հավատարիմ շարունակողը, ժառանգորդը եւ զարգացնողը, Հայրենիք-Սփյուռք կապի ստեղծողն ու ամրապնդողը, հայ մտավորականության ոգեշնչողն ու հովանավորը։

Հայաստանի ազգային արխիվի մի շարք հավաքածուներից հրապարակելով նորահայտ փաստաթղթերը՝ համոզված ենք, որ դրանք կնպաստեն «Էջմիածին» ամսագրի պատմության ամբողջական հետազոտությանը, ինչի անհրաժեշտությունը վաղուց է հասունացել։ Այդ է պահանջում «Էջմիածին» ամսագրի տասնամյակների անուրանալի վաստակը Ս. Էջմիածնի հեղինակության ու ավանդների քարոզման եւ հայապահպանության գործում, ինչպես նաեւ եկեղեցական-հայագիտական ուսումնասիրությունների ոլորտում։

Թիվ	Հ/հ	Ամիս	Էջ	Թիվ	Հ/հ	Ամիս	Էջ	Թիվ	Հ/հ	Ամիս	Էջ
1944	1	Հունվ.	51	1947	1–2	Հունվ.–փետր.	94	1950	9–10	Սեպտ.–հոկտ.	95
1944	2–3	Փետր.–մարտ	62	1947	3–4	Մարտ–ապրիլ	95	1950	11–12	Նոյ.–դեկտ.	99
1944	4–5	Ապր.–մայ.	45	1947	5–6	Մայ.–հուն.	94	1951	1–3	Հունվ.–մարտ	95
1944	6	հունիս	55	1947	7–8	Հուլ.–օգ.	94	1951	4–6	Ապր.–հունիս	95
1944	7–9	Հուլ.–սեպտ.	48	1947	9–10	Սեպտ.–հոկտ.	95	1951	7–8	Հոկ.–օգ.	95
1944	10–12	Հոկտ.–դեկտ.	50	1947	11–12	Նոյ.–դեկտ.	95	1951	9–10	Սեպտ.–հոկտ.	95
1945	1–2	Հունվ.–փետր.	52	1948	1–2	Հունվ.–փետր.	95	1951	11–12	Նոյ.–դեկտ.	95
1945	3–4	Մարտ–ապր.	51	1948	3–4	Մարտ–ապր.	95	1952	1	Հունվ.	63
1945	5 ²¹	Մայ.	58	1948	5–6	Մայ.–հուն.	95	1952	2	Փետր.	63
1945	6–7	Հուն.–հուլ.	66	1948	7–9	Հուլ.–սեպտ.	102	1952	3	Մարտ	63
1945	8–10 ²²	Օգ.–հոկտ.	57	1948	10–12	Հոկտ.–դեկտ.	102	1952	4	Ապր.	63
1945	11–12	Նոյ.–դեկտ.	70	1949	1–2	Հունվ.–փետր.	95	1952	5	Մայ.	63
1946	1 ²³	Հունվ.	63	1949	3–4	Մարտ–ապր.	95	1952	6	Հուն.	63
1946	2–3	Փետր.–մարտ	87	1949	5–12	Մայ.–դեկտ.	99	1952	7	Հոկ.	63
1946	4–5	Ապր.–մայ.	82	1950	1–2	Հունվ.–փետր.	95	1952	8	Օգ.	63
1946	6–7	Հուն.–հուլ.	92	1950	3–4	Մարտ–ապր.	95	1952	9–10	Սեպտ.–հոկտ.	63
1946	8–10	Օգ.–հոկտ.	95	1950	5–6	Մայ.–ապր.	95	1952 ²⁴	11–12	Նոյ.–դեկտ.	71
1946	11–12	Նոյ.–դեկտ.	95	1950	7–8	Հուլ.–օգ.	95				

²¹ Առաջին անգամ նշված է «տիրած 1500» եւ «Հայկական ՍՍՌ ժողովրդավարական կուլտուրայի եւ ամսագրերի տպարան, Երևան»:
²² Ակտուհետ նշված է «N^o 3 տպարան»:
²³ «Հայկական ՍՍՌ Միջխորհրդային Սովետական կուլտուրայի եւ հրատարակչության կոմիտեի կողմից հրատարակվող «Հայկական ՍՍՌ ժողովրդավարական կուլտուրայի եւ ամսագրերի տպարան»:
²⁴ 1952-ից հրատարակվող կանոնադրված տարեկան 12 համար եւ կայուն էջաթանակ (բացառիկ համարները չհաշված):

Ա.

ԳԵՎՈՐԳ Զ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԹԻՎ 1

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԻՌԱԽՖ ՎԻՍՍԱՐԻՈՆԻ ՍՏԱՆԻՆՆԵՐ²⁵

...Սբ. Էջմիածնի վերականգնման համար անհրաժեշտ եմ գտնում ներկայացնել ձեզ նրա Գերագույն Պատրիարք-Ամենայն Հայոց Կաթողիկոսին հետևյալ իրավունքների եւ արտոնությունների տրամադրումը, որոնք եկեղեցու եւ Հայրենիքի շահերից բխող նրա աշխատանքին ավելի մեծ թափով կապահովեն:

3. Թույլատրել սբ. Էջմիածնին ունենալ իր տպարանը հետևյալի տպագրության համար. Հոգեւոր Ակադեմիայի դասագրքեր, եկեղեցական գրքեր, Կաթողիկոսի կոնդակներ, «Էջմիածին» ամսագիր եւ եկեղեցական օրացույց:

4. Թույլատրել տպագրել «Էջմիածին» ամսագրում, հատուկ բաժնում, գիտա-հետազոտական հոդվածներ հայագիտության հարցերի ուսումնասիրության վերաբերյալ, քանի որ առանց դրա ամսագիրն արտասահմանում հաջողություն չի ունենա եւ չի կարող իրականացնել իր հիմնական դերը — Խորհրդային Հայաստանի հետ արտասահմանյան հայերի կապերի ամրապնդումը:

Հարկավոր է հաշվի առնել, որ Սբ. Էջմիածնի նախկին պաշտոնական օրգանում - «Արարատ» ամսագրում, տպագրվել են այդպիսի հոդվածներ: Այդպիսի հոդվածներ տպագրվում են եւ ներկայումս Կիլիկիայի Կաթողիկոսության եւ Երուսաղեմի պատրիարքարանի ամսագրերում²⁶:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱԶԳՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ

ԳԵՆՐԳ ԱՐԲԵՊԻՍԿՈՍՈՍ ԶԵՈՐԵՔԶՅԱՆ

1945 թ. ապրիլի 3

ՀԱՍ. ֆ. 1, ց. 32, գ. 97, թթ. 1-2: Մեֆենագիր: Պատճեն: Թարգմ. ռուս.:

²⁵ Կա մակագրություն. «Համաձայն եմ: ԽՍՀՄ Ժողովրդային նախագահ ՍՏԱՆԻՆ. 19/IV.45 թ.»:

²⁶ Նկատի ունի «Հասկ» եւ «Սիոն» պարբերականները:

ԹԻՎ 2

ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ կից Հայ եկեղեցու Գործերի Խորհրդի Նախագահ
Պատուարժան Ս. Ն. Յովհաննիսեանին

Ազգային-եկեղեցական ժողովում Բէյրութի պատգամաւոր քաղաքացի Մկրտիչ Մսրլեանը²⁷ սիրայօժար յանձն առաւ նուիրել Ս. Էջմիածնին մի տպարանի սարքաւորում: Նկատի առնելով, որ Էջմիածնի համար անհրաժեշտ է, ըստ հնարաւորութեան, շուտափոյթ ստանալ տպարանական մեքենաները իր աղաղակող կարիքներին բաւարարելու համար: Այս առթիւ Մենք որոշել ենք գործուղել Բէյրութ²⁸ «Էջմիածին» ամսագրի խմբագրի տեղակալ զոցենտ Առաքել Գէորգի Առաքելեանին²⁹ եւ տպարանական գործի մասնագէտ Նիկողոս Խաչատրի Մանուկեանին ամսագրի համար մշտական աշխատակիցներ ձեռք բերելու, եւրոպական ճաշակաւոր եւ բարձր տեխնիկա ունեցող տպարանի հետ ծանօթանալու եւ տպարանական մեքենաները ապահով Հայաստան փոխադրելու եւ Էջմիածնում սարքաւորելու համար: Ուստի այսու խնդրում եմ հաճիք անցագիր ստանալ յիշեալ անձանց համար:

Գէորգ Զ. Կաթուղիկոս Ամենայն Հայոց [ձեռագիր ստորագրություն]

3 Յունվ. [ար] 1946 ամի

ՀԱՍ. ֆ. 823, ց. 1, գ. 13, թ. 1: Բնագիր: Մեքենագիր³⁰:

ԹԻՎ 3³¹

ՀՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ

Պատուարժան Ս. Կ. Կարապետեանին³²

15 Յուլիսի [19]52

²⁷ Մկրտիչ Մսրլեանը եղել է ՌԱԿ եւ ՀԲԸՄ նշանավոր անդամ, Թեքեյան մշակութային միութեան եւ Բէյրութի «Ջարթոնք» թերթի հիմնադիրներից:

²⁸ Պատվիրակութիւնը Երեւանից Բէյրութ է մեկնել 1946 թ. ապրիլի 28-ին «բարերար Մ. Մսրլեանի կողմից Մայր Աթոհն նվիրված տպարանի փոխադրութեան գործը կարգավորելու համար»: Տէս «Էջմիածին», 1946, թ. 4–5, էջ 17:

²⁹ Առաքել Առաքելյան (1887–1980) – բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտութեան վաստակավոր գործիչ: Ավարտել է Էջմիածնի Գեորգյան ճեմարանը (1907 թ.):

³⁰ Տպագրված է «Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց» պաշտոնաթերթի վրա: Կա ձեռագիր մակագրութիւն. «Կցել գործին: Միջնորդութիւն հարուցված է: 4/1.46 թ., Ս. Հով. »:

³¹ Հրապարակվում են միայն «Էջմիածին» ամսագրին վերաբերող հատվածները:

³² Սահակ Կարապետյան (1906–1987) – 1944–1947 թթ.՝ ՀՍԽՀ Մինիստրների սովետի նախագահի տեղակալ, արտաքին գործերի մինիստր, 1947–1952 թթ.՝ Մինիստրների սովետի նախագահ:

Մեր այս գրութեամբ նպատակ ունինք Հայոց Հայրապետութեան ներկայ կարեւոր ձեռնարկների նկարագիրը տալ, նոցա նպատակները լուսաբանել եւ նոցա տնտեսական վիճակը բացատրել, որպէսզի պարզուի Մեր վերոյիշեալ ասածների ճշմարտութիւնը եւ որոշուի նոցա ապագայ ընթացքը:

Հայ Ժողովրդի, յատկապէս Սփիւռքի Հայութեան շահերի տեսակէտով Մենք Հայրենի Պետութեան թոյլտուութեամբ հրատարակում ենք Մայր Աթոռի պաշտօնական բերան «Էջմիածին» ամսագիրը, բացել ենք բարձրագոյն Հոգեւոր ճեմարան, իրաւունք ունենք բանալու տպարան, ղեկավարում ենք Արտասահմանի թեմերը³³: Հայոց Հայրապետութիւնը, ղեկավարելով վերոյիշեալ հաստատութիւնները, որոշ տեսակէտներով, բնականաբար վարում է նաեւ արտաքին քաղաքականութիւն Սփիւռքի Հայութեան նկատմամբ: Մեր համոզմունքն է, որ Մեր վարած քաղաքականութիւնը համապատասխան է Հայրենի Երկրի եւ Հայ Ժողովրդի շահերին եւ համերաշխ Հայրենի Պետութեան քաղաքականութեան, որով ուրեմն համագործակցում ենք Հայրենի Պետութեան գործունէութեան, եւ Մեր կականջը հաստատում է Մեր այս համոզմունք:

Դառնանք արծարծուելիք հարցերին. Ա. «Էջմիածին» ամսագրի հրատարակութեան Թ-րդ տարին է, որ հրատարակում ենք «Էջմիածին» ամսագիրը, որի ուղղութեանը լաւատեղեակ է ինչպէս մեր, նոյնպէս եւ Կեդրոնի իշխանութիւնը եւ որքան Մեզ յայտնի է պաշտօնական եւ մասնաւոր աղբիւրներից Կառավարութիւնը գոհ է Մեր պաշտօնական ամսագրից: Մեր ամսագիրը լիովին արձագանքում է թէ՛ Հայրենի Երկրի եւ թէ՛ Խորհրդային Միութեան մէջ տեղի ունեցող բոլոր կարեւոր երեւոյթներին, երեւոյթները լուսաբանելիս առաջնորդ ունենալով պետական տեսակէտը: Նա արձագանքում եւ լուսաբանում է Սփիւռքի Հայութեան եւ ընդհանուր կեանքի երեւոյթներին օբիեկտիւ մօտեցում ունենալով եւ առաջնորդուելով Ժողովուրդների շահերի տեսակէտով նա տալիս է բնիկ Երկրի եւ Սփիւռքի Հայութեան եւ ընդհանրապէս քոյր եկեղեցիների եկեղեցական կեանքի կարեւոր երեւոյթների նկարագիրն ու լուսաբանութիւնը, նա արծարծում է Հայ Երկրի, Խորհրդային Միութեան եւ Եվրոպական գրականութեան աչքի ընկնող խնդիրները բնորոշելով նոցա արժէքաւոր կողմերը եւ տալով գրական դէմքերի գնահատականը: Ամսագիրը հրատարակում է հայ հին

³³ Ընդգծված բառերը ձեռագիր ավելացրել է Գեորգ Զ.-ն:

մատենագրական նորոյթներ, տալով նոցա ուսումնասիրութիւնը, այլ եւ հայ խորհրդային նոր գրական երկերի գրախօսականները: Նա տալիս է հայրենադարձ ժողովրդի կեանքի նկարագիրը Հայրենի Երկրում, նորատնտեսական եւ հոգեական վիճակը եւ նորա վերելքը բոլոր ասպարէզներում: Եւ վերջապէս Մեր ամսագիրը արձագանքում է նաեւ համամարդկային բնոյթ կրող կարեւորագոյն հարցերին, որպիսին է համաշխարհային խաղաղութեան եւ ազգերի ու Պետութիւնների համագործակցութեան եւ եղբայրութեան հարցերը: Այսպիսի թերթի գոյութեան անհրաժեշտութիւնը ընդհանուր առմամբ եւ մանաւանդ Սփիւռքի Հայութեան համար ինքնին հասկանալի է:

Վերոյիշեալ ձեռնարկները, որոնց անհրաժեշտութիւնը Մենք պատճառաբանեցինք եւ որ ինքնին հասկանալի է, ցարդ Մենք պահպանել ու տնտեսապէս ղեկավարել ենք գլխաւորապէս Սփիւռքի Հայութեան օժանդակութեամբ եւ շնորհիւ Արտասահմանից անմաքս ստացուած ապրանքների, Մեր Հայրենի Պետութեան համբերատար ոգու շնորհիւ եւ Մեծ Ստալինի լայնախոհութեան ու բարեացակամութեան եւ շնորհուած արտօնեալ իրաւունքի:

Ներկայումս, երբ Խորհրդային Իշխանութեան եւ երեք մեծ Պետութիւնների յարաբերութիւնը լարուած վիճակի մէջ է, որի հետեւանքով ջանքեր են թափուում նոցա կողմից դժուարացնելու Մեր յարաբերութիւնները Սփիւռքի Մեր թեմերի եւ Մեր ժողովրդի հետ, մինչեւ իսկ փորձեր են կատարուում էջմիածինը իսպառ անջատելու իր Արտասահմանի թեմերից, որպիսի փորձերը անյաջողութեան են մատնուում եւ կը մատնուեն, սակայն յաջողուել է նոցա ահաբեկման շնորհիւ արգելել դրամ փոխադրել Մեզ լինի այն նուիրատուութիւն թէ Հայ Եկեղեցու Սահմանադրութեան համաձայն թեմական պարտադիր գանձուելիք դրամ: Ստեղծուած պայմանների հետեւանքով վերոյիշեալ եւ այլ կարեւոր Մեր ձեռնարկները ի վիճակի չպիտի լինենք պահպանել, եթէ արտաքին աջակցութիւն չլինի:

«Էջմիածին» ամսագիրը ընթացիկ տարուանից լոյս է տեսնում Կառավարութեան գիտութեամբ եւ հաճութեամբ որպէս ամսագիր, որի տարեկան բիւջէն է 216.000 ռուբլի: Ճեմարանի պահպանութիւնը, որպէս բարձրագոյն լրիւ գիշերօթիկ Հաստատութիւն, նստում է էջմիածին ոչ պակաս, քան 500.000 ռուբլի: Նկատի առնելով վերոյիշեալ երկու հաստատութիւնների գոյութեան անհրաժեշտութիւնը, այլ եւ այն հանգամանքը,

որ ներկայ պայմաններում Մենք անկարող ենք Մեր ոյժերով պահպանել նոցա գոյութիւնը, Մեր խնդիրը կը լինէր, որ մեր Հայրենի Պետութիւնը ժամանակաւորապէս իր վերայ առնէր վերոյիշեալ ծախսերը, որ Մենք ի վիճակի լինէինք ոչ միայն պահպանել յիշեալ հաստատութիւնները, այլ եւ հնարաւորութիւն ունենայինք Մեր այլ կարեւոր ձեռնարկները ընդլայնել եւ խորացնել, ինչպէս օրինակ Արտասահման գործուղողութիւնը պատգամաւորների եւ այլ նման ձեռնարկների կենսագործումը:

Մեր ակնկալիք աջակցութիւնը ժամանակաւոր ենք կոչում այն պատճառով, որ Մենք ինքնավստահութիւն ունենք, թէ աշխարհում խաղաղութիւն կը հաստատուի, որի յաջողութեան մասին իսպառ չենք տարակուսում, որից յետոյ Մենք ոչ միայն հնարաւորութիւն կունենանք Մեր սեփական ոյժերով կառավարել Մեր հաստատութիւնները, այլ եւ Մեր պարտքը զեղչելու բարոյական առաքինութիւնը կունենանք:

Ներկայացնելով վերոյիշեալ զեկուցումը Մենք կատարեալ վստահութիւն ենք տածում, թէ Մեր բոլոր առաջարկ-խնդիրները կը յարգուեն, ինչպէս ցարդ յարգուել են, նկատի առնելով նոցա կարեւորութիւնն ու օգտակարութիւնը Հայ ժողովրդի եւ Հայրենի Երկրի համար:

Մնամ խորին յարգանքով

Գէորգ Զ

Ծայրագոյն Պատրիարք-Կաթողիկոս Ամենայն Հայոց
ՀԱՍ. ֆ. 823, ց. 1, գ. 105, թթ. 1–10: Բնագիր: Մեքենագիր:

Թիվ 4

Մեծայարգ Տիար Ալէքս Մանուկեան³⁴

Նախագահ Հ.Բ.Ը. Միութեան Կեդրոնական Վարչութեան

9 ապրիլի 1954

ՆԻԻ-ԵՈՐՔ

Ներփակ ուղարկում ենք Ձեզ Սփիւռքի մի շարք հայկական թերթերի եւ ամսագրերի ցուցակը, որոնց ցանկանում ենք բաժանորդագրուել:

Հաճեցէք անհրաժեշտ կարգադրութիւնն անել՝ ընթացիկ 1954 տարուայ յունուարի 1-ից Մեզ բաժանորդագրելու նշուած թերթերին ու ամսագրերին եւ ուղարկելու անձամբ Մեր հասցեով:

³⁴ Ալէք Մանուկեան (1901–1996) – 1953-ից՝ ՀԲԸՄ նախագահ, Հայաստանի ազգային հերոս (1994):

Բաժանորդագրությունները կատարեցէք Ձեզ մօտ Մեր ունեցած գումարների հաշուին:

Հայրապետական օրհնություններով՝

ԳԵՈՐԳ Զ.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱԱ, ֆ. 823, ց. 1, գ. 125, թ. 6: Մեքենագիր: Բնագիր:

ԹԻՎ 5

ԽՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ

Մեզ մասնավորապես անհանգստացնում է մեր սիրելի զավակների ճակատագիրը, որոնց գոյությունն ակնհայտ սպառնալիք է սպառնում. ա. «Էջմիածին» ամսագիրը, եւ բ. Հոգեւոր Ակադեմիան: Տպագրության թանկության, իրացման-վաճառքի կազմակերպչա-տեխնիկական դժվարությունների շնորհիվ «Էջմիածին» ամսագրի հրատարակությունը դեֆիցիտային է, եւ հոգու այրող ցավով ստիպված եմ փակել մեր օրգանը, որն արտասահմանյան հոտի հետ բարոյա-քաղաքական կապի հիմնական աղբյուր եւ խորհրդամետ քարոզչության արդյունավետ զենք էր: Մեր ամսագիրն, ըստ էության, արտասահմանյան հայերի շրջանում բավականին հեղինակավոր հասարակական-քաղաքական հրատարակություն էր: Բարոյա-քաղաքական արդյունավետությունը եւ հեղինակությունը, ցավոք, նյութապես ամենեւին էլ չփոխհատուցվեցին: Մենք ժամանակին սեփական տպարանի ստացման եւ կազմակերպման հույս ունեինք, որը ազգային-եկեղեցական ժողովում սիրիահայ պատգամավորներից մեկը հանդիսավոր խոստացել էր, սակայն, ցավոք, տարիներն անցան եւ անցնում են, իսկ խոստացված տպարանը չկա, հավանաբար խոչընդոտները քաղաքական բնույթի են եւ կապված հակախորհրդային ուժերի քաղաքական սադրանքների հետ:

Չնայած այդ ամենին եւ ցանկացած դժվարությունների ու խոչընդոտների, մենք ամենայն մարդկային հնարավորինս անում ենք «Էջմիածին» ամսագրին եւ Հոգեւոր Ակադեմիային սպառնացող վտանգից փրկվելու համար: Առանց դրանց էջմիածնի Պատրիարքարանն աննկատ կվերածվի մասնավոր վանական համայնքի՝ ի ուրախություն արտասահմանյան հակախորհրդային կենտրոնախույս շրջանակների:

էջմիածնի Պատրիարքարան-Կաթողիկոսարանը բազմաթիվ պահանջներ եւ հոգսեր ունի, որոնք կայուն եւ մեծ միջոցներ են պահանջում: Սակայն, ներկայումս հիմնական խնդիրն Ազգային-կրոնական կյանքի նշյալ երկու օջախների փրկությանն է:

Միշտ Մեր բոլոր եկեղեցական կարիքներով արտասահմանյան հայերին դիմելը ներկայումս քաղաքականապես աննպատակահարմար եւ բարոյապես մանրախնդիր ենք համարում: Դրա համար դիմում ենք Մեր Կառավարությանը հույսով, որ նա չի մերժի իր օգնությամբ: «էջմիածին»-ի եւ Հոգեւոր Ակադեմիայի փրկության համար նվազագույնը տարեկան 500 000-ական ռուբլի է պահանջվում: Մենք խնդրում ենք ԽՍՀՄ Մինիստրների Սովետին հինգ տարով տարեկան այդ գումարով ապահովել: Որպես այդ օգնության համար Մեր երախտագիտության հավաստիք Մենք մեր կողմից Մեր Կառավարությանը տարեկան 10 000 դոլար կտրամադրենք:


Մենք մշտապես օգտվել եւ անկեղծորեն թանկ ենք գնահատել Մեր անձի հանդեպ Խորհրդային Կառավարության վստահությունը: Ձեր օգնության մեջ էջմիածնի Պատրիարքարան-Կաթողիկոսարանը տեսնում է հայկական եկեղեցու եւ Խորհրդային Հայրենիքին ու Խորհրդային Ժողովրդին անկեղծորեն նվիրված նրա զառամյալ Պատրիարք-Կաթողիկոսի հանդեպ Մեր Կառավարության եւ նրա Մեծ Առաջնորդի վստահության նոր ապացույցը:

Ամենայն Հայոց Կաթողիկոս-Գերագույն Պատրիարք Գեւորգ VI [ստորագրություն]

[ԱՆԺԱՄԿԵՏ]

ՀԱՍ, ֆ. 1, ց. 32, գ. 97, թթ. 28–30: Մեխնագիր: Բնագիր: Թարգմ. ռուս.:

Շարունակությունը հաջորդիվ



ԱՐՄԱՆ ՄԱՆՈՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
«Վաչե եւ Թամար Մանուկյան մատենադարան»

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՍԱՐԶԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ (1999–2025 ԹԹ.)¹

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ Արագածոտնի մարզը կազմավորվել է 1995 թվականին: Մարզն իր անունն ստացել է Մեծ Հայքի Այրարատ նահանգի (աշխարհ) Արագածոտն գավառի անունից: Արագածոտնի մարզը ներառում է Աշտարակի, Ապարանի, Արագածի (Ծաղկահովտի) եւ Թալինի նախկին վարչական շրջանները: Մարզի տարածքը շուրջ 2753 քառ. կմ է եւ կազմում է ՀՀ-ի տարածքի մոտ 9,3%-ը: Մարզկենտրոնն է Աշտարակ քաղաքը: Մարզն ունի երեք քաղաքային (Աշտարակ, Ապարան, Թալին) եւ 111 գյուղական բնակավայր²: Մարզի տարածքում է գտնվում ՀՀ-ի ամենաբարձր լեռնագագաթը՝ Արագածը, որն ունի ծովի մակարդակից շուրջ 4096 մ բարձրություն:

Արագածոտնի մարզը սահմանակցում է Շիրակի, Լոռու, Կոտայքի, Արմավիրի մարզերին եւ մայրաքաղաք Երեւանին, իսկ արեւմուտքում՝ Թուրքիայի Հանրապետությանը:

Արագածոտնի մարզի տարածքը կազմում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Արագածոտնի թեմը, որը կազմավորվել է 1996 թ. մայիսի 30-ին³: Ամենայն Հայոց Կաթողիկոս, Երջանկահիշատակ Գարեգին Առաջին Սարգիսյանի սրբատառ կոնդակով: Թեմի առաջնոր-

^{1*} Ստացվել է՝ 19.02.2025, գրախոսվել է՝ 22.02.2025: Էլ. հասցե՝ armanmaloyan@mail.ru, armanmaloyan1976@gmail.com:

² Տե՛ս օր.՝ ՀՀ կառավարության 2011 թ. մարտի 31-ի նիստի № 12 արձանագրային որոշման հավելվածը՝ պարբ. 1, https://www.gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/12-1.pdf, հմմտ. ՀՀ Արագածոտնի մարզի 2015–2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր (https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2014/12/14_1459.pdf) էջ 154 եւն:

³ Տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, Երեւան, 2002, էջ 136, նաեւ <http://ter-hambardzum.net/wp-content/uploads/2013/04/OristonyaHayastan.pdf> կամ https://drive.google.com/file/d/0B_YSRF1mN8TodFV5TWdwOGV2dW8/view 04.05.2023 թ.:

դանիստն Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին է, սակայն առաջնորդարանը գտնվում է Աշտարակ քաղաքում՝ Սուրբ Մարիանե (Ս. Մարինե) եկեղեցու հարեւանությամբ: Արագածոտնի թեմի առաջնորդ են եղել Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը (1996–1999 թթ.), Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը (1999–2002 թթ.), Տեր Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը (2002–2003 թթ.), Տեր Թորգոմ վարդապետ Տոնիկյանը (2003–2007 թթ.), Տեր Գրիգոր վարդապետ Խաչատրյանը (2007–2009 թթ.): 2009 թվականից առ այսօր թեմի բարեխնամ առաջնորդն է Գերաշնորհ Տեր Մկրտիչ եպիսկոպոս Պոռչյանը⁴:

Մարզը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, որոնք վերաբերում են մարդկության պատմության գրեթե բոլոր ժամանակաշրջաններին⁵:

Ըստ ՀՀ ԿԳՄՄն տրամադրած տվյալների՝ 2020 թ. դրությամբ ՀՀ տարածքում կար 24225 պատմամշակութային հուշարձան, որից 1829-ը Արագածոտնի մարզում: Ըստ նույն աղբյուրի՝ ՀՀ տարածքում վկայագրված է 1475 եկեղեցի, 610 մատուռ, կրոնական կառույցների ընդհանուր քանակը՝ 2444 միավոր, որից Արագածոտնի մարզում՝ 238⁶:

Վաղ միջնադարում ձեւավորված հայկական եկեղեցական ճարտարապետությունը Հայոց բազմադարյա մշակույթի ինքնատիպ եւ կարեւոր բնագավառներից է: Հայկական եկեղեցական ճարտարապետության բազմաթիվ կառույցներ աչքի են ընկնում իրենց յուրօրինակությամբ, գեղարվեստական հարուստ ավանդների կիրառմամբ ու զարգացմամբ, ներքին ու արտաքին հարդարանքի ինքնատիպ լուծումներով, կառուցողական արվեստի բարձր մակարդակով:

Դեռեւս վաղ միջնադարից Արագածոտնը եղել է Այրարատ աշխարհի՝ անզուգադրելի ու զարգացած ճարտարապետություն ունեցող գավառներից մեկը: Հայաստանի նշանավոր վանքերի ու եկեղեցիների գոհա-

⁴ [⁵ Տես Ա. ՄԱՆՈՅԱՆ, Մ. ՄԱԿԱՐՅԱՆ, Օ. ԴՈՒԴՈՒՄՅԱՆ, Հայաստանի նշանավոր վանքեր եւ եկեղեցիներ, էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին հրատարակչություն, 2020, էջ 13:](https://www.armenianchurch.org/hy/Եպիսկոպոսաց%20դաս/45, հմտ. Կ. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, Արագածոտնի թեմ // http://www.armenianreligion-am.armin.am/am/Encyclopedia_Aragatsotni_tem առ 04.05.2023 թ.:</p>
</div>
<div data-bbox=)

⁶ Տես Մ. ԳԵՒՈՐԳՅԱՆ, Գ. ԹՈՎՄԱՍՅԱՆ, ՀՀ Արագածոտնի մարզի պատմամշակութային հուշարձանների ներգրավումը զբոսաշրջության ոլորտ եւ մարզում զբոսաշրջության զարգացման հնարավորությունների վերլուծությունը // ԵՊՀ պատմության ֆակուլտետ, Պատմություն եւ մշակույթ. Հայագիտական հանդես, № 1, 2021, էջ 188:

րաբույլում իրենց ուրույն ճարտարապետությամբ ու հարդարանքով առանձնանում են Արագածոտնի վանական համալիրներն ու եկեղեցիները: Հայ միջնադարյան եկեղեցական ճարտարապետության պատմության մեջ, հիրավի, պատվավոր տեղ ունեն Արագածոտնի պատմա-ճարտարապետական հուշարձանները՝ դրանք նախագծող եւ կառուցող շինարար ու խաչքարագործ վարպետներով: Նրանք հայ միջնադարյան եկեղեցական ճարտարապետության անդաստանում թողել են ուրույն հետագիծ եւ հայ եկեղեցական ճարտարապետությունը հարստացրել են գեղակերտ կոթողներով, որոնք մեր ճարտարապետությունն ուշագրավ եւ արժեքավոր հուշարձաններ են ու իրենց ինքնատիպությամբ լրացնում եւ ամբողջացնում են հայ ճարտարապետության համապատկերը: Յուրօրինակ կառույցներով առանձնանում է նաեւ Արագածոտնի աշխարհիկ-ժողովրդական ճարտարապետությունը:

Մենք կփորձենք կներկայացնել ՀՀ Արագածոտնի մարզի նորակառույց եկեղեցական կառույցները (Նոր Եդեսիայի Ս. Աստվածածին եկեղեցի, Զքնաղի Ս. Ստեփանոս եկեղեցի, Բերքառատի Ս. Նշան եկեղեցի, Ղազարավանի Ս. Նարեկ եկեղեցի (կուսանաց անապատ), Ագարակի Ս. Աստվածածին եկեղեցի, Արտաշավանի Սբց. Հրեշտակաց եկեղեցի, Գեղադիրի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, Վերին Սասնաշենի Ս. Վարդան եկեղեցի, Շենավանի Ս. Ամենափրկիչ եկեղեցի, Արայի գյուղի Ս. Մարիամ եւ Եղիսաբեթ մատուռ, Երնջատափի Ս. Աստվածածին մատուռ)՝ անդրադառնալով դրանց ճարտարապետական ձեւերին, կառուցման պատմությանը եւ հարակից այլ հարցերի:

1991 թ. հետո նորանկախ Հայաստանի Հանրապետությունում հայկական եկեղեցական ճարտարապետությունը վերածնունդ, ապա նաեւ վերելքի նոր շրջան ապրեց: ՀՀ մարզերում եւ քաղաքամայր Երեւանում կառուցվեցին նոր եկեղեցիներ: Անմասն չմնաց նաեւ Արագածոտնի մարզը:

ՆՈՐ ԵԴԵՍԻԱՅԻ

Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

ՀՀ Արագածոտնի մարզի տարածքում անկախացումից հետո կառուցված եւ օծված առաջին եկեղեցին Նոր Եդեսիայի Սուրբ Աստվածածին եկեղեցին է:

Աշտարակի տարածաշրջանի Նոր Եդեսիա գյուղը գտնվում է ծովի մակարդակից շուրջ 1070 մ բարձրության վրա⁷, Աշտարակ մարզկենտրոնից մոտ 30 կմ հարավ-արեւմուտք, մայրաքաղաք Երեւանից՝ մոտ 50 կմ (դեպի հյուսիս-արեւմուտք) հեռավորության վրա:

Նոր Եդեսիայի Սուրբ Աստվածածին եկեղեցու հիմնորդները կատարվել է 1997 թ.: Եկեղեցին կառուցվել է արգենտինահայ Գեորգ (Խորխե) եւ Ռոսա Սարաֆյանների բարերարությանը, շինարարական աշխատանքների վերահսկողությունը բարերարները վստահել էին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հիմնադիր-տնօրեն Լ. Բարսեղյանին⁸: Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյա հոբելյանին ընդառաջ՝ պատմական Ուռհա-Եդեսիա⁹ քաղաքից սերող Գեորգ Սարաֆյանը ցանկանում է հիշատակ թողնել Մայր հայրենիքում: Նա որոշում է իր ծննդավայր Եդեսիայի պատվին Նոր Եդեսիա անվանակոչված բնակավայրում եկեղեցի կառուցել: Նոր Եդեսիայի եկեղեցին, ի հիշատակ Եդեսիա քաղաքի հռչակավոր Սուրբ Աստվածածին հայկական եկեղեցու, որտեղ 1911 թ. մկրտվել էր Գեորգ Սարաֆյանը, անվանակոչվում է Ս. Աստվածածին¹⁰: Եկեղեցու կառուցումն ավարտվել է 1999 թ.¹¹, այնուհետեւ կատարվել է եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը:

Ս. Աստվածածին եկեղեցին ունի հայկական վաղմիջնադարյան եկեղեցական ճարտարապետության հայտնի տեսակներից՝ խաչաձև կենտ-

⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Գեոդեզիայի եւ քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի հրատ., Երեւան, 2008, էջ 149:

⁸ Տե՛ս Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Վ. ՄԱՐՏԻՆԱՅԱՆ, Անկախությունից հետո Արագածոտնում եկեղեցիներ են կառուցել նվազագույնը 100 000 դոլարով // <https://hetq.am/hy/article/68653> առ 19.05.2023 թ.:

⁹ Այս քաղաքի «հայկականությունն, հայ թագաւորի յառաջածնունդէամբ հիմնուած լինելու դէմ հանդէս եկողները յաճախ կառնում են անուան օտար ծագումնաբանութեանը: Թողնելով Ուռ-հայ (Ուրհայ)՝ ժողովրդականի նմանուող ստուգաբանութիւնը (համաձայն որի՝ հառանի մերձակայ նախապատմական Ուր քաղաքի աւերակներին բարձրացաւ Ուրն Հայոց կամ Ուրհայն)՝ բերենք քաղաքի միւս անունը՝ Արաք(ս) (տարբերակի համար տե՛ս «Հանդէս ամօրեայ», 1922, օգոստոս-սեպտեմբեր, էջ 482), որ ըստ ամենայնի՝ Նոյ Նահապետի թողնուհու անունն է՝ յոյժ հարազատ Հայոց. տե՛ս Եդեսիայի անկումը ողբալու մտայղացման առիթով, Երեւան, 2023, էջ 9 ծան. 7:

¹⁰ Տե՛ս NOMINATE NOW FOR 2024 AURORA PRIZE FOR AWAKENING HUMANITY. JORGE SARAFIAN // <https://aurorapize.com/en/jorge-sarafian> առ 19.05.2023 թ.:

¹¹ Տե՛ս Տ. ԱՐԱՐԱՏ ՔԷՆ. ՊՈՂՈՍՅԱՆ, Նախանձախնդիր Հայրապետը // էջմիածին, հտ. ԺԱ. (11), 2011, էջ 84: [https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzin-vagharshapat/2011/2011\(11\).pdf](https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzin-vagharshapat/2011/2011(11).pdf) առ 19.05.2023 թ.:

րոնագմբեթ փոքր եկեղեցիներին բնորոշ կառուցվածք ու համաչափություններ: Եկեղեցին կառուցված է սրբատաշ բազմերանգ տուֆաքարերով: Տարածքը բարեկարգ է ու խնամված: Առայժմ չունի մշտական խորհրդակատար քահանա: Համայնքի անդամների հոգեւոր պահանջ-մունքները բավարարում է երթեւեկ քահանան:

ՋՔՆԱՂԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ

Արագածոտնի մարզի նորակառույց քրիստոնեական սրբավայրերից է Ջքնաղի Սուրբ Աստվածածին եկեղեցին:

Ապարանի տարածաշրջանի Ջքնաղ գյուղը գտնվում է ծովի մակարդակից շուրջ 1945 մ բարձրության վրա¹², մարզկենտրոնից մոտ 40 կմ հյուսիս-արեւելք, մայրաքաղաք Երեւանից՝ մոտ 60 կմ (դեպի հյուսիս-արեւմուտք) հեռավորության վրա:

Ջքնաղ գյուղում եկեղեցի կառուցելու որոշումն անմիջականորեն կայացվել էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Հայրապետի ներկայությամբ, երբ 2002 թ. Վեհափառ հայրապետն այցելել էր Ջքնաղ: 2002 թ. հոկտեմբերի 15-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ կատարվել է հիմնօրհնքի արարողություն: Եկեղեցու կառուցման հովանավորությունն ստանձնել էր Գառնիկ եւ Անժելա Հովսեփյանների բարեպաշտ ընտանիքը: Եկեղեցին խաչաձև կենտրոնագմբեթ կառույց է: Կառուցված է սրբատաշ գորշավուն տուֆաքարերով: Տարածքը բարեկարգ է ու խնամված: Նորակառույց Ս. Ստեփանոս եկեղեցին օծվել է 2004 թ. հունիսի 20-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի ձեռամբ: Մինչ այդ Հովսեփյանների բարերարությամբ վերակառուցվել, ապա վերածծվել էր գյուղի սուրբ Նարեկ մատուռը (2003 թ.): Ի գնահատություն տեր եւ տիկին Գառնիկ եւ Անժելա Հովսեփյանների եկեղեցանվեր գործունեության՝ Վեհափառ նրանց պարգևատրել է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նորակառույց եկեղեցուն նվիրել է նաեւ երկու տերունական սրբապատկեր, ապա օծված եկեղեցում մատուցվել է անդրանիկ սուրբ եւ անմահ պատարագը¹³:

¹² Տե՛ս Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, էջ 165:

¹³ Տե՛ս Օծվեց Ջքնաղ գյուղի Ս. Ստեփանոս նորակառույց եկեղեցին, «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, հունիս Բ., թիվ 12 (176), 2004, էջ 1, <https://tert.nla.am/archive/>

Այդուհետ՝ ամեն տարի հունիսի 20-ին հաջորդող կիրակի օրը հռչակվեց Արագածոտնի թեմի Չքնաղ գյուղի Ս. Ստեփանոս եկեղեցու ուխտի օր: Այդ առիթով Ս. Ստեփանոս եկեղեցի է տարվում Մայր Աթոռի թանգարանում պահվող Ս. Ստեփանոս Նախավկայի մասունքը:

Համայնքի անդամների հոգեւոր պահանջմունքները հոգում է Ապարանի հովվութեան հոգեւոր հովիվ, Արժանապատիվ Տեր Մուշե քահանայ Վահանյանը¹⁴:

ԲԵՐՔԱՌԱՏԻ Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Արագածի (Ծաղկահովտի) տարածաշրջանի Բերքառատ գյուղը գտնվում է ծովի մակարդակից շուրջ 2090 մ բարձրության վրա¹⁵, մարզկենտրոնից մոտ 65 կմ հյուսիս-արեւմուտք, մայրաքաղաք Երեւանից՝ մոտ 85 կմ (գեպի հյուսիս-արեւմուտք) հեռավորության վրա:

Բերքառատի Սուրբ Նշան եկեղեցին կառուցվել է ծնունդով բերքառատցի, գործարար Արսեն Ամիրխանյանի բարերարությամբ: Եկեղեցու կառուցումն աղերսվում է գործարար Ա. Ամիրխանյանի մոր տեսած երազին (2006 թ. մայիսի 5): Բարեպաշտ կիներ երազում տեսնում է, որ իրենց տան պատի մոտ՝ հողի տակ, խաչքար կա թաղված («Սուրբ Նշան»), որը խնդրում է իրեն հողից հանել, շունչ տալ, իսկ այդ վայրում էլ Ս. Նշան անունով եկեղեցի կառուցել: Իսկապես, մոր մատնանշած տեղում հողը փորելիս հայտնաբերվում է խաչանշանով քարը: Գործարարը որոշում է իրականացնել մոր փափագն ու երազը¹⁶:

Մոտ մեկ տարի տեւած շինարարական աշխատանքներն ավարտվում են 2010 թ., եւ 2011 թ. օգոստոսի 13-ին¹⁷ Արագածոտնի թեմի բա-

NLA%20TERT/Christonya%20Hayastan/2004/2004_12_176.pdf առ 19.05.2023 թ.: Էջմիածին, հտ. Զ. (6), 2004, էջ 126, [https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzin-vagharshapat/2004/2004\(6\).pdf](https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzin-vagharshapat/2004/2004(6).pdf) առ 19.05.2023 թ.:

¹⁴ Ավելի մանրամասն տե՛ս Չքնաղի Սուրբ Ստեփանոս եկեղեցի (Արագածոտնի թեմ) <https://www.facebook.com/profile.php?id=100057122453506&mibextid=LQQJ4d> առ 20.05.2023 թ.:

¹⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, էջ 47:

¹⁶ Տե՛ս Ռ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Պատմություն Բերքառատի, Հայաստանի Հանրապետության բնակավայրերի մատենաշար, Երեւան, 2017, էջ 280: Գրքում եկեղեցու կառուցման հովանավորի անունը սխալմամբ Արմեն է գրված: Մենք ճշտեցինք, որ հովանավորը ոչ թե Արմեն, այլ Արսեն Ամիրխանյանն է:

¹⁷ Տե՛ս Մ. ՄԱՐՏԻՈՍՅԱՆ, Վ. ՍԱՐԴԻԱՆՅԱՆ, Անկախությունից հետո Արագածոտնում եկեղեցիներ են կառուցել նվազագույնը 100 000 դոլարով // <https://hetq.am/hy/article/68653> առ 21.05.2023 թ.:

րեխնամ առաջնորդ Տեր Մկրտիչ Եպիսկոպոս Պռոշյանի ձեռամբ հանդիսավորությամբ օծվում է նորակերտ Ս. Նշան Եկեղեցին¹⁸։ Եկեղեցին խաչաձև կենտրոնագմբեթ կառույց է։ Կառուցված է սրբատաշ գորշավուն տուֆաքարերով։ Տարածքը բարեկարգ է ու խնամված։ Բերքառատի Ս. Նշան Եկեղեցին առայժմ չունի մշտական խորհրդակատար քահանա։ Համայնքի անդամների հոգեւոր պահանջմունքները հոգում է երթեւեկ քահանան։

ՂԱԶԱՐԱՎԱՆԻ Ս. ՆԱՐԵԿ (Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ) ԵԿԵՂԵՑԻ

Աշտարակի տարածաշրջանի Ղազարավան գյուղը գտնվում է ծովի մակարդակից շուրջ 1200 մ բարձրության վրա¹⁹, Աշտարակ մարզկենտրոնից մոտ 10 կմ հյուսիս-արեւմուտք, մայրաքաղաք Երեւանից՝ մոտ 35 կմ (դեպի հյուսիս-արեւմուտք) հեռավորության վրա։

Ղազարավանի Սուրբ Նարեկ (Սուրբ Գրիգոր Նարեկացի) Եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 1998 թ. Արագածոտնի թեմի այն ժամանակվա առաջնորդ Տեր Նավասարդ Եպիսկոպոս Կճոյանի ձեռքով։ Եկեղեցու կառուցումը հովանավորել է ռուսաստանաբնակ բարերար Կարապետ Նազարյանը։ Եկեղեցին խաչաձև կենտրոնագմբեթ կառույց է։ Կառուցված է հիմնականում կարմրավուն սրբատաշ տուֆաքարերով։ Շինարարական հիմնական աշխատանքներն ավարտին էին հասել 2005 թ.²⁰։ Հետագայում կատարված շտկողական միջամտությունների արդյունքում առկա շինարարական թերությունները վերացվել են, իսկ 2023 թ. մայիսի 9-ին, ձեռամբ Արագածոտնի թեմի բարեխնամ առաջնորդ, Գերաշնորհ Տեր Մկրտիչ Եպիսկոպոս Պռոշյանի, հանդիսավորապես օծվել ու սրբազործվել է Ղազարավանի Սուրբ Նարեկ Եկեղեցին²¹։ Հավարտ օծման արարողության՝ նորած Եկեղեցում մատուցվել է անդրանիկ սուրբ Եւանմահ պատարագը։ Այստեղ քահանայագործում է Արժանապատիվ

¹⁸ Տե՛ս Բերքառատցիներն արդեն Եկեղեցի ունեն // <https://armenpress.am/arm/news/661313.html> առ 21.05.2023 թ.։

¹⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, էջ 128։

²⁰ Տե՛ս ՏԵՐ ԱՐԱՐԱՏ ՔԷՆ. ՊՈՂՈՍՅԱՆ, Նախանձախնդիր Հայրապետը // Էջմիածին, հտ. ԺԱ. (11), 2011, էջ 88։ [https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzin-vagharshapat/2011/2011\(11\).pdf](https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzin-vagharshapat/2011/2011(11).pdf) առ 22.05.2023 թ.։ Ավելի ուշ պարզվել է, որ կառուցման ընթացքում թույլ են տրվել Եկեղեցական ճարտարապետության սկզբունքների խախտումներ։

²¹ Ավելի մանրամասն տե՛ս Ղազարավանի մենաստան վանք <https://www.facebook.com/profile.php?id=100053505433440> առ 17.06.2023 թ.։

Տեր Եղիշե քահանա Բարսեղյան: 2018 թվականից Արագածոտնի թեմի Ղազարավան գյուղի Սուրբ Նարեկ եկեղեցի է տեղափոխվել եւ թեմակալ առաջնորդ Տեր Մկրտիչ Եպիսկոպոս Պռոշյանի հայրական հոգածության ներքո իր գործունեությունն է իրականացնում կանանց մենաստանը: Ինչպես գիտենք այն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով ստեղծվել է դեռեւս 2000 թ. մայիսի 11-ին: Մենաստանը սկզբնական շրջանում գործել է Վաղարշապատի Ս. Հռիփսիմե վանքում, այնուհետեւ Հաղպատի վանական համալիրում, ապա Վաղարշապատի Ս. Գայանե վանքում, իսկ 2018 թ. հաստատվում է Ղազարավանի Ս. Նարեկ եկեղեցում: Ղազարավանի մենաստանն այժմ Հայաստանում կանանց միակ գործող վանքն է: Մենաստանում ապրում են ութ միանձնուհիներ, որ կտրված են աշխարհիկ կյանքից՝ ամբողջովին նվիրվելով հոգեւոր սպասաւորութեանը:

2022 թ. սեպտեմբերի 20-ին, «Սրբոց կուսանացն Փեփրոնեայ, Մարիանեայ եւ Շուշանայ՝ դստերն Մեծին Վարդանայ» հիշատակի օրը, Արագածոտնի թեմի Ս. Մարիանե եկեղեցում Տ. Մկրտիչ Եպիսկոպոս Պռոշյանի ձեռամբ կատարվեց «Հերակտրություն եւ քողի տվչության կարգ»:²² Ութ միանձնուհիներից քույր Եղիսաբեթն այդուհետ կոչվեց Մայր Եղիսաբեթ եւ ստանձնեց Հայոց Եկեղեցու բոլոր միանձնուհիներին գլխավորելու պատասխանատու գործը²³:

ԱԳԱՐԱԿԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՄԱՏՈՒՌ

Արագածոտնի մարզի նորակերտ եկեղեցական կառույցներից է Ագարակի Ս. Աստվածածին մատուռը:

Աշտարակի տարածաշրջանի Ագարակ գյուղը գտնվում է ծովի մակարդակից շուրջ 1100 մ բարձրության վրա²³, Աշտարակ մարզկենտրոնից մոտ 7 կմ հյուսիս-արեւմուտք, մայրաքաղաք Երեւանից՝ մոտ 30 կմ (դեպի հյուսիս-արեւմուտք) հեռավորության վրա:

Ագարակի Սուրբ Աստվածածին մատուռի կառուցման հովանավորն է ռուսաստանաբնակ բարերար, ծնունդով ագարակցի Հրաչյա

²² Տե՛ս Ղազարավանի մենաստանի միանձնուհուն շնորհվել է քող կրելու իրավունք եւ մայրության պատիվ // <https://www.24news.am/news/253698> , <https://ter-hambardzum.net/ghazaravani-menastani-miandznuhun-shnorhvec-khogh-krelu-iravunkh-ev-mayruthyan-pativ-tesanyuth/> , <https://www.facebook.com/watch/?ref=external&v=646317190251328> առ 21.05.2023 թ.:

²³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, էջ 6:

Պողոսյանը: Կառույցի հիմքերն ու յոթ քարերը օրհնել է Տեր Հովհաննես քահանա Հովհաննիսյանը, իսկ շինարարական հիմնական աշխատանքներն ընթացել են 2008 թ. գարնանից մինչև նույն թվականի սեպտեմբեր ամիսը: Մատուռը կառուցվել է ճարտարապետ Ա. Դավայանի նախագծով: Մատուռն ունի հայկական վաղմիջնադարյան եկեղեցական ճարտարապետության հայտնի տիպերից խաչաձև կենտրոնազմբեթ փոքր եկեղեցիներին բնորոշ կառուցվածք, բայց ավելի սլացիկ ու վերձիգ համաչափություններ: Մատուռը կառուցված է կարմիր սրբատաշ տուֆաքարերով²⁴: Մատուռի սուրբ սեղանի Ս. Տիրամոր սրբապատկերը վրձնել է ՀՀ ժողովրդական նկարիչ Զաքար Խաչատրյանը²⁵:

Ագարակ գյուղի նորակառույց Սուրբ Աստվածածին մատուռի օծման հանդիսավոր արարողությունը կատարվել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Մայրազուն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ, 2008 թ. հոկտեմբերի 4-ին²⁶: Շարականների երգեցողության եւ սաղմոսերգության ներքո Վեհափառ Հայրապետը նախ գինով լվաց սուրբ սեղանը, ապա նորահփ ու նորօրհնյալ սրբալույս մյուռոնով²⁷ օծեց մատուռի սուրբ սեղանն ու մկրտության ավազանը: Արարողության ավարտին Վեհափառ Հայրապետն իր Հայրապետական օրհնությունն ու բարձր գնահատանքը բերեց Հրաչյա Պողոսյանին եւ նրա ընտանիքի անդամներին: Մատուռի օծումից հետո նորած մատուռում կատարվեցին մկրտության եւ պսակի առաջին սրբազան արարողությունները, որին հետեւեց մատաղի հյուրասիրությունը: Համայնքի անդամների հոգեւոր պահանջմունքները հոգում է երթեւեկ քահանան (Արժանապատիվ Տեր Փառեն քահանա Առաքելյանը):

²⁴ Տէն ԱՐՄԱՆ ՍՐԿ. ԱՀԱՐՈՆՅԱՆ, Ագարակ, Երեւան, 2011, էջ 77:

²⁵ Ագարակ գյուղի մասին ավելի մանրամասն տե՛ս «Շողակաթ» հեռուստաընկերության անդրադարձում (հեղինակ՝ Ն. Ռաֆայելյան, ռեժիսոր՝ Վ. Սուքիասյան, օպերատոր՝ Ա. Մաթեւոսյան) // <https://www.shoghakat.am/am/telecasts/541>, <https://www.youtube.com/watch?v=serflwSUvYM&t=11s> առ 30.05.2023 թ.:

²⁶ Տէն Արագածոտնի թեմի լրատվական բաժին, Ձեռամբ Վեհափառ Հայրապետի օծվեց Ագարակ գյուղի նորակառույց Սուրբ Աստվածածին մատուռը, էջմիածին, հտ. ժ. (10), 2008, էջ 88, [https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzin-vagharshapat/2008/2008\(10\).pdf](https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzin-vagharshapat/2008/2008(10).pdf) առ 29.05.2023 թ.: Տէն նաեւ «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, սեպտեմբեր Բ. – հոկտեմբեր Ա., թիվ 18–19 (278–279), 2008, էջ 1:

²⁷ Հիշված մյուռոնօրհնքի հանդիսավոր արարողությունը կատարվել է 2008 թ. սեպտեմբերի 28-ին:

2010 թ. Ագարակի Ս. Աստվածածին մատուռի աջ կողմում կարմիր սրբատաշ տուֆաքարերով կառուցվեց զանգակատուն, որի բացման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ 2010 թ. հունիսի 27-ին: Արագածոտնի թեմի բարեխնամ առաջնորդ տեր Մկրտիչ եպս. Պողոսյանը սրբալույս մյուռոնով օծեց զանգակատան երկաթյա խաչը, ապա օրհնեց Ագարակ գյուղն ու ներկաներին, իսկ բարերար Հրաչյա Պողոսյանը խաչը տեղադրեց զանգակատան գմբեթին: 2010 թ. դեկտեմբերի 20-ին Ագարակ համայնքի ղեկավարի եւ ավագանու համատեղ որոշմամբ՝ հոկտեմբերի 4-ը հռչակվել է «Ագարակ համայնքի վերածննդի օր»²⁸:

Եկեղեցու շրջակայքը խնամված է ու բարեկարգ: Մատուռի մոտակայքում է գտնվում տուֆակերտ հուշարձանը՝ նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի, Արցախյան ազատամարտում անմահացածների ու Հայրենական Մեծ պատերազմին մասնակցած 96 ագարակցիների հիշատակին, որոնցից 43-ը այդպես էլ չվերագրված հայրենի տուն: Նրանց անունները քանդակված են հուշարձանի պատերին՝ հայերենով եւ ռուսերենով: Ագարակի հուշարձանը թերեւս միակն է Հայաստանի ԵԱՀ հուշարձանների (Երկրորդ աշխարհամարտի զոհերի հուշարձաններ) շարքում, որը կառուցվել է ոչ թե խորհրդային տարիներին, այլ ՀՀ անկախացումից հետո՝ 2007 թ.:

ԱՐՏԱՇԱՎԱՆԻ (ԱՊԱՐԱՆԻ) Ս. ՀՐԵՇՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ

Աշտարակի տարածաշրջանի Արտաշավան գյուղը գտնվում է ծովի մակարդակից շուրջ 1630 մ բարձրության վրա²⁹, Աշտարակ մարզկենտրոնից մոտ 15 կմ հյուսիս-արեւելք, մայրաքաղաք Երեւանից՝ մոտ 35 կմ (դեպի հյուսիս-արեւմուտք) հեռավորության վրա:

Արտաշավան գյուղի արեւելյան եզրին է գտնվում «Արտաշավան» բնապատմական համալիրը: Այն գրանցված է Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարության բնության պետական հուշարձանների ցանկում: Բնության պետական հուշարձանների ցանկում ներառվել է 2008 թվականի օգոստոսի 14-ին «Հայաստանի Հանրա-

²⁸ Տե՛ս ԱՐՄԱՆ ՍՐԿ. ԱՀԱՐՈՅԱՆ, Ագարակ, էջ 4 (7):

²⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, էջ 37:

պետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման համաձայն³⁰:

Արտաշատի «Տառ-Քարեր» պուրակի (կառուցվել է 2005 թ.՝ ի հավերժացումն Մաշտոցյան գրերի գյուտի 1600-ամյակի, ճարտարապետ՝ Ֆ. Աֆրիկյան) մոտ գտնվող բլրակի գագաթին կանգնեցվել է 33 մ. բարձրությամբ «Սուրբ Խաչ» կոթողը, իսկ ստորոտին կառուցվել «Հույսի խորան» բաց խորանը: «Սուրբ Խաչ» ճարտարապետական հուշարձանը խորհրդանշում է Հայաստանի քրիստոնեացումը: Այս քառաթեւ կոթողի յուրաքանչյուր թեւի տակ տեղադրված է մեկական մատուռ՝ մոմավառության սեղանիկով: «Սուրբ Խաչ» կոթողի բարձրությունը 33 մետր է՝ խաչալ Հիսուսի տարիքի չափ: 2012 թ. «Սուրբ Խաչ» կոթողը բաղկացած էր 1711 մեծ ու փոքր մետաղական խաչերից, որոնք խորհրդանշում էին Քրիստոնյա Հայաստանի տարիքը: Յուրաքանչյուր հաջորդ տարի այդ խաչերին ավելացվում է եւս մեկը: «Սուրբ Խաչ» հուշարձանն ունի նաեւ արտաքին լուսավորություն. գիշերային ժամերին այն ճառագում է որպէս երկնքից առկախ լուսավոր խաչ: «Սուրբ Խաչ» հուշարձանի եւ «Հույսի խորանի» օժման հանդիսավոր արարողությունը, որն ուղեկցվել է տոնախմբությամբ եւ գիշերային մոմավառությամբ, կատարվել է 2012 թ. հոկտեմբերի 20-ին, երբ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշում էր «Սուրբ Մատթեոս, Մարկոս, Ղուկաս եւ Հովհաննէս Ավետարանիչների հիշատակի տոնը»³¹:

«Սուրբ Խաչ» հուշարձանի եւ «Հույսի խորանի» հարեւանությամբ 2013 թ. հոկտեմբերի 21-ին Արագածոտնի թեմակալ առաջնորդ Տեր Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի ձեռամբ կատարվեց Սրբոց Հրեշտակաց եկեղեցու հիմնարկեքի արարողությունը³²: Նորահիմն եկեղեցին կառուցվել է «Նիգ-Ապարան» հայրենակցական միության նախագահ Ա. Հովսեփյանի բարերարությամբ եւ «Թովմասյան» հիմնադրամի միջոցներով: Սրբոց Հրեշտակաց անգուգական եկեղեցին իր տեսակի մեջ եզակի է. կառուցվել է ժայռի վրա, կերտվել է ձյունաթույր մարմարից, իսկ կողապատերն ու

³⁰ Տես Արտաշատի (բնապատմական համալիր). ՀՀ բնության հուշարձան // <https://economy.am/?p=585761=am> առ 30.05.2023 թ.:

³¹ Տես «Տառ-քարերի» պուրակում օժվեցին «Սուրբ Խաչ»-ն ու «Հույսի խորան»-ը // <https://armenpress.am/arm/news/696964> առ 30.05.2023 թ.:

³² Տես Ապարանի Սրբոց Հրեշտակաց եկեղեցու հիմնարկեքը // <https://www.shoghakat.am/am/telecasts/671>, <https://www.youtube.com/watch?v=INFBAjD5zH8&t=1s> առ 30.05.2023 թ.:

գմբեթն ապակյա են³³։ Եկեղեցին կառուցվել է ճարտարապետ Անդրանիկ Սարգսյանի նախագծով։ Կենտրոնագմբեթ կառույց է, հատակագծում ունի շրջանաձև հորինվածք, 7,5 մ տրամագիծ եւ 15 մ բարձրություն։

2021 թ. սեպտեմբերի 18-ին, ձեռամբ Արագածոտնի թեմակալ առաջնորդ Տեր Մկրտիչ եպիսկոպոս Պողոսյանի, կատարվել է Սրբոց Հրեշտակաց եկեղեցու խաչի օծման եւ տեղադրման, «Հավերժների այգու» եւ խաչքարի բացման արարողությունը³⁴։

2021 թ. հոկտեմբերի 25-ին «Հավերժների այգում», որի հատակագիծն ունի հավերժության խորհրդանշանի տեսք, տրվել է ծառատունկի մեկնարկը, որին մասնակցել են գիտության, մշակույթի եւ մարզաշխարհի ականավոր ներկայացուցիչներ, ինչպես նաեւ 44-օրյա պատերազմում հավերժացած հերոսների ծնողներ ու հարազատներ³⁵։

2022 թ. հոկտեմբերին «Թովմասյան» հիմնադրամի նախաձեռնությամբ կառուցված «Հավերժների այգում» ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Իոսիֆ Կոբզոնի ընտանիքի նվիրատվությամբ բացվել է ցայտաղբյուր³⁶։

ԳԵՂԱԴԻՐԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ ԵԿԵՂԵՑԻ

Արագածի (Ծաղկահովտի) տարածաշրջանի Գեղադիր գյուղը գտնվում է ծովի մակարդակից շուրջ 2025 մ բարձրության վրա³⁷, մարզ-

³³ Տե՛ս «Թովմասյան» հիմնադրամի նախաձեռնությամբ կառուցվում է աշխարհում առաջին ապակեպատ եկեղեցին // <https://yerevan.today/all/society/89648/%C2%ABtovmasyan%C2%BB-himnadrami-naxadzernoutyamb-karoucvoum-e-ashxarhoum-aradjin-apakepat-ekeghecin> : Церковь Святых Ангелов и Парк Вечных были построены по инициативе Артака Товмасына // <https://www.youtube.com/watch?v=h7y40KQcBx4> առ 30.05.2023 թ.։

³⁴ Տե՛ս Սրբոց Հրեշտակաց նորակառույց եկեղեցու գմբեթի խաչն օծվեց // Սրբոց Հրեշտակաց նորակառույց եկեղեցու գմբեթի խաչն օծվեց – YouTube, Տեղի է ունենում «Թովմասյան» հիմնադրամի կողմից կառուցվող եկեղեցու խաչի օծումը եւ այգու բացումը // <https://yerevan.today/eterum/live/89641/teghi-e-ounenoum-%C2%ABtovmasyan%C2%BB-himnadrami-koghmic-karoucvogh-ekeghecou-xachi-otsoumy-ev-aygou-bacoumy%E2%80%A4-oughigh> առ 30.05.2023 թ.։

³⁵ Տե՛ս Հավերժների այգի. «Թովմասյան» հիմնադրամը կառուցել է հպարտություն եւ հավերժություն խորհրդանշող այգի // <https://lurer.com/?p=438683&l=am>, https://www.youtube.com/watch?v=_UxnxeHhAZbo։ Մառատունկի մեկնարկի հանդիսավոր արարողություն «Հավերժների այգում» // <https://www.youtube.com/watch?v=rEggV3N3AYI> առ 30.05.2023 թ.։

³⁶ Տե՛ս Իոսիֆ Կոբզոնի ընտանիքի նվիրատվությամբ Սրբոց Հրեշտակաց եկեղեցու բակում ցայտաղբյուր է բացվել // <https://www.araratnews.am/show/66744>։ Во дворе церкви Святых Ангелов на жертвование семьи Иосифа Кобзона был открыт родник // <https://www.youtube.com/watch?v=HO8GoL4esPc> առ 31.05.2023 թ.։

³⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, էջ 52։

կենտրոնից մոտ 67 կմ հյուսիս-արեւմուտք, մայրաքաղաք Երեւանից՝ մոտ 90 կմ (դեպի հյուսիս-արեւմուտք) հեռավորության վրա:

Գեղադիրի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցումը հովանավորել է մոսկվայաբնակ բարերար, ծնունդով գեղադիրցի Կ. Գեւորգյանը³⁸:

Եկեղեցին ունի հայկական վաղմիջնադարյան եկեղեցական ճարտարապետության հայտնի տեսակներից՝ խաչաձեւ կենտրոնագմբեթ փոքր եկեղեցիներին բնորոշ կառուցվածք, նախագծել է ճարտարապետ Հրանտ Կարապետյանը: Եկեղեցին կարմիր սրբատաշ տուֆով կառուցել են գեղադիրցի շինարարները՝ Վարդաբլուր գյուղի բնակիչ, վարպետ Ա. Հակոբյանի գլխավորությամբ:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հիմնարկերի հանդիսավոր արարողությունը կատարել է Արագածոտնի թեմի առաջնորդ Տեր Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանը 2015 թ. մայիսի 12-ին: Եղեկեցու օծման հանդիսավոր արարողությունը կատարվել է Արագածոտնի թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տեր Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի ձեռամբ՝ Սուրբ խաչի Գյուտի տոնին, 2017 թ. հոկտեմբերի 29-ին, որին այդ տարի համընկել էր բարերարի ծննդյան օրը³⁹:

Համայնքի անդամների հոգեւոր պահանջմունքները հոգում է Արագածի հովվության հոգեւոր հովիվ, Արժանապատիվ Տ. Սարգիս քահանա Սարգսյանը:

ՎԵՐԻՆ ՍԱՍՆԱՇՆԵՒ Ս. ՎԱՐԴԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Թալինի տարածաշրջանի Վերին Սասնաշեն գյուղը գտնվում է ծովի մակարդակից շուրջ 1850 մ բարձրության վրա⁴⁰, Աշտարակ մարզկենտրոնից մոտ 42 կմ հյուսիս-արեւմուտք, մայրաքաղաք Երեւանից՝ մոտ 65 կմ (դեպի հյուսիս-արեւմուտք) հեռավորության վրա:

Վերին Սասնաշենի Սուրբ Վարդան եկեղեցու հիմնօրհների արարողությունը կատարվել է 2018 թ. մայիսի 12-ին: Եկեղեցու կառուցման աշխատանքներն ընթացել են արմատներով մշցի, սակայն ՌԴ Արմավիր

³⁸ Տե՛ս Գեղադիր համայնքը նորակառույց եկեղեցի ունեցավ // <http://aragatsotn.mtad.am/news/item/2017/10/31/gexarot/> առ 15.06.2023 թ.:

³⁹ Տե՛ս Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բացումը // <https://www.youtube.com/watch?v=ger5tsxceeE> առ 10.06.2023 թ.:

⁴⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, էջ 194:

քաղաքում ծնված ու մեծացած Սարկիսյան եղբայրների հովանավորությունը: Սարկիսյանների նախնիները գաղթել են Արեւմտյան Հայաստանից, եկել-հաստատվել Վերին Սասնաշենում: Սարկիսյան եղբայրների ջանքերով Մշո Ս. Առաքելոց վանքի ավերակներից քարեր են բերվել եւ տեղադրվել եկեղեցու հիմքերում ու ճակատային մասերում: Ս. Վարդան եկեղեցու դուռն էլ Սբց. Առաքելոց վանքի դռան ընդօրինակմամբ է պատրաստվել: Եկեղեցին խաչաձեւ հատակագծով կենտրոնագմբեթ կառույց է՝ շարված նարնջագույն սրբատաշ տուֆաքարերով:

2019 թ. նոյեմբերի 12-ին Արագածոտնի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի ձեռամբ հանդիսավորապես կատարվել է եկեղեցու օծման արարողությունը⁴¹: Ի գնահատումն Ալեքսանդր Սարկիսյանի աստվածահաճո գործունեության՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակով բարերարին շնորհվել է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշան: Վերին Սասնաշեն գյուղի զարգացմանն ուղղված գործունեության եւ ցուցաբերած աջակցության համար էլ համայնքի ավագանու որոշմամբ բարերարին շնորհվել է «Վերին Սասնաշենի պատվավոր քաղաքացի» կոչում⁴²: Եկեղեցու հարակից տարածքում Սարկիսյան ընտանիքի տրամադրած միջոցներով կառուցվել է նաեւ «Սասնաբերդ» հանդիսությունների սրահը:

Համայնքի անդամների հոգեւոր պահանջմունքները հոգում է Թալինի հովվության հոգեւոր հովիվ, Արժանապատիվ Տեր Թադե քահանա Թախմազյանը:

ՇԵՆԱՎԱՆԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Ապարանի տարածաշրջանի Շենավան գյուղը գտնվում է ծովի մակարդակից շուրջ 1875 մ բարձրության վրա⁴³, մարզկենտրոնից մոտ 25 կմ հյուսիս-արեւելք, մայրաքաղաք Երեւանից՝ մոտ 45 կմ (դեպի հյուսիս-արեւմուտք) հեռավորության վրա:

⁴¹ Տես Վերին Սասնաշեն գյուղում օծվեց Սուրբ Վարդան նորակառույց եկեղեցին // <https://www.youtube.com/watch?v=ltmEoX7CLdc> առ 15.06.2023 թ.:

⁴² Տես Վերին Սասնաշեն համայնքում կայացավ Սուրբ Վարդան եկեղեցու օծման արարողությունը // <http://aragatsotn.mtad.am/news/item/2019/11/12/cerinsasnashenexexeci/> առ 15.06.2023 թ.:

⁴³ Տես Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, էջ 157:

Շենավանի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին կառուցվել է բարերարներ Ավետիք, Արկադի եւ Հենրիկ Գրիգորյանների հովանավորությամբ⁴⁴։ Եկեղեցու հիմնարկեքի արարողությունը 2014 թ. կատարել է Արագածոտնի թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տեր Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանը։ Եկեղեցին նախագծել են ճարտարապետներ Էդուարդ Գրիգորյանն ու իր կինը՝ Մերի Դանիելյանը⁴⁵։ Եկեղեցին ունի խաչաձև՝ կենտրոնագմբեթ փոքր եկեղեցիներին բնորոշ կառուցվածք, սակայն ավելի սլացիկ ու վերձիգ համաչափություններ։ Ս. Ամենափրկիչ եկեղեցին կառուցված է սրբատաշ բազալտով ու տուֆով, ունի երկու մուտք՝ արեւմտյան եւ հարավային կողմերից։ Նորակերտ Ս. Ամենափրկիչ եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը կատարվել է Արագածոտնի թեմի առաջնորդ Տեր Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի ձեռամբ 2018 թ. սեպտեմբերի 30-ին⁴⁶։

Համայնքի անդամների հոգեւոր պահանջմունքները հոգում է Ապարանի հովվություն հոգեւոր հովիվ, Արժանապատիվ Տեր Մաղաքիա քահանա Գեւորգյանը։

Ներկայումս Արագածոտնի մարզի տարածքում ընթանում են եւս երկու քրիստոնեական սրբավայրերի կառուցման շինարարական աշխատանքներ։ Նրանցից մեկը կառուցվում է Աշտարակի տարածաշրջանի Սասունիկ գյուղում։ Սասունիկի եկեղեցու հիմնարկեքի արարողությունը 2020 թ. օգոստոսի 16-ին կատարել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ Գերաշնորհ Տեր Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը եւ Գերաշնորհ Տեր Հովնան եպիսկոպոս Հակոբյանը։ Սասունիկի եկեղեցին կառուցվում է «Արմենիա Վայն» գործարանի սեփականատերեր Վարդգես Վարդանյանի եւ Վահագն Մկրտչյանի բարերարությամբ։ Եկեղեցու կառուցման նախագծի հեղինակն է ականավոր ճարտարապետ Արտակ Ղուլյանը։ Ըստ ճարտարապետական հորինվածքի՝ եկեղեցին եռախորան խաչաձև կենտրոնագմբեթ կառույց է, ունենալու է երկու մուտք եւ չորս զանգակատուն։ Եկեղեցու կառուցումն ի սկզբանե նախատեսված է եղել

⁴⁴ Տես Հովհաննիսյան Հենրիկ Ա., Անմնացորդ նվիրում։ Քամին համբույր է բերում, Երեւան, Տիգրան Մեծ հրատ., 2018, էջ 9, 19։

⁴⁵ Տես Հովհաննիսյան Հենրիկ Ա., նշ. աշխ., էջ 20։ Եկեղեցու կառուցման պատմությունը մանրամասն տես էջ 20—39։

⁴⁶ Տես Շենավան գյուղում տեղի ունեցավ նորակառույց՝ Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու օծման արարողությունը // https://www.youtube.com/watch?v=_tisxz_ikGE&t=6s, <https://shamshyan.com/hy/article/2018/10/01/1106560/> առ 15.06.2023 թ.։

ավարտել 2023 թ.⁴⁷ սակայն շինարարական աշխատանքները դեռևս շարունակվում են:

Հաջորդ աղոթատունը կառուցվում է Ապարանի տարածաշրջանի Թթուշուր գյուղում: Սրբավայրի հիմնօրհները կատարվել է 2022 թ.: Շինարարական աշխատանքները թերեւս կավարտվեն 2025 թ.⁴⁸:

Բացի վերոհիշյալ եկեղեցական կառույցներից՝ 1998 թվականից ի վեր Արագածոտնի մարզում կառուցվել են նաև ավելի համեստ չափսերով փոքրածավալ աղոթատուն-սրբավայրեր, որոնք հայտնի են որպես մատուռներ⁴⁹:

ԱՐԱՅԻ ԳՅՈՒՂԻ Ս. ՄԱՐԻԱՄ ԵՎ Ս. ԵՂԻՍԱԲԵԹ ՄԱՏՈՒՌ

Ապարանի տարածաշրջանի Արայի գյուղը գտնվում է ծովի մակարդակից շուրջ 1850 մ բարձրության վրա⁵⁰, մարզկենտրոնից մոտ 15 կմ հյուսիս, մայրաքաղաք Երևանից՝ մոտ 35 կմ (դեպի հյուսիս-արեւմուտք) հեռավորության վրա:

Արագածոտնի մարզի նորակերտ եկեղեցական կառույցներից է Արայի գյուղ մտնող ճանապարհի ձախակողմյան բարձունքի վրա կառուցված եւ որդեկորույս մայրերին նվիրված Սուրբ Մարիամ եւ Սուրբ

⁴⁷ Տե՛ս Սասունիկ համայնքը եկեղեցի կունենա, հիմքերի օրհնությունը կատարվել է ալսօր // <https://www.shoghakat.am/am/telecasts/19426>, <https://www.youtube.com/watch?v=aA0qCOX5edY&t=40s> առ 04.05.2023 թ.:

⁴⁸ Վերոհիշյալ տեղեկությունները մեզ հաղորդել են Թթուշրի վարչական ղեկավար Զոհրակ Ասլանյանը, Ապարանի հովվության հոգեւոր հովիվ, արժանապատիվ Տ. Մուշե քհն. Վահանյանը եւ Թթուշրի հիմնական դպրոցի ուսուցիչ Ռ. Թորոսյանը:

⁴⁹ Հարկ ենք համարում նշել, որ անկախացումից հետո ՀՀ-ում կառուցված բազմաթիվ փոքրածավալ եկեղեցական կառույցներ կոչվել են մատուռներ ընդհանուր անվամբ: Այդ կառույցների համեստ չափերը նկատի ունենալով՝ համարում են մատուռներ, ոչ թե եկեղեցիներ: Սակայն մատուռները (վկայարաններ) քրիստոնեական պաշտամունքային յուրօրինակ կառույցներ են, որոնք կառուցվում են վկայի՝ մարտիրոսի կամ նահատակի գերեզմանի կամ մասունքների վրա: Մատուռները, ըստ էության, պարզ հորինվածքով փոքր եկեղեցիներ են՝ ուղղանկյուն հատակագծով, թաղածածկ, երկթեք կտուրով, որոնք հաճախ կառուցվել են բնակավայրերում, ճանապարհների, աղբյուրների ակունքների մոտ, գերեզմանատներում, վանական համալիրներում: Հետագայում մատուռ են անվանել ընդհանրապես փոքրածավալ եկեղեցիները, սակայն իրականում մատուռի եւ եկեղեցու տարբերությունը ոչ թե մեծությունն է, չափսերը, այլ մատուռի հիմքերը օրհնված եւ օծված քարերով նվիրագործված չլինելը: Մատուռներ են կոչվում նաև եկեղեցիների օծված ավանդատները, որոնք պատարագամատուց անշարժ սեղան ունեն. տե՛ս ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, Ծիսական բառարան, Անթիլիաս-Լիբանան, 1979, էջ 157–158. «Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան», էջ 696:

⁵⁰ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան», էջ 28:

Եղիսաբեթ մատուռը: Կառուցվել է 1998–2000 թթ.՝ ճարտարապետ Գրիգոր Նազարյանի նախագծով⁵¹ եւ Բոստոնի Հայ Եկեղեցասիրաց Կանանց Միության, Մասաչուսեթս նահանգի Ուոթրթաունի Ս. Զեյմա եկեղեցու տիկնանց բարեգործական միության եւ Վենեսուելայում ապրող բարերարների հանգանակած միջոցներով: Մատուռը քառակուսի հիմքով, արեւմտյան բաց մուտքով, առանց խորանի սլացիկ ու գմբեթավոր կառույց է: Շարված է կարմիր սրբատաշ տուֆաքարերով:

Հիմնարկեքի արարողությունը ժամանակին կատարել է Արագածոտնի թեմի առաջնորդ Տեր Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը 1999 թ. հունիսի 5-ին:

Ս. Մարիամ եւ Ս. Եղիսաբեթ մատուռի խաչը օծվել եւ տեղադրվել է 2000 թ. օգոստոսի 13-ին՝ Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնի օրը, Արմավիրի թեմի առաջնորդի պաշտոնակատար Տեր Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանի եւ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տեր Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի ձեռամբ, ապա կատարվել մատուռի օծման հանդիսավոր արարողություն: Արայի գյուղի համայնքապետարանի ջանքերով մատուռի շրջակայքը բարեկարգվել է: Տնկվել է 200-ից ավելի ծառ ու թուփ: 2005 թ. մատուռի մոտ խմելու ջուր է հասցվել եւ ցայտաղբյուր կառուցվել⁵²:

ԵՐԵՂԱՏԱՓԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՄԱՏՈՒՌ

Ապարանի տարածաշրջանի Երնջատափ գյուղը գտնվում է ծովի մակարդակից շուրջ 1850 մ բարձրության վրա⁵³, մարզկենտրոնից մոտ 35 կմ հյուսիս-արեւելք, մայրաքաղաք Երեւանից՝ մոտ 45 կմ (դեպի հյուսիս-արեւմուտք): Երնջատափ գյուղի Սուրբ Աստվածածին մատուռի կառուցումն սկսվել է 2005 թվականին՝ Արթուր Սարգսյանի բարերարությամբ: Ս. Աստվածածին մատուռն օծվել է 2007 թ.⁵⁴:

⁵¹ Տե՛ս Սարգսյան Հասմիկ, Եվ պիտի լինի ամենայն գործ աստվածային // <https://www.aravot.am/2022/05/14/1267546/>, <https://www.hayagitran.am/2022/05/id-11907.html>, նաեւ https://www.youtube.com/watch?v=deIxmJQe_hg&t=91s առ 16.06.2023 թ.:

⁵² Տե՛ս Պետրոսյանց Տիգրան (Տիգրան Հայազն), Որդեկորույս մայրերին նվիրված Սուրբ Մարիամ – Սուրբ Եղիսաբեթ մատուռ // https://tigranhayazn.do.am/publ/arayi_gyowgh/1-1-0-18 առ 16.06.2023 թ.:

⁵³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, էջ 75:

⁵⁴ Տե՛ս Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Վ. ՍԱՐԴԻԱՆՅԱՆ, Անկախությունից հետո Արագածոտնում եկեղեցիներ են կառուցել նվազագույնը 100 000 դոլարով // <https://hetq.am/hy/article/68653> առ

Բացի վերը հիշված եկեղեցական կառույցներից՝ Տ. Արարատ քահանա Պողոսյանի հրապարակած ցուցակում (Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության շրջանում նոր կառուցված, վերականգնված եւ մասնակիրորեն վերանորոգված եկեղեցիների ու վանքերի ցանկ) Արագածոտնի մարզում նշված են նաեւ հետեւյալ փոքրածավալ եկեղեցական կառույցները (մատուռներ). 1. Ս. Գրիգոր Նարեկացի մատուռ (Զքնաղ, 2001 թ.), 2. Ս. Թադեոս Առաքյալ մատուռ (Աշնակ, 2009 թ.), 3. Ս. Խաչ Դավթի մատուռ (Մուղնի, 2009 թ.), 4. Կոշ Բեկ-ի Ս. Հարություն եկեղեցի (Կոշ, 2008 թ.)⁵⁵:

ԱՄՓՈՓՈՒՄ

Արագածոտնի թեմի հոգեւորականությունն իր գնահատելի գործունեությամբ մասնակցում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Արագածոտնի թեմի իրականացրած բարեգործական, մարդասիրական ու ազգապահպան միջոցառումներին: Թեմի նորակառույց եկեղեցիներում քահանայագործող Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նվիրյալ հոգեւորականները ներգրավված են ու իրենց գործուն մասնակցությունն են ունենում մարզի հասարակական ու ներհամայնքային կյանքի տարբեր ոլորտներում իրականացվող աշխատանքներին:

Այսպիսով՝ 1991 թ. հետո նորանկախ Հայաստանի Հանրապետությունում հայկական եկեղեցական ճարտարապետությունը վերածնունդ, ապա նաեւ վերելքի նոր շրջան ապրեց: Ժամանակակից հայ ճարտարապետներն ու վարպետ-շինարարները, կիրառելով նորագույն միջոցները, լուծումներ ու մտահղացումներ, նորակառույց եկեղեցիները, այդ թվում նաեւ Արագածոտնի մարզի եկեղեցիները, բացառապես նախագծում եւ կառուցում են՝ պահպանելով ու զարգացնելով հայկական միջնադարյան եկեղեցական ճարտարապետության եւ Արագածոտնի ժողովրդական ճարտարապետության ու շինարարական արվեստի լավագույն ավանդները:

17.06.2023 թ.:

⁵⁵ Տէս Տ. ԱՐԱՐԱՏ ՔԷՆ. ՊՈՂՈՍՅԱՆ, Նախանձախնդիր Հայրապետը // Էջմիածին, հտ. ԺԱ. (11), 2011, էջ 88–94, [https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzinvagharshapat/2011/2011\(11\).pdf](https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzinvagharshapat/2011/2011(11).pdf) առ 17.06.2023 թ.:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Արագածոտնի մարզ, եկեղեցի, 1999—2025 թթ., եկեղեցական ճարտարապետություն, Արագածոտնի թեմ, Նոր Եդեսիայի Ս. Աստվածածին եկեղեցի, Չքնաղի Ս. Ստեփանոս եկեղեցի, Բերքառատի Ս. Նշան եկեղեցի, Ղազարավանի Ս. Նարեկ եկեղեցի, Ագարակի Ս. Աստվածածին եկեղեցի, Արտաշավանի Ս. Հրեշտակաց եկեղեցի, Գեղաղիրի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, Վերին Սասնաշենի Ս. Վարդան եկեղեցի, Շենավանի Ս. Ամենափրկիչ եկեղեցի, Արայի գյուղի Ս. Մարիամ եւ Եղիսաբեթ մատուռ, Երնջատափի Ս. Աստվածածին մատուռ:

РЕЗЮМЕ

Арагацотнская область богата историко-архитектурным наследием, включая монастырские комплексы, церкви, крепости, гробницы и хачкары, занимающие важное место в армянской архитектуре. Значимы также памятники народного зодчества.


В докладе рассматриваются новые церкви Арагацотнской области (Св. Аствацацин в Новой Едессии, Св. Степанос в Чкнахе, Св. Ншан в Беркараре, Св. Григор в Казараване, Св. Аствацацин в Агараке, Св. Хрештакатс в Апаране, Св. Григор Лусаворич в Гегадире, Св. Вардан в Верин Саснашене, Св. Аменапркич в Шенаване, часовня Св. Мариам и Егисабет в Арай, часовня Св. Аствацацин в Ернджатапе), их архитектурные особенности, история строительства и сопутствующие вопросы. Исследование опирается на сравнительно-исторический и логический анализ данных из прессы, телевидения и других источников.

Духовенство Арагацотнской епархии активно участвует в благотворительных, гуманитарных и культурных инициативах, проводимых Первопрестольным Святым Эчмиадзином, способствуя национальному самосознанию и укреплению общины. Новые церкви служат не только религиозными, но и общественными центрами.

С 1991 года в независимой Армении армянская церковная архитектура переживает возрождение. Современные архитекторы и строители, используя новые технологии и проектные решения, продолжают сохранять и развивать

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ (1999–2023 ԹԹ.)

1. Նոր Եղեսիայի Ս. Աստվածածին եկեղեցի
2. Չքնաղի Ս. Ստեփանոս եկեղեցի
3. Բերքառատի Ս. Նշան եկեղեցի
4. Ղազարավանի Ս. Գրիգոր եկեղեցի
5. Ագարակի Ս. Աստվածածին եկեղեցի
6. Ապարանի (Արտաշավան) Ս. Հրեշտակաց եկեղեցի
7. Գեղադիրի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի
8. Վերին Սասնաշենի Ս. Վարդան եկեղեցի
9. Շենավանի Ս. Ամենափրկիչ եկեղեցի
10. Արայի գյուղի Ս. Մարիամ և Եղիսաբեթ մատուռ
11. Երնջատափի Ս. Աստվածածին մատուռ
12. Սասունիկի եկեղեցի (կառուցվում է)
13. Թթուջրի եկեղեցի (կառուցվում է)
14. Չքնաղի Ս. Գրիգոր Նարեկացի մատուռ
15. Աշնակի Ս. Թադեոս Առաքյալ մատուռ
16. Մուղնիի Ս. Խաչ Դավթի մատուռ
17. Կոշ ՔԿՀ-ի Ս. Հարություն եկեղեցի





Զֆնադի Ս. Ստեփանոս եկեղեցի, 2004



Վերին Սասնաշենի Ս. Վարդան
եկեղեցի



Ապարանի (Արտաշական)
Ս. Հրեշտակաց եկեղեցի



Երեջատափի Ս. Աստվածածին մատուռ



Ագարակի Ս. Աստվածածին մատուռ



Գեղադիրի Ս. Գրիգոր
Լուսավորիչ եկեղեցի

традиции средневекового армянского церковного и народного зодчества, в том числе в Арагацотнской области.


SUMMARY

The Aragatsotn region is rich in historical and architectural heritage, including monastic complexes, churches, fortresses, tombs, and khachkars (cross-stones), which hold a significant place in Armenian architecture. Notable among them are also monuments of folk architecture.

This report examines the newly established churches in Aragatsotn (St. Astvatsatsin in New Edesia, St. Stepanos in Chknakh, St. Nshan in Berkarat, St. Grigor in Ghazaravan, St. Astvatsatsin in Agarak, St. Hreshtakats in Aparan, St. Grigor Lusavorich in Geghadir, St. Vardan in Verin Sasnashen, St. Amenaprkich in Shenavan, the Chapel of St. Mariam and Yeghisabet in Aray, and the Chapel of St. Astvatsatsin in Yernjatap), highlighting their architectural features, construction history, and related aspects. The study utilizes comparative historical and logical analysis, drawing on information from the press, television, and other sources.

The clergy of the Aragatsotn Diocese actively contributes to charitable, humanitarian, and cultural initiatives organized by the Mother See of Holy Etchmiadzin, fostering national identity and community cohesion. The newly built churches serve not only as religious centers but also as hubs of social and communal life.

Since Armenia's independence in 1991, Armenian church architecture has been undergoing a revival. Modern architects and master builders, while integrating new technologies and design solutions, continue to preserve and advance the rich traditions of medieval Armenian ecclesiastical and folk architecture, including in Aragatsotn.





Doi: 10.56737/2953-7843-2024.08-113

ԿԱՐԻՆԷ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ԼԻ

ՄԵՍԱՐԵՆՑԵԱՆ ԵՐԱԶԻ ԵՒ ՏԵՍԻԼԻ ԼԵԶՈՒԱՌԱՎԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ¹

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ի հնուց անտի մարդկութեանը ծանօթ են երազը եւ տեսիլը, որոնք արարչագործութեան արշալոյսից ուղեկցել են մարդուն: Սկսած վաղնջական ժամանակներից մարդիկ դրանց հետ ինչ-ինչ յոյսեր են կապել, ակնկալիքներ ունեցել կամ երկիրղել: Աստուածաշնչից յայտնի են բազմաթիւ երազներ ու տեսիլներ, ինչպէս Յակոբի երազը, Մուրթքէի երազը, Պետրոս առաքեալի տեսիլքը, մարգարէական տեսիլները եւ այլն: Յոբ Երանելու գրքում ասուում է. «Ի միում նուագի խօսեսցի Տէր, եւ յերկրորդումն՝ Երազով կամ զբազմամբ գիշերականաւ»²: Իսկ Յովէլ մարգարէի գրքում կարդում ենք. «Եւ եղիցի յետ այսորիկ հեղից յՈգույ իմոյ ի վերայ ամենայն մարմնոյ. եւ մարգարէասցին ուստերք ձեր եւ դստերք ձեր, եւ ծերք ձեր երազովք երազեսցին, եւ երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն» (Յովէլ Բ. 28):

Հետաքրքրական է, որ տեսիլները մարգարէներին հիմնականում տրուում էին ծանր ու խառնակ ժամանակներում, եւ մարգարէները յաճախ գօտեպնդում ու յուսադրում էին ժողովրդին, ինչպէս Եզեկիել, Դանիէլ, Յովէլ, Անգէ, Զաքարիա մարգարէները հրէաների բաբելոնեան գերութեան ժամանակ:

¹ Ստացուել է՝ 1.02.2024, գրախօսուել է՝ 1.02.2024: Էլ. հասցէ՝ karine.arakelyan.2016@mail.ru:

² Յոբ 33.14, Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց 1805 'Ի Վանէտիկ, ՌՄԾԴ. Ի գործարանի Սրբոյն Ղազարու, էջ 1234: Այսուհետեւ Աստուածաշնչից կատարուող մէջբերումները կնշուեն սոյն հրատարակութիւնից:

Հայ ժողովրդի համար քսաներորդ դարասկիզբը ծանր ու դժնդակ ժամանակահատված էր: Հայաստանի արեւելեան հատուածը գտնուում էր Ռուսաստանի, իսկ արեւմտեան հատուածը՝ Թուրքիայի գերիշխանութեան ներքոյ: Դրութիւնը չափազանց բարդ էր յատկապէս Արեւմտահայաստանում: 1876 թուականին Օսմանեան Թուրքիայում իշխանութեան գլուխ անցած սուլթան Աբդուլ Համիդ II-ը վարում էր բացարձակ բռնութեան քաղաքականութիւն: Ինչպէս յաճախ է պատահում, դժոխային իրականութիւնն ու ժամանակները նպաստեցին բանաստեղծութեան, երազի ու տեսիլի գրականութեան զարգացմանը: Ամենեւին պատահական չէ, որ ժ. Դարավերջը եւ Ի. դարասկիզբը հայ գրականութեան եւ արեւելեան, եւ արեւմտեան հատուածներում ծնունդ տուեցին բանաստեղծների այնպիսի փաղանգների, որոնց ստեղծագործութիւնը դարձաւ ազգի պարծանքն ու անգնահատելի ժառանգութիւնը:

Բանաստեղծներն իրենց քնարերգութեան մէջ բազմիցս անդրադարձան երազին եւ տեսիլին: Սրանք բազմիմաստ բառեր են եւ մէկ ուղղակի իմաստի կողքին ունեն մի քանի փոխաբերական իմաստներ, ինչպէս. «Երազ, ի, գ., 1. Քնի մէջ երեւացող պատկերներ, պատկերացումներ: 2. փխբ. Երեւակայական՝ անիրագործելի բան: 3. փխբ. Անցեալի քաղցր յիշողութիւն՝ Վերյուշ: 4. փխբ. Վաղանցիկ բան՝ իրողութիւն: 5. փխբ. տենչանք, փափագ: 6. ած. Երազային, չքնաղ, կախարդական... 7. փխբ. Երազի նման քաղցր՝ անուշ՝ երջանկաւէտ»³:

Բանաստեղծները բնականօրէն շեշտագրեցին փոխաբերական իմաստները՝ տալով իւրօրինակ մեկնաբանութիւններ ու գնահատականներ: Վահան Տէրեանը գրում էր «Մթնշաղի անուրջները», Եղիշէ Չարենցը «Տեսիլաժամերը», Յովհաննէս Թումանեանն անդրադառնում էր երազին բազմաթիւ ստեղծագործութիւններում, քառեակներից մէկում գրում. «Քուն թէ արթուն՝ օրիս շատը երազ եղաւ, անցկացաւ, Երազն էլ, նուրբ ու խուսափուկ, վրձնազ եղաւ, անցկացաւ»⁴, իսկ Դանիէլ Վարուժանը անմահ երազը գերադասում էր մեռնող կեանքից:

Ի. դարասկզբին է գրական ասպարէզ եկել նաեւ ականաւոր քնարերգու Միսաք Մեծարենցը, որ միանգամայն նոր խօսք պիտի ասէր արեւմտահայ գրականութեան մէջ եւ իր անշնչելի կնիքը թողնէր հայ

³ Է. Կ. ԱՂԱՅԵԱՆ, Արդի հայերէնի բացատրական բառարան, Երեւան, 1976, էջ 334:

⁴ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ, Երկեր, հտ. 1, Երեւան, 1958, էջ 154:

բանաստեղծութեան անդաստանում: Միսաք Մեծարենցի քնարերգութիւնն ընդունուած է համարել ապաքաղաքական, սակայն, ինչպէս նկատել է Հր. Թամրազեանը, «Առհասարակ թուրքական դժոխքում բոլոր ազգերի գրողներն էլ ստիպուած էին հեռու մնալ քաղաքական եւ հասարակական թեմաներից եւ զբաղուել այսպէս կոչուած «անմեղ» երգասացութեամբ... Բայց Միսաք Մեծարենցն ուժեղ էր հէնց բնութեան, սիրոյ, ցաւի եւ երազների թեմաների մէջ: Շատ ուժեղ: Եթէ չլինէին էլ այդ ճնշումն ու հալածանքը, նա կը լինէր դարձեալ բնութեան մեծ շարժման խորհրդաւոր ձայների ու երանգների, սիրոյ եւ ցաւի մթնոլորտում»⁵:

ԵՐԱՋ

Երազի նիւթը Մեծարենցի ստեղծագործութեան մէջ ունի խիստ զգալի ներկայութիւն: Դիմենք փաստերին, որոնք առաւել քան խօսուն են: Երազ գոյականն ունի մի քանի հոմանիշ, «Անուրջ, երազանք, տեսիլ: Նիրուանայ: Լ Յնորք, բանդագուշանք»⁶:

Այս բառերից երազը Մեծարենցի չափածոյում կիրառուած է յիսուն անգամ, արձակում քսանեօթ, տեսիլը՝ չափածոյում եօթ անգամ, արձակում երեք, երազանքը՝ չափածոյում տասնհինգ անգամ, արձակում երկու, անուրջը՝ չափածոյում քսաներկու անգամ, արձակում մէկ, ցնորքը՝ չափածոյում երեք անգամ, արձակում մէկ: Բանդագուշանք բառը, որն ունի նաեւ զառանցանք իմաստը, եւ նիրուանան, որ կապուած է բուդդայական հաւատալիքների հետ ու նշանակում է երանաւէտ հանգիստ վիճակ, որը ձեռք է բերում աշխարհիկ ամէն ինչից հրաժարուելու միջոցով, բացակայում են թէ՛ արձակում, թէ՛ չափածոյում: Բացի վերոնշեալներից՝ Մեծարենցն օգտագործել է այս բառերով բազմաթիւ կազմութիւններ, որոնք կարելոր դեր ունեն խօսքի ոճաւորման հարցում:

Ինչպէս արդէն նշուեց, երազ գոյականը Մեծարենցի չափածոյում յաճախակի կիրառութիւն ունեցող բառերից է: Այս հասկացութեան կաբելորութիւնն ընդգծում է նաեւ նրանով, որ հեղինակը որոշ դէպքերում նախընտրում է մեծատառով գրութիւնը կամ մէկ բանաստեղծութեան մէջ նոյն բառը կիրառում մի քանի անգամ: Յիշենք «Նաւակներ» բանաստեղ-

⁵ Հ. ԹԱՄՐԱԶԵԱՆ, Բանաստեղծութեան հազարամեայ խորհուրդը, Երեւան, 1986, էջ 204–205:

⁶ Ա. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ, Հայոց լեզուի հոմանիշների բառարան, Երեւան, 1967:

ծուծիւնը, որը մի ամբողջական փոխաբերութիւն է, եւ նրա որեւէ պատկեր չի կարելի հասկանալ ուղղակի իմաստով:

Նաակներ մեկնեցան ամէնն ալ, բաղձանքով ակաղձուն.
Հեռացան ամէնն ալ՝ ծըփանուտ երազիս արմուխէն...⁷

Այստեղ երազը գրուած է մեծատառով, եւ հէնց երազն է ամբողջացնում քնարական հերոսի յոյզերը, զգացումները, սպասումները: Ինքը՝ Մեծարենցը, անդրադարձել է այս բանաստեղծութեանը «Ինքնադատութեան փորձ մը «Միաձայն»-ին առիթով» յօդուածում՝ մեկնելով փոխաբերութիւնների միջոցով արտայայտած մտքերը ու նշելով, որ. «Ամբողջ հատորը գրեթէ սպասման երկարածիւր գիշեր մըն է աղբրսանքներով, հոգերով, ցաւերով, ու երբեմն այլ կայծկլտուն յոյսերով լեցուն» (243):

«Մթնշաղներ» բանաստեղծութեան մէջ հեղինակը երազ բառը գործածել է հինգ անգամ՝ փաստացի դիմելով կրկնութեան: Այդ աւանդութի արմատները գալիս են դարերի խորքից, եւ կապուած են ժողովրդական բանահիւսութեան հետ: Յայտնի է, որ «ժողովրդական բանաւոր քնարերգութիւնը լայնօրէն օգտուում է բառակրկնութիւններից՝ նպատակ ունենալով պատումը երկարածելու, ասքին տաղաչափական նկարագիր հաղորդելու, եւ յաճախ ի յայտ է գալիս ռիթմական պահանջներից ելնելով»⁸:

«Մթնշաղներ» ոտանաւորում եւս ակնյայտ է կրկնութեան ոճական արժէքը.

Վերջալոյսի աղջիկն է իր կուսութեան մէջ բռնում.
Ինչո՞ւ միմակ մընացի երազիս հետ թախծագին.
Թմբիներու բոյրին տակ, նուրիներու ծաղիկին՝
Ա՛հ, ինչո՞ւ ես մընացի գիրկն երազին այս տրտում (61):

Բառիմաստն աւելի ընդգծուած է՝ միայնակ սիրահարի հոգեվիճակը դարձնելով խիստ կենդանի եւ ընկալելի: Առաւել արտայայտիչ է ասելիքը վերջին տան մէջ, որտեղ եւս մեծ է երազ բառի եւ նրա զոյգ՝ գոյականական եւ ածականական մակդիրների դերը.

Եկո՛ւր, արդէն կը մըսին հէ՛ք երազներն իմ ուրբով.
Ա՛լ յոգնած եմ անցնելէն կածաններէ մենաւոր... (61)

⁷ Մ. ՄԵՐԱՐԵՆՑ, Երկերի լրակատար ժողովածու, Երեւան, 1981, էջ 62: Այսուհետեւ այս գրքից կատարուող մէջբերումների էջերը կնշուեն շարադրանքին կից՝ փակագծերի մէջ:

⁸ Տէմ Ի. Գալպերին, Очерки по стилистике английского языка, 1958, էջ 259:

Մակդիրն ընդունուած է համարել առարկան կամ երեւոյթը գեղագիտօրէն բնութագրող որոշիչ: Մակդիրը միտուած է խօսքը զգացմունքով հարստացնելուն՝ արտայայտելով հեղինակի որոշակի վերաբերմունքը առարկայի նկատմամբ: Մեծարենցի քնարերգութեան մէջ երազ բառն ստացել է բազմաթիւ մակդիրներ, որոնց մեծ մասը բանաստեղծական բառեր են եւ, ելնելով նաեւ այդ հանգամանքից, նպաստում են խօսքի բանաստեղծականացմանը, իսկ որոշ մասը պատկանում են բառապաշարի չէզոք շերտին, սակայն բանաստեղծական իմաստ ձեռք են բերում շարադրանքում, թէեւ ոճագիտութեան որոշ ներկայացուցիչներ չեն ընդունում բանաստեղծական բառերի գոյութիւնը: Դրանցից մէկը Վինօկուրն էր, որը «դէմ էր բանաստեղծական ու գործնական լեզուների հակադրմանը. «Բանաստեղծական եւ գործնական բառերի միջեւ, — գրում է նա, — սկզբունքային տարբերութիւն դնող տեսութիւնը ոչ մի քննադատութեան չի դիմանում: Բանաստեղծական բառը նոյնպէս գործնական բառ է, միայն թէ մատուցուած, այսպէս ասած, այլ քօղի տակ»⁹:

Բնագրային վկայութիւններ. «սրտաթափ ու խանդոտ երազ» (62), «Մելամաղձիկ երազ» (63), «երազին տակ բոցավառ» (50), «երազն հեշտաւէտ» (149), «հեշտադալար ու բոցակապ երազին» (70), «լուսացնցող երազով» (65), «կաթվարդ երազէ» (98), «երազն յամպարէ» (91), «ծով երազին» (108), «երազն անպատում» (118), «կոյս ու ծաղիկ երազներու» (84), «ճերմակ երազիդ» (29), «երազ մը բուրեան» (42) եւ այլն:

Երազը յաճախ մաս է կազմում պատկերաւորման այլ միջոցների, որոնք խօսքի արտայայտչականացման անկրկնելի միաւորներ են: «Անդարձ» բանաստեղծութեան մէջ քնարական հերոսը երիցուկի օգնութեամբ փորձում է հասկանալ իր սէրը փոխադարձ է, թէ ոչ: Անձկութեամբ լեցուն այս պահերը, սիրահարի ապրած տագնապը հեղինակը նկարագրում է փոխաբերութեան միջոցով, կարելի է ասել անբացատրելի, միայն սիրահարին հասկանալի լեզուով.

Ինչպէ՛ս կրկնեմ բարբառը երիցուկին մարգարէ,
 Հէ՛ք ծաղիկ, զօր խեղդեցի վայրկեանի մը մէջ անյոյս՝
 Ուր ձեռքիս մէջ կը սուրաւ ձեռքիդ երազն յամպարէ (91):

⁹ Քաղուածքը՝ ըստ Օ. ЗАГОРОВА, Об эстетической функции языка, в книге «Поэтическая стилистика», Воронеж, 1982, էջ 9:

«Անձրեւ» բանաստեղծութեան մէջ Մեծարենցը անձրեւոտ գիշերը համեմատում է գթասիրտ քահանայի հետ: Առաջին հայեացքից համեմատութեան եզրերն իրար հետ որեւէ առնչութիւն ունենալ չեն կարող, բայց չմոռանանք, որ «յաջող համեմատութեան կարեւորագոյն յատկանիշներից մէկը յանկարծակիութեան, նորոյթի, հնարամտութեան տարրն է: Այդ իսկ պատճառով իւրաքանչիւր հեղինակ չափազանց անհատական է համեմատութիւնների ընտրութեան եւ գործածութեան իմաստով»¹⁰:

Քնարական հերոսը սպասում է, որ լցուի «երազների պարապ բաժակը», որ միտքը նոր լոյսով լուսաւորուի, ու նոր դուռ բացուի.

Անձրեւոտ գիշեր, գրքա՛ծ ֆանաւայ,
Թոթուե՛ւ սրբեմի այս տեղատարաւի,
Զերթ մասունքի շուր, մինչեւ որ լէնա,
Մինչեւ որ լէնայ՝ բաժակն այս պարապ
Իմ երազներուս՝ որ ոսկեմըրաւի
Կեցէր է ցրտոտ մարմարին վըրայ (99):

Համեմատութեան գեղեցիկ օրինակի հանդիպում ենք «Երազի պահեր» բանաստեղծութեան մէջ, երբ անսպասելիութեանը միահիւստում է քնարական տարրը՝ պատկերը դարձնելով գեղագիտօրէն անթերի, եւ դարձեալ մեծ է երազի դերը.

Մինչ կը հոսի գիշերն ինչպէս ծով անհուն
Դէպ ի փոխման երազիս... (37)

Մեծարենցի քնարերգութեան մէջ հանդիպում ենք երազ-ով կազմուած բազմաթիւ բառեր: Նախ յիշենք դրանցից ամենայաճախակի կիրառուած երազանք գոյականը՝ չափածոյում տասնհինգ կիրառութիւն: Քրոջ ամուսնուն՝ Տէր Վարդան քահանայ Արսլանեանին ուղղուած նամակում Մեծարենցը, պատասխանելով վերջինիս հարցումին, բացայայտում է իր ստեղծագործութեան մի շատ էական առանձնայատկութիւն. ««Ծիածանի» առթիւ գրուած նամակը անգամ մըն ալ կը կարդամ զգածուելով. «Ինչո՞ւ տիեզերքի Հոգիի հետ չես խօսակցիր» կը գրէք, բայց դիտելի է, որ իմ գրեթէ բոլոր քերթուածներս այդ մեծ խօսակցութեան կը նկրտին, որքան որ ալ իմինս չըլլայ Աստուծոյ հետ դէմ յանդիման խօսակցութիւն, բայց ո՞չ ապաքէն Աստուած ամէն տեղ է. Զմրան Պարզ Գիշերուան մէջ հծծած

¹⁰ Տէւ Ա. Ефимов, Стилистика художественной речи, Москва, 1961, էջ 491:

աղօթքս ու Արեւին ուղղած պաղատանքս իրեններուն, հետեւաբար եւ իրեն համար էր. ինչ երջանկութիւն, տերեւի մը խարշափին մէջէն տեսնել տիեզերական զօրութեան զաղտնիքը ու այդ փոքրիկ մասնաւորէն մեկնիլ դէպ ի անհունը» (288):

Ասուածի ապացոյցը գտնում ենք «Աղերսանք» բանաստեղծութեան մէջ, որտեղ մարդն ու բնութիւնը ամբողջապէս միաձուլուած են, մարդկային երազներն ու երազանքներն անբաժան են բնութեան գեղեցկութիւններէից.

Վարդաւէտ ցոլով ծաղկին հեշտաբոյր
Թող որ շուրջն հըրուտ երազանքս յածի (161):

Մէկ այլ դէպքում՝ «Ուռիներու շուքին տակ» եռամաս բանաստեղծութեան մէջ, մարդկային երազանքը փարւում է բնութեանը, եւ այս ներդաշնակութեան մէջ ծնւում են երջանիկ ապրումներ.

Ուռնիմէ՛ր, շիթ շիթ արցումք ցօղեցի՛ք,
Մինչ բուսնումնիդ իմ հոգոյս մէջ կամպանայ,
Եւ այս չմնաղ անդորութեան յեց՝ թող հէք
Երազանքս պահիկ մը գէթ հեշտանայ (77):

Մեծարենցի ստեղծագործութեան մէջ մեծ կիրառութիւն ունի երազել բայը, որը խօսքային համապատասխան միջավայրում ստանում է ռճական կարեւոր գործառնութիւն: «Թղթիկը» բանաստեղծութեան հերոսուհին կարդում է եւ արդէն գոց գիտէ նուիրական նամակը, այն կրծքից չի բաժանում, նրանով է շնչում ու ապրում: Այս հոգեվիճակի նկարագրութեան մէջ մեծ է երազել բայի դերը թէ՛ արտայայտչականութեան, թէ՛ յուզականութեան եւ թէ՛ նաեւ խօսքի ճշգրտութեան առումներով.

Ուր ծաղկահեր գլխով աղջիկն ըսպիտակ
Մահիճին մէջ ընկողմանած՝ աչքը բաց
Ձեռքը թուրքին՝ թուրքը սրտին՝ կերակէ... (171)

Մեծարենցի քնարերգութեան մէջ երկու անգամ հանդիպում է կրաւորական սեռի երազուել բայը՝ յարակատար դերբայի երազուած ձեւով: Երկու դէպքում էլ բառը դերբայական դարձուածի գերադաս անդամ է եւ կազմել է ծաւալուն մակդիր՝ լաւագոյնս նպաստելով խօսքի հարստացմանը. «Այս գիշեր ջերմ ու երազուած կայծեր հոգւոյս խորերն ընկան» (46),

«Հարաւի մեղմ ու լիաշունչ հովին հետ, Որ վաղուց երազուած համբոյրի մը պէս իմ սիրակարօտ հոգիս հեշտանքով կը լիացնէ» (70):

Երազել բայը գործածուած է նաեւ ենթակայական դերբայի երազող ձեւով՝ գոյականական կիրառութեամբ: «Աշնան ծովը» ոտանաւորում Մեծարենցը կիրառել է դիմառնութեան հնարանքը:

Նշուած համապատկերում միանգամայն պարզ է աշնան ծովին երազելու ունակութեան վերագրումը.

Տառապագին աշնան հօգօր ծովը լրճում,

Երազողն է, միշտ այլայլած ու միշտ դաժան... (148)

Երազել բայը մաս է կազմել նաեւ երազել տալ յարադրութեանը, որը գործածուել է «Հիւղին աշունը» բանաստեղծութեան մէջ:

Մեր հոգեւոր եւ գիտական մտքի պայծառ ներկայացուցիչներից մէկը՝ Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեանը գրում էր, որ բնութիւնը եւ արտաքին աշխարհը իմաստաւորում են միայն ներքին տեսութեամբ եւ դրանք «...դառնում են իրական գեղեցկութիւններ, խորհուրդ եւ սքանչելիք՝ հոգու աչքերով դիտուած, եւ բարձր երաժշտութիւն հոգու ականջով լսուած՝ իբրեւ մասը տիեզերական ամբողջութեան: Դրանով է, որ երկինքը, երկիրը թւում են մեզ կենդանի՝ իբրեւ մեծ ամբողջութիւն՝ ներդաշնակ եւ իմաստուն կարգաւորութեամբ, որի մի մասն ենք իբրեւ անհատ, իբրեւ ազգ եւ մարդկութիւն, մեր հոգին էլ՝ ոչ պակաս մեծութեամբ մի երկինք՝ մեր մտքով, մեր զգացմունքով, մեր երեւակայութեամբ, մեր յիշողութեամբ, մեր տենչերով եւ հոգեկան բազմատեսակ ապրումներով, որ նորա աստղերն են»¹¹:

Մեծարենցն իր չափածոյում կիրառել է երազ արմատով կազմուած հետեւեալ բառերը, որոնց դերն անգնահատելի է ոճական առումով. երազային, երազանուրբ, երազկոտ, երազուն, երազունակ: Բնագրային վկայութիւններ. «Երազային, ծաղիկի պէս նրբաւոր, Երբ կը ժպտի պատուհանին ետեւէն...» (74), «Երազանուրբ ձիւնաթորմի ձեռքերուդ Պիտի բերեմ մեղեմիկէ մատնիներ Ու քողէքներ արեւակէ...» (66), «Երազանուրբ անասնիկին օրհասն ու մահն ըսպիտակ, Վերջին քունն ալ դափ ու ծափով պիտի տօնեն վաղ գիշեր...» (38), «Ըզգացի թէ տենդեր ունի Երազկոտ միտքըս ուշացիր...» (157), «Ու կը կայնի հոն հերարձակ, հոլանի, Հայլին

¹¹ ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ, Դէպի լոյս եւ կեանք, Երեւան, 1994, էջ 37–38:

դէմ, ձեռքն ըստինքին, երազո՞ւն, ինչպէս բոց մը, ինչպէս խուրձ մը ցորենի...» (171), «Տարփատենչիկ, զախփախփուն, Աղջիկն է ան անուրջիս, Երազունակ ու փաղփուն հոգին կանգնած է առջիս...» (58) եւ այլն:

«Իրիկուան դէմ» բանաստեղծութեան մէջ Մեծարենցը կիրառել է երազ, երազանք եւ երազել բառերը միաժամանակ՝ նկարագրելով երազի եւ իրականութեան աղաղակող հակադրութիւնը: Այգը, որ խորհրդանշում է երիտասարդութիւնը, լի է երազներով, որոնց հմայքը կեանքն ու շրջապատող աշխարհն իսպառ փարատում են եւ իրիկուան դէմ՝ կեանքի մայրամուտից առաջ մարդն իզուր փորձում է որոնել դրանք եւ իրեն միայնակ է գտնում հեծեծանքի հետ:

ՏԵՍԻԼ

Տեսիլ գոյականը եւս Մեծարենցի ստեղծագործութեան մէջ ունի կիրառութեան լայն շրջանակ եւ որոշակի ոճական դեր: Ի. դարասկիզբը հայերի համար իր արիւնալի ողբերգական իրադարձութիւններով արտացոլուեց գրականութեան մէջ, քնարերգութեան մէջ, ի յայտ եկան մահուան տեսիլները, յիշենք Սիամանթոյին, Զարենցին:

Մեծարենցի ստեղծագործութեան մէջ տեսիլը չի յատկանշում մոռյլ երանգներով, ընդհակառակը, մի դէպքում հեղինակը բանաստեղծութեան վերնագրում է կիրառում բառը՝ տալով մտերմիկ մակդիրը՝ սրանով արտայայտելով իր վերաբերմունքը տեսիլի նկատմամբ. «Մտերմիկ տեսիլներ»: Մէկ այլ դէպքում տեսիլը յայտնւում է հովուի սրնգի միջոցով՝ դարձեալ ընդգծելով մարդու եւ բնութեան անքակտելի միասնութիւնը.

Սրինգն է ան այծյօրանի անդէռդին,
Ու մէգին մէջ կը ծագեցնէ երգ մը՝ արեւ
Ու ասմազուն ըմպած դաշտին տեսիլն ոգող (102):

Մեծարենցեան տեսիլը բնականօրէն կապուած է նաեւ քնարական հերոսի սիրոյ առարկայի հետ, որը բանաստեղծին յայտնւում է տեսիլի միջոցով: Յիշենք «Անդարձ» եւ «Իրիկունս» բանաստեղծութիւնները. «Թաւուտին մէջ թեւաբաց, ահա՛, տեսիլդ է կայնէր. Այծտերեւին հոտեւան մատերն հերքող կը շոյեն, Ու տերեւներ վեհերոտ կու տան իրենց համբոյրներ» (91) կամ «Ահա՛ կ'անցնի, մըշտմըշտած բիւ կազով տեսիլ մ'ալ գերթ ալիք. Զարմանուհի մ' է վարսագեղ կաթ ու վարդի՛ հըրաշալիք...» (127):

Ուզում ենք առանձին անդրադառնալ «Տեսիլ» բանաստեղծութեանը, որում հեղինակը նկարագրում է իր տեսիլը՝ կիրառելով նաեւ տեսիլ բառով կազմուած տեսլական ածականը: «Տեսիլը» մէկն է այն քերթուածներից, որոնք ամբողջապէս կառուցուած են չափազանցութիւնների հիման վրայ:

«Տեսիլ» ոտանաւորի վերջին հատուածում քնարական հերոսը բազմաթիւ չափազանցութիւնների միջոցով պատկերում է իր սրտի տիրուհու արտաքին գեղեցկութիւնը, ինչը երեւում է շլացուցիչ գոյներով վրձնած կտաւի պէս:

Ու տեսլական ձեւեր կ'առնէ դէմքդ համբուն.

Մազերդ՝ անթոշ նարկիս կ'ըլլամ,

Ճակատդ՝ ձիւն կատարներում՝

Զօր վարդագնեց արփն իրիկում,

Եւ աչքերդ կ'ըլլամ գոյգ մը ծառուղիներ՝

Ուր կը ճըշէ թռչնակն արձակ ու նոռողուն

Իմ խայտանքիս, ու շուրթերդ ալ՝

Ոսկեգօծ եզրը բաժակին՝

Ուր կը հակին,

Վարդ ու հարսնուկ, կակաջ, նարդոս, գարնածաղիկ, նունուֆար... (163–164):

ԱՆՈՒՐՋ

Մեծարենցի ստեղծագործութեան մէջ իր ուրոյն ներկայութիւնն ունի երազ-ի հոմանիշ անուրջ գոյականը՝ քսաներկու կիրառութիւն: Ինչպէս նախորդ դէպքերում, մեծարենցեան անուրջը եւս խիստ ներդաշնակ է բնութեան եւ հոգեւոր աշխարհի հետ՝ ընթերցողի համար բացելով զարմանալի նուրբ ծալքեր ու ելեւէջներ: Արեւը գրականութեան մէջ յաճախ է նոյնացուել լոյսի, վսեմի, ամենայն լաւի, նաեւ Արարչի հետ, ինչի վկայութիւնն է մեր եկեղեցու Արեւագալի ժամերգութիւնը, որտեղ Քրիստոսի յարութիւնը նոյնացուում է արեւի ծագմանը: Սուրբ Ներսէս Շնորհալի հայրապետը գրում էր. «Առաւօտ լուսոյ, Արեգակն արդար, Առ իս լոյս ծագեալ»¹²:

Մեծարենցը բանաստեղծութիւն է նուիրել տունջեան լուսատուին՝ այն անուանելով «Արեւին», մէկ այլ՝ «Բիւրեղի դիւթանք» բանաստեղծութեան մէջ անուրջն ուղղում է դէպի արեգակը՝ գրելով.

¹² Մատենագիրք Հայոց, ԻԱ. հտ., ԺԲ. դար, Ներսէս Շնորհալի, գիրք Ա., Երեւան, 2018, էջ 1166:

Երանգներու, շողերու կըղծայ ամուրջն օրօրուն
Եւ արեւին կը նայի միշտ կաթոգին ու բաղձիկ (65):

«Հիւանդի հեւքեր» բանաստեղծութեան մէջ բնութիւնը յոյս է ներշնչում քնարական հերոսին, լուսաւորում նրա խաւարած միտքը, ինչի արդիւնքում ծնւում են անուրջները, որոնց հեղինակը բնութագրում է ոսկեզօծ մակդիրով:

Եւ ամուրջներ ոսկեզօծ՝
Լուս՝ մտփիս մէջ կը պարէն,
Դուստ հանելով ամուր հոծ
Թուխպը լոյսի փապարէն (23):

Մեծարենցի քնարերգութեան մէջ անուրջը յաճախ միահիւսւում է կրօնական ապրումին: «Մեղունները» բանաստեղծութեան մէջ անուրջը առնչւում է յոյսի հետ՝ կազմելով գեղեցիկ փոխաբերութիւն.

Պիտի անցնի՛մ ես այս գիշեր
Երկիւղիս սեպ նամբաներէն,
Իմ գանկիս տակ
Յոյսի ոսկի բոցին ամուրջն առկայծելէն (64):

Մեծարենցը տարբեր առիթներով անդրադարձել է կիրականամոտին՝ հիմնականում ինքնակենսագրական հենքի վրայ: Ինչպէս վկայում են ժամանակակիցները, «Հայրը՝ Կարապետ Մեծատուրեան, որ լաւ շարականագէտ էր, շաբաթ կիրակի օրերը կը մասնակցէր Ս. Նիկողայոս եկեղեցւոյ երգեցողութեան: Շաբաթ իրիկունները եկեղեցին էր Միսաք, կունկնդրէր «Լոյս զուարթը», զօր քաղցր ձայնով մը կերգէր իր հայրը»¹³:

Այս ամէնն իր բանաստեղծական արտայայտութիւնն է գտնում «Կիրակմուտք» ոտանաւորում, որի բնաբանն իսկ՝ «Եկեալքս է մտանել արեգականն տեսաք զլոյս երեկոյիս», վերցուած է «Երգ Կիրակմուտից» ժամերգից: Շաբաթ երեկոյեան ժամերգութիւն է. եկեղեցիներում մոմեր են վառում, խնկարկում, աղօթում, եւ հոգեւոր խաղաղութիւնն ու հրճուանքը թափանցում են հաւատացեալների հոգիները, լուսաւորում նրանց:

Եւ այստեղ է, որ միախառնւում են անուրջն ու իրականութիւնը՝ հոգուն երանական վիճակ պարգեւելով.

¹³ Միսաք Մեծարենցը եւ Դանիէլ Վարուժանը ժամանակակիցների յուշերում, կազմ.՝ Ա. Շարուրեան, Երեւան, 1968, էջ 90:

Ջահերն հիմակ կերագէ՛ն համակ գիւմրիս ու թարշիշ...
 Կամարներն, խորանէն կը ծագին լոյս ու ծիծաղ.
 Հոգիս փշ-փշ կը թաղուի անուրջին մէջ այս չքնաղ (48):

Մեծարենցի քնարերգութեան մէջ հանդիպում ենք անուրջ բառով հետեւեալ կազմութիւններին. անրջածին, անրջածուփ, անրջական, անրջանք, անրջել: Բնագրային վկայութիւններ. «Դալուկ սիրոյ մ'աշնային կը կաթէ դողն հոգւոյս մէջ. Ուր հուրիններ կը նային Անրջածին, լուսամէջ» (57), «Անրջածուփ, նըւաղ բոյրերն երերուն Վերջալոյսին մէջ ոսկեզօծ՝ կը հեւան» (80). «Յայգն է ժայթքած իր շողակի շատրրուաններն անրջական» (46), «Կը դառնան ժիր կախիլներն իմ ապըրշումէ անրջանքիս, Ոլորելով դեղին, ճերմակ մահն երբեմնի շերասներուն» (84), «Մութ սենեակիս մէջ կը շրջիմ առջի համբոյրն անրջելեն» (45) եւ այլն:

ՅՆՈՐՔ

Երագի հոմանիշներից քանակային առումով ամէնից սակաւ կիրառութիւն Մեծարենցի քնարերգութեան մէջ ունի ցնորք գոյականը՝ չափածոյում երեք դէպք, առկայ են ցնոր արմատով երեք կազմութիւն՝ ցնորական, ցնորաբեր, ցնորոտ: Նշուած չորս բառերն ամբողջ չափածոյում ունեն եօթ կիրառութիւն՝ բոլորը չորս բանաստեղծութիւններում:

Ցնորքը եւս կապուել է բնութեան եւ կրօնական ապրումների հետ: «Աստուածամար» բանաստեղծութեան մէջ այն մաս է կազմել փոխաբերութեան՝ հերոսի ինքնամաքրման ճանապարհին Տիրամօր բարեխօսութիւնը խնդրելիս.

Մեծ դիւթութեան կայծակ մը տաս մըթար հոգւոյս,
 Ա՛հ, չըգայթի՛մ կոհակն ի վար ցընորֆներու.
 Թող համբուրէ՛ աշխարհ հանումն աշխարհ կոյս,
 Ու չըգայթի՛մ կոհակն ի վար ցընորֆներու (96):

Ցնորական, ցնորաբեր, ցնորոտ ածականները կիրառուած ենք գտնում նոյն «Ցնորոտ անդորրութիւններ» բանաստեղծութեան մէջ, որոնք փաստացի կազմել են բառիմաստի կրկնութիւն: Դարձեալ երագը միահիւսուել է բնութեանը, գիշերը ստեղծել է լաւագոյն միջավայրը անուրջներին տրուելու, ներդաշնակութեան մէջ անդորր գտնելու համար: Ցնորքից անբաժան է տենչանքը, իղձը, որը լիովին ամբողջացնում է հերոսի զգացածը, մտածածն ու փափագածը.

Շանթէ աշեր, բոցէ թելեր մըտածումիս կ'անցնին բովէն,
 Եւ հուրիներ՝ նոր հոլանած ալապաստը իրենց կոտժին՝
 Որոնց համար շրթունքներս անթիւ իղձեր կը թոթովեն:
 Ումին վըրայ տրամուրթին մը կը ցանէ բիլ եղբեւանին,
 Դաշտերուն մէջ հարսնուկներու բոսոր իղձերը կը ցամփին,
 Մինչ ես կըմպեմ հաշիշն անյագ ցընորաբեր այս գիշերին (46):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Մեծարենցի երկրային կեանքը տեւեց ընդամէնը քսաներկու տարի՝ հայրենիքի եւ հարազատ ժողովրդի համար ծանրագոյն, բարդագոյն ժամանակաշրջանում: Մեծարենցը, սակայն, երբեւէ կու չգնաց դժոխային իրականութեանը կամ անկումային տրամադրութիւններին, այլ դրանց հակադրեց յոյսի, սիրոյ, գեղեցկութեան քնարական իր աշխարհը:

Այդ աշխարհում իր ուրոյն տեղն ունէր տեսիլը, լուսեղէն երազը, որը հեղինակը պարզեց աշխարհին՝ իբրեւ սպեղանի ու դարման, խեղդուկ միջավայրը ճեղքող շող՝ նրա մէջ խտացնելով յոյզեր ու ապրումներ, հոգեւոր խորհրդածութիւններ, խորապէս մարդկային իղձեր ու տենչանքներ: Ասուածի ապացոյցն է եւ այն, որ երազ, տեսիլ բառերը, սրանց հոմանիշները, սրանցով կազմուած բառերը Մեծարենցի ստեղծագործութեան մէջ ոչ միայն մեծ թիւ, այլեւ զգալի որակ են կազմում: Այս բառերն անգնահատելի դեր ունեն խօսքի հարստացման, արտայայտչականացման, ռճաւորման, այլեւայլ արժանիքներով օժտելու հարցում: Սրանք մաս են կազմում պատկերաւորման տարբեր միջոցների եւ խօսքին զանազան նրբերանգներ են հաղորդում: Նաեւ այս միաւորների շնորհիւ է արուեստը դառնում կատարելութիւն՝ ձելի ու բովանդակութեան լիակատար ներդաշնակութեան պայմաններում:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Միսաք Մեծարենց, երագ, տեսիլ, անուրջ, ցնորք, լեզու, խօսք, ոճ, պատկերաւորման միջոց, հոմանիշ

РЕЗЮМЕ

Мечта и видение сопровождают человечество с момента его сотворения и играли особую роль на протяжении всей истории, особенно в тяжелые и нестабильные времена. Для армянского народа одним из таких периодов стал рубеж XIX–XX веков. Не случайно именно тогда в восточной и западной ветвях армянской литературы наблюдался расцвет поэзии, связанной с образами снов и видений, а также появление талантливых поэтов.

Одним из ярчайших представителей этого направления стал выдающийся западноармянский лирик *Мисак Мецаренц*, в творчестве которого тема мечты занимает важное место. Существительные «мечта» и «видение», их синонимы и производные не только часто встречаются в его произведениях, но и имеют глубокую смысловую и художественную ценность. Эти образы становятся важным выразительным средством, обогащают язык, придают ему нюансы, стилизуют и усиливают художественную выразительность.

SUMMARY

Dreams and visions have been known to humanity since the dawn of creation and have accompanied it throughout history. These phenomena were especially prominent during difficult and turbulent times, such as the early 20th century for the Armenian people. It is no coincidence that during this period, poetry, as well as literature centered on dreams and visions, experienced an unprecedented rise in both Eastern and Western Armenian literary traditions, giving rise to many talented poets.

One of the most notable among them was the prominent Western Armenian lyricist *Misak Metsarents*, in whose work the theme of dreams holds a significant place. The nouns “dream” and “vision”, along with their synonyms and derivatives, not only appear frequently in his poetry but also carry deep artistic and symbolic significance. These elements serve as essential literary devices, enriching the language, adding subtle nuances, enhancing expression, and contributing to stylistic refinement and artistic depth.



ՆՅՈՒՐԱ ՀԱԿՈՒՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ

ԱՆԱՀԻՏ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ

ՆՈՐԱԲԱՅ ԴԱՄԱՐԱՆ ՍԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՎԱՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ (ԸՍՏ ԿԵՆՍԱՅՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ)¹

2019 թ. մայիսի 20–30-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին վանքի հարավային պատի հատվածում ձեռնարկված պեղումների միջոցին բացվեց վաղ միջնադարյան թաղում. ուղղությունը՝ հյուսիս-արեւմուտք։ Կատարված էր հիմնահողային թաղում՝ ժամանակին բնորոշ քարաշար քարատապանում։ Քարակերտ հանգստարանը (նկ. 1, 2) շարված էր տուֆե հղկած սալերով՝ Ծածկված դարձյալ կոպտատաշ տուֆե զանգվածեղ անտաշ քարասալերով։ Տապանի հիմքը բնահողն էր։ Կատարված էր վերաթաղում։

Տապանի հիմքը բնահողն էր, իսկ այն հատվածը, որի վրա մասունքներ էին, սպիտակավուն ավազախառն հողի շերտն էր, հարկավ թափված հետազայում։

Հիմնահողային թաղումները տարբեր ուղղություններով, մեծ տարածում ունեին հելլենիստական, անտիկ եւ վաղ միջնադարյան հուշարձաններում, քանզի դեռ հստակ չէր թաղումների դիրքը, համաձայն քրիստոնեական հավատքի։ Զրվեժում, Արտաշատում, Վաղարշապատում, Գառնիում, հարեւան Վրաստանում եւ այլուր բացված սալարկղային, հիմնահողային, կավե դագաղներում կատարված թաղումներն իրենց դիրքային ուղղվածությամբ աղերսվում են հեթանոսական ավանդներին²։

¹ Ստացվել է՝ 27.11.2024, գրախոսվել է՝ 7.12.2024: Էլ. հասցե՝ ankhudaverdyan@gmail.com:

² Տե՛ս Բ. Արակеляն, Значение раскопок в Гарни для изучения культуры древней Армениии, ВДИ, 1953, № 3, էջ 158, Ж. Хачатрян, Гарни 5, Античный некрополь (результаты 1956–1972 гг.), Ереван, 1976, էջ 10, Ս. Есаян, А. Калантарян, Позднеурартские погребение Ошаканского могильника, ИЖФ, Ереван, 1976, № 3, էջ 268–275, Ա. ԺԱՄԿՈՅԱՆ, Զրվեժի վաղմիջնադարյան դամբարանադաշտի պեղումները, ՊՐՀ, Երեւան, № 1, 1976, 1, էջ 221–222, նկ. 1, 2, Ժ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Արտաշատ II, Անտիկ դամբարանադաշտեր (1971–1977 թթ.)

Քարատապանը կերտվածքով, ուղղվածությամբ՝ հյուսիս-արեւմուտք, շերտագրական տվյալներով եւ համադրելի զուգահեռներով, կարելի է թվագրել Դ. դարի սկզբներով, քանզի մինչ էջմիածնի Մայր Տաճարի հիմնարկումը, «Սուրբ Գրիգորը կառուցվելիք տաճարների տեղերում խաչեր կանգնեցրեց եւ ցանկապատեր կառուցեց, բայց զոհասեղան չկառուցեց, որովհետեւ շուներ քահանայության պատիվը»³։ Այս տեսակետին համամիտ չէ հայր Պողոս Անանյանը. «Գրիգոր Լուսավորչի սոսկ աշխարհական ըլլալը՝ հայերէն Ագաթանգեղոսի տեսակէտն է, մինչ յունարէն վարքը զինք սկիզբէն քահանայ կը ճանչնայ... Եւ երբ Կեսարիա կերթայ՝ հոն եպիսկոպոսական աստիճանը կընդունի»⁴։

Քարատապանը բացելիս ականատես եղանք հետեւյալ տեսարանին՝ մարդկային մասունքներ՝ գանգ⁵ եւ ոսկորների ոչ մեծ կույտ (նկ. 3)։ Կարելի է միայն ենթադրել՝ Ս. Նահատակ, մարտիրոսված քրիստոնեական հավատքի մերժման եւ առաջին քրիստոնյաների դաժան հալածանքների, բռնությունների ու խոշտանգումների տարիներին. «Գրիգոր Լուսավորչի քարոզչական գործունեությունից շատ առաջ, Հայաստանի տարբեր մասերում կային քրիստոնեական համայնքներ, կային նոր հավատքի համար իրենց կյանքը տված քրիստոնյաներ՝ Ոսկեանք, Սուքասիանք, Հռիփսիմեանք եւ այլ բազմաթիվ անանուն նահատակներ՝ II–III դդ. եւ հետագա IV–V դդ.։ Նոր հավատքի բազմաթիվ հետեւորդներ հալածանքի զոհ են դարձել հեթանոս հոռմեացի, հայ եւ պարսից իշխանավորների կողմից»⁶։

«Մէկ կողմէ բիւրաւոր նահատակներու զգացումը կը լեցնէ ահա մեր սիրտը եւ միւս կողմէ անոնց փառաւորման մասին զգոյշ լինելու կը ճնշէ

պեղումները, Երեւան, 1981, էջ 13–14, С. Есаян, А. Калантарян, А. Канемян, Ошакан 1, Ереван, 1988, էջ 58, С. Есаян, А. Калантарян, Позднеурартские погребение Ошаканского могильника, ИЖФ, Ереван, 1976, № 3, էջ 149–150, ԱՇԽԱՐՀԱՐԵՎՔՓՈՒՄ, Հայաստան, Քարե դարից միջնադար, Գիտական ժառանգություն, հտ. 4, Երեւան, 2007, էջ 238–239, В. ДЖОРБЕНАДЗЕ, Археологические памятники в средние века, Тбилиси, 1982, էջ 108, Н. АПХАЗАВА, Материальная культура Грузии, Тбилиси, 1979, табл., II, рис. 22, XX, рис. 5, XXXVI, рис. 33, XXXVII, рис. 50, Н. АПХАЗАВА, Могильник Квемо Алеви. Тбилиси, 1988, էջ 121։

³ «Ագաթանգեղոսի Պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք)», Թարգմ. հունարեն բնագրից՝ Հ. Բարթիկյանի, առաջաբանը եւ ծանոթագր.՝ Ա. Տեր-Ղեւոնդյանի, «էջմիածին», է., Լ., 1966, անդ, 80, պարբ. 107։

⁴ Հ. ԱՆԱՆՅԱՆ, Քրիստոնեությունից հետքեր Հայաստանի մէջ Ս. Գրիգոր Լուսավորչի քարոզությունէն առաջ, «Բազմավէպ», ՃԼԶ. տարի, թիւ 1–12, 1978, Վենետիկ, Ս. Ղազար, էջ 22։

⁵ Գանգի եւ ոսկորների կապակցությամբ տե՛ս հավելվածը։

⁶ Ս. ԱՐԵՎԵԼՅԱՆ, Հայաստանում քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը, «Հայաստանը եւ քրիստոնյա Արեւելքը», Երեւան, 2000, էջ 18։

մեր խղճմտանքի վրայ»⁷: Ահա այսպես են արձագանքում մեր բյուրավոր նահատակների «կորուստն ու ցավը», միաժամանակ ձայնում զգույշ լինել նրանց «փառավորման» մեջ, «հարկ», որը ճնշում է մեր մեծերի՝ Հր. Աճառյանի եւ Հ. Մանանդյանի «խղճմտանքը»⁸: Նախակարապետ քրիստոնյաների նկատմամբ դաժան հալածանքները Հայաստանում հայտնի են տակավին խոսրով Մեծի (216–256 թթ.) ժամանակներից⁹:

Խոսրով Մեծն անողոք պայքար էր հայտարարել վաղ քրիստոնեական համայնքներին: Իսկ նրա որդի եւ հաջորդ գահակալ Տրդատ Մեծը (288–330 թթ.)¹⁰ ոչ միայն գործնականում շարունակեց խոսրովի հալածիչ ձեռնարկները, այլեւ հատուկ հրաման արձակեց. «Արդ հրամայում եմ ձեզ հայտնաբերեք նրանց (քրիստոնյաներին) եւ կալանավորելով մեզ ներկայացնեք: Եթե որեւէ մեկը նրանց թաքցնի, նրան սպասում է ամենադաժան մահ: Եթե մենք չխնայեցինք մեր սիրելի Գրիգորին... հւմ կարող եմ խնայել: Յուրաքանչյուրդ, մտքում ունենալով թագավորի երկյուղը, զգո՛ն եղեք, ով կհայտնի նրանց մասին՝ կարժանանա պարգեւների, իսկ ով կթաքցնի նրանց, կամ այս գործում անգոսնի՝ կպատժվի»¹¹: Չի բացառվում, որ նման մի հալածյալ էլ դամբարանում վերաթաղված մասունքատեղ անձն է:

Հընթացս մեր ուսումնասիրության կատարվել է կմախքի պահպանվածություն, ամբողջացման աստիճանի, հնէամարդաբանական եւ հնէաախտաբանական հատկանիշների դիտարկում:

Սեռը որոշվել է երկար ոսկորների ոսկրաբանական (diaphysis) եւ ոսկրասարական (epiphysis) չափերի գնահատման հիման վրա, ցալոսկրերի երկարության բնութագրման, ցալալային համաճոն (symphysis), ցալոսկրերի ստորին ճյուղերի ճյուղավորման անկյան, նստոսկրի մեծ բացվածքի ձևի, զստոսկրի ձևի եւ չափերի հիման վրա¹²: Տարիքի որոշումն իրա-

⁷ Տե՛ս «Սիրոն», 1985, 11–12, էջ 352:

⁸ Հր. ԱճԱՌԵԱՆ, Յ. ՄԱՆԱՆԴԵԱՆ, Հայոց նոր վկաները, Վաղարշապատ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1902, էջ 55:

⁹ «Հայ ժողովրդի պատմություն», հտ. 4, Երևան, 1984, էջ 27:

¹⁰ Բ. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ, Երբ է քրիստոնեությունը Հայաստանում հռչակուել պետական կրօն, «Հանդէս ամսօրեայ», թիւ 1–12, 2000, էջ 171:

¹¹ Ագաթանգեղոսի Պատմության հունական նորահայտ խմբագրությունը... նշ., էջ 34:

¹² Հմմտ. J. E. BUIKSTRA, D. H. UBELAKER, Standards of data collection from human skeletal remains. Arkansas Archaeological Survey Research Series 44. Fayetteville, 1994, էջ 1–272, T. W. PHENICE, A newly developed visual method of sexing the os pubis, American Journal of Physical Anthropology, 1969, 30, էջ 297–302:

կանացվել է գանգի կարերի գնահատման, ատամների ծամող մակերեսի մաշվածության աստիճանի, հոդերի եւ համաճոնների մաշվածության (այլակերպիչ-խանգարվածքային (degenerative-dystrophic) փոփոխությունների ի հայտ գալը բորբոքային գերաճերի տեսքով, երկար խողովակավոր ոսկրերի ենթաաճառային հատվածների ու կարճ ոսկրերի ելուստների բորբոքային հիվանդությամբ առաջացած փոփոխությունների տեսքով), ողերի մակերեսին այլակերպիչ-խանգարվածքային փոփոխությունների բացահայտման հիման վրա¹³: Հետազոտությունը ներառում է գանգաբանական¹⁴, գանգաչափական¹⁵, ատամնաբանական¹⁶, ոսկրաբանական հատկանիշների ուսումնասիրություն¹⁷, հաշվի են առնվել նաեւ որոշ ոսկրերի ախտաբանական հատկանիշներ¹⁸:

Հայտնաբերվել է ոչ ամբողջական կմախք (նկ. 4–1): Հստ արտաքին հատկանիշների՝ ոսկրերը պատկանում են 50–59 տարեկան տղամարդու: Գանգատուփը բնութագրվում է ընդհանուր նրբագեղությամբ, հոնքերի վերին հատվածում արտացայքաբեր (relief) թույլ է արտահայտված: Գանգը ձվաձեւ է: Այն բնութագրվում է կենտրոնագանգային՝ միջին լայնական եւ միջին երկայնական տրամագծերով (աղ. 1): Գանգոսկրը միջին բարձ-

¹³ SŁU S. J. ALQAHTANI, M. P. HECTOR, H. M. LIVERSIDGE, Brief communication: The London atlas of human tooth development and eruption, American Journal of Physical Anthropology, 2010, 142(3), էջ 481–90, R. S. MEINDL, C. O. LOVEJOY, R. P. MENSFORTH, L. D. CARLOS, Accuracy and direction of error in the sexing of the skeleton: Implications for paleodemography, American Journal of Physical Anthropology, 68, 1985, էջ 79–85, C. O. LOVEJOY, R. S. MEINDL, T. R. PRYZBECK, R. P. MENSFORTH, Chronological metamorphosis of the auricular surface of the ilium: a new method for the determination of adult skeletal age at death, American Journal of Physical Anthropology, v. 68, 1, 1985, էջ 15–28:

¹⁴ Հմմտ. А. А. МОВСЕСЯН, Н. Н. МАМОНОВА, Ю. Г. РЫЧКОВ, Программа и методика исследования аномалий черепа, Вопросы антропологии, 1975, вып. 51, էջ 127–150:

¹⁵ Հմմտ. В. П. АЛЕКСЕЕВ, Г. Ф. ДЕБЕЦ, Краниометрия (методика антропологических исследований), М., Наука, 1964, էջ 1–128:

¹⁶ Հմմտ. А. А. ЗУБОВ, Одونتология (методика антропологических исследований), М., Наука, 1968, էջ 1–200, А. А. ЗУБОВ, Методическое пособие по антропологическому анализу одонтологических материалов, М., 2006, էջ 1–72:

¹⁷ Հմմտ. В. П. АЛЕКСЕЕВ, Остеометрия. Методика антропологических исследований, М., Наука, 1966, էջ 1–251:

¹⁸ Հմմտ. A. H. GOODMAN, D. L. MARTIN, G. J. ARMELAGOS, Indications of stress from bone and teeth. Paleopathology at the Origin of Agriculture, M. N. Cohen, G. J. Armelagos (eds.). L.: Orlando: Academic Press, 1984, էջ 13–44, A. H. GOODMAN, R. T. BROOK, A. C. SWEDLUND, G. J. ARMELAGOS, Biocultural perspectives on stress in prehistoric, historical and contemporary population research, Yearbook Physical Anthropology, № 31, 1989, էջ 45–97, D. J. ORTNER, Identification of pathological conditions in human skeletal remains. San Diego: Academic Press. 2003:

րություն է, ըստ բարձրություն-լայնական եւ բարձրություն-երկայնական ցուցիչների՝ միջին է: Գանգատուփի հիմքի երկարության տրամագիծը՝ միջին է, իսկ լայնությունը մեծ է: Ծոծրակի ոսկրը միջին լայնություն է, թիկնալարը (խորդա հուն, չործոյ անգլ. notochord) փոքր է, շրջանագիծը միջին է: Ծոծրակի (occipital) արտաքին ելուստը չափավոր զարգացած է, կողային հատվածում՝ կորացած: Կողմոսկրի շրջանագծի չափը մեծ է, թիկնալարի տրամագիծը միջին եւ մեծ սահմանների շրջանակում է: Քունքընթեր ոսկրը (mastoid) չափավոր է զարգացած: Ճակատոսկորը միջին լայնություն է: Ճակատային շրջանագծի չափը միջին է, թիկնալարը եղել է զգալի: Դեմքի վերին բարձրությունը եւ հիմքի երկարությունը փոքր են:

Նշենք այն հատկանիշները, որոնք կապված չեն (կամ էապես կապված չեն) հիվանդությունների, բնախոսական (physiological) վիճակի առանձնահատկությունների հետ, այլ ունեն ծննդաբանական ծագում: Գանգի ընդհատ-փոփոխական վերլուծություններով բացահայտվեց մի շարք հատկանիշների առկայությունը, որ զետեղել ենք տողատակում¹⁹:

Վերին ծնոտի մեծ աղորիքի պսակի տրամագիծը տատանվում է՝ միջինից մինչև փոքր (աղ. 2): Ըստ միջին ցուցիչի՝ ատամները բնութագրվում են փոքր չափերով (microdontism), որը բնորոշ է նրբագեղ (gracile), մասնավորապես՝ հարավեւրոպական խմբերին:

Աջ բազուկի ուժի ցուցիչը համապատասխանում է մեծ չափի (աղ. 3): Բազուկի վրա առկա է անցք (intercondylar): Աջ ազդրի երկարության տրամագիծը միջին չափերի է, միջնամասի շրջագիծը շատ մեծ է: Ազդրի վրա, Պուարեի երեսակի շրջանում (Poirier's facet), առկա է ոսկրային ներհոսք: Մարմնի երկարությունը 163,96 սմ է (բանաձեւը՝ Կ. Փիրսոնի եւ Ա. Լիրի), որ դասակարգելի է միջին խմբում:

Մկանային համակարգի զարգացման ազդեցությունը երկար ոսկրերի վրա գնահատվել է V. N. Ֆեդոսովայի եղանակով²⁰:

Այս անձն օժտված է եղել ամրապինդ կազմվածքով, ուժային առումով՝ եղել է պատրաստված: Ճաճանչոսկրի՝ գերլարվածությունից առաջացած ձախ ոսկրաթանձրությունը (hyperostosis) հետեւանք է ուսի ու նախա-

¹⁹ (foramina infraorbitalia, processus temporalis ossis frontalis, foramina parietalia, os apicis lambda, os wormii suturae lambdoidea, torus occipitalis (1.5), foramina mastoidea, sutura palatina transversa (II-աձեւ), canalis craniopharyngeus, processus paramastoideus):

²⁰ Հմմտ. В. Н. Федосова, Общая оценка развития компонента мезоморфии по остеологическим данным: (остеологическая методика), Вопросы антропологии, вып. 76, 1986, էջ 105–116:

բազուկի ծալող մկանների ծանրաբեռնվածության: Աջ արմունկոսկրին բնորոշ է հեռավոր կողային գագաթի բավական լավ զարգացումը: Լավ զարգացում կա նաեւ շառավղի (radius) ստորին ծայրի կողային եզրում, որին կից է նաեւ այս մկանը (աղ. 5): Ազդրի խտաշար (compact) շերտի հաստությունը կարող է բնութագրվել որպես գերլարվածությունից առաջացած ոսկրաթանձրություն, այսինքն. ստորին վերջույթի մեխանիկական ծանրաբեռնվածության ավելացման արդյունք: Բավականին խիստ են արտահայտված աջ ազդրի մկանները (linea aspera), որոնք ձեւավորվել են երկար տարիների ձիավարության ընթացքում²¹ (նկ. 4–8): Սրունքի վրա առկա է ձկամկան (m. soleus) (նկ. 4–9) եւ քառագլուխ մկանների (m. quadriceps femoris) գերբեռնվածություն:

Կրունկի ոսկրերի (calcaneus) հողային մակերեսի վրա առկա են մկանային համակարգի զարգացման նշաններ (նկ. 4–10): Կրունկի ոսկորների վրա արձանագրված են գերաճի բազմաթիվ դրվագներ: Ինչպես հայտնի է, հողային մակերեսին ամրացված է ոտքի եռագլուխ մկանի հզոր (աբիլեսյան) ջիլը: Գերաճի առկայությունը վկայում է մեխանիկական լարվածության (stress) մասին: Ինչպես գիտենք գերաճերը ոչ ուռուցքային բնույթի ոսկրային եւ աճառային գոյացություններ են: Դրանց առաջացման պատճառ կարող են հանդիսանալ բորբոքային գործընթացները, վնասվածքները, թաղանթային հյուսվածքի եւ աճառի անկանոնությունները եւ այլն: Այս դեպքում դրանց պատճառը ձիավարման ընթացքում ստացված մկանային խմբերի գերծանրաբեռնումն է: Մկանային ազդեցությունը ձեռքի մատների վրա – միջինից բարձր է (նկ. 4–7):

Կոնքի ոսկորների վրա նույնպես նկատելի են զգալի գործառական ծանրաբեռնվածությունների հետքեր, մասնավորապես, ցայլային համաճոնի հոդերի վրա: Ցայլոսկրի վերին (ligamentum pubicum superius) եւ աղեղնաձեւ (ligamentum arcuatum pubis) հողային հանգույցներում բորբոքային գործընթաց է սկսվել՝ ձեւավորվել են հանգույցաբորբի (enthesopathy) հատկանիշներ: Ցայլոսկրերի հողային մակերեսներին (symphysis publica) արտահայտված են ոսկրային հյուսվածքի քայքայման (luisis) հատվածներ՝ 1–2 մմ տրամագիծ ունեցող կլոր անցքերի տեսքով (նկ. 4–11): Դրանց առաջացման պատճառները կարող է լինել ցայլային համաճոն,

²¹ Հմմտ. L. CAPASSO, K. KENNEDY, C. WILCZAK, Atlas of occupational markers on human remains, Teramo: Edigrafital S.P.A, 1999, էջ 74:

բազմաբաղադրիչ ARS-համախտանիշի մաս հանդիսացող (adductor, rectus, symphysis) – ջլային-մկանային համալիրի ախտաբանական վիճակի երկարատեւ միատեսակ ծանրաբեռնվածությունների արդյունքում, որ կապված են ազդրերի մկանների (m. Adductor longus (or) brevis, m. gracilis) եւ որովայնի ուղիղ մկանի դիստալային մասի (m. Rectus abdominis) անհամաչափ կծկումները: Համաճոն զարգացման հավանականությունը նկատելի է այն անհատների պարագայում, որոնք ունեն ոսկրերի եւ հոդերի ախտաբանություն: Վնասվածքի պատճառ կարող է հանդիսանալ քայլվածքը, որ պահանջում է մարմնի թեքություն դեպի առաջ, սրունքի ուղիղ կամ ծավված դիրքով:

Ողնաշարի վրա գրանցված քայքայման փոփոխությունները նույնպես վկայում են ուժեղ ծանրաբեռնվածության մասին: Կրծքավանդակի ողերի վրա հայտնաբերվել են աճառային հանգույցներ (Schmorl-Knorpelknötchen) (նկ. 4–6): Ողնաշարի վրա՝ միջողային աճառային սկավառակում ճողվածքները ձեւավորվում են ծանրաբեռնվածության ժամանակ, հիմնականում աճի շրջանում: Կրծքավանդակի ողերի խոռոչներում հայտնաբերվել են հասկեր (шипы), որոնք կարող են հանգեցնել նյարդային արմատների եւ ողնուղեղի սեղմմանը: Հասկի երկարությունը 2–3 մմ (փուլ 3)²²: Ողնաշարի վրա արձանագրված հիվանդությունները, զուգորդված մկանային զարգացման աստիճանի հետ, թույլ են տալիս ենթադրել, որ անհատը պարբերաբար ենթարկվել է ֆիզիկական ծանրաբեռնվածության:

Ակնակապիճի ներքին մակերեսի ոսկրի վրա նկատվում է բորբոքային ծակոտկեն (cribra orbitalia): Այս ախտանիշը թույլ է արտահայտված (1 միավոր), որը կարող է լինել մարմնում տեղային բորբոքային հիվանդության հետեւանք²³: Ատամների վրա առկա է ատամնաքարի հաստ շերտ (նկ. 4–4): Ատամնաքարը ախտաբանական կրացված գոյացություն է: Հայտնի է, որ C դասակարգման կենսանյութը (vitamin) դանդաղեցնում է ատամնաքարի ձեւավորումը, իսկ վիտամին A-ն, կալցիումը եւ ածխաջրերը, ընդհակառակը, խթանում են այն: Գրանցվել է վերին ծնոտի ատամների բացակայություն (նկ. 4–3): Ատամների կորստի պատճառները՝

²² Sté S. VILLOTTE, Connaissances médicales actuelles, cotation des enthésopathies: nouvelle method, Bulletins et Mémoires de la Société d'Anthropologie de Paris, v. 18, № 1–2, 2006, էջ 65–85:

²³ Հեն U. WAPLER, E. CRUBÉZY, M. SCHULTZ, Is Cribra Orbitalia Synonymous With Anemia? Analysis and Interpretation of Cranial Pathology in Sudan. American Journal of Physical Anthropology, v. 123, 2004, էջ 333–339:

հարատամնաբորբն (periodontitis) է, ոսկրափուտը, վնասվածքը, որոշ լուրջ հիվանդությունները, բերանի խոռոչի անբավարար առողջաբանությունը (hygiene):

Ոսկրերի վրա ազդող գործընթացների վերլուծության արդյունքները թույլ են տալիս գրանցել այրման եւ աղի նստվածքների առկայություն ոսկրերի վրա (նկ. 5): Ոսկրերը հետազոտվել են մանրադիտակի միջոցով: Կրակը ոսկորների վրա ուժեղ չի եղել, չկա նաեւ դիակիզման փորձ: Այրվածքների գույնը տատանվում էր սևից մինչեւ սպիտակ (կալցինացված): Ոսկորների մակերեսային շերտի վրա գրանցվում են սպիտակ «ծաղկած» գոյացություններ՝ բյուրեղների տեսքով (նկ. 5): «Ծաղկած» բյուրեղների գոյացությունները որոշ դեպքերում հանդիպում են հնագիտական առարկաների (խեցեղենի) վրա: Բյուրեղների առկայությունը կարող է վնասել ոսկորների մակերեսը: Այսպիսով՝ սպիտակ «ծաղկած» գոյացությունները հետեւանք են մահից հետո ոսկրերի վրա ազդող գործընթացների եւ պայմանավորված չեն ախտաբանությամբ:

Հայտնի է, որ մարդկային կմախքի ուսումնասիրությունը կարող է նպաստել մահվան հանգամանքների բացահայտմանը:

Մեր առջեւ զգալի ֆիզիկական ծանրաբեռնվածություն կրող անհատ է: Մշտական ֆիզիկական աշխատանքների շնորհիվ առաջանում է մկանային ծավալի մեծացում (hypertrophy), որը հետեւանք է մկանային մանրաթելերի խտացման, ինչպես նաեւ դրանց քանակի ավելացման (hyperplasia): Գերաճի առկայությունը, երկար ոսկորների մակերեսով զանազան կարգի անհարթությունների զարգացումը վկայում են մեխանիկական լարվածության (stress) մասին: Ոսկորների մակերեսի զարգացումը պայմանավորված է կանոնավոր ձիավարության հանգամանքով, որ շեշտել ենք նաեւ վերելում: Առանձնակի կարեւոր է ոսկորների վրա կրակի հետքերի առկայությունը: Դա թույլ է տալիս ենթադրելու, որ անհատը մահացել է հրկիզման արդյունքում: Բացառիկ, իր բովանդակությամբ եզակի, հրկիզված մասունքներով թաղում ոչ միայն Հայաստանում, այլեւ հարեւան երկրներում, հանդիպում է առաջին անգամ եւ չունի փաստացի որեւէ հավաստում, թե մասունքներն ինչպես են հայտնվել Ս. Էջմիածին Մայր տաճարի տարածքում:

Ո՞վ է այս անհատը, որի մասունքներն արժանացել են նման մեծ պատվի՝ վերաթաղվելու Հայոց Սրբություն սրբոց՝ Մայրավանքում: Այս կապակցությամբ տեղին ենք համարում յաջորդող դիտարկումները: «Շատերու

անունները մեզի չեն հասած: Փառաւոր նահատակներու բազմութիւն մը որոնք դարէդար կը հաստատեն թէ հաւատքն ու Աստուծոյ սէրը չէին ցամքած Հայաստանի մէջ: Օրմանեան Սրբազանն իրաւամբ կըսէ. «Որչափ արի նահատակներու անուններ անյիշատակ կը մնան – նահատակներ, որոնք իրենց կեանքը զոհելու անձնուիրութիւնը կունենան այսպիսի ժամանակներու մէջ, երբ որ եկեղեցւոյ պետերը եւ բարձր պաշտօնեաները շինիչ օրինակ եւ առաքինի տիպարներ չեն ներկայացներ»²⁴:

Քննութեան առարկա ազամորդու հայտնաբերված մնացորդների մարդաբանական զննութիւնները թույլ են տալիս ենթադրելու, որ առկա վիճակը հրկիզման արդյունք է, իսկ դարաշրջանն ի նկատ ունենալով կարելի է կարծել, որ գործ ունենք քրիստոնեական հավատքի մերժման եւ զանգվածային հալածանքի տարիներին մարտիրոսված Ս. Նահատակի մասունքների հետ: Հրկիզման, որպէս մեծագույն պատժի են ենթարկվել քրիստոնեական հավատքի անմնացորդ նվիրյալներից շատերը: Սակայն հայտնաբերված մասունքներն անմիջականորեն որեւէ մեկին վերագրելու համար եւ նիւթն է սակաւ, եւ նույնականացման հիմքն է բացակայում: Նախնական տվյալներով հիշատակելի են, օրինակ, Աթանագինես եւ Թեոդորոս զորականները. «Ապա մատուցին զինուորքն զերանելին Աթանագինէս ի տեղի կատարմանն. եւ նա մեծաւ ուրախութեմբ կնքեաց զամենայն անդամս իւր՝ ի կնիքն Քրիստոսի. եւ մտեալ ի հուրն՝ վաղվաղակի աւանդեաց զհոգին ի ձեռս Տեառն»²⁵: Այլ տեղ կարգում ենք. «Հայ քրիստոնէական սուրբերու շարքում, իր ուրույն յարգն ունի Թէոդորոս Զօրականը («ոչ Տիւթոն նորեկը»): Թէոդորոսը եւս ենթարկուեացաւ ծանր շարշարանքներու եւ բանտարկեցաւ...: Ի վերջոյ դատաւորը այրելով մահացնելու վճիռը տուաւ, քանի որ ան ալ այրած էր իրենց մեհեանը. «Երբ կրակը բորբոքեցին, սուրբը երկար աղօթք ըրաւ եւ ինք զինքն խաչակնքեց, նետուեցաւ կրակին մէջը եւ աւանդեց հոգին առ Աստուած... Իսկոյն կրակը մարեցաւ եւ անուշ

²⁴ ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ, Հայոց եկեղեցւո սուրբերն ու սրբոց տօները, Հայոց սուրբերը եւ սրբավայրերը (ակունքները, տիպերը, պաշտամունքը), Երեւան, 2001, էջ 427:

²⁵ Հ. Վ. ՅՈՎՍԷՓ ԳԱԹՐՈՐՃԵԱՆՑ, Տիեզերական պատմութիւն ի ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցմեր ժամանակս, հտ. Բ., Վիեննա, 1852, էջ 447, Մ. ԱԻԳԵՐԵԱՆ, Վարք եւ վկայաբանութիւն սրբոց, 1874, գիրք Դ., 1913, էջ 67, Մ. ԱԻԳԵՐԵԱՆ, Վարք եւ վկայաբանութիւն սրբոց, Վենետիկ, գիրք Դ., 1913, էջ 348–349, Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Հայոց եկեղեցին վաղ միջնադարյան ֆաղափական խաչուղիներում, Վաղարշապատ, 2005, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, էջ 47, Բ. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ, նշ. աշխ. էջ 147:

հոտ տարածեցաւ... մէկ մազ մը գըլխէն այրուած չէր... Նահատակեցաւ 306 թուականին²⁶։

Թէոդորոս Զօրականի մասունքների կապակցութեամբ կարելոր տեղեկութիւններ ենք գտնում Աղուանից պատմիչի երկում. «...ի տեսլեան գայր մի անապատական՝ որպէս թէ սուրբն Վարոս կերպ արեղայի ասէր ցիս. «մեք եմք նշխարք ծածկեալ ի գաւառին Արցախայ ի Մխանց տոհմին ի վայրս Կաղսետոյ։ Նախաձկայն էր տէր Ստեփանոս եւ Թէոդորոս նահատակ... եւ մասն մի սուրբ քաթանիցն»²⁷։ Այս սուրբ գանձի մասին տեղեկանալով՝ Աղուանից Աբաս կաթողիկոսը (552–596) հրահանգում է դրանք գտնել եւ իր մոտ բերել, իսկ ստանալով՝ «տօնախմբէ զնոցին [սրբոցն] յիշատակ եւ դնէ ի մաքրագոյն յարկեղս»²⁸։ Բնական է կարծել, որ տարբեր արկղերում դնելու նպատակը տարբեր վայրերում պահելն էր, այլապէս ամբողջը միասնաբար միեւնոյն մասնատուփում կգետեղվեր։ Այս շարակարգում կասկածից վեր է, որ սուրբ մասունքների մի մասն անշուշտ ուղարկվելու էր սուրբ էջմիածին՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու սրբակենտրոն ուխտավայր. այսինքն Թէոդորոս նահատակի մասունքների հայտնաբերումը սուրբ էջմիածնում պետք է դիտել բնական եւ լիովին հնարավոր²⁹։

Մայր Աթոռ սուրբ էջմիածնի նորաբաց, մարդկային հրկիզված մասունքներ ամփոփող դամբարանը եւս մեկ անգամ հավաստումն է այն իրողության, թե «Եկեղեցւոյ հաւատքին եւ հաւատացեալներու բարեպաշտութեան մէջ մեծ եղած է սուրբերուն դերը, եւ դարէդար Եկեղեցին հարստացած է սուրբերով, մարտիրոսներով, վկաներով, խոստովանողներով, որոնք են եղած լոյսի սիւներ, առաջնորդներ, օրինակ հանդիսացած են հաւատացեալներուն»³⁰։

²⁶ ՇՆՈՐՀՔ ԱՐՔ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ, Համաքրիստոնէական սուրբեր, երրորդ հրատ., Գանձասար, Երեւան, 1997, էջ 156–157։

²⁷ ՄՈՂՍԷՍԻ ԿԱՂԱԿԱՆՏՈՒԱՅԻՈՅ, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մոսկվա, 1860, գլ. 9, էջ 92։

²⁸ Անդ։

²⁹ Սրբազան մասունքները մշտապէս հարգ են վայելել Հայոց Եկեղեցւում. «...նշխարքն... զոր բերին, մեծապէս տօնախմբեացեն յամենայն տարւոյ զօր բերելոյն եւ պատուոյ եւ սրբութեան զգոյշ. զի մի ի ցասումն միտեալ սուրբ ճգնաւորաց որ վասն Քրիստոսին չարչարեցան, ցասումն աշխարհի հասցէ փոխանակ Բարեխօսութեան». տե՛ս «Կանոնագիրք Հայոց», աշխատասիր. Վ. Հակոբյան, Երեւան, 1964, հտ. Ա., էջ 459–460։

³⁰ ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱԵՃԵԱՆ, Հայոց Եկեղեցու սուրբերն ու սրբոց տօները... նշ. աշխ. էջ 3։

* * *

ՀԱՎԵԼՎԱԾ

Աղյուսակ 1. Գանգի անհատական չափսերը և ցուցիչները³¹

№ ըստ Մարտինի	♂
1	181
8	140?
8:1	77.35
17	135
17:1	74,59
17:8	96,43
20	124
20:1	68,51
20:8	88.58
5	102
10	118
11	129
12	107,5
7	39,7
16	30,2
40	95
40:5	93,14
48	67
60	55
61	62,9
60:61	87,45
63	37,5
55	56
52	36

71a	34,5
69	29?
69 (1)	26,3
69 (2)	12,8

Աղյուսակ 2. Ատամների անհատական չափսերը

	Վերին ծնոտ VLcor
	աջ
C	8.5?
P1	8,8?
M1	9,9
	MDcor
C	5,8
P1	6,7
M1	9
	H cor
M1	5,8
	MDcol
M1	7,2
	MD × VL
M1	57,42
	Icor (VL / MD) × 100
M1	170,69
	mcor MD + VL /2
M1	15,7

Աղյուսակ 3. Կմախքի ոսկորների անհատական չափերը և ցուցիչները

	♂	
	աջ	ձախ
Բազուկոսկր (Humerus)		
4	66	X

5	23	X
6	20	X
7	65	X
7a	67	X
7:1	X	X
6:5	86,96	X

³¹ Նշում՝ «X» – ամրագրման անհնարինություն, «+» – հատկանիշի առկայությունը, «-» – հատկանիշի բացակայությունը:

Արմունկոսկր (Ulna)			10	25,8	X
11	14	14.1	8	101,2	100
12	17	16	8:2	23,6	X
13	19	19,2	6:7	105,77	100,91
14	25,5	26	10:9	75,9	X
3	X	X	Մեծ ոլորի ոսկոր (Tibia)		
3:2	X	X	8	36,5	X
11:12	82,4	88,2	8a	38	X
13:14	74,6	73,3	9	26,8	X
Ազդրոսկր (Femur)			9a	27,8	X
1	440	X	10	107	X
2	429	X	10b	86	X
6	33	31,3	9:8	73,5	X
7	31,2	31	10b:1	X	X
9	34	X	9a:8a	73,2	X
			10:1	X	X

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, մարտիրոս, նահատակ, վերաթաղում, քա-
րատապան, սարկոֆագ, հրկիզված, մարդկային ոսկոր մասունքներ, բնահող:

РЕЗЮМЕ



*В ходе раскопок, проведённых 20–30 мая 2019 года у южной стены мона-
стыря Святого Эчмиадзина, было обнаружено раннесредневековое захороне-
ние. Погребение представляет собой грунтовый саркофаг из каменных плит,
ориентированный в направлении северо-запад. Каменный саркофаг облицован
полированными плитами из туфа и покрыт массивными необработанными
туфовыми блоками. Его основание засыпано землёй.*

Не сохранилось письменных свидетельств о времени и обстоятельствах
перезахоронения останков. Грунтовые захоронения были широко распростра-
нены в эллинистический, античный и раннесредневековый периоды, при этом
их ориентация варьировалась. В Джрвеже, Арташате, Вагаршапате, Гарни, а
также в соседней Грузии и других регионах аналогичные погребения, выпол-
ненные из каменных плит или в грунте, основывались на языческих традициях.

ՏՆՏՐԻ ՎԵՐԱՆՅԻՆ ԿՐԴՈՒՄ ԸՆՅՈՒՆՔԻՄԸ ԲԱՐՈՒ ԽՈՒՐԱՆԻ ՉՈՒՐԱԿԱՅԻՆ



ՉՈՒՐԱԿԱՅԻՆ Ե.Ն.Ն. Լ.ԲԱՆԻՍՏԻ










Նկ. 2



Նկ. 3





Նկ. 5


По своей конструкции, ориентации, стратиграфическим данным и сопоставимым аналогиям саркофаг датируется началом IV века, то есть до основания собора Эчмиадзина. При его вскрытии были обнаружены человеческие останки: череп и небольшие фрагменты посткраниального скелета. На поверхности костей выявлены следы горения и образование кристаллов. Белые кристаллы являются результатом тафономических процессов, а не проявлением палеопатологических изменений.

SUMMARY


During excavations conducted from May 20 to 30, 2019, an early medieval tomb was discovered near the southern wall of the Etchmiadzin Cathedral. The burial consists of an in-ground stone sarcophagus oriented northwest. The sarcophagus is made of stone and lined with polished tuff slabs, while its top is covered with massive unworked tuff blocks. The base of the sarcophagus is sprinkled with earth.

There is no written evidence indicating when and under what circumstances the remains were reburied. In-ground burials were widespread during the Hellenistic, Classical, and Early Medieval periods, with varying orientations. Similar burials—either in stone slabs or directly in the ground—have been found in Djrvezh, Artashat, Vagharshapat, Garni, neighboring Georgia, and other regions, often reflecting pagan traditions.

Based on its construction, orientation, stratigraphic data, and comparative parallels, the sarcophagus has been dated to the early 4th century, predating the foundation of Etchmiadzin Cathedral. Upon opening the sarcophagus, human remains were discovered, including a skull and small fragments of postcranial bones. The surface of the bones showed traces of burning and the presence of crystals. The white crystals on the bone surfaces resulted from taphonomic processes rather than pathological conditions.



ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ, ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ



ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՎԱԼՈՒՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Այլազան միջոցների եւ համակարգչային-հաշվողական գործիքների շեշտակի զարգացման արդյունքում աշխարհն աներեւակայելի փոփոխությունների ենթարկվեց: Գիտական հազարամյա սկզբունքներն ու չափանիշները փոփոխված թվացին, եւ կարծես հետազոտության հնավանդ, դարավոր փորձություն բռնած եղանակները հանկարծակի դարձան հնացած: Ժամանակին զգալի թվով լեզվաբաններ լծված էին Հայկական համաբարբառների ստեղծմանը: Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում ձեւավորված խումբը կազմում էր հայ մատենագիրների հեղինակած երկասիրությունների համաբարբառները: Աշխատանքն արվում էր առանձնակի նվիրումով եւ բծախնդրությամբ: Գրքերը հրատարակվում էին սահմանափակ քանակով (կարծեմ 200 օրինակ) եւ անվճար տրամադրվում էին միայն մասնագիտացված հաստատություններին, համաբարբառի արժեքն ու նշանակությունն զգացող անձանց: Այն ժամանակներում համաբարբառով կարելի էր գտնել մեր հին եւ միջնադարյան հեղինակների ցանկացած երկում գեթ մեկ անգամ կիրառված բառը, եւ բառարանը կմատնանշեր համապատասխան ստեղծագործությունը, էջը, տողը, նախադասությունը, որի կազմում կա որոնվող միավորը: Հայ հին եւ միջնադարյան գրականությամբ, հայ ժողովրդի եւ հայոց լեզվի պատմությամբ զբաղվողների համար բառարանների այս շարքը մի անփոխարինելի եւ անգերազնահատելի գործիք էր, որ հետազոտական աշխատանքը դյուրացնում էր բազմակի անգամ:

Թվային դարաշրջանի գալստյամբ մեկ վայրկյանում համաբարբառները դուրս եկան կիրառությունից: Գիտնականներն

սկսեցին հաստ հատորների փոխարեն պահել բարալիկ կուտակիչներ, որ իրենց նուրբ շերտերին կրում էին եւ ցանկացած պահի կարող էին տրամադրել այն նույն տեղեկությունները, որ այդուհետ այլեւս սկսեցին ննջել բառարանների էջերում: Իսկ երբ թվային դարաշրջանին փոխարինեց համացանցայինը, վերացավ նաեւ կրիչների անհրաժեշտությունը, եւ որոնածդ կարող էիր ամեն պահի աշխարհի ամեն ծագում ստանալ ընդամենը մեկ հրահանգով, մեկ հպումով: Նոր դարաշրջանն արագ եկավ ու իսկույն հաստատեց իր իշխանությունը՝ գրավելով նորանոր ոլորտներ ու ասպարեզներ, եւ որոշ պահերի անգամ թվում էր, թե անսահմանափակ համացանցի եւ տպագրական մամուլով կաղապարված գրքի «բանավեճում» թվային ապագան նույնիսկ կարող է դուրս մղել հրատարակչական անցյալը: Տեղեկատվական միջոցների զարգացմանը զուգահեռ «ներկա-անցյալ» հակամարտության համար ամեն օգտատեր գտավ իր ուրույն պատասխանը՝ վերջնական վճիռը թողնելով մարդկային պատմության գերագույն դատավորին՝ ժամանակին, ներկա պահն ամփոփելով պարզ սրախոսության տողերում. «Համացանցը հազարավոր պատասխաններ կտա, իսկ գիրքը՝ միակ ճշգրիտը»:

Համաբարբառների նմանությունը դատապարտված էին համարվում տեղեկատվական-որոնողական բնույթի այլեւայլ հրատարակությունները, օրինակ՝ Հանգաբառարանը: Թվում էր, թե իր դարն ապրել է նաեւ մատենագիտությունը, որի պարագային նյութերի հավաքման, ամբողջական տեղեկության կուտակման, բնագավառային բաժանման, այբբենական դասակարգման... եւ բոլոր հնարավոր աշխատանքները գրադարանավարից ոչ պակաս, երբեմն գուցե նաեւ ավելի լավ, կարող է իրականացնել համակարգիչը, իսկ վաղն արդեն նաեւ արհեստական բանականությունը:

Հնարավոր է, նույնիսկ շատ հնարավոր է, որ մատենագիտության ապագան հենց այդպես էլ լինի, սակայն այսօր, իսկ առավել եւս մի քանի տարի սրանից առաջ մատենագիտություն կազմելը միանշանակ ծանր, աշխատատար, ջանք ու եռանդ պահանջող գործ էր: Ահա այդպիսի աշխատանքի է նվիրվել Մայր Աթոռի հերթական հրատարակությունը կազմողների խումբը (Տ. Արարատ քհն. Պողոսյան, Մայա Գրիգորյան, Գոհար Սարգսյան), որ


կյանքի է կոչել «Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Տարեգրություն եւ կենսամատենագիտություն» հատորը¹: Բավարար է նշել էջերի քանակը՝ 896, որ ամեն ոք կարողանա պատկերացնել կատարված աշխատանքի ծավալը: Անգամ թռուցիկ հայացքով կարելի է տեսնել, որ 2020 թվականին լույս տեսած այս գիրքը ոչ միայն մատենագիտական նշանակություն ունի, այլև կարող է ծառայել որպես աղբյուրների ուղեցույց Հայ Առաքելական Եկեղեցու նորագույն շրջանի քննության համար: Գրքի կառուցվածքը եւ բովանդակությունը բնորոշ են նման հրատարակություններին: Այն բաժանված է մի քանի առանցքային բաժինների, որոնք ընթերցողին հնարավորություն են տալիս համակարգված կերպով ծանոթանալու Ամենայն Հայոց Կաթողիկոսի գործունեությանը: «1. Խմբագրական» վերնագրին հաջորդում է «2. Տարեգրություն. (1951–2019)» խորագիրը, որ ենթաբաժանված է ըստ տարիների: Սրան հաջորդում են «3. Կենսամատենագիտություն», «4. Ցանկեր» եւ «5. Օգտագործված գրականության ցանկ» խորագրերը:

Գրքում կարելի է ամբողջական եւ համապարփակ տեղեկություններ գտնել Վեհափառի Պաշտոնական ելույթների եւ ուղերձների, գիտական եւ կրոնական հրապարակումների ինչպես եւ Հայրապետի վերաբերյալ տպագիր եւ համացանցային անդրադարձերի մասին: Սրա շնորհիվ է ձեւավորվում գրքի թե՛ գիտական, թե՛ հանրային արժեքը: Այն հասցեագրված է ընթերցող լայն շրջանակների, բոլոր նրանց, որ ցանկանում են համապարփակ պատկերացում կազմել Հայ Առաքելական Եկեղեցու նորագույն պատմության եւ նրա հոգեւոր առաջնորդի գործունեության մասին: Հարգուհա այս ամենի հետազոտողները կարող են հեշտությամբ գտնել իրենց հետաքրքրող տեղեկությունների աղբյուրներն ու դրանց նախահիմք սկզբնաղբյուրները: Գիրքը կարելի է ներդրում է Հայ Եկեղեցու պատմությունն ուսումնասիրողների համար: Այն ոչ միայն ներկայացնում է Գարեգին Բ. Կաթողիկոսի գործունեությունը, այլև լայն հնարավորություն է տա-

¹ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչություն, Ս. Էջմիածին, 2020.— 896 + 1 ներդիր էջ: Առաջին անդրադարձը գրքին տե՛ս «Էջմիածին», 2021, թ.:

լիս դիտարկելու եկեղեցական կյանքը տարբեր տեսանկյուններից, ուստի կարող է մեծապես օգտակար լինել պատմաբանների, կրոնագետների, հայագետների, ինչպես նաև այն ընթերցողների համար, որոնք հետաքրքրված են Հայ Առաքելական Եկեղեցու նորագույն պատմությամբ եւ Հայոց դարավոր ազգային կառույցի հոգեւոր առաջնորդի գործերով:

ԳՐԻԳՈՐ ԳԱՐԵԳԻՆՅԱՆ



СОДЕРЖАНИЕ

Вместо редакционной 5

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

Послание **ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО
ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН**, по случаю благословения
работников образования 7

РЕЛИГИОВЕДЕНИЕ

ДЬЯКОН ЕГИШЕ САРГСЯН — Порядок избрания Католикоса по данным
письменных источников и обрядников Маштоц 10

КАТОЛИКОС СИМЕОН ЕРЕВАНЦИ — Возвращенный долг 26

ПАТРИАРХ АКОП НАЛЯН — О простых верованиях всех христиан 34

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

ЛЕЙЛА СТЕПАНЯН — Этимология имени Давит и его связь с прото-айкским
календарем. 48

РОБЕРТ ТАТОЯН — Деятельность Константинопольского
Армянского Патриархата по сбору статистических данных
о западных армянах в 1914 году 65

АВАГ А. АРУТЮНЯН — Документы по истории журнала «Эчмиадзин»
(1944—1961) 78


АРМАН МАЛОЯН — Нововозведенные церкви Арагацотнской
области (1999—2025 гг.). 93

СООБЩЕНИЯ

- КАРИНЕ АРАКЕЛЯН** — Лингвостилистические особенности мечты
и видения в творчестве Мецаренца 113
- НЮРА АКОПЯН, АНАИТ ХУДАВЕРДЯН** — Недавно открытая гробница
в монастырском комплексе Святого Эчмиадзина (по биоархеологическим
и историческим данным) 127

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

- ГРИГОР ГАРЕГИНЯН** — Библиографическое обширное издание 140



CONTENTS

Instead of an editorial 5

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL**

ARMENIANS, on the occasions of the blessing of educators 7

RELIGIOUS STUDIES

DEACON YEGHISHE SARGSYAN — The procedure for the election of the

Catholicos based on literary sources and the Mashtots ritual books..10

CATHOLICOS SIMEON OF YEREVAN — Debt repayment26

PATRIARCH HAGOP NALIAN — On the simple beliefs of all Christians. 34

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

LEYLA STEPANYAN — Etymology of the name Davit' and its connection

to the proto-haykian calendar.48

ROBERT TATOYAN — Activities of the Armenian Patriarchate of Constantinople

in collecting statistical data on Western Armenians in 191465

AVAG A. HARUTYUNYAN — Documents on the history of «Ejmiatzin»

journal (1944–1961)78

ARMAN MALOYAN — Newly established churches in Aragatsotn

region (1999–2025) 93


ESSAYS

KARINE ARAKELYAN — Lingual-stylistic Features of Metsarents’
Dream and Vision. 113

NYURA HAKOBYAN, ANAHIT KHUDAVERDYAN — Newly discovered
tomb in the monastic complex of the Mother See of Holy Etchmiadzin
(based on bioarchaeological and historiographical data). 127

LITERARY REVIEW

GRIGOR GAREGINYAN — Extensive bibliographic publication 140



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ի տեղի խմբագրականի 5

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը
կրթության մշակների օրհնության առիթով 7

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ԵՂԻԾԷ ՍՐԿ. ՍԱՐԳՍԵԱՆ — Կաթողիկոսական ընտրության կարգը՝
ըստ մատենագրական տեղեկությունների եւ Մաշտոց ծիսամատեանների . . .10

ՍԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՒԱՆՅԻ — Պարտավճար 26

ՅԱԿՈԲ ՊԱՏՐԻԱՐԺ ՆԱԼԵԱՆ — Համայն քրիստոնեաների պարզ
հաւատալիքների մասին 34

ՊԱՏՄԱՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼԷՅԼԱ ՍՏԵՓԱՆԵԱՆ — Դաւիթ անուան ստուգաբանությունը եւ նրա կապը
Հայոց նախահայկեան օրացոյցի հետ 48

ՌՌԲԵՐՏ ԹԱԹՈՅԵԱՆ — Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի՝
արեւմտահայութեանը վիճակագրելու 1914 թ. ձեռնարկները 65

ԱԲԱԳ Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ — Վաւերագրեր «Էջմիածին» ամսագրի
պատմության (1944—1961) 78

ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԵԱՆ — Արագածոտնի մարզի նորակառոյց եկեղեցիները
(1999—2025 թթ.). 93

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ


ԿԱՐԻՆԷ ԱՌԱՔԵԼԵԱՆ — Մեծարենցեան երազի եւ տեսիլի լեզուաոճական առանձնայատկութիւնները. 113

ՆԻԻՐԱ ՅԱԿՈԲԵԱՆ, ԱՆԱՀԻՏ ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆ —

Նորաբաց դամբարան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վանական տարածքում (ըստ կենսահնագիտական եւ պատմագրական տուեալների). 127

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐ ԳԱՐԵԳԻՆԵԱՆ — Մատենագիտական ծաւալուն հրատարակութիւն 140



- ԱԲՀ** - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (Մ. Ալգերեան, Գր. Ճէլալեան), Վենետիկ, 1846 եւ 1865
- ԱԺ** - Արեւելագիտական ժողովածու, Երեւան
- ԱԻ** - Արեւելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԱՀ** - Ազգագրական հանդէս (խմբ.՝ Ե. Լալայեան), հ. 1-26, Շուշի/Թիֆլիս, 1896-1916
- ԱՅՏ** - Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Երեւան
- ԲԵՀ** - Բանքեր Երեւանի համալսարանի, Երեւան
- ԲՀ** - Բանքեր հայագիտության, Երեւան
- ԲՀԱ** - Բանքեր Հայաստանի արխիվների, Երեւան
- ԲՄ** - Բանքեր Մատենադարանի, Երեւան
- ԳԱԹ** - Գրականության եւ արվեստի թանգարան, Երեւան
- ԳԻ** - Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԳՀՃ** - Գեղորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական համալսարան), Ս. Էջմիածին
- ԴԱՆ** - Դաշտային ազգագրական նյութեր
- ԴՀՊ** - Դիւան հայոց պատմութեան (խմբ.՝ Գ. Ադանեանց), հ. 1-13, Թիֆլիս, 1893-1917
- ԴՀՎ** - Դիվան հայ վիմագրության, Երեւան
- Ե(Լ)Ժ** - Երկերի (լիակատար) ժողովածու
- ԵՊԿ** - Երեւանի պետական կոնսերվատորիա
- ԵՊՀ** - Երեւանի պետական համալսարան
- ԷԱԺ** - Էմինյան ազգագրական ժողովածու (խմբ.՝ Գ. Խալաթյանց, Կ. Կոտանյան), հ. 1-9, Մոսկվա, 1901-1913
- ԷՊԱԹ** - Էջմիածնի պատմաազգագրական թանգարան
- ԼԻ** - Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԼՀԳ** - Լրաբեր հասարակական գիտությունների, Երեւան
- ՀԱ** - Հանդէս Ամսօրեայ, Վիեննա
- ՀԱԱ** - Հայաստանի ազգային արխիվ, Երեւան
- ՀԱԲ** - Հայերեն արմատական բառարան (Հ. Աճառյան), հ. 1-4, Երեւան, 1971-1979
- ՀԱԲՆ** - Հայ ազգագրություն եւ բանահյուսություն, Երեւան
- ՀԱԲՈ** - Հայոց անձնանունների բառարան (Հ. Աճառյան), հ. 1-5, Երեւան, 1942-1962
- ՀԱԹ** - Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Սարդարապատ
- ՀԱԻ** - Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ՀԱՊ** - Հայաստանի ազգային պատկերասրահ, Երեւան
- ՀԲԲ** - Հայերեն բացատրական բառարան (Ստ. Մալխասյանց), հ. 1-4, Երեւան, 1944-1945
- ՀԺՀ** - Հայ ժողովրդական հեքիաթներ, Երեւան
- ՀՀ** - Հայագիտական հանդէս, Երեւան
- ՀՀ ԳԱԱ** - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, Երեւան
- ՀՀՀ** - «Հասկ» հայագիտական հանդէս, Անթիլիաս
- ՀՀՀԾ** - Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երեւան
- ՀՀՀՍ** - Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ
- ՀՀՄ** - Հայաստանի հնագույն մշակույթը, Երեւան
- ՀՀՄԾ** - Հին Հայաստանի մշակույթը, Երեւան
- ՀՀՑ** - Հայագիտության հարցեր, Երեւան
- ՀՀՇՏԲ** - Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան (Թ. Խ. Հակոբյան, Ստ. Ս. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բաբսեղյան), հ. 1-5, Երեւան, 1986-2001
- ՀՊԹ** - Հայաստանի Պատմության թանգարան, Երեւան
- ՀՊՀ** - Հնագիտական պեղումները Հայաստանում, Երեւան
- ՀՊՀՑ** - Հայոց պատմության հարցեր, Երեւան
- ՀՊՄՀ** - Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Երեւան
- ՀՍՀ** - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-13, Երեւան, 1974-1987
- ՀՏ** - «Հուշարձան» տարեգիրք, Երեւան
- ՄԱ** - Մերձավոր Արեւելք, Երեւան
- ՄԱԵԺ** - Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, Երեւան
- ՄՀ** - Մատենագիրք Հայոց, Անթիլիաս

- ՄՄ** - Մաշտոցի անվան Մատենադարան, Երևան
- ՄՊՎ** - Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Երևան
- ՄՅՀԶ** - Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՆՀԲ** - Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Գ. Անտիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան), հ. 1-2, Վենետիկ, 1836-1837
- ՆՀԺՊ** - Նյութեր հայ ժողովրդի պատմության, Երևան
- ՇՀՀԿ** - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատանքներ, Գյումրի
- ՊԲՀ** - Պատմաբանասիրական հանդես, Երևան
- ՊԻ** - Պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երևան
- ՊՄ** - «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան
- ՎՀԵՊ** - Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Երևան
- ՎՀՀ** - «Վէմ» համահայկական հանդես, Երևան
- ՏՀԳ** - Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան
- ՑԶՄՄ** - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՔՀ** - Քրիստոնյա Հայաստան, Ս. Էջմիածին
- ՔՀՀ** - «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002
- ՕԱՀՀՄ** - Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Երևան
- АГВ** - Армянский гуманитарный вестник, Ереван
- АО** - Археологические открытия, Москва
- АПА** - Археологические памятники Армении, Ереван
- АРА** - Археологические раскопки в Армении, Ереван
- ВВ** - Византийский временник, Ленинград-Москва
- ВДИ** - Вестник древней истории, Москва
- ВЕУ** - Вестник Ереванского университета, Ереван
- ВОН** - Вестник общественных наук, Ереван
- ДВ** - Древний Восток, Ереван
- ДКА** - Древнейшая культура Армении, Ереван
- ИАЭ** - Институт археологии и этнографии, НАН РА, Ереван
- ИАН** - Известия Академии наук Армянской ССР, Общественные науки, Ереван
- ИФЖ** - Историко-филологический журнал, Ереван
- КБС** - Кавказско-ближневосточный сборник, Тбилиси
- КВ** - Кавказ и Византия, Ереван
- КДА** - Культура древней Армении, Ереван
- КСИА** - Краткие сообщения института археологии, Москва
- КСИМК** - Краткие сообщения института истории материальной культуры, Москва
- МАК** - Материалы по археологии Кавказа, Москва
- МИАН** - Материалы по истории армянского народа, Ереван
- МНМ** - Мифы народов мира, Москва (ред. С. А. Токарев), 1991-1992
- НАА** - Национальный архив Армении, Ереван
- СА** - Советская археология, Москва
- СМОМПК** - Сборник материалов для описания местностей и племен Кавказа, т. 1-46, Тифлис, 1881-1915
- СЭ** - Советская этнография, Москва
- ХВ** - Христианский Восток, Санкт-Петербург
- AJNES** - Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan
- AS** - Anatolian Studies, Cambridge
- AW** - Antike Welt, Mainz am Rhein
- BAR** - British Archaeological Reports, International Series, Oxford
- CAH** - Cambridge Ancient History, Cambridge
- IC** - Iran and the Caucasus, Leiden
- JANER** - Journal of Ancient Near Eastern Religions, Leiden
- JAOS** - Journal of American Oriental Society, Michigan
- JAS** - Journal of Armenian Studies, Belmont
- JSAS** - Journal of the Society for Armenian Studies, Fresno
- MDOG** - Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft, Berlin
- OrCh** - Oriens Christianus, Leipzig
- PO** - Patrologia Orientalis, Paris-Brepols
- REArm** - Revue des études arméniennes, Paris
- SMEA** - Studi Micenei ed Egeo-Anatolici, Roma

ISSN 1829-4243
eISSN 2953-7843

Հրատարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխատրոյթեամբ եւ որոշմամբ

Հրատարակչական բաժնի տնօրէն՝
Տ. Արարատ քինյ. Պօղոսեան

Խմբագրութեան հասցէն՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
«ԷԶՄԻԱԾԻՆ»
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com
Հեռ. (+374 10) 517 276

Ստորագրում է տպագրութեան՝ 25.02.2025 թ.



ՄԵՏԻ ԼԹՈՒ ՄՈՒԲԻ
ԷԶՄԻԱԾԻՆԻ ՏՊԱՐԱՆ